Հ. Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԿԱՐՃԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԸ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

№ 5 АРМЯНСКИЕ ДИАЛЕКТЫ 5 №

О. Д. МУРАДЯН

КАРЧЕВАНСКИЙ ДИАЛЕКТ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1960

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 5 ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐ № 5

ОБМЕН

Հ. Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

491.990
Մ

ԿԱՐՃԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԸ

II
Ա 4430

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1960

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Սույն աշխատանքն ընդգրկում է Կարճևանի բարբառի հնչյունաբանության, ձևաբանության և բառագիտության ամբողջական հետազոտություն: Հնչյունաբանության բաժնում քննված են բարբառի հնչյունական փոփոխությունները՝ ներառյալ հնչյունների առնմանության, տարնմանության, դրափոխության, կրկնության, անկման, հավելման և ձայնավորների ներդաշնակության երևույթները: Ձևաբանության բաժինը ընդգրկում է բարբառի քերականական կարգերի նկարագրությունը, նրանց ձևաբանական դրսևորումները, ձևույթների ծագումն ու փոփոխությունները: Բառագիտության բաժնում քննարկված ու արժեքավորված են բարբառի բառային շերտերը, բառաստեղծական միջոցները, իմաստափոխության երևույթները և այլն: Աշխատության վերջում տրված են բառարաններ և բարբառային նմուշներ:

Աշխատությունը կարող է օգտակար լինել հայ բարբառագիտության ու հայոց լեզվի պատմության հարցերով զբաղվողների համար:

Ա. Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Կարճևան (հին՝ Կարճաւան) տեղանվան առաջին հիշատակությունը հանդիպում ենք Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանի (13—14-րդ դդ.) «Պատմութիւն տանն Սիսական» աշխատության մեջ: Հեղինակը օգտվելով Տաթևի ձեռագիր վավերագրերից, գրում է, որ Նավակատիքի տոնին Սմբատ Բագրատունի թագավորը հրավիրվելով Տաթև, Տաթևի եկեղեցուն է նվիրում «... զմեծ աւանն Կարճաւան յԱրևիք գաւառի ի Մեղրաձորի...»[1]: Կարճևանը Արևիք գավառի գյուղերի մեջ է գրվում նաև աշխատության վերջում, ուր թվարկվում են Սյունիքի գավառներն իրենց գյուղերով:

Կարճևանը ըստ Հայկական ՍՍՌ վարչական բաժանման այժմ մտնում է Մեղրու շրջանի մեջ:

Հին ժամանակներից Կարճևանի բնակչության քանակի վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել: Ղ. Ալիշանը բերում է 1873 թվականի մարդահամարի տվյալները, ըստ որի Կարճևանում բնակվում էին 35 տուն «մերազգիներ» և մեկ ռուս տուն. և ապա ավելացնում է. «յայտ է թէ գարդիս աճեցեալ ևս են»[2]: Այժմ Կարճևանը ունի մոտ 100 ընտանիք (տուն):

Կարճևանցիների հիմնական զբաղմունքը այգեգործությունն է, առավել կարևորը՝ խաղողագործությունը: Կարճևանի խաղողը և նրանից պատրաստած քաղցրահամ գինին հայտնի էին դեռ հին ժամանակներում: Հնում այստեղ ջրի պակասությունը և ամառային խիստ շոգը հնարավորություն չէին տալիս ընդարձակելու այգիների տարածությունը. միայն Սովետական իշխանության տարիներին, երբ կառուցվեց ու շահագործման հանձնվեց Կարճկանալը (Կարճևանի ջրանցքը, որն իր ջուրը վերցնում է Բուղաքարից),

---

[1] Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 166:

[2] Ղ. Ալիշան. Սիսական, էջ 305:

կարճանցիները հնարավորություն ստացան զարգացնելու այգեգործությունը։ Այգեգործությունից բացի, կարճանցիները զբաղվում են նաև շերամապահությամբ ու անասնապահությամբ։

* * *

Կարճանի բարբառը մինչև 1939 թվականը անհայտ էր գիտությանը։ 1939 թվականին Երևանի պետական համալսարանի Գիտական աշխատությունների 11-րդ հատորում հրապարակվեց պրոֆ. Ա. Ս. Ղարիբյանի «Հայ բարբառների մի նոր ճյուղ» աշխատությունը։ Այդ աշխատության մեջ հեղինակը ընդունելով պրոֆ. Հ. Աճառյանի հայ բարբառների դասակարգման ձևարանական սկզբունքը, գիտությանը մինչ այդ հայտնի և անհայտ բարբառների լեզվական փաստերի ուսումնասիրությամբ հաստատեց հայ բարբառների մի նոր՝ Ս ճյուղի առկայությունը։ Այդ նոր ճյուղի մեջ պրոֆ. Ա. Ս. Ղարիբյանը դասեց Արդվինի, Շադախի, Կարճևանի, Մեղրու, Հադրութի, Ուրմիայի և Հավարիքի բարբառները, որոնք բայի սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմում են հայերենի -ալիս, -ելիս վերջավորություն ունեցող (կարդալիս, գրելիս) անկատար դերբայով, վերջավորություններ, որոնք նույն ճյուղի տարբեր բարբառներում հընչյունափոխված լինելու պատճառով՝ պահպանել են միայն մի ընդհանուր հատկանիշ, այն է՝ ս տալական տարրը, որի անվամբ էլ կոչվեց նոր ճյուղը։

Հետագայում, 1953 թվականին հրատարակած իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ պրոֆ. Ա. Ղարիբյանը բարբառային նոր նյութերի ուսումնասիրության հիման վրա ճշտեց Ս ճյուղին պատկանող բարբառների քանակը, այդ ճյուղի մեջ դասելով Ղարադաղի, Արդվինի, Մեղրու, Կարճևանի, Հադրութի, Դզմարի, Բելման-Շադախի և Ուրմիայի բարբառները։

Որպես Ս ճյուղի ներկայացուցիչ, Կարճևանի բարբառը ընդհանրություններ ունի նույն ճյուղի մեջ մտնող մյուս բարբառների հետ։ Սակայն ճյուղային այդ ընդհանրությունները, ինչպես և տարբերությունները, բարբառից բարբառ տարբեր են։ Կարճևանի բարբառն ավելի մոտ է կանգնած Մեղրու բարբառին։ Այս երկուսը միակ բարբառներն են, որ աշխարհագրական նույն միջավայրում, մինչև վերջին ժամանակներս, պահպանել են Ս ճյուղի առանձնահատկությունները։ Դրանց շրջապատող բարբառներն ու խոսվածք-

ները այժմ կամ Ում ճյուղի բարբառներ ու խոսվածքներ են, և կամ ներկայացնում են Ում և Ս ճյուղերի բարբառների լեզվական իրողությունների մի համադրություն: Այդպիսին է, օրինակ, Ադուլիսի բարբառը, Կարճևանի բարբառի արևմտյան հարևանը, որն իրավամբ համարվում է միջճյուղային բարբառ: Այդպիսիք են նաև Կաքավաբերդի՝ Կարճևանի հյուսիս-արևելյան հարևաններ՝ Կուրիս (հին Կուրուս), Գուգենիս (հին Գուանիս), Վարհավար և Ադարակ գյուղերի խոսվածքները: Այդ գյուղերի խոսվածքները Կարճևանի և Մեղրու բարբառների հետ ունեն մի շարք ընդհանրություններ, որոնք առկա են գրաբարի համեմատությամբ եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական սիստեմի (Վարհավար), ձայնավորների փոփոխությունների, դերանունների հոլովման մեջ, ինչպես նաև մասնակի ձևաբանական այլ կետերում. իսկ ինչ վերաբերում է նրանց ճյուղային պատկանելության հատկանշին, այսինքն՝ անկատար դերբայի կազմությանը, ապա այստեղ նրանք հեռացել են Ս ճյուղի բարբառներից և ունեն Ում ճյուղի հատկանիշներ: Անկատար դերբայում Ս ճյուղի կառուցվածքը առկա է միայն -ալ վերջավորություն ունեցող չեզոք սեռի բայերում (ինչպես՝ մընալիս «մնում», իրվալիս «երևում», փիլփիլալիս «փայլփլում» և այլն) և մի քանի անկանոն բայերում (ինչպես՝ նէլիս «գնում», կ'ալիս «գալիս», տալիս «տալիս» և այլն): Գրաբարի համեմատ Վարհավարի եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական սիստեմը Մեղրու և Կարճևանի բարբառների ազդեցությամբ չի կարելի բացատրել, քանի որ լեզվական այն միջավայրում, ուր գտնվում է նա, ավելի ուժեղ է երկաստիճան ձայնեղաղուրկ բաղաձայնական սիստեմ ունեցող բարբառների ազդեցության ոլորտը, քան Մեղրու ու Կարճևանի բարբառներինն է, որոնք միայնակ են մնում այդ տիպի բաղաձայնական սիստեմ ունեցող խոսվածքների շրջապատում. հետևաբար այդ խոսվածքի բաղաձայնական եռաստիճան անտեղաշարժ սիստեմը դալիս է հնից: -Ալ վերջավորություն ունեցող չեզոք սեռի բայերի անկատար դերբայի -ալիս վերջավորությունը նույնպես չի կարելի Մեղրու և Կարճևանի բարբառների ազդեցությամբ բացատրել. այս խոսվածքները անփոփոխ կերպով պահպանել են -ալիս, -ելիս դերբայական վերջավորությունները, մինչդեռ Մեղրու և Կարճևանի բարբառներում այդ վերջավորություններից մնացել է միայն ս հնչյունը: Մեր կարծիքով, Կաքավաբերդի խոսվածքները հնում եղել են Ս ճյուղի խոսվածքներ. հավանաբար Ում ճյուղի ազդեցությանն են ենթարկվել այն ժամանակներում, երբ Ս ճյուղի

բարբառները անկատար դերբայում ունեին լրիվ -ալիս, -ելիս վերջավորություններ:

Կաքավաբերդի խոսվածքների անկատար դերբայի վերապրուկային այդ ձևերը, ինչպես նաև հնչյունական և ձևաբանական այլ ընդհանրությունները իրավունք են տալիս ենթադրելու, որ այդ խոսվածքները վաղ ժամանակներում Մեղրու և Կարճևանի բարբառների հետ մի սերտ միասնություն են կազմել և ճյուղային նույն հատկանիշներն են ունեցել: Միաժամանակ կարելի է հետևցնել, որ աշխարհագրական այս միջավայրում Կարճևանի և Մեղրու բարբառները, որպես Ս ճյուղի բարբառներ, միայնակ չեն եղել. հնում այստեղ տարածված են եղել իրենց ընդհանուր բնորոշ առանձնահատկություններով տեղային բարբառներ, որոնցից միայն Կարճևանի և Մեղրու բարբառներն են, որ լրիվ կերպով պահպանել են այդ ճյուղի բնորոշ առանձնահատկությունները:

Կարճևանի բարբառի դիրքը Ս ճյուղի բարբառների մեջ որոշվում է անկատար դերբայի կառուցվածքով:

Կարճևանի բարբառը ունի անկատար դերբայի երկու ձև՝ յ և ա վերջավորությամբ. այսպես՝ բիրիյ || բիրիս «բերում», խիրիյ || խիրիս «եփում», լիսիյ || լիսիս «լսում», ծիրիյ || ծիրիս «ծեփում», իրվա՛յ || իրվա՛յս «երևում» և այլն: Դերբայական այդ ձևերը իմաստային ոչ մի տարբերություն չունեն. ունեն միայն տարբեր կիրառություններ: Այսպես. երբ նախադասության մեջ օժանդակ բայը դերբայից նախադաս է, օգտագործվում է ա վերջավորությամբ դերբայը, ինչպես օրինակ՝ իս իմ բիրիս «ես եմ բերում», դու վրս բիրիս» «դու ես բերում» և այլն: Իսկ երբ օժանդակ բայը հաջորդում է դերբային, գործածվում է յ վերջավորությամբ ձևը. ինչպես՝ բիրիյ իմ «բերում եմ», բիրիյ իս «բերում ես» բայց՝ բիշի՛ս ա «բերում է» (որի մասին ստորև), հոգնակիում բիրի՛յ իք՝ «բերում ենք, բերում եք», բիրիյ ին «բերում են»:

Անկատար դերբայի այս ձևերը իրենցից ներկայացնում են հայերենի -ալիս, -ելիս վերջավորությամբ դերբայի պատմական զարգացման հետևանքը կամ արդյունքը: Այդ պարզելու համար քննենք, թե պատմական զարգացման ու փոփոխությունների ինչպիսի ուղի է անցել այդ դերբայը, մինչև հասել է Կարճևանի բարբառում արձանագրված ձևին: Վերցնենք, օրինակ, մնալ, գրել, մոռանալ, բարձրանալ բայերը, որոնց մնալիս, գրելիս, մոռանալիս, բարձրանալիս դերբայական ձևերը ըստ Կարճևանի բարբառի հնչյունափոխական օրենքների պետք է լինեին՝ մընալիս, դիրիլիս, մը-

ընթիլիս, բիձրինթիլիս, որոնց մեջ շեշտը, այս բարբառին հատուկ օրենքով, վերջընթեր է: Հիշյալ դերբայական ձևերը ներկայացված են Ղարադաղի և Արդվինի բարբառներում (ինչպես նաև Կաքավաբերդի խոսվածքների -ալ լծորդության բայերում), որոնց մեջ լրիվ կերպով պահպանված են դերբայական վերջավորությունները: Մյուս բարբառներում, այդ թվում և Կարճևանի բարբառում, հետագա ամբողջ զարգացումը հետևանք է յ>յ հնչյունափոխության, որը առաջացել է յ ձայնորդի փափուկ արտասանության հետևանքով: Այդ ձայնորդի փափուկ արտասանությունը այժմ էլ գործուն է Կարճևանի բարբառում: Այդ յ>յ փոփոխության հետևանքով վերը բերված դերբայական ձևերը դարձել են՝ մընայիս, գիրիյիս, մըընթիլիս, բիձրինթիլիս: Այսպիսի վիճակ ներկայացնում են Դրզմարի և Բեյվան-Շադախի բարբառները. ինչպես Դզմարում՝ մընայիս ըմ, «մնում եմ», գիրիյիս ըմ «գրում եմ», Բեյվանում՝ մընայիս ըմ, կիրիյիս ըմ և այլն[1]: Փոփոխությունը շարունակվել է վերջընթեր շեշտի ազդեցությամբ. ըստ որում յ ձայնորդը և նրան հաջորդող ի ձայնավորը արտասանության տեղով շատ մոտ լինելով իրար, ձուլվել են: Այդ երևույթին նպաստել է այն հանգամանքը, որ շեշտազուրկ ի-ն զրկվել է իր ձայնավորական հատկանշից, վերածվել յ-ի և նույնացել իրեն նախորդող յ ձայնորդի հետ: Այս առտիճանում անկատար դերբայը ունեցել է՝ մընայ, գիրիյ, մըընթիյ, բիձրինթիյ ձևերը: Կարճևանի բարբառում այս վիճակը ներկայացնում են -ալ, -էլ, -ուլ վերջավորություն ունեցող բայերը, ինչպես՝ տայ «տալիս», դույ «գալիս», ցույ «տեսնում», լէյ «լալիս», նէյ «գնում», մընայ «մնում», իրվայ «երևում» և այլն, որոնք դերբայական այն ձևերն են, որ գործածվում են օժանդակ բայից հետո: -Ի վերջավորություն ունեցող բայերում, նշված նույն օրինաչափությամբ, շեշտակիր ի-ն իրեն է ձուլել հաջորդ յ ձայնորդը, և այդ բայերում անկատար դերբայը առացել է գիրիս, մըընթիս, բիձրինթիս տեսքը, իսկ -ալ, -էլ, -ուլ վերջավորության բայերում ա-ից առաջ յ ձայնորդը պահպանվել է այն պարզ պատճառով, որ յ-ին նախորդող ձայնավորները (ա, է, ու) արտասանության տեղով մոտ չեն եղել նրան:

Անկատար դերբայի նման վիճակ ներկայացնում են նաև Մեղրու, Հադրութի, Ուրմիայի բարբառները, միայն թե սրանց մոտ դերբայի վերջին ձայնավորը կարող է լինել ա կամ է (գի-

[1] Տես Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953 թ., էջ 282:

բէս, մնաս)։ Այս է Ս ճյուղի բարբառների անկատար դերբայի պատմական զարգացման ուղին։ Մյուս բոլոր բարբառներում փոփոխությունը այստեղ էլ կանգ է առնում. մինչդեռ Կարճևանի բարբառում փոփոխությունը մի աստիճան էլ առաջ է ընթանում։ Կարճևանի բարբառում այդ նոր փոփոխության հետևանքով առաջանում են մընա՛յ, գիրի՛յ, մըընի՛յ, բիձրինի՛յ դերբայական ձևերը, որոնք երևնցից ներկայացնում են դերբայական նույն ձևերը, ուր, սակայն, ընկել է վերջահանգ ա-ն։

Քանի որ անկատար դերբայի յ վերջավորությամբ ձևը առաջացել է օժանդակ բայից նախադաս գործածության պայմաններում, ուստի և մենք կարծում ենք, որ այդ փոփոխությունը, այսինքն՝ ա-ի անկումը, նախ տեղի է ունեցել եզակի երկրորդ դեմքում (գիրիյս իս, մըընիյս իս, բիձրինիյս իս ձևերում), որտեղ երկու ա-երի տարնմանությամբ ընկել է դերբայի ա հնչյունը (գիրիյ իս, մըընիյ իս, բիձրինիյ իս). այնուհետև ա՛յն անալոգիայով տարածվել է բոլոր այն դեմքերում, որտեղ օժանդակ բայի ձայնավորը եղել է ի (գիրիյ իմ, գիրիյ իս, գիրիյ ինք, գիրիյ ին), հետևաբար բացառելով միայն եզակի թվի երրորդ դեմքը, որտեղ, օժանդակ բայը ա լինելու պատճառով՝ այդ օրենքը չի գործել (գիրիս ա, մըընիս ա, բիձրինիս ա), և ա-ն պահպանվել է։

Անկատար դերբայի այս ձևը (գիրիյ, մըընիյ, բիձրինիյ և այլն), որ ներկայացնում է Ս ճյուղի բարբառների նույն դերբայի զարգացման վերջին փուլը, հատուկ է միայն Կարճևանի բարբառին։ Մեղրու բարբառը, որ շատ կողմերով ավելի մոտ է կանգնած Կարճևանի բարբառին, չունի դերբայական այսպիսի ձև. նրան հատուկ է միայն ա վերջավորությամբ անկատար դերբայ՝ ինչպիսի կիրառությամբ էլ որ այն գործածվի։

Այսպիսով, Կարճևանի բարբառը իր եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական սիստեմով (գրաբարի համեմատ) մոտ է կանգնած Աղուլիսի, Մեղրու և Կաքավաբերդի բարբառներին, ձայնավորների փոփոխությամբ՝ Մեղրու, Կաքավաբերդի և Ղարաբաղի բարբառներին, իսկ իր ճյուղային պատկանելության հատկանշով, այն է՝ անկատար դերբայի կազմությամբ, Ս ճյուղի բարբառների մեջ գրավում է ուրույն տեղ։

* * *

Ինչպես նշվեց վերը, Կարճևանի բարբառի առաջին համառոտ նկարագրությունը պատկանում է պրոֆ. Ա. Ղարիբյանին, որը իր «Հայ բարբառների մի նոր ճյուղ», իսկ այնուհետև «Հայ բարբա-

ագիտություն» աշխատությունների մեջ ընդհանուր գծերով նկարագրել է Կարճևանի բարբառի լեզվական իրողությունները: Այդ աշխատություններից առաջինում հեղինակը, նմուշներից բացի, վերջում տվել է նաև Կարճևանի բարբառի բառացանկը համեմատությամբ գրաբարի և Ս ճյուղի այլ բարբառների: Կարճևանի բարբառով մի ընդարձակ նմուշ ունի պրոֆ. Էդ. Աղայանը իր «Մեղրու բարբառը» աշխատության մեջ: Նույն աշխատության «Նախնական տեղեկություններ» բաժնում հեղինակը, Մեղրու բարբառի դիրքը Ս ճյուղի մեջ որոշելիս, անդրադառնում է նաև Կարճևանի բարբառի անկատար դերբայի կազմությանը: Ա. Ա. Աբրահամյանը իր «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» աշխատության մեջ անդրադառնում է նաև Կարճևանի բարբառի դերբայներին, հիմք ընդունելով այն նյութը, որ հրապարակված է պրոֆ. Ա. Ղարիբյանի կողմից: Այս բոլորով սպառվում են Կարճևանի բարբառի մասին կամ նրանով գրված մեզ հայտնի աղբյուրները:

Կարճևանի բարբառի ուսումնասիրության աշխատանքները սկսել ենք 1953 թվականին: Ուսումնասիրության համար անհրաժեշտ հիմնական աշխատանքը կատարված է Կարճևանում: Ուսումնասիրության ընթացքում լեզվական երևույթները ավելի ճիշտ արձանագրելու համար աշխատել ենք, ինչքան հնարավոր է, շատ բարբառախոսներ ընդգրկել: Կարճևանի բարբառը մեր հայ բարբառների մեջ թեև դժվար հասկանալի բարբառներից մեկն է, բայց այս աշխատության հեղինակը ինքը Մեղրու բարբառի ներկայացուցիչ լինելով, չի դժվարացել դյուրությամբ ըմբռնելու և գրառելու Կարճևանի բարբառի լեզվական իրողությունները: Հասկանալի է, որ այս աշխատության մշակման պրոցեսում օգտագործվել են նաև փաստական ու տեսական այն գործերը, որոնց մասին հիշատակվեց վերը. սակայն հիմնական աշխատանքը կատարվել է բարբառի կենդանի խոսողների միջոցով: Դրանցից հատկապես նշելի են բնիկ կարճևանցիներ՝

Աբյան Արծվիկ— Կարճևանի յոթնամյա դպրոցի երկարամյա ուսուցչուհի

Աղայան Ժորա— նույն դպրոցի դիրեկտոր

Կարապետյան Դավիթ— ծնված 1880 թ.

Կարապետյան Ռաֆիկ— վիճակագրական վարչ. աշխատող

Հովակիմյան Դավիթ— ծնվ. 1887 թ.

Մարուքյան Բարկեն— Կարճևանի կոլտնտեսության գյուղա-

տընտես և ուրիշներ, որոնց մենք անչափ շնորհապարտ ենք նրանց անշահախնդիր օգնության համար:

Ներկա աշխատությունն ընդգրկում է Կարճևանի բարբառի հնչյունաբանությունը, ձևաբանությունը, բառագիտությունը (բառարաններով հանդերձ): Աշխատությանը կցվող հավելվածում ընտրությամբ զետեղված են ինչպես հրապարակված, այնպես և մեր կողմից հավաքված տեքստերը:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀՆՉՅՈՒՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

1. Կարճանի բարբառին հատուկ են հետևյալ հնչյունները.

ա) Ձայնավորներ. ա, օ, ու, է, ի, ը, ըէ, ա̈, օ̈, ու̈.

բ) Բաղաձայններ.

Պայթականներ	Պայթաշփականներ	Շփականներ
բ, պ, փ	ձ, ծ, ց	վ, —
դ, տ, թ	ջ, ճ, չ	զ, ս
գ, կ, ք		ժ, շ
գյ, կյ, քյ		ղ, խ
		—, հ

գ) Ձայնորդներ լ, մ, յ, ն, ռ, ր։

Ընդամենը 42 հնչյուն։

2. ա, օ, ու, ը ձայնավորներն իրենց որակով նույնն են ժամանակակից հայերենի համապատասխան ձայնավորների հետ. ա̈-ն արտասանվում է ադրբեջաներեն ə հնչյունի նման և ըստ արտասանության տեղի առաջնային շարքի (կամ առաջնալեզվային) ստորին բարձրացման ձայնավոր է։ օ̈, ու̈ ձայնավորները արտասանվում են գերմաներեն ö, ü հնչյունների նման. սրանք առաջնալեզվային միջին և վերին բարձրացման շրթնայնացած ձայնավորներ են, է, ի ձայնավորների արտասանության բովը ժամանակակից գրական հայերենի նույն ձայնավորների արտասանության բովից մի քիչ ավելի առաջ է. ըէ ձայնավորը արտասանվում է ը և է ձայնավորների արտասանության միջին դիրքում՝ որպես մի պարզ հնչյուն։ Բարբառում բարդ ձայնավորները (երկբարբառներ ու եռաբարբառներ) չկան։

Ծանոթություն.— Առաջնային շարքի ա̈, օ̈, ու̈, է, ի ձայնավորների համար օգտագործում ենք նաև «թեթև ձայնավոր-

ներ» տերմինը. ի հակադրություն ա, օ, ու, ըէ, ը ձայնավորների, որոնց համար օգտագործվում է նաև «ծանր ձայնավորներ» տերմինը:

3. Բաղաձայնները ժամանակակից գրական հայերենի բաղաձայնների համեմատությամբ որակական տարբերություններ չունեն. այստեղ առկա է միայն միջնալեզվային պալթականների շարքը՝ գ՝, կ՝, ք՝, որոնք հիմնականում հանդես են գալիս առաջնալեզվային (թեթև) ձայնավորներից առաջ:

Լ ձայնորդը ունի փափուկ արտասանություն, որը առանձին նշանով չենք նշում:

Բ. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1. Ձայնավորների փոփոխությունները

Ա.

4. Հին հայերենի ա-ն միավանկ և մեկուկես վանկանի բառերի սկզբում մնացել է անփոփոխ. այսպես օրինակ՝ ազն>ազը, ակն>ակնը, աղ>աղ, աղբ>ախպ, արջ>առջ, արտ>արտ և այլն: Միակ բացառությունը աղտ բառն է, որ բարբառումս դարձել է յեխտ (այդպես նաև Ղարաբաղի և Մեղրու բարբառներում), որից և ածանցմամբ՝ աղտոտ>յէխտուտ:

5. Հին հայերենի ա-ն երկվանկ բառերի սկզբում շեշտի տակ դարձել է ա՛ երկու գործոնների առկայության պայմաններում. ա) եթե ա-ին հաջորդող հնչյունը լ, ն, ր, ւ ձայնորդներից որևէ մեկն է, բ) եթե բարբառային ձևի երկրորդ վանկի վանկարարը առաջնային շարքի ձայնավոր է. այսպես՝ ալիւր>ա՛լեր, անէծք>ա՛նիսկ՝, անիծ>հա՛նիծ, արբենալ>հա՛րբիլ, արդի>հա՛րդա, արև>ա՛րիվ, արիւն>ա՛ռեն, արճիճ>ա՛ռճաճ, աւել>ա՛վիլ: Միակ բացառությունը աներ>ա՛նիր բառն է, որտեղ շեշտի տակ պահպանվել է հին հայերենի ա-ն:

Ագի>հա՛գ՝ին բառում ա>ա՛ փոփոխությունը կատարվել է երկրորդ վանկի առաջնային շարքի ձայնավորի, ն ձայնորդի և դրանց ազդեցությամբ քմայնացած գ՝ հնչյունի ներգործությամբ: Ա>ա՛ փոփոխությունն ունեն նաև ապրալ>ա՛բրա՛, արձակ>հա՛ռձակ՝ բառերը, որոնցից առաջինը արաբական փոխառություն է:

6. Նախորդ կետում հիշատակված պայմանների բացակայության դեպքում, երկվանկ բառերի բառասկզբում շեշտի տակ գտնվող

վող ա-ն պահպանվել է անաղարտությամբ. ինչպես՝ ազատ>ազատ, ախոռ>ախուռ, ածել>ածիլ, ականջ>անգուճ, ակիշ>ակիշ ակօս>ակուս, աղբիւր>ախպուր և այլն:

7. Երկվանկ բառերում, երբ ա-ն շեշտից առաջ է, փոխվել է ը-ի: Այս կարգի օրինակներն են՝ առնէտ>ըռնատ, աղագ>հըղաք «ճանապարհ»: Այս փոփոխությունը միանգամայն օրինաչափ է, որի մասին տես §§ 9 և 30. Միակ բացառությունը ազահ>ակահի՛ բառն է, որտեղ բարբառային ձևում, թեև ի-ի հավելումով բառը դարձել է եռավանկ, բայց, այնուամենայնիվ, շեշտից առաջ գտնվող ա-երը պահպանվել են: Այս բառաձևը ամենայն հավանականությամբ փոխառություն է մի այլ բարբառից, ինչպես այդ երևում է գ>կ փոփոխությունից, որը հարազատ չէ բարբառիս հնչյունափոխական կանոններին:

8. Այս բոլոր օրենքներից դուրս բառասկզբի ա-ն երկվանկ բառերի սկզբում կրել է հետևյալ մասնակի փոփոխությունները.

ա>օ —ամէն> օմման «բոլորը»— միակ օրինակը,

ա>ու, ը— առանց>ուռունց, ըսը՛նց— միակ օրինակը, որը կա նաև Ադուլիսի բարբառում:

Ծանոթություն.— Առանց բառի մասին պրոֆ. Հ. Աճառյանը իր «Բննություն Ադուլիսի բարբառի» աշխատության մեջ գրում է. «Առանց բառը ստանում է չորս ձև, որոնք բոլորն էլ կանոնավոր և համապատասխան են վերոհիշյալ օրենքներին. նախ դառնում է ա՛ռանց (§ 12), շեշտի տեղափոխությամբ՝ ըռունց (§ 14), որ գործածական է Ցղնայում, սրանից է առաջանում ը ձայնավորի նմանությամբ՝ ուռունց, և վերջապես համարվելով մի մասնիկ և զրկվելով ձայնավորներից՝ ըռընց» (Հ. Աճառյան, Բննություն Ադուլիսի բարբառի, Երևան, 1935 թ. էջ 32): Կարճևանի բարբառում այդ ձևերից առկա են ըռընց և ուռունց ձևերը, որոնցից ավելի գործածական է առաջինը:

9. Բազմավանկ (երեք և ավելի վանկ ունեցող) բառերում բառասկզբի ա-ն շեշտից առաջ փոխվել է ը-ի. ինչպես՝ ազատել>ըզատիլ, ականամոմ>ըկնամում, աղաման>ըղման, աղաջուր>ըղէջուր, սղբանոց>ըսպանուց, աղբիւրաջուր>ըսպրէջուր, ամաչել>հըմանչիլ, ամառնամուտ>ըմըռնամուտ, առաջին>ըռջի և այլն:

Բացառություն են կազմում ապրշում>աբրիշում, ապրիշմի>աբրիշո՛ւմի, աջողութիւն>հաչողութին, աստուածածին>աստվածա-

440—2

ՀՅՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
Ա 4430

ձին, արհամարհել > առհամարել, արքայութիւն > արքայութիւն «դրախտ», աւագակ > ավազակ բառերը, որոնք որպես գրական լեզվից կամ այլ բարբառներից կատարված փոխառություններ, չեն ենթարկվել նշված օրինաչափությանը[1]:

Արիւնաթաթախ > ա՛ռնթաթախ բարդ բառի բաղադրիչների անկախ դիտակցման պատճառով առաջին եզրի բառի ա-ն շեշտից առաջ պահպանել է բառի բարբառային արտասանությունը (արիւն > ա՛ռն):

10. Մի քանի բազմավանկ բառերում բառասկզբի ա-ից առաջացած ը-ն փոխվել է ի-ի՝ հաջորդ վանկի առաջնային շարքի ձայնավորի ազդեցությամբ. այսպես՝ ալեւոր > հիլէվոր, նաև՝ հնիլօ՛վոր (ձայնավորների ներդաշնակությամբ), արեգակն > իրինակ, աւելորդ > իվիլնօրթ, աւելանալ > իվիլէնել, աւելի > իվիլի: Նույն օրինաչափությանն են ենթարկվել ագարակ > հիգէրակ (գյուղանուն), անկանակ > հինգէնակ բառերը, որոնց մեջ շեշտի տակ գտնվող ա-ն փոխվելով ի-ի, հնարավոր է դարձրել բառասկզբի ա > ը > ի փոփոխությունը:

Աւելուկ բառից սպասելի էր *իվիլուկ ձևը, բայց ձայնավորների կատարյալ ներդաշնակությամբ ունենք ա՛վլ՛ուկ բառաձևը:

11. Բազմավանկ բառերից այս օրինքներից դուրս են մնում ալէլու > ա՛լա՛լու և աշկարայ > ա՛շկա՛ր բառերը (վերջինս ուշ շրջանի փոխառություն է):

12. Մի քանի բազմավանկ բառերի բառասկզբի ա-ն բաց վանկում ընկել է. սա այդ բառերը՝ ածելի > ծ՛ելի, աղանձել > ղա՛նձիլ, աղանձուտ > ղա՛նձուտ, աղաչանք > ղա՛չանք, աղաւնի > ղա՛ունի, անալի > նա՛լի, անկանել > նանիլ, ապսպարել > փըսպա՛րիլ, աքացի > քյա՛ցի: Աշակերտ > շագէրդ «արհեստավորի աշակերտ» բառը նոր պարսկերենից կատարված անմիջական փոխառություն է, որի մասին վկայում են ձայնեղ պալիթականները խուլերի փոխարեն (պարսկ. شاگرد šāgerd):

13. Բառասկզբի ա-ն պահպանվել է ան ժխտական ածանցում, անկախ այն բանից շեշտի տակ է, թե շեշտից առաջ: Այսպես օրինակ՝ անամօթ > անամութ, անարեւ > անիրիս, անժամ > անժէմ, անլեզու > անլա՛զու, անխելք > անխիլքյ, անպէտք > ան-

---

[1] Բարբառային փոխառության աղբյուրները չեն նշվում՝ Կարճևանի բարբառի շրջապատում խոսվող բարբառների (բացի Մեղրու բարբառից) ուսումնասիրության բացակայության պատճառով:

պատՀ և այլն։ Միակ բացառությունը անալի>նա՛լի բառն է, որտեղ բառասկզբի ա-ն ընկել է բաց վանկում՝ նախաձանցի մթագնման հետևանքով, իսկ բառամիջի ա>ա՛ փոփոխությունը կատարվել է փափուկ ձայնորդների և առաջնային շարքի ձայնավորի ազդեցությամբ։

14. Բաղաձայնով սկսվող միավանկ ու մեկուկես վանկանի բառերում, հակառակ ա-ով սկսվող միավանկ բառերի (տես § 4), ա-ն կրում է մի շարք փոփոխություններ։ Կասկածից դուրս է, որ այդ փոփոխությունների պատճառը ա ձայնավորի դիրքն է բառի մեջ, այսինքն՝ որ նա հաջորդում է բաղաձայն հնչյունի։ Այս տիպի մի շարք բառերում ա-ն հնչյունափոխվել է է-ի՝ բ, գ, դ, ժ, լ, ձ ձայնեղ և ծ, ճ, շ, չ խուլ բաղաձայններով սկսվող բառերում. ինչպես՝ բակ>բէկ (Կալբէկ=կալ+բակ «կալսելու բակ» տեղանվան մեջ), բահ>բէհ, բան>բէն, բարձ>բէրծ, բաց>բէց, գաբ>գէփ, գնալ>նէլ, դափ>դէփ, ժախ>ջէխ, ժամ>ժէմ, լալ>լէլ «լաց լինել», լանջ>լէնջ, լաց>լէց, լափ>լէփ, ծագ>ծէգ՝, ձագ>ձէգ՝, ձախ>ձէխ, ճանճ>ճէնջ, ճաշ>ճէշ, շաղ>շէղ, շար>շէր, շարժ>շէրժ, չափ>չէփ, ինչպես նաև սրանցից ածանցված ու բարդված ձևերում, ինչպես՝ բացատ>բէցուտ, բերանբաց>բէրանբէց, գլխիբաց>կըլխըբէց, լափել>լէփիլ, ծագել>ծէգ՝իլ, շանաճանճ>շընաճէնջ, շարել>շէրիլ, չափել>չէփիլ։ Այս օրինաչափությունը ձայնեղ բաղաձայնով սկսվող բառերում ավելի կայուն է. բացառություն են կազմում՝ բախտ>բախտ, գանձ>գանձ, դամ>դա՛մ «երգի, նվագի ձայնակցություն», դաս>դա՛ս, դատ>դատ, որոնցից դանձ և դատ բառերը չեն ենթարկվել հիշյալ օրինաչափությանը որպես գրական փոխառություններ, իսկ մյուսները՝ որպես ուշ շրջանի փոխառություններ։ Խուլ բաղաձայններով սկսվող բառերում ա>է փոփոխությունը անկայուն է. այստեղ ա ձայնավորի կայունությունն ավելի հաստատուն է, այսպես՝ ծալք>ծալք, ծախս>ծախս, ծակ>ծակ, ծամ>ծամ, ճար>ճար, ճրագ>ճրագ, շահ>շահ, շամբ>շամբ, շատ>շատ, չար>չար։ Այս նշանակում է, որ ա>է փոփոխությունը հատուկ է եղել ձայնեղ (հատկապես պայթական) բաղաձայնով սկսվող բառերին, իսկ մյուսներում այդ փոփոխությունը կատարվել է ընդհանրացմամբ։

Կրակ>գ՝իրէկ բառում ա-ն նույնպես ենթարկվել է այս օրինաչափությանը, սակայն այն բանից հետո, երբ կ-ն հնչյունափոխվել է գ-ի։

15. Բաղաձայնով սկսվող մի շարք միավանկ և մեկուկես վանկանի բառերում ա-ն հնչյունափոխվել է ա-ի: Ահա այդ բառերը՝ դամ>դամ, դաս>դաս, թանդ>թանդ, թառ>թառ, թանձր>թա՛նձիր, խալ>խալ, ծափ>ծափ, հազ>հազ, հալ>հալ «հալոց», ծալ>ծալ, կաթ>կ՛ա՛թ «կաթիլ», կալ>կ՛ա՛լ «ցորենի կալ», մարտ (ամիսը)>մա՛րդ, նարտ>նարդի, սա>զա, սալ>սալ, վարդ>վարդ, փառ>փառ:

16. Բաղաձայնով սկսվող միավանկ և մեկուկես վանկանի բառերում ա-ի փոփոխության հիմնական տենդենցը, այսպիսով, ա>ա> է փոփոխությունն է, որը հնչյունաբանորեն միանգամայն օրինաչափ է, ետնալեզվային ա-ից առաջնալեզվային միջին բարձրացման է-ին անցնելը, բնականաբար, կատարվել է առաջնալեզվային ստորին բարձրացման ա-ի վրայով: Ձայնեղ պայթականներից հետո ա>է փոփոխության երևույթը ըստ էության հայերենի մի շարք բարբառների այն օրինաչափության դրսևորումներից մեկն է, որ մեծ հայագետ Հ. Աճառյանը հայտնաբերել է Վանի բարբառում («Աճառյանի օրենք»): Ըստ այդ օրենքի Վանի բարբառում հայերենի ա-ն ա է դարձել բոլոր այն բառերում, որոնցից առաջ գրաբարում եղել է ձայնեղ պայթական (դրանք Վանի բարբառում դարձել են խուլ պայթականներ): Կարճեանի բարբառը (ինչպես նաև Ղարաբաղի, Մեղրու, Կաքավաբերդի և այլն) ձայնեղ պայթականներից հետո այդ անցումը մի աստիճան ևս առաջ է մղել (ա>եա>է):

17. Վերը նշված փոփոխություններից բացի, միավանկ ու մեկուկես վանկանի բառերում ա-ն կրել է նաև հետևյալ մասնակի փոփոխությունները.

ա>ը՝ -գաղձն>գըէղնը, գառն>գըէռնը բառերում: Այս բառերը § 14-ում նշված օրինաչափության ենթարկվող բառեր են, ուստի սրանք ա-ն նախ հնչյունափոխել են է-ի, և այդ է-ն է, որ հետո դարձրել են ը՝:

ա>օ— քաղցր>քո՛խցուր, քաղց>քոխց, քաղցած>քո՛խցած բառերում, բոլորն էլ խց-ից առաջ:

ա>ո— բարձր>բո՛ձուր, գառն>գ՛ո՛ռնը բառերում ր, ռ-ից առաջ:

ա>ու— գալ>գուլ բառում:

ա>ու— դգալ>դուգու՛լ բառում:

ա>ը— բանկն>պը՛նգըլ, ժանգ>ժընգ, խաղ>խըղ «դիծ» բառերում:

18. Բաղաձայնով սկսվող երկվանկ բառերում ա-ն շեշտի տակ կրել է մի շարք փոփոխություններ: Այդ փոփոխությունները ինչպես տարել է արդեն բաղաձայնով սկսվող միավանկ բառերի մասին, հիմնականում ունեն ա>ա>է ընդհանուր օրինաչափությունը: Այստեղ նույնպես նկատելի է, որ ա>է փոփոխությունը գերազանցապես կատարվել է ձայնեղ բաղաձայնով սկսվող բառերում. իսկ բաղաձայնով սկսվող բառերում այդ երևույթը օրինաչափ չէ, թեև դրա համար ունենք չորս օրինակ: Ահա ա>է օրինաչափությանը ենթարկված բառերը. բաժին>բէժին, բաժինք>բէժինք, բակլայ>բէկլի, բամբակ>բէմբակ, բանջար>բէնջար, բարակ>բէրակ, գանգատ<գէնգատ, գանակ>գէնակ, գատարկ>գէռակ, գարման>գէրման, գատիկ>գէ՛տիկ, ճակատ>ճէկատ, յատակ>յէ՛տակ, շաբաթ>շէբաթ (որից և երեքշաբաթ>իրիքշէբաթ, երկուշաբաթ>յերկըշէ՛բաթ), շալակ>շէլակ, ջրաղաց, ջաղաց>ջէղաց:

Ծանոթություն.—Բարբառին հայտնի են նաև պաժին<բաժին. պաժինք<բաժինք ձևերը, որոնք հավանաբար բարբառային փոխառություններ են:

19. Երկվանկ բառերում շեշտի տակ գտնվող ա-ի դիմաց ա ունենք հետևյալ բառերում. գազար>գազար, զափրան>զա՛փրան, թաթուլ>թա՛նթաւլ>, խաբել>խա՛բիլ, կաթել>կա՛թիլ, կանաչ>կա՛նիչ, կանգնել>կա՛ննիլ, կանեփ>կա՛նիփ, կապույտ>կա՛պիտ, կարդալ>կա՛րդիլ, կարմիր>կա՛րմիր, կացին>կա՛ցին, հաջել>հա՛ջիլ, կալուլ>կա՛լիլ, մանգաղ>մա՛նգաղ, մարագ>մա՛բագ, շաքար>շա՛քար, պատրույգ>պա՛տրուգ, քանդել>քա՛ննդիլ, քանի>քա՛նի, քարճիկ>քա՛րչիկ, քարշել>քա՛շիլ:

20. Հետևյալ բառերում ա-ն ր ձայնորդից առաջ դարձել է ո. գարի>գո՛րի, գարուն>գո՛ռունք, հարիւր>հո՛ռիր: Վերջին երկու բառը ենթարկվում են բարբառիս հնչյունափոխական այն օրինաչափությանը, ըստ որի շեշտի տակ գտնվող ա-ն փոխվում է օ-ի, երբ հաջորդ վանկի վանկարարը ու է: Այդ օրինաչափությամբ ունենք տամվար, սեռ. տամվօրու, ուխչար<ոչխար, սեռ. ուխչօրու և այլն, ինչպես նաև -ար, -նա հոգնակի վերջավորությունները թեք հոլովներում, ինչպես՝ սար, հգն. ուղղ. սարեր, սեռ. սարօրու, կանքավ, հգն. ուղղ. կանքավնա, սեռ. կանքավնօ՛ռու և այլն: Այս նույն օրինաչափությամբ է ա-ն փոխվել օ-ի § 17-ում նշված բարձր>բո՛ձիր բառում՝ գաղտնավանկում ը>ու հնչյունափոխու-

թյունից հետո։ Նույն կետում նշված գառն>գ'ո՛ռնը և այստեղ նշված գարի>գ'ո՛րի բառերը ա>ո հնչյունափոխությունը կատարել են գարուն>գ'ո՛ռունք բառի անալոգիայով, որոնց մեջ բառասկիզբը (գար-) ընդհանուր է։

21. Զամիչ բառի մեջ եղանթաց առնմանությամբ ստացվել է չիմիչ ձևը։

22. Սապոն>սո՛ւպուն բառի մեջ նախ կատարվել է ո>ու փոփոխությունը՝ սապուն, ինչպես այդ կա նույն ճյուղի Արդվինի և Հադրութի բարբառներում, ապա եղանթաց առնմանությամբ դարձել է սո՛ւպուն։

23. Երկվանկ բառերում շեշտից հետո գտնվող ա-ի դիմաց ունենք ա՛ հետևյալ բառերում. գազար>գ'ա՛զա՛ր, զափրան>զա՛փռա՛ն, խորակ>խօ՛ռա՛գ, մանգաղ>մա՛նգ'ա՛ղ, շաքար>շա՛-քա՛ր, ուրբաթ>օ՛ռբա՛թ, շաբաթ>շէ՛բա՛թ, փենթակ>փէ՛ն թակ (փա՛-թա՛կ)։

24. Հազար բառը ունի հ'ազէր, հէ՛զար ձևերը։ Գրական լեզվի ազդեցությամբ կա նաև հազար ձևը։

25. Կանաչ>կ'ա՛նիչ բառի մեջ շեշտից հետո ա>ի փոփոխությունը կատարվել է կարմիր>կ'ա՛ռմիր բառի նմանությամբ (հմմտ. կ'ա՛նիչ—կ'ա՛ռմիր «ծիածան»)։ Կ'ա՛նիչ բառի նմանությամբ է կատարվել ա>ի փոփոխությունը ճանաչ>ճա՛նիչ բառում, որը միայն մի հնչյունով է տարբերվում կ'ա՛նիչ<կանաչ բառից։

26. Զոքանչ>զէ՛նքուչ բարբառային բառաձևը առաջացել է դրափոխությամբ առաջացած *զանքոչ ձևից, որի մեջ այնուհետև կատարվել են ա>է, ո>ու հնչյունափոխությունները։

27. Ականջ>ա՛նգուճ բառի մեջ և ձայնորդը դրափոխությամբ ընկել է կ խուլ պայթականից առաջ և նրան դարձրել ձայնեղ (*ան-գաջ), այնուհետև ձայնեղների տարնմանությամբ բառավերջի ջ պայթաշփականը խլացել է (անգաճ), իսկ ա>ու (ա՛նգուճ)։

28. Դժուար>դիժէ՛ր բառում նախ ընկել է ու հնչյունը, ապա ա-ն շեշտի տակ դարձել է է (տես § 14), իսկ բառասկզբի գաղտնավանկի ը-ն փոխվել է ի-ի՝ առաջնային շարքի է ձայնավորի ազդեցությամբ։

29. Բարդությունների մեջ, որպես կանոն, պահպանվել է ա հոդակապը. այսպես օրինակ՝ աղբախառն>ըխպա՛խառ, աղբախոտ>ըխպա՛խոտ, աղբատեղ>ըխպա՛տէղ, խանձրահոտ>խընձըրա՛վըէտ, շանաճանճ>շընա՛ճէնջ և այլն։ Այս օրենքից շեղվում են աղաջուր>ըղէջո՛ր, աղբիւրաջուր>ըխպըրէ՛ջո՛ր բառերը, որոնց մեջ ա

հոդակապը շեշտի տակ հնչյունափոխվել է ի-ի, թերևս հաջորդ վանկի առաջնային շարքի ձայնավորի ազդեցությամբ։

Արիւնաթաթախ>արիւնթաթախ բարդությունը բարբառում կազմվել է առանց ա հոդակապի, որը խորթ չէ հին հայերենին։

30. Բազմավանկ բառերում շեշտից առաջ գտնվող ա-ն, որպես կանոն, հնչյունափոխվել է ը-ի, այսպես օրինակ՝ ականջմուտ>ընդրճմըտլի, աղքատութիւն>ըխկրտութին, դառնահամ>դըռնահամ, զարմանալ>զըրմանիլ, ծանրանալ>ծընդրրէնիլ, կատաղել>կըտաղիլ, կարկատան>կըրկատան, հասանել>հըսանիլ, ճախարակ>չըխարակ, մանուշակ>մընուշակ, նապաստակ>ընպըրդտակ և այլն։

Այս օրենքին չեն ենթարկվել այն բառերը, որոնք գրական, կրոնական կամ այլ բարբառներից կատարված փոխառություններ են, ինչպես՝ բարեկամ>պարիկամ, բարեկենդան>պարիկէնթան, գաղթական>գաղթական, գաւազան>գավազան, դատաստան>դատաստան, ժառանգութիւն>ժառանգութին, հանգուցեալ>հանգուցյալ և այլն (այս մասին տես և § 9)։ Այս բառերից մի մասի վրա բարբառը դրել է իր կնիքը, այն է՝ դերբայական վերջավորությունները դարձրել է -իլ, ութիւն, աւոր ածանցները համապատասխանաբար դարձրել է օթին, ավուր, շեշտը տեղափոխել է վերջընթեր վանկի վրա, բայց շեշտից առաջ գտնվող ա-ն չի հնչյունափոխել, քանի որ դրանց փոխառման շրջանում այդ օրենքը դադարել էր գործելուց։

31. Բազմավանկ մի շարք բառեր շեշտից առաջ գտնվող ա-ն փոխել են ի-ի։ Սրանք հիմնականում ածանցավոր բառեր են և առաջացել են միավանկ ու երկվանկ այն բառերի ածանցումից, որոնց ձայնավորը՝ ա-ն, շեշտի տակ հնչյունափոխվել է է, ո, ա-ի։ Ածանցման հետևանքով է, ո, ա ձայնավորները շեշտակորույս լինելով՝ հնչյունափոխվել են ի-ի, պահպանելով այդ ձայնավորների առաջնային շարքի որակը։ Ահա այդ բառերը. բաժանել>բիժէնիլ (բաժին>բէժին), բամբասանք>բիմբէսանք, բամբասել>բիմբէսիլ (բամբաս>բէմբաս), բարձրանալ>բիձրէնիլ (բարձր>բո՛ձիր), գանգատել (գանգատիմ)>գինդէտիլ (գանգատ>գէնդ՛ատ), դադարել>դիթէրիլ (դադար>դէթար), բահել>բիրհիլ հին՝ բարհել-ից (բահ>բէհ), թանձրանալ>թինձիրէնիլ (թանձր>թա՛ձիր), կանգնեցուցանել>կիննիցա՛նիլ (կանգնել>կ՛ննիլ), կապտել>կիպիտիլ (կապույտ>կ՛ա՛պիտ), հիւանդանալ>հիվինդէնիլ (հիւանդ>հի՛վանդ), շալակել>շիլէկիլ (շալակ>շէլակ)։

Այս նույն օրինաչափությանն են ենթարկվել նաև ջախջախել>ճիճէխիլ, տարեկան>տիրէկան բառերը։

Հեշտացուցանել>հիշտիցա՛նիլ բառում ա>ի փոփոխությունը կատարվել է ձայնավորների ներդաշնակությամբ, այն բանից հետո, երբ ե-ն հնչյունափոխվել է ի-ի:

Վերը նշված բառերում առկա է մի այլ օրինաչափություն ևս. այդ բառերը շեշտի տակ գտնվող ա-ն (կամ արմատական կամ բայածանցի) հնչյունափոխել են է-ի. այդ օրինաչափությունը կայուն է, շեղվում են միայն կանգնեցուցանել>կինինիցա՛նիլ, հեշտացուցանել>հիշտիցա՛նիլ բառերը, որոնք որպես պատճառական կերպի բայեր օրինաչափորեն ունեն -ցանիլ վերջավորությունը:

32. Բազմավանկ բառերում, բացի § 31-ում նշվածներից, շեշտի տակ գտնվող ա-ն հնչյունափոխվել է է-ի նաև հետևյալ բառերում. ագարակ>Հիդէրակ, անկանակ>հինդէնակ, կորնգան>կըրընդէնի, զարդարանք>զըրթէրանք, (բայց՝ զարդարել>զըրթա՛րիլ), նշանել>նիշէնիլ (բայց՝ նշան>նըշան), կաչաղակ>քըչէղակ, երանեակ>հըրէնակ: Այս բառերում ա>է փոփոխությունը կատարվել է գ, թ(<դ), շ, չ բաղաձայններից հետո, որ համապատասխանում է §§ 14 և 18-ում նշված բառերի օրինաչափությանը: Անբացատրելի է մնում միայն ր-ից հետո երանեակ>հըրէնակ բառի մեջ ա>է փոփոխությունը, որը թերևս կատարվել է նմանությամբ:

33. Այս երկու օրենքներից դուրս մյուս բոլոր բազմավանկ բառերում շեշտի տակ գտնվող ա-ն պահպանվել է նույնությամբ կամ ձայնավորների ներդաշնակությամբ դարձել է ա, ինչպես՝ ազատել>ըզա՛տիլ, ամաչել>հըմա՛նչիլ, անկանել>նա՛նիլ, արածել>ըրա՛ծիլ, արտասուք>ըրտա՛սունք, երախայ>ըրա՛խի, ծիրանի>ծիրա՛նի, ճանաչել>ճընա՛նչիլ, չարչարանք>չըրչա՛րանք և այլն:

34. Բազմավանկ այն բայաձևերում, որոնց մեջ առկա է ան բայածանցը, շեշտի տակ գտնվող ա-ն (բայածանցի ձայնավորը) ներկայացնում է երեք վիճակ՝ ա, ա, է. այսպես՝

ա) գողանալ>գիղա՛նիլ, զարմանալ>զըրմա՛նիլ, լոգանալ>լըղա՛նիլ, լուանալ>լիվա՛նիլ, հովանալ>հըվա՛նիլ, մոռանալ>մըռա՛նիլ և այլն.

բ) աւելանալ>իվիլէնիլ, բազմանալ>բըզմէնիլ, բարձրանալ>բիձրէնիլ, բոկ(իկ)անալ>բիբիկէնիլ, դառնանալ>դըռնէնիլ, թանձրանալ>թինձիրէնիլ, թեթևանալ>թիթիվէնիլ, թուլանալ>թիլէնիլ, ծանրանալ>ծընդըրէնիլ, հաստանալ>հըստէնիլ, հեռանալ>հըռէնիլ և այլն:

Այս օրինակներում ա>ա փոփոխությունը ձայնավորների ներդաշնակության արդյունք է, մինչդեռ ա>է փոփոխությունը այս

օրինակներում հնչյունաբանորեն անհասկանալի է մնում: Մեզ թվում է, որ այդ փոփոխության մեջ նշանակալից դեր է խաղացել այդ բայաձևերի ձևաբանական տարբերակման անհրաժեշտությունը: Ա.Ն>Է.Ն բայածանց ունեցող բայերը ունեն ուրույն խոնարհում և կազմում են բարբառիս 5-րդ խոնարհումը, մինչդեռ ան>ան || ՈՒՆ բայածանց ունեցողները առաջիններից տարբեր խոնարհում ունեն և կազմում են 4-րդ խոնարհումը: Խոնարհման տարբերությունները առաջացրել են ձևական տարբերակման անհրաժեշտություն: Բացառված չէ, իհարկե, որ ա>է փոփոխությունը նախ կատարված լինի այն բայաձևերում, որոնք ունեն թեթև ձայնավորներ (տես § 31), սակայն հետագայում, երբ այդ տիպի բայերը կազմել են ինքնուրույն խոնարհում, ապա այդ խոնարհմանը ենթարկվող մյուս բայերը ևս իրենց անորոշ դերբայում ան ածանցը փոխել են Է.Ն-ի, դրանով միօրինակություն մտցնելով բայական ուղիղ ձևերում:

35. Շեշտի տակ ա-ն պահպանվել է անփոփոխ -ական, -աւոր ածանցներում, ինչպես օրինակ՝ ազգական>ըզգական, պարտական>պըրտական, աշխատաւոր>ըշխըտավոր, բռնաւոր>բըռնավոր, գլխաւոր>կըլխավոր, ձիաւոր>ձիավոր և այլն: Բացառություն են կազմում՝ ամսական>ըմսէկան, շաբաթական>շըբթէկան բառերը, որոնք որպես ժամանակի բառեր ենթարկվել են տարեկան>տիրէկան բառի նմանությանը:

36. Ա Ձայնավորը սղվել է հետևյալ բառերում. առաջին>ըոջի, առաջնակ>ըոջընակ, ականամոմ>ըկնամում, երախայութիւն>ըրխութին, քարաման>քա՛ըմանն, քաղհան>քըղհան, շաբաթական>շըբթէկան, ուրախանալ>ըրխանիլ, ուրախացուցանել>ըրխըցանիլ, ուրախութիւն>ըրխութին:

Ծանոթություն.—Երախայութիւն>ըրխութին և ուրախութիւն>ըրխութին բառերը հնչյունափոխվելով՝ հնչյունների կազմով ու որակով նույնացել են. ուստի նրանց իմաստային կողմը դըրսևորվում է միայն կենդանի խոսքի մեջ:

37. Ան բայածանցը բացակայում է հետևյալ բառերում. մեռանել>մըէռիլ, մտանել>մըտիլ, սկսանել>ըսկըսիլ, սրկըսիլ, ելանել>ելիլ:

38. Որպես կանոն, վերջավանկում շեշտից հետո ա-ն պահպանվել է. բացառություն են կազմում՝

ա) -անալ, -ենալ, -նալ վերջավորություն ունեցող ածանցա-

վոր բայերը, որոնք իրենց -ալ դերբայական վերջավորությունը դարձրել են -իլ, այսպես օրինակ՝ զարմանալ>զըրմանիլ, գողանալ>գիղանիլ, լուանալ>լիվանիլ, հովանալ>հըվանիլ, բառնալ>բէռնիլ, դառնալ>դըէռիլ, արբենալ>հաբբիլ, լրբենալ>լըրբէնիլ և այլն.

բ) ներգործական սեռի -ալ դերբայական վերջավորությունն ունեցող բայերը, որոնք իրենց վերջավորությունը փոխել են իլ-ի, ինչպես՝ աղալ>աղիլ, կարդալ>կրդիլ, հաւատալ>հըվատիլ: Միակ բացառությունը տալ>տալ բայն է, որ պահպանել է ա ձայնավորը:

39. Մասնակի հնչյունափոխական երևույթներ են.

վարդավառ>վարդաւ՛վառ, որտեղ ա-երը փոխվել են աւ-ի: Այս բառաձևը պրոֆ. Էդ. Աղայանի բացատրությամբ առաջացել է վարդեւոր ձևից, որի մեջ նախ կատարվել է ո>աւ հնչյունափոխությունը, ապա ձայնավորների առնմանությամբ (ներդաշնակությամբ)՝ վարդաւ՛վառ:

Բանալի>բիլա՛նի բարբառային ձևը առաջացել է ժողովրդական բալանի ձևից, որը ներկայացնում է լ և ն ձայնորդների տեղափոխությունը: Բարբառում երկու ձայնորդների միջև ա ձայնավորը քմայնացել է (ա), և դրա ազդեցությամբ շեշտից առաջ գտնվող ը-ն (<ա) դարձել է ի:

Ե

40. Հին հայերենի միավանկ և մակուկես վանկանի բառերի բառասկզբի ե ձայնավորի դիմաց ունենք ի հետևյալ բառերում. եղն>իղնը, իղնի, եմ>իմ (էական բայը), ես>իս, երբ>հիբ, երբ որ>հիբ վըէր, եփ>իփ:

Այս օրինաչափությունից շեղվում են մի քանի բառեր, որոնց մեջ ե-ն գտնվում է բ ձայնորդից և ետնալեզվային ղ, կ հնչյուններից առաջ. դրանք են՝ երդ>հաւրդ, եկ>լէք՛ (գալ>գուլ բայի եզակի հրամայականը, մինչդեռ նույն բայի կատարյալ և հարակատար դերբայներում ունենք՝ եկեալ>իկ՛ալ, եկած>իկ՛ած), եղն>լէղնը, երգ>լէրք, երգել>լէրքիլ, վերջինս գրական նոր փոխառություն է, որ ապացուցվում է ոչ միայն գ>ք և ե>յէ ավանդական հնչյունափոխությամբ, այլև ժողովրդական խաղ «երգ», խաղ ասիլ «երգել» ձևերի առկայությամբ:

41. Երկվանկ բառերում բ և ղ հնչյուններից առաջ բառասկզբի ե-ի դիմաց ա է հին հայերենի այն բառերում, որոնց երկրորդ վանկարարը ա կամ այ է. այսպես՝ եղբայր>ախպէր, երազ>արազ, երաշտ>արաշտ, երկաթ>արկաթ, երկան>արկան: Սրանց

նման բառասկզբի ե-ի փոխարեն ա ունի եղիճ>հաղինջ բառը, չնայած որ նրա երկրորդ վանկարարը ի է։

Այս օրենքից շեղվում են հետևյալ երկու բառը. երախ>ուրէխ, որտեղ շեշտը վերջավանկում լինելու պատճառով ր>ռ փոփոխությունից հետո ընկել է բառասկզբի անշեշտ ե-ն։ Հոգնակի ձևում (ըրէխնա) բառասկզբի ը-ի առկայությունը ենթադրել է տալիս, որ ե-ն շեշտից առաջ նախ փոխվել է ը-ի և ապա ընկել միայն եզակի ձևում։ Մյուս բացառությունը երկայն>յէրկին բառն է, որտեղ բառասկզբի ե-ն դարձել է յ։

42. Երկվանկ այն բառերում, որտեղ երկրորդ վանկարարը եղել է առաջնային շարքի ձայնավոր, բառասկզբի ե-ն փոխվել է ի-ի. այսպես՝ երեկ>իրէկի, երես>ի՛րիս, երեք>ի՛րիք՝ (որից՝ երեքշաբաթ>իրիքշէբաթ, երեքին>իրիքէն), եփել>ի՛փիլ։ Եվ՝ բառում նախ ընկել է ան ածանցը՝ ելել, ապա նույն օրենքով առաջացել է ի՛լիլ ձևը։

Այս օրենքից շեղվում են հետևյալ բառերը՝ երկինք>յէրդ՛ինք, երկիր>յէրդ՛իր (որոնք ունեն ե>յի՝ գրական լեզվի ազդեցությամբ), երինջ>հէրինջ, եթէ>յէթէ, վերջինս գրական նոր փոխառություն է, որին բարբառում համազոր գործածություն ունի թա<թէ շաղկապը։

43. Երկու>յօրկու բառի մեջ առկա է ե>յօ փոփոխությունը։ Այս բառի ե-ն սկզբնապես ենթարկվել է ե>յի փոփոխությանը, ինչպես այդ պահպանված է երկուշաբաթ>յէրկըշէբաթ բարդության մեջ. հետագայում ու ձայնավորի ազդեցությամբ յի երկհընչյունի ի-ն առնմանությամբ դարձել է օ. իսկ երկոքին>յըրկէն բառի մեջ շեշտից առաջ ի-ն հնչյունափոխվել է ը-ի։

44. Երդումն>ուրդում բառում ետընթաց առնմանությամբ բառասկզբի ե-ն դարձել է ու։ ե>յի փոփոխություն ունի եղունգն>յէղինդ բառը։

45. Բազմավանկ բառերում բառասկզբի ե-ն շեշտից առաջ փոխվել է ը-ի այն բառերում, որոնց մեջ ե-ն գտնվում է ր ձայնորդից առաջ։ Այստեղ հավանաբար ե-ն ր-ից առաջ եղել է ա, իսկ այդ ա-ն շեշտից առաջ փոխվել է ը-ի (տես § 9)։ Այդ բառերն են երախայ>ըրախի, երախայությիւն>ըրխոթին, երանեակ>հըրէնակ, երեկոյ>ըրակու, երիցակին>հըրցակին (նաև ըրցակին)։ Բացառություն է կազմում միայն երեսուն>արասսուն բառը, որտեղ շեշտից առաջ ա-ն պահպանվել է թերևս քառասուն բառի ազդեցությամբ։

46. Բաղմավանկ այն բառերում, որոնց մեջ վանկաբարները ե-եր են, շեշտից առաջ գտնվող ե-ն փոխվել է ի-ի. այդ բառերն են՝ եկեղեցի>գիղէցի (առաջին ե-ի անկմամբ), երեւել (երեւիմ)>իրվաՀ (երկրորդ ե-ի անկմամբ):

47. Բաղաձայնով սկսվող միավանկ և մեկուկես վանկանի բառերում հին հայերենի ե-ն դարձել է ի, եթե ղ, խ և ր, ռ հընչյուններից առաջ չէ. այսպես՝ թել>թիլ, թեւ>թիվ, թեփ>թիփ, խելք>խիլք՝, ծեփ>ծիփ, կեմ>կիմ, հեշտ>հիշտ, ձեւ>ձիվ, մեղ>միզ, մեք>միք՝, ներս>նի, ներս(անց)>նիմանց (վերջին երկուսում ր-ի անկումից հետո), շրեշ>շիրիշ, չեչ>չիչ, վեց>վից, ցեց>ցից, քեզ>քի՛:

Բեմ>բէմ, դեւ>դէվ, կետ>կէտ, նետ>նէտ բառերը որպես գրական փոխառություններ այս օրինաչափությանը չեն ենթարկվել: Անհայտ են մնում կռեզ>կըռըէզնը, հետ>նըհէտ բառերի վերը նշված օրենքին չենթարկվելու պատճառները:

48. Մի շարք միավանկ բառերում, որոնց մեջ ե-ին հաջորդում են ր կամ ռ ձայնորդները, ե-ն փոխվել է ը-ի. եղած օրինակներն են՝ զկեռ>ցըքըէռնը, ծերպ>ծըէրպ, կեռ>կըէռ, սերմն>սըէրմը, փերթ>փըէրթ «կտոր»: Այս նույն օրինաչափությանն է ենթարկվել մեռանել>մըէռիլ բառը՝ ան ածանցի անկումով: Այս օրինաչափությունից շեղվում են.

Ջերմն>ջիրմ, վեր>վիր, որոնք ունեն § 47-ում նշված բառերի փոփոխությունը:

Բեռն>բէռնը բառը թերևս գալիս է *բառն սկզբնաձևից (հմմտ. բառնալ>բէռնիլ, ուր շեշտի տակ ա-ն դարձել է է), որ դուրս է այս օրինաչափությունից:

Ձեռք>ձէք՝ բառում օրինաչափությունը չի գործել՝ ռն հընչյունների անկման պատճառով:

Բերք>բէրք, ներկ>նէրկ, վերջ>վէրչ բառերը գրական փոխառություններ են:

49. Միավանկ այն բառերում, որոնց մեջ ե-ն գտնվում է ղ-ից կամ խ-ից առաջ, հին հայերենի ե-ի դիմաց ունենք է. այսպես՝ դեղք>դէխկ, խեղճ>խէղճ, ճեղք>ճէխկ, մեղք>մէխկ, նեղ>նէղ, սեխ>սէխ «ձմերուկ», տեղ>տէղ, տրեխ>տըրէխ, ցեխ>ցէխ, փեղկ>փէխկ: Միակ բացառությունը մեղր>մըէղր բառն է, որ ունի § 48-ում նշված բառերի փոփոխությունը:

50. Այս բոլոր օրենքներից դուրս, բաղաձայնով սկսվող միավանկ բառերում ե-ն կրել է հետևյալ մասնակի փոփոխությունները.

ե>ու—մեծ>մուծ՝ միակ օրինակը.

ե>ա—տենդ>տանդ, որից տանդել «տենդոտել»՝ միակ օրինակը:

51. Հին հայերենի ե-ն շեշտի տակ դարձել է ի երկվանկ այն բառերում, որոնց մեջ երկու վանկարարներն էլ ե են և եթե ե-ն ղ-ից կամ խ-ից առաջ չէ. այսպես՝ բերել>բիրել, երես>իրես, երեք>իրիք՝, եփել>իփիլ, ծեփել>ծիփիլ, ձեւել>ձիվիլ, շերեփ>շիրիփ, թեթեւ>թիթաւ, տերեւ>տիրիվ, ցերեկ>ցիրէկ, քերել>քիրիլ:

52. Երկվանկ այն բառերում, որոնց մեջ անշեշտ վանկարարը ե չէ, շեշտի տակ գտնվող ե-ն մնում է նույնը. այսպես՝ բերան>բէրան, բեկար>բէկ՝ար, գերան>գէրան, գերմակ>գէրմակ, գեշեր>գիշէր, հերիք>հէրիք, հերու(ի)>հէրվի, վերայ>վէրան, քենի>քէնի, քեռի>քէռի:

Ներել>նէրիլ, հրեշտակ>հըրէշտակ, մեկնել>մէկնիլ, վեղար>վէղար, տնտես>տընտէս բառերը գրական ու կրոնական փոխառություններ են: Այս օրենքից շեղվում են միայն մենակ>մինակ, փեսուր>թիփուռ բառերը, որոնք ունեն ե>ի փոփոխությունը: Սրանցից առաջինը թերևս դիտակցվում է որպես մին<մի թվականից՝ ակ ածանցով կազմված ձև, իսկ երկրորդը՝ թերևս, ունի թիփ>թիփ բառի ազդեցությունը:

53. Երկվանկ այն բառերում, որոնց մեջ ե-ին հաջորդում են ղ, խ հնչյունները, ե-ն մնում է անփոփոխ. այսպես՝ դեղին>դէղին, դեղ(ք)ել>դէխկիլ, թեղի>թէղի, լեղակ>լէղակ, լեղի>լէղի, խեղդել>խէխտիլ, մեխակ>մէխակ, մեղու(ակ)>մէղակ, փեղկել>փէխկիլ:

54. Երկվանկ բառերում շեշտից հետո գտնվող ե-ն դարձել է ի, երբ ե-ն գտնվում է փակ վանկում, ինչպես՝ արեւ>ա՛րիվ, աւել>ա՛վիլ, տերեւ>տիրիվ, բերել>բիրիլ, երես>իրես, երեք>իրիք՝, շերեփ>շիրիփ և այլն: Սրանց մեջ մտնում են հին հայերենի -ել դերբայական վերջավորություն ունեցող բայերը, ինչպես՝ եփել>իփիլ, ծեփել>ծիփիլ, ասել>ասիլ, քերել>քիրիլ և այլն, բացառությամբ երեւիմ>իրվա՛ալ բայի, որտեղ ե>ա փոփոխությունը դերբայական վերջավորության մեջ կատարվել է որպես չեզոք սեռի բայ:

Այս օրինաչափությունից շեղվում են՝ ցերեկ>ցիրէկ, թեթեւ>թիթաւ բառերը. վերջինումս ե>ա փոփոխությունը կատարվել է ու վերջավորությունը գործիական հոլովաձև դիտակցվելու պատճառով (հմմտ. խոով>խրատով, լսելով>լիսելով և այլն):

55. Ղ.Ն-ից առաջ գտնվող Ե-ն շեշտից առաջ դարձել է Ը հետևյալ բառերում. դեղնել>դըղնել, դեղնուց>դըղնոց, դեղնացաւ>դըղնացավ, դեղնութիւն>դըղնութիւն:

56. Ե հնչյունը ընկել է -ենն ածանցի, ինչպես նաև անձնական թվականների -եք հնչյունախմբի անկմամբ. ինչպես՝ թզենի>թիզի, թթենի>թըթի, արբենալ>հա՛րբիլ, նռենի>նըռնի, եւթանեքին>յըխաէն, իննեքին>իննէն, չորեքին>չըքէն, վեցեքին>վիցէն և այլն:

57. Այս բոլորից դուրս Ե-ն երկվանկ բառերում ենթարկվել է նաև հետևյալ մասնակի փոփոխությունների.

Ե>ըէ— ընկեր>հընգըէր, կեռիք>կըէռէք, հեռի>հըէռի, վերին>վըէրի, փեսայ>փըէսի. բացի վերջին օրինակից, մնացյալ բոլորում էլ ր, ռ-ից առաջ.

Ե>ա— կապերտ>կա՛բպատ, սանդերք>սա՛նդրաք, տաւեխ>տա՛ռախ, որոնց մեջ գործել է առաջընթաց առնմանության օրենքը.

Ե>ա— փեթակ>փա՛թակ՝ ետընթաց առնմանությամբ, քմայնացումը տեղի է ունեցել շնչեղ խուլերի ազդեցությամբ.

Ե>ու— ասեղն>ա՛սուղ, տաշեղ>տա՛շուղ, մեռան>մա՛ռում. վերջինիս մեջ ռ>ու փոփոխությունից հետո՝ ետընթաց առնմանությամբ. խելօք>խա՛ւլուկ՝ օ>ու փոփոխությամբ և ետընթաց առնմանությամբ.

Ե>ա— լեզու>լա՛զու՝ ետընթաց առնմանությամբ, ինչպես և սրանից կազմված՝ անլեզու>անլա՛զու, լեզուանի>լա՛զվանի բառերում.

Ե>օ— ուղեղ>հըղօղ (ըղօղ)՝ առաջընթաց առնմանությամբ, իսկ բառասկզբի ու-ն շեշտից առաջ փոխվել է ը-ի:

58. Բազմավանկ բառերում հին հայերենի Ե-ն շեշտից առաջ դարձել է ի, եթե ռ-ից առաջ չէ. այսպես՝ աւելի>իվիլի, աւելանալ>իվիլէնիլ, ալեւորել>հիլիվէրիլ, ալեւորութիւն>հիլիվըրութիւն, եկեղեցի>գիղէցի, թեթեւանալ>թիթիվէնիլ, հեշտացուցանել>հիշտիցա՛նիլ, նեղանալ>նիղէնիլ, սերկեւիլ>սիկիվիլ, սերկեւիլ>սիկիվիլ, փերփերան>պիրպէրան, գերեզման>գիրիզման, գերեզմանատուն>գիրիզմանատուն, բարեկենդան>պարիկէնդան:

Այս օրենքից շեղվում է սեւանալ>սըվէնիլ բառը, որը կազմված լինելով սեաւ>սըէվ բառից, ածանցման ժամանակ բարբառային ը-ն դարձրել է ը:

Այս օրենքին չեն ենթարկվել գրական փոխառությունները, ինչպես՝ դեկտեմբեր>դեկտէմբէր, հոկտեմբեր>հօկտէմբէր, սեպտեմբեր>սէպտէմբէր:

59. Բազմավանկ բառերից միայն հեռանալ>հրէնիլ բառն է, որ ռ-ից առաջ գտնվող ե-ն դարձրել է ը. սա բարբառիս համար միանգամայն օրինաչափ է, քանի որ այստեղ ռ-ից առաջ ե-ն շեշտի տակ փոխվում է ը-ի, իսկ վերջինս՝ շեշտից առաջ ը-ի (տես § 48):

60. Բազմավանկ բառերում շեշտի տակ հին հայերենի ե-ն փոխվել է ի-ի հետևյալ բառերում. ածելի>ծիլի, արեգակն>իրինակ, աւելորդ>իվիլնօրթ, բարեկամ>պարիկամ, գերեզման>գիրիզման, լսելով>լիսիլանվ:

Սրան հակառակ մի խումբ բառեր շեշտի տակ գտնվող ե-ի դիմաց ունեն է. այսպես՝ ալեւոր>հիլէվոր (նաև՝ հալ՚ւ՚որ՝ ձայնավորների ներդաշնակությամբ), բարեկենդան>պարիկէնթան, երեկ>իրէկի, զգենուլ>սիգէնիլ, լրբենալ>լըրբէնիլ, ծիծեռն(ակ)>ծիծէռնակ, հարեւան>հըրէվան, եկեղեցի>գ՚իղէցի:

61. Երեկոյ>ըրակու բառի մեջ շեշտի տակ ե-ն փոխվել է ա-ի: Հօրեղբայր>հէրբաՙր բառի մասին տես § 220-ի 14-րդ կետը: Յաւելուլ>իվիլցա՚նիլ բառը կազմված է աւել>իվիլ արմատից և -ցանիլ վերջավորությունից, ինչպես այդ հատուկ է բարբառիս պատճառական կերպի բայերին:

Տեսանել>ցուլ բառի մասին տես § 223:

Է

62. Բառասկզբում հին հայերենի է-ն արտասանվում է է. առկա օրինակներն են՝ էգ՚>էգ՚, էշ>էշ:

63. Բաղաձայնով սկսվող միավանկ բառերում է-ի փոփոխությունը անկանոն է. այդ անկանոնության մեջ գերակշռում են է>է և է>ա փոփոխությունները. ահա այդ բառերը.

է>է— դէշ>դէշ (որից՝ դէշութիւն>դէշօթին), դէզ>դէզ, խէթ>խէթ, կէտ>կէտ, ձէթ>ծէթ, շէն>շէն:

է>ա— մէջ>մաջ (մանջ), մէջք>մաշկ (այս երկուսում, թերևս, ջ-ից առաջ լինելու պատճառով), պէտք>պատք՚ (որից անպէտք>անպատք՚), տէր>տար: Այս բառից ունենք անտէր>անտար, տանտէր>տընատար, բայց և տանուտէր>տանուտէր՝ որպես գրական փոխառություն:

է>ի— քէն>քՎին։

64. Երկվանկ բառերի անշեշտ փակ վանկում է-ն փոխվել է ի-ի, այսպես՝ անէծք>անիսկ, դէպ ի>դիբի, դէպ ի ետ>դիբէտ, նարդէս>նարդիս։ Բացառություն են կազմում՝ ամէն>օմման «բոլորը», գոմէշ>գ'ա՛մուշ բառերը, որոնցից առաջինում առկա են է>ա, իսկ երկրորդում է>ու մասնիկի հնչյունափոխական երևույթները։

Ամէն>ամմէն «եղիցի» և օրէնք>օրէնք բառերը որպես գրական և կրոնական փոխառություններ այս օրինաչափությանը չեն ենթարկվել։

65. Շեշտի տակ է-ն վերջին վանկում փոխվել է ա-ի. եղած օրինակներն են՝ առնէտ>ըռնատ, պահէզ>պիհա՛զ։ Բացառություններ չկան։ Եռավանկ բառերից այս օրինաչափությանը ենթարկվել են ալէլու>ա՛լա՛՛լու բառը, որտեղ սակայն առկա է ա, այն էլ փափուկ ձայնորդների ազդեցությամբ։

66. Բառավերջի բաց վանկում հին հայերենի է-ի դիմաց է է հետևյալ բառերում. բոպէ>բո՛պէ, մարգարէ>մարքա՛րէ, որոնք գրական փոխառություններ են. թէ>թա՛ շաղկապը § 65-ում նշված բառերի նման է-ի դիմաց ունի ա։

Ը

67. Բառասկզբում հին հայերենի ը-ն մնացել է անփոփոխ. այսպես օրինակ՝ ընկեր>հընդէր, ընկուզի>ընդըզի, ընտրել>հընդըրել (առաջին և վերջին օրինակներում հ-ի հավելումով)։ Միայն ընկոյզ>անդուզ բառն է, որի մեջ կատարվել է ը>ա փոփոխությունը։

Ընդ իրեար դալ>դա՛ր դուլ հարադրության մեջ ընկել են ընդ նախդիրի ը-ն հնչյունները (այս հարադրության մասին տես § 222)։

68. Որպես ընդհանուր հայերենի ճյուղավորումներից մեկը, Կարճևանի բարբառն ունի այն առանձնահատկությունը, որ որոշակիորեն մերժում է երկու և ավելի բաղաձայններով սկսվող բառերի արտասանությունը, եթե այդ բաղաձայնների միջև հանդես չեն գալիս ձայնավորներ։ Արտասանական այդ ունակության պատճառով է, որ հին հայերենի գաղտնավանկերում հանդես եկող ը-ի փոխարեն բարբառս հանդես է բերում այլ և այլ ձայնավորներ։ Գաղտնավանկում հին հայերենի ը-ն անփոփոխ ձևով առկա է միայն բարբառիս ռ ձայնորդից առաջ, ինչպես նաև գրական և կրո-

նական փոխառությունների մեջ. այսպես օրինակ՝ բռնել>պըռնել, թռչել>թըռչել թրթուր>թըրթուռ, թրթռել>թըրթըռալ, խռով>խըռով, խռովել>խըռովել, ծրտել>ծըռտել, ծռել>ծըռել և այլն:

69. Հին հայերենի գաղտնավանկ ունեցող բառերի ը-ն փոխվել է ի-ի այն բոլոր բառերում, որոնց բարբառային ձևի մյուս վանկում կամ վանկերում առկա են առաջնալեզվային ձայնավորներ. այսպես օրինակ՝ բժիշկ>բիժիշկ, բլեթ>բիլեթ, բշտել>բիշտել, բրինձ>բիրինձ, գզել>գիզել, գրել>գիրել, գգենուլ>սիգէնել, թանձր>թա՛նձիր, լսել>լիսել, խնոցի>խինէցի, մթին>միթա՛ն, նշանել>նիշէնել, շրեշ>շիրիշ և այլն և այլն:

Սպիտակ>սիպտակ բառում ի-ն դրափոխությամբ ընկել է պ-ից առաջ՝ ստեղծելով հեշտ արտասանելի երկվանկ բառ:

70. Հին հայերենի այն բառերը, որոնց բառավերջի գաղտնավանկը վերջավորվում է ն ձայնորդով, բարբառում այդ գաղտնավանկի ը-ն տեղափոխվել է ն-ից հետո. այսպես՝ ակն>ակնը, բեռն>բէռնը, գառն>գյո՛ռնը, գառն>գըէռնը, եղն>իղնը, իղնի, եղն>յէղնը, կուռն>կօռնը և այլն: Սակայն բարբառը ոչ բոլոր բառերում է պահպանել այդ վերջնահնչյունները. այնտեղ, որտեղ ընկել է ն ձայնորդը, նրա հետ անհետացել է նաև գաղտնավանկի ը-ն. այսպես՝ ապրն>աղբ, ասեղն>ասուղ, արեգակն>իրինակ, եղունգն>յէղինգ, կայծակն>կյաձիկ, հարսն>հարս և այլն: Միայն որմն>հրէրմը, սերմն>սրէրմը բառերում է, որ ն-ի անկումից հետո էլ պահպանվել է գաղտնավանկի ը-ն:

Արմուկն>արմունգ բառի մեջ կն>նգ դրափոխությամբ վերացել է գաղտնավանկը:

71. Վերը նշածներից բացի, գաղտնավանկի ը-ն կրել է նաև հետևյալ մասնակի փոփոխությունները.

ը>ու— կնդուղ>կունդուղ, կտուց>կուտուց, ձուկն>ձուկուն, մուկն>(մուկուն)>մուկուն, քաղցր>քուխցուր.

ը>ա— բարձր>բա՛ձիր, դգալ>դաւգաւ՛լ, ճճի>ճաւ՛ճաւ, մրջիւն, մրջիւն>մաւրջաւ՛մ, փշուր>փաւշաւ՛ր, փշրանք>փաւշաւրա՛նք, այնր>աւնդաւ՛ր, այսր>աւստաւ՛ր.

ը>ա— պրկոց>պարկուց, սնդուկ>սանդուխտ.

ը>օ— կրծել>կօրծիլ, կրտել>կօրտիլ. սրանք կազմվել են կուրծ, կուրտ արմատներից՝ շեշտի տակ ու-ն հնչյունափոխելով օ-ի:

72. Հին հայերենի ի-ն բառասկզբում, անկախ այն բանից, շեշտի տակ է թե ոչ, պահպանվել է անփոփոխ. այսպես՝ իլ(իկ)>ի՛լիկ՛, ինն>ի՛ննը, իննևքին>ի՛ննէն, իննսուն>ի՛ննսուն, ինչ>հի՛նչ, ինքն>ի՛նքի, իսկ ի>իսկի՛: Բացառությունն է կազմում միայն իրեար, իրար>ու՛բուր բառը, որը առաջացել է իւր(եար) ձևից՝ իւ>ու հնչյունափոխությամբ (որ միանգամայն օրինաչափ է. տես § 127) և առաջընթաց առնմանության: Իւղ ‖ եւղ բառի դիմաց բարբառս ունի յէղ ձևը, որ առաջացել է եւղ տարբերակից, ւ ձայնորդի անկմամբ և ե>յէ հնչյունափոխությամբ:

73. Բաղաձայնով սկսվող միավանկ այն բառերում, ուր ի-ին հաջորդում է զ, ծ, ն, ս, ր բաղաձայններից որևէ մեկը, ի-ն դարձել է ա. այսպես՝ ծիծ>ծա՛ծ, ծին>ծա՛ն, կիր>կա՛ր, մթին>միթա՛ն, մի>մա՛ն (արդելական մասնիկը), միս>մա՛ս, վիզ>վա՛զ, տիզ>տա՛զ, քիթ>քա՛թ: Սրանց նմանությամբ ի>ա փոփոխությունը ունի սիրտ>սա՛րտ բառը: Վերը նշված բառերի օրինաչափությամբ ի-ն փոխվել է ա-ի կորիզ>կըղա՛զ բառում, սակայն ղ-ից հետո լինելով՝ կորցրել է քմայնացումը:

Այս օրինաչափությանը չեն ենթարկվել բիր>բիր, գին>գին, գիր>գիր, հին>հին (վերջին երեքը որպես գրական փոխառություններ), մի>մին թվականը՝ մի>մա՛ն արդելական մասնիկի հետ չշփոթելու համար, մինչդեռ բարդության մեջ օրինաչափորեն ունենք ոք մին>ո՛ւմանն:

74. Բաղաձայնով սկսվող բառերում նք, նգ, կ, ղկ, տ հնչյուններից առաջ շեշտի տակ գտնվող ի-ն դարձել է ա. այսպես՝ թրիք>թըրա՛նք՛, կծիկ>կըծա՛ղ՛, կնիկ>կընա՛ղ՛, հինգ>հանգ՛, միտել>մա՛տել, միտք>մա՛թք՛, պիրկ>պարկ՛, պայկ՛, տիկ>տա՛ղ՛: Ի>ա փոփոխությունը ունի նաև միջակ>մաջնակ բառը, որը, սակայն, կազմված է մէջ>մաջ արմատի դիտակցմամբ:

Այս օրինաչափությանը պետք է ենթարկվեր նաև շլինք բառը, որից սպասելի էր *շըլանք՛ ձևը, բայց ունենք շիլինք՛՝ շլնի>շիլլի՛ բառի նմանությամբ: Այս օրենքից շեղվում է նաև ծիտ>ծըէտ բառը:

75. Անձնական թվականների ին վերջավորության ի-ն շեշտի տակ դարձել է ի. այսպես՝ երեքին>իրի՛քէն, երկոքին>յըրկէ՛ն, իննևքին>ի՛ննէն, հինգևքին>հինգէ՛ն, ութևքին>ըթթէ՛ն, վեցևքին>վիցէ՛ն և այլն:

76. Բաղաձայնով սկսվող բառերում ի-ն շեշտի տակ կրել է նաև հետևյալ մասնակի փոփոխությունները.

ի>ը— ծիտ>ծըէտ, ծիրտ>ծըէրտ, սինձ>սըէզնը, քիստ>քըէստ, կիստատ>կըէստատ. վերջինս կազմված է կէս>կըէս արմատական ձևից, ուստի և բարբառային ըէ-ն շեշտի տակ պահպանվել է.

ի>ու— գիրկ>գ'ուրգ, մրջիմն, մրջիւն>մուրջու՛մ (վերջինս առաջացել է մրջիւն ձևից, ուստի և տես § 127), ճիպռ, ճպուռ>ճուպռը ձևը երկրորդ տարրերակի պու>ուպ դրա-փոխված ձևն է.

ի>է— ծիզ>ծէզ, կշտին>քիշտէն, կռիւ>կըռէվ, վճիռ>վը-ճէռ, ցրիւ (տալ)>ցըրէվ (տալ)։ Այսպես նաև ապրիլ>ապրէլ (ամսանունը), որտեղ ի>է փոփոխությունը ապ-րիլ>ապրիլ բայի հետ չշփոթելու արդյունք է։ Դիզել>դէզիլ բառը կազմված է դէզ>դէզ բառից, շեշտի վերջըն-թերության հետևանքով է-ն մնացել է անփոփոխ.

ի>ա— ծիրան>ծա՛րան. սա նախ դարձել է ծիրան (ի ձայ-նավորի ազդեցությամբ), ապա հաընթաց առնմանությամբ ծա՛րան.

ի>ու— յիշոց>ուշունց. ո>ու փոփոխությամբ և հաընթաց առնմանությամբ ի-ն դարձել է ու, միաժամանակ ընկել է բառասկզբի յ-ն և ն ձայնորդը ավելացել ց-ից առաջ.

ի>օ— վիշապ>հոշափ.

ի>ո— սիրուն>սո՛րան, որ հաընթաց թերի առնմանության արդյունք է։

77. Շեշտի տակ ի-ն փոխվել է ը-ի հետևյալ բառերում. լինդ>լընդ, ծիծաղ>ծը՛ծաղ, որից և ծիծաղել>ծըծա՛ղիլ, թեև վերջինում ի>ը փոփոխությունը շեշտից առաջ է (տես § 79)։

78. Այս բոլոր օրինքներից ու մասնակի հնչյունական փոփո-խություններից դուրս, մնացած բոլոր դեպքերում շեշտի տակ գտնվող ի-ն, ներառյալ նաև բառավերջի շեշտյալ ի-ն, մնացել է անփոփոխ. ինչպես օրինակ՝ լի>լի, ձի>ձի, շլնի>շիլլի՛, ուղի>հըղի՛, ուռի>հրանի՛, թզենի>թիզի՛ և այլն։ Բացառություն են կազ-մում. թի>թայ, ուր պարզ ի ձայնավորը դարձել է այ երկհնչյուն, ճճի>ճաճա՛, ուր ի-ն դարձել է ա, յղի>յըղէ, ուր ի-ն դարձել է է։

79. Հին հայերենի ի-ն բարբառիս շեշտից առաջ կամ հետո լինելով՝ պահպանվել է անփոփոխ. այսպես՝ ադի>հա՛դին, ածելի>ծիլի, ադաւնի>դանի, ադիք>ադինք՛, ադջիկ>ախջիկ՛, աքա-

ցի>քյա՛ցի, գիհ(ուկ)>գիհՕկ «ոչխարների ձմեռանոց», գիշեր>քիշէր, իննասուն>իննասուն և այլն։ Այս օրենքից դուրս, անշեշտ ի-ն մի շարք բառերում մասնակի փոփոխություններ է կրել։ Ահա այդ բառերը.

Թոնիր>թո՛ւրան, ծոթորին>ծընթՕ՛ռին, որոնց մեջ ի>ա փոփոխությունը կատարվել է ն-ից առաջ. նշանիր>նաշանար, կեռիք>կըէռէք՝, արճիճ>ա՛ռճուճ, ոջիլ>հու՛ջուլ, վերջինիս մեջ ո>ու փոփոխությունից հետո գործել է առաջընթաց առնմանության օրենքը. մոխիր>մըէխըր։

Լինել>նիլ բառի մեջ ընկել է լի նախավանկը։

80. Ի-ն ընկել է հետևյալ բառերում. դէպ ի ետ>դիրէ՛ա, երիցակին>հըրցակին, ըրցակին, մխիթարել>մըսիթարիլ, բոլորն էլ շեշտից առաջ գտնվելու պատճառով։

81. Ընդ իրեար գալ>դուր դուլ հարադրության մասին տե՛ս § 222։

Քիրան>քըրթՕնք ձևը առաջացել է քիրան բառի քրտունք հոգնակի ձևից՝ ու>օ հնչյունափոխությամբ։

Ո

82. Բառասկզբի ո-ն շեշտի տակ դարձել է ու, եթե ո, ս, ր բաղաձայններից առաջ չէ. այսպես՝ ո, ով>հու, հուվ, ողնի>կուղնի, ոչխար>ուխչար, ոտի>հուտի, ոք մին>ուխման։ Նույն դիրքում ո>ու փոփոխությունն ունի ոջիլ>հու՛ջուլ բառը՝ երկրորդ վանկի վերին բարձրացման ձայնավորի ազդեցությամբ։

Այս օրենքից շեղվում է ոչ>վըէչ բառը, որը ենթարկվել է § 84-ում նշված բառերի օրինաչափությանը։ Ոխ>վօխ բառում ո-ի դիմաց վօ-ն գրական փոխառության արդյունք է։

83. Բառասկզբի ո-ն շեշտի տակ ռ ձայնորդից առաջ դարձել է ու. այսպես՝ ոռնալ>ու՛ռնալ, որդն>ու՛ռը, որդնել>ու՛ռնիլ. վերջին երկու օրինակներում դ-ի անկման հետևանքով ր-ն ն-ից առաջ դարձել է ռ և հնարավոր դարձրել այդ օրենքի դրսևորումը։ Այստեղ միակ բացառությունը ոռ>վըէռ բառն է, որ ենթարկվել է § 84-ում բերվող բառերի օրինաչափությանը։

84. Բառասկզբի ո-ն շեշտի տակ դարձել է վը, եթե ս և ր բաղաձայններից առաջ է. այսպես՝ ոսկի>վըէսկի, ոսկը>վըէսկը, որ>վըէր, երբ որ>հիբ վըէր (և հիբօր), որս>վըէրս, որսկան>վըէրսկան, որթ>վըէրթ «հորթ», որթ>վըէրթնը «խաղողի որթ»։

Որմն>հրէրմը բառում ո>վրի փոփոխությունից հետո ընկել է վ հնչյունը և ձայնավորից առաջ ավելացել հ։

Այս օրենքից շեղվում են ործ>ուրծ (ուրծ գուլ—ործկալ), որոճ>ուրուճ, որձ>ուրձ, որձակ>ուրձակ բառերը, որոնցից վերջին երկուսը ունեն § 83-ում նշված բառերի օրինաչափությունը։

85. Շեշտից առաջ բառասկզբի ո-ն դարձել է ի կամ ը. ի է դարձել այն բառերում, որոնց մեջ շեշտակիր վանկի ձայնավորը վերին բարձրացման է, հակառակ դեպքում դարձել է ը. այսպես՝ ոլոր>հիլիւ՛ր, ոլորել>հիլիւ՛րիլ, ողողել>ղղ՛ղիլ, որոտալ>ըռո՛ւ-տալ նաև ուռուտալ՝ առնմանությամբ։

87. Ղ-ից առաջ բառասկզբի ո-ն շեշտից առաջ բաց վանկում ընկել է հետևյալ երկու բառում. ողորմած(իկ)>ղորմացիկ՛, ողոր-մի>ղ՛որմի։

87. Ոսկրոտ>վրսկրուտ բառը կազմված է ոսկր>վրէսկրը բարբառային ձևի ածանցմամբ, որտեղ բարբառային ը-ի հնչյունը շեշտից առաջ հնչյունափոխվել է ը-ի։

88. Բաղաձայնով սկսվող միավանկ այն բառերում, որտեղ ո-ին հաջորդում է ղ, խ, ռ, ր բաղաձայններից որևէ մեկը, ո-ն դարձել է օ, եթե շրթնայնից հետո չէ. այսպես՝ գործ>գ՛օրծ, գոդ>գ՛օդ, թոդ>թ՛օդ (թ՛օդ արիլ «թ՛ոդնել»), թոռն>թ՛օռնը, խոր>ջը-խ՛օռ, խորթ>խ՛օրթ, խորխ>խ՛օրխ, խատոր>սըխ՛տոր, ծոր>ծ՛օր, կոդ>կ՛օդ, կողք>կ՛օխկ, ձոդ>ձ՛օդ, շողք>շ՛օխկ, շոր>շ՛օր, չորք>չ՛օք, սոխ>սոխ, քոր>քոր։

Ո>օ ունեն նաև գրական փոխառություններ. ինչպես՝ կոպ>կ՛օպ, գժոխք>գ՛ժ՛օխկ, փորձ>փ՛օրց, թեև վերջին երկու օրինակնե-րում ո>օ փոփոխությունը կատարվել է խ, ր-ից առաջ։

Վերոհիշյալ օրենքից շեղվում են՝ գող>գ՛ող, խնձոր>խ՛ին-ձ՛որ, գորտ>գ՛ուրթուն՛դ բառերը, որոնցից առաջին երկուսում ո>ո փոփոխությամբ, իսկ վերջինում՝ ո>ու։

89. Բառամիջում ո-ն շրթնային բաղաձայնից հետո և ղ, խ հնչյուններից առաջ դարձել է ե. այսպես՝ բոդ, բոդիկ>բ՛էդ, բոդկ>բ՛էխկ, փոխ>փ՛էխ, որից փոխել>փ՛էխիլ, փոփոխել>փ՛էխփ՛էխիլ։ Մեկ բացառությունը փոդ>փ՛ող բառն է, այն էլ անմիջական փո-խառություն է պարսկերենից։

90. Ո-ն շրթնային բաղաձայնից հետո և ր ձայնորդից առաջ փոխվել է ը-ի. այսպես՝ խմոր>խ՛ըմ՛ըր, պորտ>պ՛ըրտ, փոր>փ՛ըր։ Նույն ո>ը փոփոխությունն ունեն նաև փոթ>փ՛ըթ, փոս>փ՛ըս բառերը՝ նույնպես շրթնայնից հետո։

91. Հո հնչյունախումբը բառասկզբին դարձել է վբ (ինչպես և Ղարաբաղի բարբառում). այսպես՝ հող>վբէղ, հոտ>վբէտ, որից անհոտ>անվբէտ, խանձրահոտ>խընձրրավբէտ, հոտել>վբէտիլ, հոր>վբէր:

92. Մեկ ու մեկուկես վանկանի բառերում վ-ից առաջ ո-ն դարձել է ա. եղած օրինակներն են՝ խով>խբռավ, որից խոռվել>խբռավիլ, ծով>ծավ, կով>կավ: Բացառությունն է կազմում միայն սով>սօվ բառը, որ որպես գրական փոխառություն չի ենթարկվել հիշյալ օրենքին:

93. Մնացած բոլոր դեպքերում միավանկ բառերի մեջ ո-ն դարձել է ու. ահա այդ կարգի բոլոր բառերը. խոզ>խուզ, խոփ>խուփ, ծոմ>ծում, ծոպ>ծուպ, կոկ>կուկ, կոճ>կուճ, կոշտ>կուշտ, մոմ>մում, մոշ>մուշ, ջոկ>ջուկ, փոկ>փուկ, քոս>քուս:

Այս օրենքից շեղվում են պոզ>պըզտ (որտեղ ո-ն դարձել է ը), խոտ>խօտ (ինչպես և բարդության մեջ՝ աղբախոտ>ըխպախօտ), ծոց>ծօց, սոզոց>սըզօց, որոնք ունեն ո>օ փոփոխությունը անհայտ պատճառով: Գոզ>գ'ուզ բառում ու-ն քմայնացած է:

94. Երկու և ավելի վանկ ունեցող բառերում ո-ն շեշտի տակ դարձել է ու, եթե խ, ղ, ռ, ր բաղաձայններից առաջ չէ. այսպես՝ թոնիր>թուրան, կոկել>կուկիլ, կոկիկ>կուկլիկ', կոփել>կուփիլ, կոփիչ>կուփիչ, մոմել>մումիլ, ջոկել>ջուկիլ, քոսոտ>քուսուտ: Նույն դիրքում ո>ու ունեն բոլոր>բու'լուլ, բորբոս>փու'փուանը բառերը, երկուսն էլ շրթնայնից հետո:

95. Այն բառերը, որոնք շեշտված ո-ից հետո ունեն խ, ղ, ռ, ր բաղաձայններից որևէ մեկը, չեն ենթարկվում § 94-ում նշված օրինաչափությանը, այլ ունեն ո>օ փոփոխությունը. այսպես՝ աւելորդ>իվ'ելնօրթ, կոխել>կօխիլ, կոտորել>կըտօրիլ, կորեակ>կօրակ, կորի>կօրի, կորնչել>կօրչիլ, պղտոր>պըրտօղ, պղտորել>պըրտօղիլ, պղոտատ>պօղտատ, տրորել>տըրօրիլ, ցորեան>ցօրէն, քորել>քօրիլ: Նույն դիրքում ո>ё ունեն ծոթորին>ծընթёրան, գործել>գ'ё'ըծիլ, գործի>գ'ёրծին «արոր», գորակ>գёրակ, ջորի>ջёրի:

Վերը նշված օրինաչափությանը պետք է ենթարկվեին նաև կորկոտ>կուրկուտ, տորոն>տուրուն բառերը, սակայն նրանք շեշտի տակ գտնվող ո-ն երկրորդ վանկի ձայնավորի (ո>ու) առնմանությամբ դարձել են ու (տես § 98):

96. Շեշտի տակ խ, ր-ից առաջ և շրթնայնից հետո ո-ն դարձել է ը հետևյալ բառերում՝ մոխիր>մըէխըր, մորթի>մըէրթի.

մորթել>մըէրթիլ, որ միանգամայն համապատասխանում է § 90-ին:

Վերջին երեք օրինաչափություններին չեն ենթարկվել գրական, կրոնական և այլ բարբառներից կատարված փոխառությունները. ինչպես՝ ժողով>ժօղով, խոնջան>խօնջան, խորան>խօրան, համոզել>համօզիլ, հոգի>հօքի, ոճիկ>ոօճիկ, սովոր>սօվօր, բոպէ>բօպէ և այլն:

Ժանգոտել>ժընգօտիլ բառի օտիլ մասը գիտակցվելով որպես ուտել>օտիլ բայի արտահայտությունը, փոփոխության չի ենթարկվել:

97. Այս բոլորից դուրս երկվանկ բառերում ո-ն շեշտի տակ կրել է նաև հետևյալ մասնակի փոփոխությունները.

Բոկ(իկ)>բէբուկ, որ նախ եղել է բուբիկ, ապա բուբուկ>բէբուկ (սրանից էլ կազմված բիբիկէնիլ «բոբիկանալ»):

Գոմեշ>գ'ա՛մաշ (հմմտ. պրսկ. gāvmeš, պհլ. gavmēš).

Զոքանչ>զէնքուչ, որ հավանաբար առաջացել է *զանքոչ դրափոխված ձևից.

Խնոցի>խինէցի, խնձորենի>խինձիրի, սալորենի>շիլիրի բոլորն էլ ձայնավորների ներդաշնակության համար:

98. Շեշտից հետո ո-ն դարձել է ու. այսպես՝ ախոռ>ախուռ, թափոր>թափուր «երթ», լակոտ>լակուտ, խանձող>խանձուղ, կորկոտ>կուրկուտ, մեռոն>մուռում, լիշոց>ուշունց, որոճ>ուրուճ, սապոն>սուպուն, տորոն>տուրուն և այլն: Այս օրինաչափությունը վերաբերում է նաև որ, ոց, ոտ, կոտ ածանցներին, որոնք համապատասխանաբար դարձել են վուր, ուց, ուտ, կուտ. ինչպես օրինակ՝ ալեւոր>հիլէվուր, հալոցոց>ըսպանուց, ամաչկոտ>հրմանչկուտ, թեւոտ>թիւթուտ, խարտոց>խարտուց, վախկոտ>վախկուտ և այլն:

Միայն բոլոր>բալուլ, բորբոս>փալ'փալանը, սալոր>շալ-լալ'ը, սգաւոր>սալգա՛վուր (նաև սըգավուր) բառերն են, որ ունեն ու>ալ:

Այս օրենքին չեն ենթարկվել գրական ու կրոնական փոխառությունները, ինչպես օրինակ՝ թագաւոր>թաքավոր, կաթողիկոս>կաթղիկոս և այլն:

99. Բազմավանկ բառերում ո-ն շեշտից առաջ փոխվել է ը-ի. այսպես օրինակ՝ ալեւորութիւն>հիլիվըրթին, խոստովանել>խըստըվանիլ, խորացուցանել>չխըրցանիլ, խորոված>խըրավաց, խորովել>խըրավիլ, հովանալ>հըվանիլ, մոռանալ>մըռանիլ, չորեքին>չըքէն և այլն:

Այս օրենքին չեն ենթարկվել աջողութիւն>հաչողութին, հոկտեմբեր>հոկտէմբէր բառերը, որոնցից առաջինը մի այլ բարբառից կատարված փոխառութիւն է, իսկ երկրորդը՝ գրական փոխառութիւն:

100. Շեշտի տակ ո-ն վ-ից առաջ փոխվել է ա-ի հետևյալ բառերում. խորոված>խըրաված, խորովել>խըրավիլ, խռովիլ>խըռավիլ, որոնք միանգամայն համապատասխան են § 92-ին:

Ո>ա հնչյունափոխութիւնն ունի նաև քարաթոթոշ>քըթանթուշ բառը:

101. Անշեշտ ո-ն ընկել է հետևյալ բառերում. երկոքին>յըրկէն, կաթողիկոս>կաթղիկոս, շնորհաւոր>շընհավոր, պողովատ>պողվատ:

ՈՒ

102. Բառասկզբի ու-ն շեշտի տակ դարձել է օ. այսպես՝ ութ>օթթ, ունել (ունիմ)>օնիլ, ունջ>օնջ, ուռ>հոռնը, ուռնուլ>օռչիլ, ուռուց>օռուց, ուս>օս, ուտել>օտիլ, ուր>հոր, ուրիշ>օրիշ, ուրախ>օրախ: Նույն դիրքում ու-ի դիմաց ունեն ո—ուլ>հոլ, ուլունք>հո՛լինք՝ ուրագ>հոր̈ագ՝, ուրբաթ>որբաթ, ուրդ>որդ բառերը:

Ուխտ>ուխտ, ուխտել>ուխտիլ, ուրանալ>ուրանիլ բառերը որպես կրոնական փոխառութիւններ հիշյալ օրինաչափութիւնը չեն ենթարկվել:

Շեշտի տակ բառասկզբի ու-ն դարձել է ա միայն ուղղորդ>աղուրդ բառում: Այլ բացառութիւններ չկան:

103. Շեշտից առաջ բառասկզբի ու-ն հնչյունափոխվել է ը-ի. այսպես՝ ութեքին>ըթթէն, ութսուն>ըթսուն (նաև ութթսուն), ուղեղ>ըղեղ, ըղեղ, ուղի>հըղի, ուշաթափել>ըշթափիլ (նաև շըթափիլ), ուռի>հըռնի, ուրախանալ>ըրխանիլ, ուրախացուցանել>ըրխըցանիլ, ուրախութիւն>ըրխութին:

104. Շեշտից առաջ բառասկզբի ու-ն բաց վանկում ընկել է ուղարկել>ղարկիլ բառում:

105. Ռուլ բաղաձայններով և մ, ն ձայնորդներով սկսվող միավանկ ու մեկուկես վանկանի բառերում ու-ն դարձել է օ. այսպես՝ գլուխ>կըլօխ, թթու>թըթօվ (այստեղ թերևս ո-ն և ւ-ն դիտակցվել են անկախ և ո-ն է հնչյունափոխվել օ-ի), թութ>թօթ, թուխս>թօխ, թուղբ>թօղբ, թուղթ>թօխթ, թումբ>թօմբ, թուշ>թօշ, թուր>թօր, խունկ>խոնգ, խուրձ>խորձ, ծուխ>ծոխ,

ժունկն>ժոնգուն, ժունր>ժոնգուր, ժուռ>ժոռ, կնունք>կընոնք, կշկուռ>քըշկոռ, կուզ>կոզ, կուժ>կոժ, կուլ(տալ)>կոլ(տալ), կունդ>կոնդ «սոխի, կաղամբի գլուխ», կուռն>կոռնը, կուտ>կոտ, կուրծ>կործ, կտուր>կըտոր, հունձ>հոնձ, մութ>մութ, մուխ>մոխ, մուկն>մոկուն, նուռն>նոռնը, շուն>շոն և այլն և այլն: Նույն դիրքում ու-ի դիմաց ö ունեն թուզ>թöզ, քուն>քöն բառերը:

Այս օրինաչափությունից շեղվում են կնդուզ>կունդուզ, կտուց>կուտուց (այս երկուսը շեշտից առաջ գտնվող գաղտնավանկի ը>ու փոփոխության պատճառով), հում>հում, ճպուռ>ճուպռը, փուլ(գալ)>փուլ(գուլ). սուրբ>սուրբի, ծնունդ>ծընունդ, խուց>խուց, փուռն>փուռ (վերջին չորսը որպես գրական փոխառություններ). այս բառերը պահպանել են ու արտասանությունը: Ու-ի դիմաց ü ունեն թունդ>թüնդ, կճուճ>կüճüճ, սուգ>սüգ, փշուր>փüշüր բառերը:

106. Ձայնեղ բաղաձայնով սկսվող միավանկ ու մեկուկես վանկանի բառերում ու-ն դարձել է üü. այսպես՝ բուրդ>բüüրդ, գունդ>գüüնդ, գուշ>գüüշ «փայտյա խոր սման», (ան)գունդ>գüüնդ, դուր>դüüր, դուրս>դüüս, լուծ>լüüծ, լու>լüü, ջուր>ջüüր: Այս օրինաչափությունից շեղվում են դու>դու, դուռն>դուրք, զուր>իզüüր, ձու>ձու, ձուկն>ձüկուն, որոնք պահպանել են ու արտասանությունը:

107. Մի քանի միավանկ բառեր ունեն ու-ի հետևյալ մասնակի փոփոխությունները.

ու>ի— բուշտ>բիշտ, թերևս՝ բշտել>բիշտիլ բայի անալոգիայով. գուբ>գիփ «խաղողի քաղցուի գուբը».

ու>է— փուշ>փէշ, փունջ>փէնջ.

ու>ըէ— թուք>թըէք:

108. Երկու և ավելի վանկ ունեցող բառերում ու-ն շեշտի տակ դարձել է օ. այսպես՝ դեղնուց>դըղնóց, խուզել>խóզիլ, մանուշակ>մընóշակ, պարկուճ(ակ)>պըրկóճակ, փրփուր>փըրփóր, քրտունք>քըրթóնք: Այս օրինաչափությունը վերաբերում է նաև գոյականակերտ -ութիւն ածանցին, որի ու>օ փոփոխության մեջ բացառություններ չկան. այսպես՝ աղքատութիւն>ըխկըտóթին, գողութիւն>գըղóթին, եղբայրութիւն>ըխպըրóթին, երախայութիւն>ըրխóթին և այլն:

Վերը բերված օրենքից շեղվում են հետևյալ բառերը. գութայ>գüթան, կուտել>կüտիլ, քուռակ>քüռակ, որոնցից առաջինը որպես գրական փոխառություն. գուլպայ>գüüբüք, քու-

բալ>քանի՛ բան բառերը, որոնք մի այլ բարբառից կատարված փոխառություններ են, ինչպես այդ երևում է բառավերջի այ երկհնչյունի հնչյունափոխության բնույթից (տես § 118). լուսին>լու՛սին բառում ու>ու փոփոխությունը կատարվել է լոյս>լուս, բառի նմանության համար:

109. Երկու և ավելի վանկ ունեցող բառերում շեշտից առաջ ու-ն հնչյունափոխվել է ը-ի. այսպես՝ բուրուառ>փրուվար, պատել>պըտըտել, երկուշաբթի>էրկըշէրաթ, ընկուզի>ընգըզի՛, խուսի>խըսի՛ (ա-ի հավելումով և շեշտը վերջին վանկի վրա տեղափոխելով), գոուզ>կըոըզնօտ «գանգուր» (ածանցման և շեշտը ածանցի վրա տեղափոխելով):

Բունկալ բառի դիմաց բարբառս ունի բիլա՛կան ձևը, որտեղ ու-ի դիմաց ի է: Ու>ի փոփոխությունն ունեն նաև լուսնակ>լիսէնգյան, թուլանալ>թիլէնել բառերը. սրանք կազմված են լոյս>լուս, թոյլ>թուլ արմատական ձևերից, որոնց մեջ ոյ երկբարբառը փոխվել է ու-ի, իսկ այդ ու-ն շեշտից առաջ հնչյունափոխվել է ի-ի: Այդ կանոնը որոշակի է. բարբառիս մեջ ա, օ, ու թեթև ձայնավորները շեշտից առաջ միշտ հնչյունափոխվում են ի-ի (այս մասին տես § 31):

110. Շեշտից հետո ու-ն մնացել է անփոփոխ. այսպես՝ աղուն>ադուն, այգուց>ուգուց, աշուն>ուշունք, ապրուստ>ապրուստ, արտասուք>ըրտասունք, արմուկն>ուրմունգ, գարուն>գ'ուրունք, երկու>յուրկու, թաքուն>թաքուն, շամփուր>շամփուր, պատատուկ>պըտատուկ և այլն:

Այս օրենքից շեղվում են՝ անուն>անում, ուր շեշտից հետո ու-ն դարձել է ը. եղունգն>էղինգ, ուլունք>հո՛ղինք, ուր կատարվել է ու>ի փոփոխությունը. ալէլու>ալալա, երգումն>ա՛ր-գամ, թաթուլ>թա՛նթալ, լեղու>լա՛գա, սիրուն>սո՛րան, աւելուկ>ավա՛լակ, որոնց մեջ ու>ա փոփոխությունը կատարվել է ձայնավորների ներդաշնակության համար:

Զմուռս>զըմ՛բըէռ բառի մեջ առկա է ու>ը փոփոխությունը:

111. Հին հայերենի այն բայերը, որոնք անորոշ դերբայում ունեն -ուլ վերջավորությունը, բարբառումս ունեն -իլ. այսպես՝ առնուլ>առիլ, զգենուլ>սիդ'էնել, լնուլ>լիցցել, ուռնուլ>օռչիլ, յաւելուլ>իվիլցա՛նել, վերջինս իր իմաստին համապատասխան կազմվել է աւելի>իվիլի արմատից՝ -ցանել վերջավորությամբ,

ինչպես այդ հատուկ է բարբառիս պատճառական կերպի բայերի կազմությանը։

112. Ու-ն ձայնավորից առաջ, որպես կանոն, փոխվել է վ-ի. այսպես՝ աղուէս>աղվէստ, աղուեսաքուն>աղվէստաքՅՕն, աստուած>աստված, աստուածածին>աստվածածին, բուրուառ>փրուվար, զզուել>զըզվիլ, թուել>թըվիլ, լեզուանի>լեզվա՛նի, լուանալ>լվա՛նիլ, լուացք>լվացք(ը), հաշուել>հաշվիլ, շուրջ>շըվրջ, պատուաւոր>պատվավոր, պատուել>պատվիլ, ցցուել>ցըցվիլ, քթուել>քըթվիլ։ Սրանց մի մասը, իհարկե, գրական ու կրոնական փոխառություններ են, բայց այդ չի խախտում հիմնական օրինաչափությունը, որովհետև բացառություններ չկան։

113. Մեղու>մէղակ «վայրի մեղու» բառը կազմված է -ակ ածանցով՝ ու ձայնավորի կորստով։ Ու-ն ընկել է նաև դժուար>դիժէր բառում, ինչպես նաև պատճառական կերպի բայերի -ուցանել, -ցուցանել վերջավորության մեջ, ինչպես՝ ամաչեցուցանել>հըմըչցանիլ, դառնացուցանել>դրոնըցանիլ; հաշտեցուցանել>հըշտըցանիլ, հասուցանել>հըսցանիլ, մատուցանել>մըտցանիլ և այլն։

2. Երկբարբառների փոփոխությունները

114. Հին հայերենի ոչ բոլոր երկբարբառներն են, որ դրսևորվում են բարբառիս մեջ. ու երկբարբառը և ոյ, իայ եռաբարբառները, որոնցից առաջին երկուսը հանդես են գալիս (դրաբարում) բառափոխության (թեքման) ընթացքում, իսկ երրորդը հայտնի է միայն բառի մեջ. բարբառումս չեն դրսևորվում։ Եայ, եաւ եռաբարբառները հանդես են գալիս միայն մի քանի բառերում, այն էլ բառավերջի բաց վանկում, ըստ այդմ էլ կորցնում են իրենց եռաբարբառային բնույթը։ Այսպիսով բարբառիս մեջ դրսևորվել են այ, աւ (օ), եա, իւ (եւ), ոյ երկբարբառների փոփոխությունները։

Երկբարբառների փոփոխությունները, բնականաբար, քննության են առնվում փակ վանկում, այսինքն՝ մի այնպիսի դիրքում, երբ երկբարբառին նախորդում ու հաջորդում են բաղաձայն հնչյուններ, հակառակ դեպքում երկբարբառի ձայնորդ տարրը ընկնելով երկու ձայնավորների միջև, վերածվում է բաղաձայնի. այդ դեպքում երկբարբառը զրկվում է իր էությունից. այդպիսի դիրքում գտնվող երկբարբառները չեն դիտվել իբրև երկբարբառներ,

այլ նրանց ամեն մի տարբը քննվում է առանձին, ձայնավորը՝ ձայնավորների, ձայնորդը՝ ձայնորդների փոփոխությունների բաժնում։

Այ

115. Այ երկբարբառը շեշտի տակ բաղաձայնից առաջ դարձել է ա. այսպես՝ այդ>աթ, այդտեղ>աթտէթ, այդքան>աթքան, այլ>ալ, այն>ան, այնտեղ>անտէն, այնքան>անքան, այս>աս, այստեղ>աստէս, այսքան>ասքան, այսօր>ասօր, կայծակ>կ'ա-ծիկ', հայր>հար, մայր>մար, մայր մտանել>մար մըտիլ, վայրի>վարի, տայգր>տա՛գիր, փայծաղն>փա՛ցաղնը, փա՛ցէղնը։ Նույն դիրքում այ-ի դիմաց ա՛ ունեն՝ այծ>ա՛ծ, փայտ>փա՛տ բառերը։

Այս օրենքից շեղվում են՝ այրել>էրիլ, լայն>լէն, լայնք>լէնք, ծայր>ծէյ, հայս>հէս, վայր>վէր, ցայտ>ցէթ, ցայտել>ցէթիլ բառերը, որոնց մեջ այ երկբարբառը դարձել է է, հավանաբար ա դառնալուց հետո։

Մայիս>մա՛յիս, շռայլ>շըռայլ բառերը որպես գրական փոխառություններ չեն հնչյունափոխվել։

Այգի, այգուց, սայր, գայլ բառերի մասին տես § 119։

116. Շեշտից առաջ այ երկբարբառը փոխվել է ը-ի. այսպես՝ եղբայրություն>ըխպըրո՛թին, երկայնություն>յէրկընո՛թին, փայտանալ>փըտա՛նիլ։ Այլ այսօր>իլա՛սօր բառում այ-ից հնչյունափոխված ը-ն լ փափուկ ձայնորդից առաջ փոխվել է ի-ի։ Երախայություն>ըրխո՛թին բառի մեջ շեշտից առաջ այ երկբարբառը բոլորովին դուրս է ընկել։ Նույնը կատարվել է նաև հայելի բառի մեջ, ուր այ-ի կորստով հեի ձևում ե>ի փոխոխությամբ ստացվել է հիլլի ձևը։

117. Մեկուկես վանկանի բառերում այ երկբարբառը բառավերջում պարզվել ու դարձել է ա. այսպես՝ վկայ>վըկա, տղայ>տըղա։

118. Երկու և ավելի վանկ ունեցող բառերում շեշտից հետո վերջնավանկում գտնվող այ-ը հնչյունափոխվել է ի-ի. այսպես՝ բակլայ>բէկլի, եղբայր>ա՛խպիր, երախայ>ըրա՛խի, երկայն>յէրկին, կապայ>կա՛պի, սատանայ>սըտա՛նի, փեսայ>փըէ՛սի։

Այս օրենքին հակառակ ունենք ապրայ>ա՛բրա՛, որ ուշ շրջանի փոխառություն է արաբական abra ձևից. աշկարայ>աշկա՛րա՛, որ պարսկական փոխառություն է aškārā ձևից. գութայ>գո՛ւթան բառը գրական նոր փոխառություն է գութան ձևից, որ մուտք է գործել երկրագործական նույն գործիքի հետ միասին. հին «արոր

հատկացության համար կա գ՛ործին<գործի բառը: Գուլպայ>գ՛ուլ՛ապ, քուրայ>ք՛ուր՛ բառերը փոխառություններ են մի այլ բարբառից: Վերայ>վէրան բառում ն-ի հավելումով այ երկբարբառը դարձել է ա. այ>ի հնչյունափոխությունը այս բառում կանխվել է վերին>վէրին>վէյի բառի հետ նույնանալու վտանգից:

119. Մասնակի հնչյունափոխական երևույթներ են. այդի>էդի, որտեղ այ>ի փոփոխությունը կատարվել է երկրորդ վանկի ձայնավորի առնմանության (այդի>ադի>էդի փոփոխությունից հետո). նույն երևույթը կատարվել է նաև այդուց>ուդուց բառում: Գայլ>գ՛ոլ բառում այ երկբարբառի դիմաց ո-ի առկայությունը թերևս բացատրվի գալ>գուլ բայի նմանությամբ, միայն այն բանից հետո, երբ այ երկբարբառը փոխվել է ա-ի. այնուհետև նույնացումից խուսափելու համար առաջինում կատարվել է ու-ի քմայնացում: Սայր>սրէռ բառում ր-ի հնչյունը այ>ա>է>ր-ի փոփոխությունների արդյունք է:

Աւ

120. Աւ երկբարբառը հայերենում պատմական ընդհանուր հնչյունափոխությամբ դարձել է օ. այդ նույն երևույթը կատարվել է նաև Կարճևանի բարբառում: Նույնիսկ աղաւնի, նաւթ բառերը, որոնք հին հայերենում այդ օրինաչափությանը չեն ենթարկվել, երկբարբառից հետո ենթադրելով մի թույլ ը-ի արտասանություն, բարբառումս ենթարկվել են ընդհանուր օրինաչափությանը: Աւ>օ հնչյունափոխության են ենթարկվել հետևյալ բառերը՝ աղաւթել>ըղ՝ոթիլ, այսաւր>ասօր, զգաւն>սրկ՝ոն, զաւրք>զ՝որ՝ք, խաւսել>խ՝ոսիլ, խաւսք>խ՝ոսկ, ծանաւթ>ծ՝ոնոթ, ծնաւղ>ծ՝ընող, կարաւտ>կ՝որ՝ոտ, մաւտ>մ՝ոտիկ՝, յաւնք>ոնք, նաւթ>նոթ, աւդաւտ>որ՝ոտ, աւթեկ>ոթի «հաջորդ օրվա» և այլն:

121. Աւ-ի փոփոխությունից առաջացած օ-ն հետագայում մի շարք բառերում գիտակցվել է որպես բառամիջի ո և հնչյունափոխվել ու-ի՝ համապատասխան § 105-ի, այսպես՝ աղաւթք>ոաղ՝ոթք>աղ՝ութք, ամաւթ>ամ՝ոթ>ամ՝ութ, անամաւթ>անամ՝ոթ>անամ՝ութ, խելաւք>խելոք>խելուկ, աղաւնի>ղ՝ոնի>ղ՝ունի. մաւրուք>մ՝որ՝ուք բառի մեջ ընկել է աւ երկբարբառի ձայնորդ տարրը:

122. Շեշտից առաջ աւ (օ) երկբարբառը փոխվել է ը-ի. այսպես՝ մ՝օտիկանալ>մ՝ըտրիկ՝նիլ, մ՝օտ(իկ)եցուցանել>մ՝ըտրիկցանիլ, օրօրել>ը՝ր՝ր՝իլ:

Օրօրոց>ուրուրուց բառում ո>ու փոփոխությունից հետո գործել է ձայնավորների լիակատար ներդաշնակության օրենքը։

Եա

123. Հին հայերենի եա երկբարբառը շեշտի տակ դարձել է է. այսպես՝ լեառն>լէռ, լեարդ>լէրթ, սեամ>շէմք։ Թեև նշված օրինաչափությունը հիմնավորված համարելու համար եղած այս օրինակները սակավ են, բայց բայական մի քանի ձևերի վերջավորությունների հնչյունափոխությունները գալիս են հաստատելու այս օրենքի խիստ օրինաչափ բնույթը։ Այն բայերում, որտեղ շեշտը վերջին վանկի վրա է, եա երկբարբառը բուն հրամայականում փոխվել է է-ի. այսպես՝ գրեա>գիրէ, լծեա>լըծէ, պրկեա>պըրկէ և այլն։ Կատարյալ դերբայում (հին հայերենի անցյալ դերբայը) եա երկբարբառի դիմաց շեշտի տակ ունենք ի, որ առաջացել է է-ից. այսպես՝ գրեալ>գիրըէլ, լծեալ>լըծըէլ, ծնեալ>ծընըէլ, պրկեալ>պըրկըէլ և այլն։ Բայական այս ձևերում եա>է (ըէ) փոփոխությունը, որ խիստ օրինաչափ է և ոչ մի բացառություն չի ընդունում, հաստատում է շեշտի տակ եա երկբարբառի է-ի փոխվելու օրինաչափ բնույթը։

124. Հին հայերենի եա երկբարբառը շեշտից հետո դարձել է ա. օրինակներն են՝ երանեակ>հըրէնակ, կորեակ>կօրակ, լուսնեակ>լուսէնգ՛ան։ Այստեղ նույնպես այս օրինաչափության ճըշտությունը հաստատվում է բայական ձևերի հնչյունական փոփոխությամբ։ Այն բայերը, որոնց մեջ շեշտը վերջընթեր է, շեշտից հետո գտնվող եա երկբարբառը դարձել է ա բուն հրամայականում. ինչպես՝ սիրեա>սի՛րա, դատեա>դա՛տա, թաղեա>թա՛ղա և այլն, ինչպես և կատարյալ դերբայում՝ սիրեալ>սի՛րալ, դատեալ>դա՛տալ, թաղեալ>թա՛ղալ, մեռեալ>մըէ՛ռալ, մորթեալ>մըէ՛րթալ և այլն։ Եա>ա հնչյունափոխությունը բայական այս ձևերում ոչ մի բացառություն չի ընդունում։

Այս օրինաչափությունից շեղվում է միայն ցորեան>ցօրէն բառը, որը գրական լեզվի ազդեցությամբ՝ շեշտից հետո ունի եա>է փոփոխությունը։ Հանգուցեալ>հանգուցյա՛լ բառը կրոնական փոխառություն լինելով, չի հնչյունափոխվել ըստ բարբառի օրենքի, այլ ունի յա գրական արտասանությունը։

125. Մասնակի հնչյունափոխական երևույթներ են. իրեար>ա՛ր՛ա՛ր, որ առաջացել է իւրեար ձևից՝ իւ>ա՛ հնչյունափոխությամբ (որի մասին տես § 127) և առաջընթաց առնմանությամբ-

կեանք>գ'անք, որ թերևս այլ բարբառից կատարված փոխառություն է։

Ու (Եւ)

126. Եւ երկբարբառը, երբ հանդես է գալիս ձայնավորից առաջ և կամ բառավերջում, կորցնում է իր երկբարբառային բնույթը. այսպես՝ ալեւոր>հիլէվուր, հալՁվուր, արեւ>ա'րիվ, թեւ>թիվ և այլն։ Բնականաբար, այսպիսի դիրքում եւ-ը չի դիտվում իբրև երկբարբառ։ Ինչ վերաբերում է այդ երկբարբառի բաղաձայնից առաջ ունեցած դիրքին, ապա պետք է ասել, որ այդ բնույթի բառերը իրենց մեջ ունեցած եւ երկբարբառի փոփոխությամբ նմանվում են իւ երկբարբառին։ Այդ տիպի բառերը գրաբարում ունեն երկգրություն, ինչպես՝ ալեւր || ալիւր, աղբեւր || աղբիւր, հարեւր || հարիւր և այլն։ Այս կարգի բառերից միայն եղ || իւղ բառն է, որ բարբառումս ունի յէղ ձևը, առաջացած առաջին տարբերակից՝ ւ ձայնորդի անկմամբ և ե>յէ հնչյունափոխությամբ։

127. Ու երկբարբառի դիմաց, ինչպես շեշտի տակ, այնպես էլ շեշտից հետո, առկա է ու պարզ հնչյունը. այսպես՝ ալիւր>ա'լիր, արիւն>ա'րին, հարիւր>հա'ր՝ր, ձիւն>ձ՝ին, մրջիւն>մ՝ուրջի՝մ, սիւն>սին։

Նույն դիրքում իւ երկբարբառի դիմաց ունեն ու(ο) հետևյալ բառերը՝ աղբիւր>ա՝խպուր, ճիւղ>ճ՝ողուն. վերջինս ենթադրել է տալիս ճիւղն, նախնական ձևի գոյությունը, որից առաջացել է նախ բարբառային ճուղն, ապա գաղտնավանկի առնմանությամբ ճուղուն, որից հետո ձայնավորների տարնմանությամբ՝ ճո՝ղուն։

128. Մի կուռ օրինաչափություն է ուրիւն>օրին ածանցի իւ>ի հնչյունափոխությունը. այսպես՝ ալեւորութիւն>հիլիվըրո՝թին, աղքատութիւն>ըխկըտո՝թին, գողութիւն>գըղո՝թին, եղբայրութիւն>ըխպըրո՝թին, ուրախութիւն>ըրխո՝թին և այլն։ Այստեղ ոչ մի բացառություն չկա։

129. Շեշտից առաջ իւ երկբարբառը փոխվել է ը-ի. աղբիւրաջուր>ըխպըրէ՝ջի՝ր բառում։ Արիւնաթաթախ>ա՝րունթա՝թախ բառում բարդության մասերը մնացել են անփոփոխ՝ գիտակցվելով անկախ, որպես կցական բարդության բաղադրիչներ։

130. Արիւնել>ըռնի՝ լ բառում շեշտից առաջ ընկել է իւ երկբարբառը։

Կիւրակէ>կիրա՝կի բառում իւ-ի դիմաց ունենք ի. սակայն բարբառային կիրակի ձևը, մեզ թվում է, գալիս է կիրակէ ձևից,

որ հայանի է գրաբարին. բացառված չէ նաև գրական լեզվի ազդեցությունը։

Ոյ

131. Ոյ երկբարբառը բառասկզբում և բառավերջում դարձել է ու. եղած օրինակներն են՝ երեկոյ>երեկու, ոյժ>ուժ։ Այս երկուսից տարբեր է ոյգ>օգ բառը, որի մեջ ոյ-ը պարզվել ու դարձել է օ։

132. Բառամիջում ոյ երկբարբառը պարզվել ու դարձել է ա. այսպես՝ բոյթ>բաթ, բոյն>բաւն, զբոյց>զաւրաց, թոյլ>թաւլ, լոյս>լաւս, ծոյլ>ծաւլ, ամեղմ, հանդարտ (կրակ)», հոյն>հաւն, շոյտ>շաւդ, պատրոյգ>պա՛տրաւգ, պտոյտ>պաւտա՛տ, քոյր>քաւր։

Նույն դիրքում ոյ>ու փոփոխությունն ունեն ընկոյզ>անգուզ, հօրաքոյր>հա՛քուր, մօրաքոյր>մա՛քուր, մակոյկ>մա՛կուկ բառերը։

Կապոյտ>կա՛պիտ բառի մեջ ոյ>ի փոփոխությունը կատարվել է կարմիր>կա՛ր՛միր, կանաչ>կա՛նիչ գույն ցույց տվող բառերի նմանությամբ։

Եայ, Եաւ

133. Եայ եռաբարբառով հայտնի է միայն քրիստոնեայ>քրիստոնյա բառը, որպես գրական փոխառություն։

134. Եաւ եռաբարբառով հայտնի են բարեաւ>պարավ, սեաւ>սբէվ բառերը, որոնց մեջ եռաբարբառները հանդես գալով բառավերջի բաց վանկում, կորցրել են իրենց եռաբարբառային բնույթը և վերածվել երկբարբառների. առաջինը եա երկբարբառը ունենալով շեշտից հետո հնչյունափոխվել է ա-ի, իսկ երկրորդը շեշտի տակ եա-ն փոխել է ը-ի, որոնք համապատասխան են § 123-ում և 124-ում նշված օրինաչափությունններին։

3. Բաղաձայնների փոփոխությունները

Ձայնեղ պայթականներ

Բ

135. Հին հայերենի բ ձայնեղ պայթականը բառասկզբին արտասանվում է բ. այսպես՝ բաժանել>բիժէնիլ, բահ>բէհ, բահել>բիրհիլ, բամբակ>բէմբակ, բան>բէն, բանալի>բիլա՛նի, բանջար>բէնջար և այլն և այլն։

Բացառություն են կազմում բաղարջ>պաղաճ, բանկն>պը'նգել, բարեաւ>պարավ, բարեկամ>պարիկամ, բարեկենդան>պարիկէնթան, բուրուառ>փրուվար, բռնել>պրոնիլ բառերը, որոնք, թերևս, ձայնեղազուրկ բարբառների ազդեցության հետևանք են: Այդ ազդեցությունը նկատվում է և այսօր, որի լավագույն օրինակը կարող է հանդիսանալ բաժին, բաժինք հասկացությունների համար բարբառային բէժին, բէժինք՝ ձևերի կողքին պաժին, պաժինք ձևերի առկայությունը:

136. Բ-ն պահպանվել է անփոփոխ նաև բառամիջում և բառավերջում, եթե ղ-ից հետո չէ. այսպես օրինակ՝ բամբակ>բէմբակ, բամբասել>բիմբէսիլ, բամբասանք>բիմբէսանք, բիբ>բիբիկ՝, երբ>հիբ, լիբբ>լիբբ, լբբութիւն >լըբբոթին, հօրեղբայր>հէբբաՙր, շաբաթ>շէբաՙթ և այլն:

Բացառություն են կազմում համբերել>համփէրիլ, սուրբ>սուրբի բառերը, որոնք, որպես գրական փոխառություններ, ունեն բ>փ փոփոխությունը:

137. Այն բոլոր բառերը, որոնց մեջ բառամիջում ու բառավերջում բ-ն անմիջապես գտնվում է ղ-ից հետո, բ-ն խլացել ու դարձել է պ. այսպես՝ աղբ>ախպ, աղբախառն>ըխպախառ, աղբախոտ>ըխպախոտ, աղբանոց>ըխպանուց, աղբատեղ>ըխպատէղ, աղբիւր>ախպուր, աղբիւրաջուր>ըխպըրէջուր, եղբայր>ախպիր, եղբայրութիւն>ըխպըրոթին և այլն: Այս օրենքից շեղվում է միայն բուղբ>բողբ բառը, որի մեջ ղ-ից հետո բ-ն պահպանել է իր ձայնեղությունը:

138. Մասնակի հնչյունափոխական երևույթներ են՝ գաբ>գէփ, գուբ>գիփ «խաղողի քաղցուի գուբը», հարբուխ>խարփուղ. վերջինս գալիս է գրական լեզվից վերցրած հարբուխ ձևից, որը նախ առնմանությամբ դարձել է խարբուխ, ապա երկու խ-երի առնմանությամբ՝ խարփուղ: Ծնեբեկ>ծնիփուկ բառի մեջ խուլերի առնմանությամբ բ-ն շնչեղ խուլ է դարձել: Թամբ>թամք, թամբել>թամքիլ բառերը առաջացել են թամբք հոգնակի ձևից՝ բ-ի անկմամբ:

Դ

139. Հին հայերենի առաջնալեզվային դ ձայնեղ պայթականը բոլոր դիրքերում էլ հիմնականում անփոփոխ է. այսպես օրինակ՝

Բառասկզբում՝ դաղձն>դըէղնը, դանակ>դէնակ, դառնալ>դըէռիլ, դառնանալ>դըռնէնիլ, դատարկ>դէռատակ, դատել>դատիլ, դարման>դէրման և այլն:

Բառամիջում՝ արդի>հա՛րդա, երդումն>ո՛ւրդում, խընդրել>խընդլել, կարդալ>կա՛րդել, հիւանդանալ>հիվինդէնել, վարդավառ>վա՛ռրդա՛վառ և այլն:

Բառավերջում՝ բուրդ>բա՛ռրդ, գինդ>գինդ, գունդ>գունդ, երդ>հա՛ռրդ, լինդ>լընդ, կունդ>կունդ, մարդ>մարդ, ուրդ>ո՛ռրդ, վարդ>վա՛ռրդ և այլն:

Այս ընդհանուր օրինաչափությունից շեղվում են՝ անդամ>անթամ, արդար>արթար, աւելորդ>իվի՛նորթ, բարեկենդան>պարիկէնթան, դադար>դէթար, դադարել>դիթէրիլ, զարդարանք>զըրթէրանք, լեարդ>լերթ բառերը, որոնք որպես գրական լեզվից և այլ բարբառներից կատարված փոխառություններ, դ-ի դիմաց ունեն թ նույնիսկ ն-ից և ր-ից հետո, երբ բարբառում այդ հնչյուններից հետո խուլն է ձայնեղանում (հմմտ. մարտ>մա՛ռրդ «մարտ ամիսը», նա՛ռրդի<նարտ (խաղը) և այլն):

140. Խեղդել>խէ՛խտիլ բառի մեջ դ-ն փոխվել է տ-ի ղ-ից առաջացած խ-ի ազդեցությամբ (ղ>խ փոփոխության մասին տես § 175):

141. Որդն>ո՛ռնը, որդնել>ո՛ռնիլ բառերում դ-ն ընկել է:

142. Առանձին են մնում այդ>աթ և սրանից կազմված աթտէթ<այդտեղ(դ), աթքան<այդքան ցուցականները, որոնց մեջ դ-ի դիմաց ունենք թ:

Գ

143. Ետնալեզվային գ ձայնեղ պայթականը բառասկզբում և բառավերջում, երբ գոնվում է ա, օ, ու, ի, է ձայնավորներից որևէ մեկից առաջ, քմայնանում ու դառնում է միջնալեզվային գ՝. այսպես. ագարակ>Հիգէրակ (տեղանուն), այգի>ի՛գ՝ի, ագի>հա՛գ՝ին, գանգատ>գ՝էնգ՝ատ, գործել>գ՝ո՛ռծիլ, գործի>գ՝ո՛ռծին, գորտ>գ՝ա՛ռրթ՝ուգ, գունդ>գ՝ունդ, գուշ>գ՝ուշ, գղենուլ>սիգ՝էնիլ և այլն:

144. Նույն դիրքում, երբ գ-ն գոնվում է ա, ու, օ, ը ձայնավորներից առաջ, մնում է անփոփոխ. ինչպես օրինակ՝ գալ>գալ, գաղթական>գաղթական, գոռալ>գըռալ, գանգակ>գանգակ, ժանգոտել>ժընգոտիլ, խանգարել>խընգարիլ, ծունկն>ծունգուն, կնգուղ>կունգուղ և այլն:

145. Վերը նշված օրինաչափություններին չեն ենթարկվել.

ա) գրական փոխառությունները, ինչպես օրինակ՝ երգել>էրքիլ, թագաւոր>թաքաւոր, հոգի>հոքի, մարգարէ>մարքարէ, մարգարիտ>մաքարիտ և այլն:

բ) Մի շարք բառեր, ինչպես՝ ագահ>ակահի, գգոն>սրկոն, գդակ>քո՛դակ, գլուխ>կըլօխ և սրանից կազմված գլխիբաց>կըլխըբէց, գլխացաւ>կըլխանցալ, գլխաւոր>կըլխանվուր, գուգ>կըրգնօտ «գանգուր», որոնց մեջ գ-ի փոփոխությունը կարող է բացատրվել միայն այլ բարբառների ազդեցությամբ:

146. Բառավերջում գ-ն քմայնանում է, երբ գտնվում է վերին բարձրացման ձայնավորից կամ և ձայնորդից հետո. ինչպես՝ եղունգն>լէղինգ՝, էգ>էգ՝, թանգ>թանգ՝, հինգ>հանգ՝, ձագ>ձէգ՝, նիգ>լինգ՝, ուրագ>հՅրանգ՝, պատրոյգ>պա՛տրանգ՝ և այլն:

Բառավերջում գ-ն անփոփոխ է մնացել միայն ոյգ>օգ բառում:

147. Բառավերջում գ>ք փոփոխությունն ունեն գրական լեզվից անցած բառերը, ինչպես՝ անկարդ>անկարք, երգ>լէրք, ճրագ>ճըրաք, պատարագ>պատարաք: Ձիգ>ծիք՝ բառում գ>ք՝ փոփոխությունը այլ բարբառի ազդեցության արդյունք է: Ծագ>ծէք՝ (որից և ծագել>ծէք՝իլ) բառում գ>ք՝ փոփոխությունը կատարվել է ծ խուլ պայթաշփականի ազդեցությամբ: Նույնը կարելի է ասել նաև գիշեր>քիշէր բառի մասին, որի մեջ գ-ի շնչեղ խուլ գառնալը պայմանավորված է շ խուլ շփականի ազդեցությամբ:

Խուլ պայթականներ

պ

148. Հին հայերենի շրթնային պ խուլ պայթականը հիմնականում ամեն դիրքում էլ մնում է անփոփոխ. այսպես՝ պակաս>պակաս, պահէզ>պիհա՛զ, պաշտպանել>պըշտանել, պահք>պաք, պանիր>պանիր, ապրել>ապրիլ, ապրուստ>ապրուստ, խծպել>խըծբալիլ, կապալ>կապի, կապերտ>կաբրատ, կապոյտ>կ՚ապիտ, ծերպ>ծըէրպ, ծոպ>ծուպ, հուպ (տալ)>հոպ (տալ) և այլն:

149. Մի շարք բառերում պ-ն ա-ից առաջ դարձել է փ. այդ բառերն են՝ պատակ>փրատակ, անպատակ>անփրատակ, պատկել>փրատակիլ, ապապարել>փրապարիլ:

150. Բառամիջում պ-ն կրել է նաև հետևյալ մասնակի փոփոխությունները.

ա) Ապրշում>արբիշում, ապրիշմի>արբիշումի, գուլպայ>գ՚ա՛ղրաք՝, դէպ ի>դիբի՝, դէպ ի ետ>դիբէ՛տ բառերում պ-ն ձայնեղացել է. առաջին երկուսում բ ձայնորդի ազդեցությամբ, իսկ մյուսներում՝ գ, դ. ձայնեղների ազդեցությամբ: Ապրալ>ա՛բրա

«ամանի կշիռը» բառը որպես արաբական փոխառություն պահպանել է իր նախնական բ ձայնեղ հնչումը (հմմտ. արաբ. abra)։

բ) Շահպալութ>շամբալութ բառը առաջացել է շահ+բալութ ձևից, որը հարազատորեն է արտացոլում պարսկերեն բառի բաղաձայնների որակը (պրսկ. շահ «արքա», բալութ «կաղին»— շահ-բալութ «արքայական կաղին»), այնուհետև բ-ի առնմանությամբ հ-ն դարձել է մ։

գ) Պատուաստ>փէյվաստ բառաձևը անմիջական փոխառություն է պարսկերենից (հմմտ. պարսկ. پیوست փէյվաստ «կապ, միացում»)։

դ) Կճպել>քիչիվիլ, կճեպ>քիչիվ բառերում ճ>չ փոփոխությունից հետո բառասկզբի կ-ն չ-ից առաջ դարձել է ք (քիչիպ), անհասկանալի է պ>վ փոփոխությունը։

ե) Կտապ>կոտափ բառում պ-ն դարձել է փ՝ խուլ պայթականների տարնմանությամբ։

զ) Սեպտեմբեր>սէկտէմբէր բառում պ>կ փոփոխությունը կատարվել է հոկտեմբեր, դեկտեմբեր բառերի նմանությամբ։

Տ

151. Հայերենի առաջնալեզվային տ խուլ պայթականը ևս հիմնականում մնում է անփոփոխ, այսպես օրինակ՝ տալ>տալ, տակ>տակ, տակուիք>տակուիկ՛, տամկել>տըմկիլ, տայգր>տա-դիր, ապատել>ըզատիլ, ատել>ատիլ, աղտ>յէխտ, ամաչկոտ>հըմանչկուտ, առնէտ>ըռնատ, ատատ>ատատ և այլն։

152. Տ-ն կրել է նաև հետևյալ մասնակի փոփոխությունները.

ա) Գիտել>գիդիլ, գիտուն>գ'իդէն, տաղել>դաղիլ, տնտըղել>տընդըղիլ բառերում տ-ն դարձել է դ՝ գ, ղ, ն ձայնեղների առնմանությամբ։ Տ-ն ձայնեղացել է նաև բ ձայնորդից հետո մարտ>մարդ (ամիսը) բառում։ Հատատ>հատատ, հատատել>հըտատ-դիլ, շոյտ>շոյդ բառերում տ>դ փոփոխությունը կատարվել է խուլերի տարնմանությամբ։

բ) Մրտք>մարթք՛, վարտիք>վարթիք՛, փետուր>թիփուռ, փտել>փըթիլ, քրտունք>քըրթունք, քրտնել>քըրթընքիլ բառերում տ-ն շնչեղացել է թ, փ շնչեղ խուլերի ազդեցությամբ։ Նույն օրինաչափությունը գործել է նաև ցայտ>ցէթ, ցայտել>ցէթիլ բառերում, որոնց մեջ տ-ի շնչեղացումը տեղի է ունեցել ց պայթաշփականի շնչեղ խուլ տարրի (թ-ի) ազդեցությամբ։ Կատուկ>

քըթավիկ բառի մեջ փոփոխությունը կատարվել է խուլերի տարնմանության համար։

Տախտ>թախտ բառը պարսկական փոխառություն է تخت (թախթ) ձևից. վերջին թ-ն իր շնչեղությունը կորցրել է խ-ի ազդեցությամբ։

գ) Պատուատատ>փէյվատատ բառի մասին տես § 150 գ։

դ) Շահպալութ>շամբալութ բառի մասին տես § 150 բ։

ե) Դորտ>գոբթունգ բարբառային ձևը առաջացել է գորտունուկ ժողովրդական ձևից՝ ն-ի դրափոխությամբ (*գորտունկ), որի հետևանքով կ-ն ն-ից հետո ձայնեղացել է (*գորտունգ)։ Այս բոլորը, ինչպես նաև ձայնավորների փոփոխությունը, միանգամայն օրինաչափ է, բայց տ-ն ր-ից հետո պետք է որ ձայնեղանար, մինչդեռ շնչեղ խուլ է դարձել։

Կ

153. Հին հայերենի եռանկղվային կ խուլ պայթականը բառասկզբում մնացել է անփոփոխ, եթե թեթև ձայնավորներից և շ, թ, չ խուլերից առաջ չէ. այսպես օրինակ՝ կաթն>կախց, կախ>կախ, կախել>կախիլ, կակղել>կըկըղիլ, կակուղ>կակուղ, կաճ>կաճ, կամն>կամուն, կամուրջ>կարմունջ, կանաչել>կընանչիլ, կապալ>կապի և այլն։

Այս օրինաչափությունից շեղվում է կեանք>գյանք բառը, որը կ-ի փոխարեն ունի քմայնացած գ։

154. Բառասկզբում, եթե կ-ն գտնվում է ա, ո, ու, ի թեթև ձայնավորներից առաջ, քմայնանում է. այսպես՝ կաթ>կյաթ «կաթիլ», կաթել>կյա՛թիլ, կալ>կյալ, կալուլ>կյա՛լիլ, կանաչ>կյա՛նիչ, կանգնել>կյա՛ննիլ, կապոյտ>կյա՛պիտ, կարմիր>կյարմիր և այլն։

Այս օրենքին հակառակ ունենք կրակ>գիրէկ, որի մեջ բառասկզբի կ-ն ի-ից առաջ դարձել է քմայնացած գ։

155. Բառասկզբի կ-ն շնչեղ խուլ է դարձել այն բառերում, որոնց մեջ կ-ն գտնվում է չ պայթաշփականից կամ նրա բաղադրիչներից որևէ մեկից (շ, թ) առաջ, այսպես՝ կաչաղակ>քըչէղակ, կթան>քըթան, կթել>քըթիլ, կշեռք>քըշէռք, կշկուռ>քըշկոռ, կշտին>քիշտէն։ Նույն օրինաչափությամբ է առաջացել կճեպ>քիչիվ, կճպել>քիչիվիլ բառերում կ>ք փոփոխությունը, սակայն այն բանից հետո, երբ տեղի է ունեցել ճ>չ անցումը։ Կտաւիկ>

քըթավիկ բառում կ>ք փոփոխությունը կատարվել է տ>թ փոփոխությունից հետո։

156. Բառամիջում կ-ն մնացել է անփոփոխ, եթե ա, օ, ու, ի թեթև ձայնավորներից առաջ և ն ձայնորդից հետո չէ. այսպես՝ ակն>ակնը, ամաչկոտ>համանչկուտ, ամսական>ամսական, երեկոյ>երակու, երկաթ>արկաթ, երկան>արկան, երկու>յոր կու և այլն։ Սրան հակառակ ունենք զկեռ>ցըքըէռնը, ուր կ-ն դարձել է շնչեղ խուլ ք և բոկ(իկ)>բէբուկ (որից և բիբիկէնիլ «բոբիկանալ»), ուր կ>բ փոփոխությունը առնմանության արդյունք է։

157. Բառամիջում, երբ կ-ն դտնվում է ա, օ, ու, ի թեթև ձայնավորներից առաջ, քմայնանում է. այսպես օրինակ՝ ակիշ>ակ՚իշ, երեկ>իրէկ՚ի, խակի>խակ՚ի, ճակատ>ճէկ՚ա՚տ և այլն։ Սրան հակառակ մի քանի բառերում կ-ի դիմաց ունենք գ. ահա այդ բառերը՝ եկեղեցի>գ՚իղէցի, երկիր>յէրգ՚իր, երկինք>յէրգ՚ինք. վերջին երկուսում փոփոխությունը կատարվել է գրական լեզվի ազդեցությամբ։

158. Բառամիջում կ-ն ն ձայնորդից հետո դարձել է գ. այսպես՝ ականջ>անգուճ (ն-ի դրափոխությամբ), ականջմուտ>ընդրճմըտլի, անկան(ակ)>հինգ՚էնակ, արմունկ>արմունգ (ն-ի դրափոխությամբ), բանկն>պը՚նգըլ, ընկեր>հընգրէր, ընկոյզ>անգուզ, ընկուզի>ընգըզի՚, լուսնեակ>լիսլէնգ՚ան, սունկն>սանգուն, տընկել>տընգի՚լ, տունկ>տընգի՚ (տընգ՚օք), ցնկնել>ցընգընի՚լ։

159. Բառավերջում կ-ն մնում է նույնությամբ, եթե ի-ից հետո չէ. այսպես՝ ագարակ>հիգ՚էրակ, առաջնակ>ըաջընակ, արևգակն>իրինակ, բամբակ>բէմբակ, բարակ>բէրակ, բոզկ>բօխկ, գերմակ>գէրմակ, գատարկ>գէռատակ, միջնակ>մաջնակ և այլն։ Բացառություն է կազմում գիրկ>գ՚ոնրգ բառը, որում փոփոխությունը կատարվել է ր ձայնորդից հետո։

160. Բառավերջում, երբ կ-ն դտնվում է ի-ից հետո, քմայնանում է. այսպես՝ աղջիկ>ախչիկ՚, բժիշկ>բիժ՚իշկ՚, բեր(իկ)>բիբիկ՚, զատիկ>զէտիկ՚, իլ(իկ)>իլիկ՚ և այլն։

Բացառություն են կազմում կնիկ>կընագ՚, կծիկ>կըծագ՚ բառերը, որոնց մեջ բառավերջի կ>գ՚ փոփոխությունը կատարվել է ի>ա փոփոխության պայմաններում։

Աշակերտ>շագէրտ բառի մասին տես § 12։

Շնչեղ խուլ պայթականներ

Փ

161. Հին հայերենի փ-ն ամեն դիրքում էլ մնում է անփոփոխ. այսպես օրինակ՝ փաթաթել>փըթաթել, փախչել>փախչել, փայծաղն>փայծաղնը, փայծէնը, փայտ>փայտ, եփել>ԷՓԷԼ, թափոր>թափուր, նփ>ԻՓ, թափ>թափ, թեփ>թիփ և այլն։

Միակ բառը, որ շեղվում է այս կանոնաչափությունից, փրփրեմ, փերփերան>պիրպէրան բառն է, որի մեջ փ-երի դիմաց բարբառը ունի պ։

Թ

162. Համեմատաբար կայուն բաղաձայն է. ամեն դիրքում էլ հիմնականում մնում է անփոփոխ. այսպես օրինակ՝ թաթ>թաթ, թաթախումն>թըթախում, թաթուլ>թա՛նթուլ, թաղել>թա՛ղել, թել>թել, թեթեւ>թիթաւ, թեթեւանալ>թիթիվէնել, բլիթ>բիլիթ, բոլթ>բուլթ, երկաթ>արկաթ, ձէթ>ձէթ և այլն։

163. Բառամիջում, երբ թ-ն գտնվում է խ-ից հետո, դառնում է ա. այս տիպի օրինակներն են՝ յաղթել>հախտել, եօթն>յոխտ, եօթանեքին>յըխտէն, եօթանասուն>յըխտանասուն։ Կաթն>կախց բառի մեջ խ-ին հաջորդող թ>ա-ն է, որ դարձել է ց։

164. Թ-ի հնչյունափոխության մասնակի դեպքեր են. ուշաթափել>ըշատիլ, շըատիլ, փաթաթել>փըթատել, որոնց մեջ թ>ա փոփոխությունը տեղի է ունեցել շնչեղ խուլերի տարնմանության ազդեցությամբ։ Թմրել>դիմբիրել բառում մը հնչյունների միջև բ-ի հավելմամբ ուժեղացել է ձայնեղների առնմանական կարողությունը և թ-ն ձայնեղանալով դարձել է դ։

Վաթսուն>վացուն բառի մասին տես § 221։

Ք

165. Բառասկզբում ք-ն մնում է անփոփոխ, եթե ծանր ձայնավորներից առաջ է. այսպես օրինակ՝ քաժ>քաց, քաղ>քաղ, քաղել>քա՛ղել, քաղցր>քօխցուր, քաղց>քօխց և այլն։

166. Բառասկզբում թեթև ձայնավորներից առաջ ք-ն քմայնանում է. այսպես օրինակ՝ քանդել>քա՛ն՚դել, քանի>քա՛ն՚նի, քարշել>քա՛ն՚շել, քոյր>քՈՒՐ, քուն>քՅՕՆ, քիթ>քՅՈՒԹ և այլն։

167. Բառամիջում ք-ն հանդիպում է շատ սակավ: Այն դեպքում, երբ ք-ին հաջորդում է ի ձայնավորը, նա քմայնանում է, ինչպես՝ ինքն>ինքի: Բարդությունների մեջ մնում է նույնությամբ, երբ նրան հաջորդում է ծանր ձայնավոր, ինչպես՝ հօրաքոյր>հաքուր, մօրաքոյր>մաքուր: Բառամիջում ղ>խ-ից հետո վերածվում է խուլ պայթական կ-ի, ինչպես՝ աղքատ>ախկատ, աղքատութիւն>ըխկըտօթին, որ միանգամայն օրինաչափ է (տես § 169):

168. Բառամիջում ք>խ փոփոխություն ունի ոք մին>ուխման բառը:

169. Բառավերջում ք-ն փոխվել է կ-ի բարբառներ ս, շ, խ խուլերից հետո, ինչպես՝ անէծք>անիսկ՛, առաջ(ք)>առաշկ, դեղ(ք)>դէխկ, դժոխք>դժոխկ, զարմացք>զարմասկ, խոսք>խոսկ, կազմուած(ք)>կազմվասկ, կողք>կոխկ, հրաշք>հըրաշկ, ճեղք>ճէխկ, մէջք>մաշկ, շողք>շոխկ «ստվեր», քաջք>քաշկ և այլն:

Ք>կ փոփոխությունն ունեն թանաք>թանակ, տակուիք>տակուիկ՛ բառերը, առաջինը որպես գրական փոխառություն, իսկ երկրորդի մեջ իք>իկ-ը դիտակցվելով որպես ածանց:

170. Բառավերջում ք-ն քմայնանում է այն բառերում, ուր ք-ից կամ նրան նախորդող բաղաձայնից առաջ թեթև ձայնավոր է կամ, եթե ծանր է, ապա առաջացած հին հայերենի է, ի ձայնավորներից. այսպես՝ լայնք>լէնք՛, լուացք>լվանք՛ (նաև լվանց՝ ք-ի անկմամբ), հարսանիք>հըրսանիք՛, մեք>միք՛, միտք>մաթք՛, ուլունք>հոլինք՛, պէտք>պատք՛, երեք>իրիք՛ և այլն:

Մնացած բոլոր դեպքերում բառավերջի ք-ն պահպանվել է անփոփոխ. այսպես օրինակ՝ կնունք>կընոնք, համարք>համբրաք, հաւաք>հավաք, մտօք>մըտօք, յօնք>օնք, չարչարանք>չըրչարանք, չորք>չօք, պահք>պաք և այլն:

Շ փ ա կ ա ն ն ե ր

Ձայնեղ շփականներ

Զ

171. Ամեն դիրքում էլ մնում է անփոփոխ. ինչպես օրինակ՝ զատիկ>զէտիկ, զարմանալ>զըրմանիլ, զափրան>զա՛փրան, զոքանչ>զէնքուչ, թզենի>թիզի, լեզու>լա՛զու, լիզել>լիզիլ, թուզ>թոզ, խոզ>խուզ, պահէզ>պիհազ և այլն:

172. Մասնակի հնչյունափոխական երևույթներ են՝ գղել>գ՛ի՛ձ՛ել, գկեռ>ցըքը՛էռնը. վերջինիս մեջ գ-ն նախ առաջինի նման դարձել է ձ, ապա կ>ք-ի ազդեցությամբ՝ ց: Զգոն>սըկոն, զգենուլ>սիգ՛էնիլ բառերում գ>ս փոփոխությունը տեղի է ունեցել ձայնեղների տարնմանության:

Ժ

173. Ամեն դիրքում էլ մնում է որպես ժ. այսպես օրինակ՝ ժամ>ժէմ, ժայռ>ժէռ, ժանդ>ժընդ, արժան>ա՛րժան, բաժանել>բիժէ՛նիլ, բժիշկ>բիժի՛շկ՛ և այլն:

Բառավերջում հանդես է գալիս վարժ>վարժ և պատիժ>պատիճ բառերում, որոնցից առաջինը գրական փոխառություն է. երկրորդում ժ-ի դիմաց ունենք ճ՝ խուլերի առնմանությամբ: Առանձին է մնում ժախ>ջէխ բառը, որտեղ բառասկզբի ժ-ի դիմաց ջ է:

Ղ

174. Թեև հին հայերենը ղ-ով բառ չի սկսում, սակայն ղ-ով բառ սկսելու հատկությունը խորթ չէ բարբառին: Այստեղ նույնիսկ հին հայերենի մի շարք բառեր ղ-ից առաջ կորցրել են ձայնավորը, որով և ղ-ն մնացել է բառասկզբին. այսպես օրինակ՝ աղանձել>ղա՛նձիլ, աղանձառ>ղա՛նձուտ, աղաչանք>ղա՛չանք, աղաւնի>ղո՛ւնի, ողորմած(իկ)>ղօրմա՛ցիկ՛, ողորմի>ղո՛ր մի, ուղարկել>ղա՛րկիլ և այլն:

175. Բառամիջում ղ-ն պայթականներից ու պայթաշփականներից առաջ դարձել է խ. այսպես՝ աղբ>ա՛խպ, աղբանոց>ըխպա՛նուց, աղբիւր>ա՛խպուր, աղջիկ>ա՛խչիկ՛, աղտ>լէ՛ղտ, աղքատ>ա՛խկատ, բոդկ>բօխկ, եղբայր>ա՛խպիր, թաղկել>թա՛խկիլ, թուղթ>թօխթ, խեղդել>խէ՛խտիլ, ծաղկել>ծա՛խկիլ, կողք>կօխկ, ճեղք>ճէ՛խկ, մեղք>մէ՛խկ, յաղթել>հա՛խտիլ, քաղց>քօխց և այլն:

Այս օրինաչափությունից շեղվում են հետևյալ բառերը՝ պըղտոր>պըրտուղ, պղտորել>պըրտըղի՛լ, որոնց մեջ ղ-ի դրափոխությամբ խախտվել է օրենքը (ղ-ն ընկել է բառավերջ): Թուղթ>թօղթ բառում անհայտ պատճառով ղ-ն չի խլացել: Խեղճ>խէղճ, խիղճ>խիղճ, խղճմտանք>խըղճմըտանք բառերում ղ-ն պահպանվել է, բոլորն էլ ճ-ից առաջ: Գաղթական>գաղթական բառը գրական փոխառություն լինելով՝ չի ենթարկվել ընդհանուր կանոնին:

176. Բոլոր այն բառերում, ուր ղ-ն պալթականից ու պալթաշփականից առաջ չէ, մնացել է անփոփոխ. այսպես օրինակ՝ աղագ>հրդաք՛, աղալ>ա՛ղիլ, աղաման>ըղա՛ման, աղիք>ա՛ղինք՛, աղուն>ա՛ղուն, գեղնուց>գրղնո՛ց և այլն:

Այստեղ միակ բացառությունը փայծաղն>փա՛ցէխնը, փա՛ցախնը բառն է, որ ենթարկվել է § 175-ում նշված բառերի փոփոխությանը, թեև ղ-ն գտնվում է ն ունգայնից առաջ և չպետք է փոխվեր խ-ի, ինչպես ունենք՝ գեղնել>գրղնի՛լ, գեղնութիւն>գրղնո՛թին, գեղնուց>գրղնո՛ց, եղն>յէ՛ղնը, կաղնի>կաղնի՛ և այլն: Այդ բառի ղ>խ փոփոխությունը կատարվել է անշուշտ խուլերի առնմանությամբ:

177. Բառավերջում ղ-ն մնացել է անփոփոխ. այսպես՝ աղ>աղ, ասեղն>ա՛սուղ, գող>գո՛ղ, խանձող>խա՛նձուղ, ծիծաղ>ծը՛ծաղ, ծիղ>ծէղ, կեղ>կէղ, կնդուղ>կո՛ւնդուղ, տաշեղ>տա՛շուղ և այլն: Այստեղ միակ բացառությունը փող>փո՛ղ բառն է, որ նոր պարսկերենից կատարված անմիջական փոխառություն է:

Խաղող>խա՛ղու բառում ընկել է վերջահանգ ղ-ն:

Վ.

178. Ամեն դիրքում էլ մնում է անփոփոխ. այսպես օրինակ՝ վաթսուն>վա՛ցուն, վախ>վախ, վախկոտ>վա՛խկուտ, խորոված>խըրա՛ված, խառվել>խըրա՛վիլ, խառվ>խըրաւ, ծով>ծաւ, կով>կաւ և այլն: Միակ բացառությունը վիշապ>հո՛շաւ բառն է, որ վ-ի դիմաց ունի հ. վերջինս, մեր կարծիքով, առաջացել է ոչ թե վ-ից, այլ վ-ի անկումից հետո ձայնավորից առաջ բառասկզբին հ-ի հավելումով:

Խուլ շփականներ

Ս

179. Ամեն դիրքում էլ հիմնականում մնում է անփոփոխ. այսպես օրինակ՝ սամիթ>սա՛միթ, սայր>սրէ՛ս, սանդ>սանդ, սմիս>սմիս, սմսական>ըսմէ՛կան, լուսնեակ>լիսլէ՛նդ՛ան, հասանել>հրսա՛նիլ, ասեղն>ա՛սուղ, լոյս>լա՛ւս, հայս>հէ՛ս, միս>մա՛ս և այլն:

180. Ս-ի մասնակի հնչյունափոխություններ են.

ս>զ— սա>զա՛, նապաստակ>լըպրազտակ.

ս>ց— յիսուն>հի՛ցուն. փոփոխությունը կատարվել է վա՛ցուն<վաթսուն բառի նմանությամբ.

ս>ծ— կսկծանք>կըծկըծա՛ք՛, կսկծել>կըծկըծա՛լ. փոփոխությունը կատարվել է առնմանությամբ:

Սալոր>շալո՛ր, սալոր(են)ի>շիլերկ, սեամ>շէմք բառերը ժողովրդական շլոր, շլորի, շեմ(ք) բառերից են գալիս, որոնք հայտնի էին և հին հայերենին:

Վաթսուն>վա՛ցուն, տեսանել>ցուլ բառերի մասին տես §§ 221 և 223:

Շ

181. Ամեն դիրքում էլ մնում է անփոփոխ. այսպես օրինակ՝ շաբաթ>շէբաթ, շալակել>շիլէկիլ, շալակ>շէլակ, շաղախել>շըղա՛ղիլ, շամփուր>շամփուր, աշուն>աշունք, ակիշ>ակի՛շ, գոմէշ>գո՛մաշ, թուշ>թոշ, մաշ>մաշ, մոշ>մուշ, ուշ>հաշ և այլն: Ոչ մի բացառություն չկա:

Խ

182. Որպես կանոն բոլոր դիրքերում էլ մնում է անփոփոխ. այսպես օրինակ՝ խաբել>խա՛բիլ, խազ>խազ «տհաս», խաղող>խաղո՛ւ, ախոռ>ախուռ, բաշխել>բաշխիլ, երախայ>ըրախի, երախ>ըրէխ, ձախ>ծէխ և այլն: Բացառություն են կազմում հետևյալ բառերը. հարբուխ>խարբուղ, որի մասին տես § 138, և շաղախել>շըղա՛ղիլ, որի մեջ խ>ղ փոփոխությունը առնմանության արդյունք է:

Հ

183. Բացի բառասկզբի հ կապակցությունից, մնացած բոլոր դեպքերում մնում է անփոփոխ. այսպես օրինակ՝ հա>հա, հազ>հաղ, հազար>հէզար, հիզէր, համարք>համբրաք՝, հայր>հար, շնորհաւոր>շընհավուր, պահէզ>պիհա՛զ, ռահան>ռէհան, բահ>բէհ, շահ>շահ և այլն:

184. Բառասկզբի հ կապակցությունը դարձել է վ. այսպես՝ հող>վըէղ, հոտ>վըէտ, հոտել>վըէտիլ, հոր>վըէր: Բացառություն է կազմում միայն հովանալ>հըվանիլ բառը, որը գրական նոր փոխառություն է. «հով» հասկացության համար գործածվում է փոխառյալ սա՛ռին բառը:

185. Հ-ի փոփոխության եզակի օրինակներ են. հարբուխ>խարբուղ՝ հ>խ փոփոխությամբ. այս բառի մասին տես § 138, շահպալութ>շամբալութ՝ հ>մ փոփոխությամբ (տես § 150 բ), ջահ>ճառ բառի մեջ հ>ռ փոփոխությունը տարօրինակ ու ան-

հասկանալի է։ Օրհնել>օխնիլ, օրթնել, օրհնէք>օխնիք, օրթնանք, ջրօրհնէք>ջրրօխնիք, բառերում՝ մի դեպքում հ-ն փոխվել է խ-ի, իսկ մյուս դեպքում հ-ի անկումով ր-ն հնչյունների մեջ ավելացել է դ, որը դարձել է շնչեղ խուլ։ Երկու դեպքում էլ փոփոխությունները բարբառիս համար օրինաչափ չեն, ուստի և այդ բառաձևերը տարբեր բարբառներից կատարված փոխառություններ են։

Պ ա յ թ ա շ փ ա կ ա ն ն ե ր

Ձայնեղ պայթաշփականներ

Զ

186. Հիմնականում ամեն դիրքում էլ մնում է անփոփոխ. այսպես՝ ձագ>ձէգ՛, ձեռն>ձէք՛, ձեւ>ձիվ, ձի>ձի, աղանձել>ղա՛նձիլ, բարձրանալ>բիձրէնիլ, բրինձ>բիրի՛նձ, գինձ>գ՛ինձ, խուրձ>խօրձ, հունձ>հօնձ և այլն։

Այս օրինաչափությունից բացառվում են գրական փոխառությունները, որոնք ր-ից հետո ունեն ց. ինչպես՝ անփորձ>ա՛նփօրց, արձան>ա՛րցան, վարձք>վարցք, փորձ>փօրց, փորձանք>փ՛օրցանք։

187. Մի քանի բառերում ձ-ի դիմաց առկա է ծ, որ ձայնեղազուրկ բարբառների ազդեցության արդյունք է. այդ բառերն են՝ բարձ>բէրծ, ձախ>ծէխ, ձէթ>ծէթ, ձիգ>ծիք՛, օձ>օղծ։

188. Ձ-ի դիմաց ղ ունեն երկու բառ՝ դաղձն>դըէ՛ղնը, սինձ>սըէ՛ղնը։

Ջ

189. Ամեն դիրքում էլ մնում է անփոփոխ. այսպես օրինակ՝ ջրաղաց, ջաղաց>ջէ՛ղաց. ջերմն>ջիրմ, ջոկ>ջուկ, ջորի>ջ՛ՕՐի, առաջնակ>ըռջընա՛կ, բանջար>բէ՛նջար, միջնակ>մա՛ջնակ, մըրջիւն>մ՛ՈՒրջՈՒմ, արջ>առջ, լանջ>լէ՛նջ, կամուրջ>կա՛րմունջ, մէջ>մաջ, մանջ, ունջ>օնջ և այլն։

Վերջ>վէրչ բառը որպես գրական փոխառություն ջ-ի դիմաց ունի չ։ Ջ>չ ունեն նաև աջողություն>հաչօղո՛թին, յաջող>հա՛չօղ, յաջողումն>հաչօղում բառերը, որոնք բարբառային փոխառություններ են։

190. Բառամիջում ջ-ն ք>կ-ից առաջ դարձել է շ հետևյալ բառերում՝ առաջ(ք)>ա՛ռաշկ, մէջք>մաշկ, քաջք>քաշկ։

191. Աղջիկ>ախչիկ բառում ջ>չ փոփոխությունը կատարվել է խ խուլ հնչյունի ազդեցությամբ:

192. Այս բոլորից դուրս ջ>ն փոփոխությունն ունեն հետևյալ բառերը՝ ականջ>ականդուճ, բաղարջ>պաղաճ, ջախջախել>ճիճէխիլ, ջահ>ճառ, ջնջել>ճինջիլ, ջիլ>ճիլ:

Խուլ պայթաձիականներ

Ծ

193. Հիմնականում ամեն դիրքում էլ մնում է անփոփոխ. օրինակ՝ ծագ>ծէք՛, ծագել>ծէք՛իլ, ծալել>ծա՛լիլ, ծիծ>ծաՙծ, ծին>ծաՙն, ծիրան>ծա՛րաՙն, ածելի>ծիլի, խծպել>խըծըպլիլ, այծ>աՙծ, լուծ>լաՙծ, մեծ>մուծ և այլն:

194. Բարբառիս կ-ից առաջ ծ-ն դառնում է ա. այսպես՝ անէծք>անիսկ՛, ծածկարան, ծածկան>ծըսկան, ծածկել>ծասկիլ, կազմուած(ք)>կազմվասկ:

195. Փայծաղն>փաՙցէխնը, փաՙցախնը, քաՙծ>քաՙց բառերում ծ>ց փոփոխությունը կատարվել է շնչեղ խուլերի ազդեցությամբ:

Ողորմած(իկ)>ղորմաՙցիկ՛ բառում այդ նույն փոփոխությունը կատարվել է կ՛ քմայնացածի ազդեցությամբ:

Աստուածածին>աստվաձաՙձին բառը փոխառություն է այլ բարբառից:

Ճ

196. Բոլոր դիրքերում էլ մնում է անփոփոխ, եթե ն ձայնորդից հետո չէ. օրինակ՝ ճակատ>ճէկ՛ատ, ճանաչ>ճանիչ, ճաշ>ճէշ, արճիճ>ար՛ճաՙճ, կաճ>կաճ, կիճ>կիճ, կճուճ>կուՙճաՙճ՛ կոճ>կուճ և այլն:

197. Ն ձայնորդից հետո ճ-ն դարձել է ջ. այսպես՝ եղիճ>հաղինջ, կնճիթ>կինջիթ, ճանճ>ճէնջ, ճօճ>ճինջի:

198. Մի քանի բառերում ճ-ն փոխվել է չ-ի. դրանք են՝ կճեպ>քիչիվ, կճպել>քիչիվիլ, ճախարակ>չըխարակ, քարճիկ>քյաՙրչիկ՛:

Զ

199. Կայուն բաղաձայն է. ամեն դիրքում էլ մնում է անփոփոխ. այսպես՝ չամիչ>չիմիչ, չեչ>չիչ, չիր>չիր, ամաչել>հըմանչիլ, կաչաղակ>քըչէղակ, կորնչել>կոՙրչիլ, շչել>շինչիլ «սու-

լել», ամաչ>համանչ, ճանաչ>ճանիչ, պինչ>պինչ, փարչ>փարիչ և այլն։

Ց

200. Ամեն դիրքում էլ մնում է որպես ց. օրինակ՝ ցախաւել>ցըխա՛վիլ, ցամաքել>ցըմա՛քիլ, ցայտել>ցէ՛թիլ, աքացի>քա՛ցի, երիցակին>հըրցակին, ըրցակին, խնոցի>խինէ՛ցի, ծոց>ծօց, կուռց>կուռուց և այլն։

Ց-ն ք>կ-ից առաջ դարձել է ս զարմացք>զա՛ըմասկ բառում։

201. Ց-ի դիմաց հ ունեն -ալ և -անել խոնարհման բայերի կատարյալ (գրաբարի՝ անցյալ) և հարակատար դերբայները. այսպես օրինակ՝ մնացեալ>մընա՛հալ, մնացած>մընա՛հած, մոռացեալ>մըռա՛հալ, մոռացած>մըռա՛հած, լուացեալ>լիվա՛հալ, լուացած>լիվա՛հած, զարմացեալ>զըրմա՛հալ, զարմացած>զըրմա՛հած և այլն։ Այս երևույթը առկա է նաև Ագուլիսի բարբառում, մասամբ նաև Մեղրու բարբառում։

Ձ ա յ ն ո ր դ ն ե ր

Լ

202. Ամեն դիրքում էլ մնում է անփոփոխ. այսպես օրինակ՝ լալ>լէլ «լաց լինել», լակել>լակիլ, լայն>լէն, լանջ>լէնջ, լաց>լէց, ալեւոր>հիլէ՛վոր, հալ՚ո՛վոր, ալիւր>ա՛լեր, ածելի>ծիլի, այլ>ալ, աւել>ա՛վիլ, գայլ>գա՛ալ և այլն։

Լինել>նիլ բայի մեջ ընկել են բառասկզբի հնչյունները (լի)։

Մ

203. Ամեն դիրքում էլ մնում է անփոփոխ. օրինակ՝ մազ>մազ, մակոյկ>մակուկ, մայր>մար, մանգաղ>մա՛նգաղ, աղաման>ըղամա՛ն, ամաչել>հըմանչիլ, ամասկան>ըմասկա՛ն, ժամ>ժէմ, կեմ>կիմ և այլն։ Միակ բացառությունը փրփրեմ>պիրպէ՛րան բառն է, որ ավելի համեմատելի է փերփերան տարբերակի հետ (այս բառի մասին տես § 161)։

Ն

204. Բառասկզբի յ-ն մեծ մասամբ ենթարկվել է հայերենի պատմական ընդհանուր հնչյունափոխությանը և արտասանվում է

որպես կոկորդային խուլ շփական հ. այսպես օրինակ՝ յաղթել>հաղթել, յաջող>հաջող, յաջողություն>հաջողություն, յարմար>հարմար, յիսուն>հիսուն և այլն:

Բացառություն են կազմում յատակ>յէտակ «շենքի հիմք», յղի>լրղէ բառերը, որոնց մեջ պահպանվել է բառասկզբի յ-ն:

Բառասկզբի յ-ն ընկել է յիշող>ուշունց, յոնք>օնք բառերում: Յաւելուլ>իվիլցա՛նիլ բառաձևը որպես պատճառական կերպի բայ, կազմված է ցանիլ վերջավորությամբ և աւել(ի)>իվիլի արմատով, ինչպես այդ հատուկ է բարբառիս պատճառական կերպի բայերի կառուցվածքին:

205. Բառամիջում յ-ն ձայնավորների միջև քիչ է հանդիպում. եղած օրինակներից արքայութիւն>արքայութին «դրախտ», ծառայել>ծրուայիլ, հրամայել>հրրամայիլ, մայիս>մայիս բառերը գրական փոխառություններ են:

Երախայութիւն>ըրխոյթին բառը որպես ածանցավոր բառ, կազմված է երախայ>ըրախի բարբառային ձևից, որտեղ այ երկբարբառի դիմաց ունենք ի. իսկ այդ ի-ն շեշտից առաջ ոչնչացել է:

Հայելի>հիլլի բառաձևում այ երկհնչյունն ընկել է. ե-ն օրինաչափորեն դարձել է ի:

206. Բառավերջում յ ձայնորդը ընկել է ա, ո ձայնավորներից հետո և ա հոլովման ենթարկվող հատուկ անձնանունների սեռական-տրական-հայցական հոլովներում. այսպես օրինակ՝ տղայ>տըղա, վկայ>վրկա, Արշակ, սեռ. Արշակա, Վազգէն, սեռ. Վազգէնա, Մարդաւ՛բաւ (<Մարտիրոս), սեռ. Մարդաւրաւ՛սա և այլն:

Ն

207. Ամեն դիրքում էլ մնում է որպես ն. այսպես օրինակ՝ նաւթ>նոթ, նեղանալ>նիղէնիլ, նշանել>նիշէնիլ, նուռն>նոռնը, աման>ամ՛ան, ամէն>օմ՛ան «բոլորը», ամսական>ըմսէկան, այն>ան, բան>բէն, բոյն>բաւն և այլն:

208. Հնչյունափոխության մասնակի երևույթներ են.

Բանկն>պընգել բառում երկու ն-երի տարնմանությամբ բառավերջի ն-ն փոխվել է լ-ի: Ն-երի տարնմանությամբ մի ն-ի լ փոխվելը կատարվել է նաև նինջ>լինջ, ննջել>լինջիլ բառերում: Այս նույն օրինաչափությանն է ենթարկվել նաև նիգ>լինգ՛ բառը, որի մեջ նախ կատարվել է ն-ի հավելում՝ նիգ>*նինգ և ապա տարնմանությամբ՝ լինգ՛:

Շլնի>շիլլի բառում ն-ն առնմանությամբ դարձել է լ։

Մեռոն>մուռում, մրջիւն>մուրջում բառերում գործել է առաջընթաց առնմանության օրենքը։

Անուն>անում բառում մ-ն կարելի է ենթադրել ավելի հին, որպես նախահայերենի հնդեւրոպական վիճակի արտահայտություն, սակայն բացառված չէ նաև ն-երի տարնմանությունը։

Պատնջան, պատինճան>պատրջան բառում կատարվել է ն>ր փոփոխությունը։

Անհասկանալի է մնում նապաստակ>լրպրազտակ բառի մեջ բառասկզբի ն>լ փոփոխությունը։

Ռ

209. Բառասկզբում ռ-ն հանդես է գալիս միայն ռահան>ռէհան, ռոճիկ>ռօճիկ բառերում։

210. Բառամիջում և բառավերջում ռ-ն մնում է անփոփոխ. այսպես օրինակ՝ առաջք>ուռաշկ, առաջին>ըռջի, առաջնակ>ըռջընակ, առնէտ>ըռնատ, ախոռ>ախուռ, կշկուռ>քըշկոռ և այլն։

Բացառություն են կազմում առնել>ուրիկ, դուռն>դուրք բառերը, որոնք կազմված են արմատական ար, դուր ձևերից, առանց ն ածանցի, որից առաջ է, որ ր-ն կոշտանում և դառնում է ռ։

Ր

211. Բառասկզբում ր ունենք միայն բոպէ>բոպէ բառում, որ գրական փոխառություն է։

212. Բառամիջում և բառավերջում ր-ի դիմաց մեծ մասամբ ունենք ր. ինչպես՝ այրել>էրիլ, արեգակն>իրինակ, արիւն>ա՛ռուն, գարուն>գ՛ուռունք, բահել>բիրհիլ, ալեւոր>հիլէվուր, հալ-ծ՛վուր, ալիւր>ա՛լուր և այլն։

Նույն դիրքում ր-ի դիմաց ռ ունեն արհամարհել>առհամա-ռիլ (գրական փոխառություն է), արջ>առջ, բուրուառ>փըռվար, դատարկ>դէռատակ, երախ>ռըէխ, զափրան>զա՛փռան, ծրտել>ծըռտիլ, որոտալ>ուռուտալ, շահասպրամ>շըպըռհամ, շուրջ>շոռ, ոսկր>վըէսկռ, փեռուր>թիփռուռ բառերը։

213. Հայերենի ընդհանուր օրինաչափությամբ ր-ն ն ձայնորդից առաջ դարձել է ռ հետևյալ բառերում. արիւնել>ըռնիլ, կորընդան>կըռընդէնի, որդն>ու՛ռնը, որդնել>ու՛ռնիլ։ Բացի երկրորդ

օրինակից, մյուսներում այդ օրենքը սկսել է գործել իւ, դ հնչյունների անկումից հետո, երբ ր-ն գտնվել է անմիջապես ն-ից առաջ:

214. Բոլոր >բա՛ւլաւլ բառում գործել է առաջընթաց առնմանության օրենքը:

215. Արմատի կրկնությամբ կազմված կամ որպես այդպիսին դիտակցված բառերում ր-ն փոխվել է ռ-ի, այսպես՝ թրթուր> թըռթուռ, թրթռել>թըռթըռալ, մարմար>մա՛ռմառ, փրփրալ> փըռփըռալ, բայց՝ փրփուր>փըրփո՛ր:

216. Առանձին են մնում ծայր>ծէյ, կորիզ>կըղազ, պիրկ> պայկ (նաև՝ պարկ), վերին>վըէյի, տափարակ>տա՛փլակ, տափարակել>տըփլակել բառերը, որոնք ունեն ր>յ, ր>լ, ր>ղ փոփոխությունները:

Ի (ւ)

217. Բոլոր այն բառերում, որոնց մեջ ւ ձայնորդը հանդես է գալիս ոչ որպես երկբարբառի տարր, այլ գտնվում է ձայնավորների միջև, արտասանվում է որպես շրթնաատամնային ձայնեղ շփական վ. ինչպես օրինակ՝ ալեւոր>հիլէվոր, հա՛լօ՛վա՛ր, ալեւորութիւն>հիլիվըրո՛թին, աւել>ա՛վիլ, աւելանալ>իվիլէնիլ, աւելի>իվիլի՛, դեղնացաւ>դըղնա՛ցավ, թաւալ տալ>թա՛վիլ տալ, թեւ>թիվ, հարեւան>հըրէվան, հաւ>հավ, հաւաք>հավաք և այլն:

Եւղ>յէղ բառի մեջ ընկել է ւ ձայնորդը:

Հնչյունափոխական այլ երևույթներ

218. Բաղաձայնների փոփոխությունները նկարագրելիս արդեն խոսել ենք հնչյունափոխական մի շարք երևույթների մասին: Բաղաձայնների փոփոխությունները, եթե չեն կրում ընդհանուր պատմական հնչյունափոխության բնույթ (բաղաձայնների տեղաշարժ), այլ ընդգրկում են միայն եզակի դեպքեր, ապա այդպիսի փոփոխությունները արդյունք են կամ այլ հնչյունների փոխազդեցության և կամ մի այլ լեզվի կամ բարբառի հնչյունական օրինաչափության ազդեցության: Առաջին դեպքում փոփոխությունները հիմնականում կատարվում են հնչյունների առնմանությամբ: Այդ երևույթները բացահայտված են բաղաձայնների փոփոխությունների շարադրանքում: Բայց, բացի այն, որ բառի մեջ հնչյունները ենթարկվում են փոփոխությունների, բառն ինքը խոսքի մեջ կարող է ենթարկվել այլևայլ փոփոխությունների: Այդ տիպի փոփոխությունները

ների շարքին են պատկանում հնչյունի կամ հնչյունների հավելումը բառի մեջ, հնչյունի կամ հնչյունների անկումը բառի մեջ, բաղաձայնների տեղափոխությունները, բաղաձայնների կրկնությունները, հընչյունների ամփոփումը և այլն: Այս երևույթները, իհարկե, առանց պատճառի չեն, որ կատարվում են, սակայն ոչ բոլոր դեպքերում է, որ հնարավոր է լինում թափանցել դրանց առաջացման պատճառների մեջ:

Հավելում

219. Հնչյունի կամ հնչյունների հավելումը որոշում ենք բարբառի բառերը համեմատելով գրաբարյան բառերի հետ: Այդպիսի համեմատությունը երևան է հանում հավելման հետևյալ դեպքերը:

1) Բ հնչյունն ավելացել է մր(ռ) հնչյունների միջև՝ մ շրթնայնի ազդեցությամբ. ինչպես՝ զմուռս>զըմբրէռ, համարել>հըմբարիլ, համար(ք)>համբրաք, թմրել>դիմբիրիլ:

2) Դ հնչյունը ավելացել է ներ հնչյունների միջև՝ ն առաջնալեզվային ձայնորդի ազդեցությամբ. ինչպես՝ ծանր>ծանդր, ծանրանալ>ծընդրէնիլ, ծունր>ծոնդուր, մանր>մանդր, մանրել>մանդրել>մանդիլ, այնր>անդր>անդուր>ինդու՛ր «նրա»:

3) Հ հնչյունը ավելացել է բառասկզբում ձայնավորից առաջ: Հնչյունական այս երևույթը, որ հատուկ է և հայերենի այլ բարբառների, պայմանավորված է ձայնավորների արտաբերմանը նախորդող, այն է՝ ձայնալարերի թրթռմանը նախորդող, օդի հոսանքի արտամղմամբ, որը և ձայնավորից առաջ տալիս է խուլ շփական հ: Սա այդ բառերը. ադարակ>հիդէրակ, ադի>հա՛դին, ալեւոր>հիլէվուր, հաւլո՛վաւր, ալեւորութիւն>հիլիվըրօթին, ալեւորել>հիլիվէրիլ, ադագ>հըդաք՝ «ճանապարհ», ամաչ>համանչ, ամաչել>հըմանչիլ, ամաչեցուցանել>հըմընչցանիլ, ամաչկոտ>հըմանչկուտ, անիծ>հա՛նիծ, անկան>հինդէնակ, աջողութիւն>հաչողօթին, արբենալ>հա՛ըբիլ, եղիճ>հաղինջ, երանեակ>հըրէնակ, երբ>հիբ, երդ>հաւրդ, երինջ>հէրինջ, երիցակին>հըրցակին (բայց նաև՝ ըրցակին), ինչ>հինչ, ո, ով>հու, հուվ, ոյր>հաւր, ոլոր>հիլլօր, ոլորել>հիլլօրիլ, որմն>հրէմը, ոջիլ>հաւ՛ջաւլ, ուլ>հՁլ, ուլունք>հՁ՛լինք՝, ուղեղ>հըղՁղ (բայց նաև՝ ըղՁղ), ուղի>հըղի, ուշ>հաւշ, ուռ>հՁռնը, ուռի>հըռնի՛, ուր>հՁր, ուրադ>հՁ՛ըդ՝, ուփի>հՁուփի:

4) Ն հնչյունը ավելացել է.

ա) ճ, չ, ջ, ց պայթաշփոփաններից առաջ. օրինակներն են՝ ամաչ>համանչ, ամաչել>համանչիլ, ամաչեցուցանել>համընչցանիլ, ամաչկոտ>համանչկուտ, մէջ>մանջ (նաև՝ մաջ), լիշոց>ուշունց, շչել>շինչիլ, բառաչել>բրընչալ, եղիճ>հաղինջ, կամուրջ>կամանջ, կանաչել>կընանչիլ, ճանաչել>ճընանչիլ, ճօճ>ճինջի:

Բայց՝ ճանաչ>ճանիչ, չամիչ>չիմիչ, կանաչ<կանիչ բառերը այս օրինաչափութեանը չեն ենթարկվել:

բ) Գ, ք հնչյուններից առաջ՝ հետևյալ բառերում. աղիք>աղինք, արտասուք>ըրտասունք, նիգ>լինգ, թրիք>թըրանք:

գ) Բառասկզբում հետ>նըհէտ բառում:

դ) Բառամիջում՝ աւելորդ>իվիլնօրթ, թաթուլ>թանթուլ, ծոթորին>ծընթո՛րան բառերում:

ե) Բառավերջում՝ ապի>հա՛գին, մի>մին (թվկ.), մի>ման (արդելական մասնիկը), գործի>գ'ործին «արոր», լուսնեակ>լուսնեակն>*լիսնէկն>*լիսէնգն>լիսէնգ'ան:

զ) Մի շարք բառեր բարբառիս -ին (<ըն) հանգող բառերի նմանութեամբ՝ բառավերջում առացել են -ին. այսպես՝ որթ>վըէրթին «խաղողի որթ», ուռ>հուռնը, ուռի>հրուռնի, զկեռ>ցըքըէ՛ռնը, սինձ>սըէզնը, բորբոս>փուի՛փուանը: Ճիւղ բառը դրանց նմանութեամբ ունեցել է նախ՝ ճուղն, ապա՝ ճուղուն>ճօղուն:

5) Լ հնչյունը ավելացել է ականջամուտ>ընգրճմըտլի, լուսնեակ>լիսլէնգ'ան, խնչել>խըլընչիլ, կոկիկ>կ'ուկլիկ բառերում:

6) Կ հնչյունը ավելացել է ոգնի>կ'ուզնի բառում, որ պրոֆ. Հր. Աճառյանի բացատրութեամբ պետք է որ առաջացած լինի *ոզնիկ ձևից, կ-ի տեղափոխութեամբ:

7) Խ հնչյունը ավելացել է ք, տ հնչյուններից առաջ հետևյալ բառերում՝ գօտի>գ'ուխտիկ, եօթն>յոխտ, եօթանեքին>յըխտէն, կաթն>կախց, օտար>ուխտար:

8) Ջ հնչյունը ավելացել է խոր>ջըխոտ և դրանից կազմված ջըխըրցանիլ «խորացնել» բառում: Անհասկանալի է այս հավելման պատճառը. գուցե խոր «քիչ» բառի հետ չշփոթելու համար:

9) Տ հնչյունը ավելացել է բառավերջում ս(զ), խ հնչյուններից հետո հետևյալ բառերում՝ աղուէս>ա՛ղվէստ, պոզ>պըզտ, սընդուկ>սանդուխտ: Նույնիսկ ռուսերենից նոր փոխառյալ колбаса բառի մեջ, բառավերջի ձայնավորի անկմամբ, ս-ից հետո ավելացել է տ՝ կ'ալբաստ: Սր հնչյունների միջև տ-ի հավելում ունենք այր>*ասր>*աստր>ա՛ստր «սրա» դերանվանական ձևում:

10) Ր հնչյունը ավելացել է նապաստակ>լըպրծոտակ բառում:

11) Ֆ հնչյունը ավելացել է միայն բառավերջում որպես գոյականակերտ ածանց, որը բարբառի խուլերից հետո դարձել է կ. այսպես՝ աշխարհ>աշխարք, աշուն>աշունք, առաջ>առաջք>առաշկ՛, գարուն>գ՛որ՛ունք, դեղ>դեղք>դէխկ «թույն», դուռն>դուրք, թամբ>թամբք>թամք, ժանգառ>ժընդէռք, կազմուած>կազմվածք>կա՛զմվասկ, համար>համբրաք, ձեռն>ձէք՛ և այլն:

12) Հին հայերենի մի շարք բառեր բարբառումս գործածվում են միայն ածանցված ձևով, ինչպես՝ անկան>հինգէնակ, մօտ>մ՛օտիկ՛, շաղապատ>շաղապատուկ>շըպ՛ատուկ, ողորմած>ղ՛որ՛մ՛ացիկ՛, գորտ>գ՛որ՛ընթ՛ունգ՛, իլ>ի՛լիկ՛, մեղու>մէ՛ղակ «վայրի մեղու», պարկուճ>պարկուճակ>պըրկ՛ոճակ և այլն:

Ա. Ց կ ո ւ մ

220. 1) Բ հնչյունը ընկել է թամբ>թամք բառում, որ նախ ունեցել է թամբք հոդնակի ձևը, ապա բ-ի անկմամբ՝ թամք. այս ձևից էլ կազմված է թամքիլ «թամքել» բայը:

2) Գ և կ հնչյունները ընկել են ն ունգայնի հարևանությամբ. օրինակներ՝ անկանել>նանիլ, արեգակն>արեգնակ>իրինակ, գնալ>նէլ,կանգնել>կ՛ա՛ննիլ, կանգնեցուցանել>կիննիցա՛նիլ: Բառավերջում կ-ն ընկել է օթեկ>օթի «հաջորդ օրվա» բառում՝ արտասանության թուլացման հետևանքով:

3) Դ-ն ընկել է որդն>ո՛ռնը, որդնել>ո՛ռնիլ բառերում՝ ր-ից հետո և ն-ից առաջ:

4) Ն հնչյունը ընկել է.

ա) այն բառերում, որոնց մեջ ն-ն արմատական չէ. այսպես օրինակ՝ առնել>ա՛ռիլ, առնուլ>ա՛ռիլ, դառնալ>դրէ՛ռիլ, ելանել>ի՛ելիլ, կորնչել>կ՛որ՛չիլ, մեռանել>մրէ՛ռիլ, մոմնել>մ՛ո՛ւմիլ, մտանել>մ՛ըտիլ, սկսանել>սրկ՛ըսիլ, դուռն>դուրք, ձեռն>ձէք՛, աղբըն>աղբ, ասեղն>ա՛սուղ, եղունգն>յէ՛ղինգ, երդումն>ո՛ւրդում և այլն: Որմն>հրէ՛րմը, սերմն>սրէ՛րմը, տասն>տասը բառերը նախապես ունեցել են *հրէրմնը, *սրէրմնը, *տասնը ձևերը. հետագայում ն-ի անկումով մնացել է բառավերջի ը-ն:

բ) Բարբառս իրրև կանոն ծառանունները կազմում է ոչ թե -ենի ածանցով, այլ ի ածանցով. այսպես՝ թիկնի>թիկի, թթենի>թըթի, սալորենի>շիլիրի, խնձորենի>խինձիրի, շտրկի «դեղձենի» (շտ՛ղուկ «դեղձ» բառից) և այլն:

գ) մինչ ի, մինչև>միչով բառում։

5) Բարբառիս մեջ անձնական թվականները ուրույն ձևավորում են ստացել. հին հայերենի, -ոքին, -եքին ածանցները կըրճատվել և դարձել են -էն։ Այդ երևույթը կատարվել է երեքին> իրիքէ՛ն անձնական թվականի նմանությամբ, որի -ին>-էն գիտակցվելով որպես անկախ ածանց՝ տարածվել է նաև մյուս ձևերում. ինչպես՝ երկոքին>յըրկէն, եօթանեքին>յըխտէն, իննեքին> իննէն և այլն։

6) Ջ հնչյունը ընկել է թռչել>թըռիլ բառում։

7) Ղ հնչյունը ընկել է դաղձն>դըէզնը, խաղող>խա՛դու, շաղապատ>շըպա՛տուկ, կաղկանձել>կընձկընձա՛լ բառերում։ Վերջինս կազմված է կանձ>կընձ-ի կրկնությամբ, որպես բնաձայն բառ։

8) Մի շարք բառերում ք-ն, գիտակցվելով որպես հոգնակի վերջավորություն, ընկել է. այսպես՝ լուացք>լիվա՛ց, կարկատանք>կըրկա՛տան, կուրծք>կործ։ Ռ-ն ընկել է նաև սույն պարագրաֆի 5-րդ կետում նշված անձնական թվականներում։

9) Ջ հնչյունն ընկել է շուրջ>շօռ և սրանից կազմված շուրջ տալ>շօռ տալ «շրջել», շօռ գալ «ման գալ, շրջագայել» դարձվածքներում։

10. Տ-ն ընկել է պաշտպանել>պըշպանիլ, պատճառ>պա՛ճառ, պատճառաւոր>պաճառա՛վուր «հղի» բառերում։ Տենդ(ոտ)ել> տա՛նդիլ բարբառային ձևը կազմված է տենդ>տանդ արմատից՝ իլ դերբայական վերջավորությամբ։

11) Խ-ն ընկել է ջախջախել>ճիճէ՛խիլ բառում։ Հին հայերենում բառը կազմված է արմատի լրիվ կրկնությամբ, մինչդեռ բարբառումս արմատի ոչ լրիվ կրկնությամբ։ Բառակազմական այդ երևույթը խորթ չէ հայերենին (հմմտ. փոփոխել՝ առաջացած փոխփոխել-ից, ինչպես այդ պահպանված է բարբառիս մեջ փէխփէ՛խիլ ձևով)։

12) Լինել>նիլ բառի մեջ ընկել է լի հնչյունախումբը։

13) Հօրաքոյր>հա՛քուր, մօրաքոյր>մա՛քուր բառերում ընկել է օր հնչյունախումբը, հօրեղբայր>հէ՛րբա՛ր բառում՝ եղ հնչյունախումբը։

14) Յ-ն ընկել է յիշոց>ու՛շունց, յոնք>օ՛նք բառերում։

15) Հ-ն ընկել է հետևյալ բառերում՝ աշխարհ>ա՛շխարք, արհամարհել>առհամա՛րիլ, խոնարհ>խո՛նար (վերջին երկուսը գրական փոխառություններ են), հնձան>ընձա՛ն, պահք>պա՛ք, օրհ-

նել>օրթնիլ, օրհնէք>օրթնանք, ջրօրհնէք>ջրօխնիք՝ (վերջին երեք բառերի մասին տես § 185)։

16) Ր-ն ընկել է հետևյալ բառերում՝ դուրս>դուս, երբ>հիբ, բարձր>բծաւր, բարձրանալ>բիձրէնիլ, խարշել>խաշիլ, խընդրել>խընդիլ, մանրել>մանդիլ, ներս>նի, չորք>չօք, սերկևիլ>սիկիվիլ, սերկևլի>սիկիվիլի, չորեքին>չըքէն, քարաթոթոշ>քըթանթուշ, քարշել>քաշիլ։

Հնչյունների ամփոփում

221. Հնչյունների անկմանը նվիրված բաժնում արդեն խոսվել է հօրաքոյր>հաքուր, մօրաքոյր>մաքուր, հօրեղբայր>հէրբաւր, գնալ>նէլ, լինել>նիլ և նման բառերի մեջ հնչյունների կորստի մասին, որն, ըստ էության, բառի մեջ հնչյունների ամփոփման մի դրսևորում է։ Այդպես է նաև վաթսուն>վացուն բառում թ և ս բաղաձայնների ամփոփմամբ՝ ց բարդ հնչյունի առաջացումը, որի դրսևորմանը նպաստել է արմատական վեց>վից բառը։

222. Դուր գալ «շարժվել», դուր տալ «շարժել» հարադրությունները առաջացել են հին հայերենի ընդ իրեար գալ (տալ) հարադրություններից։ Ընդ նախդիրից բարբառում պահպանվել է միայն դ հնչյունը. իրեար բառը բարբառում ունի ուրուր ձևը (տես § 72), ուստի և դարձվածքը ստացել է դուրուր գալ (տալ) ձևը, որը հայտնի է Մեղրու բարբառում։ Բարբառում դուրուր գալ (տալ) հարադրության առաջին մասի ամփոփմամբ ստացվել է դուր գալ (տալ) ձևը։

223. Տեսանել>ցուլ բառը արտակարգ փոփոխության է ենթարկվել. առաջին հայացքից բարբառային ցուլ ձևը թվում է թե ոչնչով չի առնչվում տեսանել բառի հետ, բայց իրականում դրանք նույն բառերն են՝ երկրորդը առաջինի համեմատությամբ խիստ հնչյունափոխված։ Այդ երկուսի կապը բացահայտել է պրոֆ. Ա. Ղարիբյանը իր «Հայ բարբառների մի նոր ճյուղ» աշխատության մեջ։ Տեսանել ձևից մինչև ցուլ ձևը այդ բառը անցել է հնչյունափոխական մի շարք աստիճաններով. նախ կատարվել է լծորդության փոփոխություն (տես(ա)նուլ), ապա ընկել է (ա)ն ածանցը, ինչպես այդ հատուկ է բարբառիս շատ բայերի (հմմտ. մատանել>մըտիլ, սկսանել>սըկըսիլ, մեռանել>մըէռիլ, ելանել>ելիլ և այլն), որի հետևանքով առաջացել է տեսո՛ւլ ձևը՝ վերջավանկի շեշտով. այնուհետև շեշտից առաջ ե-ի անկմամբ՝ տս>թս բաղաձայնների բարդացմամբ ստացվել է ցուլ բառաձևը։

Դրափոխություն

224. Ձայնավորների մասնակի տեղափոխությունների մասին խոսել ենք ձայնավորների փոփոխությունները քննելիս: Ձայնավորների տեղափոխությունները ոչ միայն մասնակի, այլև պատահական բնույթ ունեն: Ձայնավորների տեղափոխության մեջ օրինաչափ բնույթ ունի միայն ը ձայնավորի դրափոխությունը, այն էլ այն բառերում, որոնք գրաբարում ունեն բաղաձայն+ն վերջավորություն, որոնց գաղտնավանկում էլ հանդես է գալիս ը-ն: Այդ տիպի բառերի գաղտնավանկի ը ձայնավորը օրինաչափորեն տեղափոխվել է բառի վերջը՝ ն ձայնորդից հետո. այսինքն՝ կատարվել է ըն>նը դրափոխությունը. այսպես օրինակ՝ ակն>ակնը, ամառն>ամառնը, բեռն>բէռնը, գառն>գէոռնը, դառն>դրէռնը, եղն>իղնի, իղնը, թոռն>թօռնը, կուռն>կօռնը, ձմեռն>ձմէռնը, նուռն>նօռնը և այլն: Բացառություն են կազմում այն բառերը, որոնք իրենց գաղտնավանկի ը ձայնավորը առնմանությամբ փոխել են մի այլ ձայնավորի (հմմտ. ձուկն>ձուկուն, մուկն>մուկուն, սունկն>սունգուն և այլն), և կամ ն-ի հետ միասին կորցրել այն (հմմտ. ասեղն>ասուղ, հարսն>հարս և այլն):

225. Սակայն են բաղաձայնների դրափոխության հետևյալ դեպքերը.

ա) Ն-ն տեղափոխվել է կ-ից առաջ. օրինակներն են՝ ականջ>անգուճ, ականջամուտ>ընգրճմրտլի, արմուկն>արմունգ: Ն-ի տեղափոխություն է կատարվել նաև արեգակն>իրինակ բառում, ուր դրափոխությունից հետո ն-ի հարևանության մեջ գտնվող գ-ն ընկել է.

բ) ր-ն տեղափոխվել է դատարկ>դէռատակ, կամուրջ>կարմունջ, կապերտ>կարպատ բառերում.

գ) հ-ն տեղափոխվել է շահասպրամ>շրպրոհամ բառում:

դ) չխ>խչ— ոչխար>ուխչար.

ե) ղր>րղ— պղտոր>պըրտող, պղտորել>պըրտրղել.

զ) ռտ>տր— *կրիատաշտակ>կըտրաշտակ «կրիա».

է) նլ>լն— բանալի>բիլա՛նի, բունկալ>բիլա՛կան.

ը) շխ>խշ— բաշխել>բախշել.

թ) խտ>սխ— խատոր>սըխտոր.

ժ) փտ>տփ>թփ— փետուր>թիփուռ.

ժա) քս>սք— փոքս>փոսք.

ժբ) Սանդերք>սանդրաք բառում ր-ն տեղափոխվել է ե>ա-ից առաջ՝ նդ հնչյուններին անմիջապես մոտ լինելու ձգտումով

(հմմտ. սանր>սանդր, մանր>մանդր, ծանր>ծանդր և այլն)։ Այսպես և համարք>համբրաք բառում, որ առաջացել է համբարք ձևից և ապա բ-ի տեղափոխությամբ դեպի մբ հնչյունները։

Կրկնություն

226. Բաղաձայնների կրկնությունը, ըստ էության, իմաստային որևէ նրբերանգ չի ավելացնում բառին. այսպես օրինակ՝ երեսուն, քառասուն, ութ, լնուլ, ամեն, կամաց բառերը ունեն կրկնված բաղաձայններ՝ արմասուն, քառմասուն, օթթ, լեցցել, ամմէն, օմման, կամմաց։

Լ-ի կրկնություն ունենք հայելի>հիլլի, ոլորել>հիլլո՛րել, ոլոր>հիլլո՛ր բառերում, որոնց մեջ լ փափուկ ձայնորդի կրկնությունը թերևս պայմանավորված է թեթև ձայնավորների միջև նրա կորուստը կանխելու ձգտումով։

Գոռալ>գըռռալ «որոտալ, գոռոց հանել, գըռ-գըռ ձայն հանել», ծխել>ծըխխալ, սողալ>սըղղալ «սահել» բառերում բաղաձայնների կրկնությամբ արտահայտված է տևական գործողություն։

Ձայնավորների հերդաշնակություն

227. Ինչպես հայերենի մի շարք բարբառներում (Կիլիկիայի, Մարաղայի, Ագուլիսի, Մեղրու և այլն), այնպես և Կարճևանի բարբառում գործում է ձայնավորների ներդաշնակության օրենքը։ Այս օրենքի ընդհանուր էությունն այն է, որ բառի մեջ այս կամ այն ձայնավորը իրեն է նմանեցնում մյուս ձայնավորներին։ Այդ նմանեցումը կամ կատարյալ է լինում, երբ առնմանությամբ ձայնավորները նույնանում են, ինչպես օրինակ՝ չամիչ>չիմիչ, ալգի>իլգի, երդումն>ու՛րդում, ձուկն>ձուկուն և այլն և կամ լինում է թերի, երբ առնմանվող ձայնավորը ընդունում է առնմանողի որևէ հատկանիշը (բարձրացման աստիճանը, շրթնայնացումը և այլն)։ Երկու դեպքում էլ առնմանությունը լինում է կամ առաջընթաց կամ ետընթաց։ Առաջընթաց առնմանության դեպքում առաջին վանկի ձայնավորն է ազդում հաջորդի վրա (ինչպես՝ ձուկն>ձուկուն, մուկն>մոկուն և այլն), մինչդեռ ետընթաց առնմանության դեպքում ազդեցությունը գալիս է վերջին վանկի ձայնավորից դեպի առաջին վանկի ձայնավորը (ինչպես՝ չամիչ>չիմիչ, աւելուկ>ու՛վու՛լուկ և այլն)։

Լիակատար առնմանության դեպքերի մասին արդեն խոսվել է ձայնավորների փոփոխությունները բաժնում: Նույն բաժնում խոսվել է նաև թերի առնմանության մի շարք դեպքերի մասին, ուստի և ավելորդ է այստեղ մի առ մի թվել այդ բոլորը:

228. Ձայնավորների ներդաշնակությունը ձայնավորների առնմանության մասնակի դրսևորումներից մեկն է: «Ձայնավորների ներդաշնակություն» տերմինը լեզվաբանության մեջ մտել է հատկապես թուրք-թաթարական և ուգրո-ֆիննական լեզուների հնչյունական օրինաչափությունների հիման վրա: Այդ լեզուներում, հատկապես թուրք-թաթարական լեզուներում, տարբերակում են երկու կարգի ձայնավորներ՝ թեթև և ծանր: Այն դեպքում, երբ բառի արմատական ձայնավորը թեթև է, բառի ածանցման ու թեքման ժամանակ ավելացող մասնիկների ձայնավորները ևս լինում են թեթև, հակառակ դեպքում նրանք լինում են ծանր: Քանի որ այս լեզուները որպես կցական տիպի լեզուներ, բառակազմական և բառահարաբերական մասնիկները ավելացնում են բառարմատի վերջից, հետևապես այստեղ ձայնավորների ներդաշնակության օրենքը գործում է առաջընթաց ուղղությամբ:

Կարճևանի բարբառում ձայնավորների ներդաշնակության օրենքը գործում է ինչպես առաջընթաց, այնպես և ետընթաց ուղղությամբ: Երբ բառի մեջ ձայնավորներից մեկը այս կամ այն պատճառով (փափուկ ձայնորդի, ավանդական հնչյունափոխության և այլն) փոխում է իր բնույթը և դառնում թեթև, ներդաշնակությամբ բառի մյուս ձայնավորները ևս դառնում են թեթև: Ձայնավորների առնմանական այս հատկությունը նկատի ունենալով է, որ մենք պայմանականորեն ընդունել և գործածում ենք «ծանր» և «թեթև» տերմինները: «Թեթև» ձայնավորները՝ համապատասխանում են առաջնային շարքի ձայնավորներին, մինչդեռ «ծանր» ձայնավորները՝ միջին և ետին շարքի ձայնավորներին:

229. Բարբառիս ծանր ձայնավորներն են՝ ա, օ, ու, ը, ըէ. թեթև ձայնավորները՝ ա̈, ȣ, ü, ի: Է ձայնավորը յուրահատուկ չեզոք դիրք է գրավում. այսինքն՝ նա կարող է լինել ինչպես թեթև, այնպես և ծանր ձայնավորների հետ. այսպես օրինակ՝ ագարակ>Հիգէրակ, անկանակ>հինգէնակ, բայց՝ հըրէնակ, ծանրանալ>ծընդըրէնիլ և այլն:

230. Բառը հանդես է գալիս կամ ծանր, կամ թեթև ձայնավորներով. օրինակ՝ ազգական>ըզգական, ազատել>ըզատիլ, ախոռ>ախուռ, ականջ>ունգուճ, ամաչկոտ>հըմանչկուտ և կամ՝

ագի>հա՛գին, ալիւր>ա՛լեր, արիւն>ա՛րեն, արձակ>հա՛ձակ, արճիճ>ա՛ճեճ, բանալի>բիլա՛նի, բարձր>բո՛ձեր և այլն:

Ձայնավորների ներդաշնակության օրինաչափությունը չի տարածվում.

ա) այլ բարբառներից կամ գրական լեզվից կատարված փոխառությունների վրա, ինչպես օրինակ՝ անիրաւ>անի՛բավ, բարեկենդան>պարիկէ՛նթան, աստուածածին>աստվաձա՛ձին և այլն:

բ) -ակ, -ական, -ավուր, -օրին, -ուն, -ուկ վերջածանցների, -ան ժխտական նախածանցի, ինչպես նաև իլ դերբայական վերջավորության վրա. սրանք յուրօրինակ չեզոք դիրք են գրավում և կարող են լինել ինչպես ծանր, այնպես և թեթև ձայնավորների հետ. այսպես օրինակ՝ անկանակ>հինգէ՛նակ, արեգակն>իրի՛նակ, աւելանալ>իվիլէ՛նիլ, անկանել>նա՛նիլ, ազատել>ըզա՛տիլ, ալեւորութիւն>հիլիվըրո՛թին, գողութիւն>գըղո՛թին, երկայնութիւն>յէրկընո՛թին և այլն:

231. Ինչպես թեթև, նույնպես և ծանր ձայնավոր ունեցող բառերը ածանցման ժամանակ շեշտի տեղափոխությամբ հնչյունափոխում են նախաշեշտ ձայնավորները, պահպանելով նրանց բնույթը. այսպես՝ թոյլ>թո՛ւլ, թիւլէ՛նիլ<թուլանալ, բարձր>բո՛ձեր, բիձրէ՛նիլ<բարձրանալ, գանգատ>գէ՛նգա՛տ, գինգէ՛տվիլ<գանգատվել, թանձր>թա՛նձիր, թինձիրէ՛նիլ<թանձրանալ, կամ՝ ամաչ>համանչ, հըմա՛նչիլ<ամաչել, հըմընչցա՛նիլ<ամաչեցուցանել, դառն>դրէ՛ռնը, դրռնէ՛նիլ<դառնանալ և այլն:

232. Բարդություններում բառերը պահպանում են իրենց ձայնավորների բնույթը. ա հոդակապը (եթե այն կա) հարմարվում է բարդության առաջին եզրի ձայնավորներին. այսպես օրինակ՝ ականամոմ>ըկնա՛մում, աղբախառն>ըխպա՛խառ, աղբախոտ>ըխպա՛խոտ, աղբատեղ>ըխպա՛տեղ, արիւնաթաթախ>ա՛ռեն թա՛թախ, այլ այսօր>իլա՛սօր, երեքշաբաթ>իրիքշէ՛բաթ և այլն:

233. Սակայն պետք է ավելացնել, որ ձայնավորների ներդաշնակության օրենքը բացարձակ չէ: Քանի որ նա զարգացել է ձայնավորների առնմանության ընդհանուր օրենքից, ուստի և լրիվ չափով ընդհանրացման չի ենթարկվել:

Ա Մ Փ Ո Փ Ո Ի Մ

Հանրագումարի բերելով այս բաժնում արծարծված հնչյունաբանական երևույթները, նկատի չունենալով ընդհանուր օրինաչափություններից շեղվող մասնակի հնչյունական իրողությունները, կարելի է անել հետևյալ ընդհանուր եզրակացությունները:

Կարճևանի բարբառը գրաբարի համեմատ ունի եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգ, այսինքն՝ մի այնպիսի համակարգ, որը հիմնականում համընկնում է ինչպես հին հայերենի, այնպես և ժամանակակից արևելահայ գրական լեզվի բաղաձայնական համակարգի հետ, միայն այստեղ առկա է միջնալեզվային քմայնացած գ՚, կ՚, ք՚ հնչյունների շարքը: Գրաբարի նման այստեղ էլ բացակայում է ֆ հնչյունը, որը փոխարինվում է փ-ով (ինչպես՝ փա՛նաք «լապտեր», փա՛յտօն «կառք», փե՛րմա «ֆերմա» և այլն): Ձայնավորների համակարգում, բացի հայերենի համար հատուկ ա, է, ի, օ, ու, ը ձայնավորներից, այստեղ գործածվում են նաև ա՝, օ՝, ու՝, ը՝ ձայնավորները:

Հնչյունափոխական տեսակետից ամենաանկայուն հնչյունները ձայնավորներն են: Սրանք մեծ մասամբ փոխվում են այլ և այլ ձայնավորների:

Ձայնավորների փոփոխությունների մեջ ընդհանուրն այն է, որ նրանք, համարյա բոլորն էլ, շեշտից առաջ փոխվում են ը-ի: Հատկանշական է այն, որ ամեն մի ձայնավորի փոփոխությունը պայմանավորված է շեշտի նկատմամբ նրա գրված դիրքով. կարևոր է և այն, թե ձայնավորը ինչպիսի դիրք է գրավում բառի մեջ. բառասկզբո՞ւմ է, թե՞ բառամիջում, արդյոք ինչ բաղաձայններ են նրան հաջորդում կամ նախորդում:

Ձայնավորների համեմատ բաղաձայնական համակարգը կայուն է: Ճիշտ է, այստեղ էլ կան հնչյունափոխական երևույթներ, սակայն այդ փոփոխությունները ոչ թե բաղաձայնների տեղաշարժի բնույթ են կրում, այլ՝ կամ այլ բարբառների ազդեցության հետևանք են, կամ ներքին փոխազդեցական հնչյունափոխության արդյունք:

Ձայնավորների և բաղաձայնների նման փոփոխությունների հետևանքով հայերեն բառերը բարբառում ստանում են այնպիսի մի ձևափոխված կերպարանք, որ խիստ դժվար ընկալելի և նույնիսկ անհասկանալի են դառնում այլ բարբառով խոսողների համար: Բարբառի «անհասկանալիությունը» ավելի է խորանում, երբ հընչյունական այս և այլ տիպի փոփոխությունների վրա (առնմանում, տարնմանում, դրափոխություն և այլն) ավելանում են նաև քերականական կարգերի արտահայտման յուրօրինակ ձևերը, հայերեն բառերի իմաստների փոփոխությունը, միայն բարբառի մեջ կենդանի, հազվագյուտ բառերի գործածությունը և այլ լեզվական «մանրունքներ», որոնցով և, ըստ էության, բնորոշվում է բարբառը:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Հոգնակիի կազմությունը

234. Հոգնակին կազմվում է -ար || -ներ, -նա, -ք մասնիկներով։

235. -Ար || -ներ հոգնակերաը, որ ծագում է հայերենի -եար ձևից, որտեղ եա երկբարբառը պարզվել ու դարձել է ա (տես § 124), ստանում են միավանկ բառերը։ Դրանցից ար-ը ավելանում է ծանր ձայնավոր ունեցող միավանկ բառերին, ինչպես օրինակ՝ արտ>արտ, հգն. ա՛րտար, ծառ>ծառ, հգն. ծա՛ռար (վերջինս ունի նաև ծրոբոնա՛ հոգնակի ձևը՝ առաջացած ծրոՀտ<ծառուտ բառից՝ նա հոգնակերտ մասնիկով). մեծ>մուծ, հգն. մու՛ծար, լոնք>օնք, հգն. օ՛նքար և այլն։ -Ներ ստանում են այն միավանկ բառերը, որոնց կամ ձայնավորն է թեթև և, կամ, անկախ դրանից, վերջին բաղաձայնը քմայնացած պալթական է. այսպես օրինակ՝ այծ>ա՛ծ, հգն. ա՛ծա՛ր, գայլ>գ՚ա՛ել, հգն. գ՚ա՛ե՛լա՛ր, միս>մա՛ս, հգն. մա՛սա՛ր, որձ>ո՛րձ, հգն. ո՛ե՛րձա՛ր, միտք>մաթք՚, հգն. մա՛թք՚ա՛ր, ձագ>ձէգ՚, հգն. ձէգ՚ա՛ր և այլն։

Ծանոթություն 1.— Միավանկ բառերի հոգնակի ձևերում, բարբառիս շեշտադրական օրենքի համաձայն, շեշտը մնում է վերջընթեր վանկում, այդ պատճառով էլ բառի մեջ հնչյունական փոփոխություններ չեն կատարվում։ Բացառություն են կազմում ծիծ>ծա՛ծ, հգն. ծրծրէ՛ր, բայց նաև ընդհանուր կանոնով՝ ծա՛ծա՛ր, տուն>տոն, հգն. տրնա՛ր, շուն>շոն, հգն. շրնրէ՛ր, որոնց մեջ շեշտը վերջին վանկում լինելու պատճառով ա (<ի), օ (<ու) հնչյունները փոխվել են ը-ի։ Միաժամանակ առաջին և վերջին օրինակներում եար հոգնակերտ մասնիկը շեշտի տակ դարձել է ըեր, որը միանգամայն օրինաչափ է եա երկբարբառի հնչյունափոխության տեսակետից

(տես § 123)։ Ցընար հոգնակի ձևի փոխարեն սպասելի էր տընընէր, սակայն շեշտի տակ ունենք ար։ Առաջին երկու բառերի համար խորթ չէ նաև շընար, ծրծար, ծա՛ծար ձևերը։

Միավանկ բառերից խօսք>խօսկ բառը հոգնակիում ունենում է խօ՛սկարք ձևը, որտեղ առկա են երկու հոգնակերտներ (-ար, -ք)։ Սերմն>սրէրմը բառը կանոնավոր սրէրմար հոգնակիի կողքին ունի նաև սրրմարանք ձևը, կազմված -ար, -ան, -ք հոգնակերտներից։ Ծիտ>ծրէտ բառը հոգնակիում ունի և ծրէ՛տար և ծրտօ՛նիք, ձևերը։

Ծանոթություն 2.— Հին հայերենի մեկուկես վանկանի այն բառերը, որոնք ունեն բաղաձայն+ն վերջավորություն և բարբառումս դրափոխությամբ գաղտնավանկի ը-ն տեղափոխել են բառավերջ (ըն>նը)՝ մեկուկես վանկանի բառերից փաստորեն ստեղծելով երկվանկ բառեր,— դիտակցվում են որպես միավանկ բառեր և հոգնակիում ստանում -ար հոգնակերտը. ինչպես՝ ակն>ակնը, հգն. ակնար, բեռն>բէռնը, հգն. բէռնար, գառն>գ'ոռնը, հգն. գ'ոռնար, դաղձն>դրէղնը, դրէղնար, թոռն>թօռնը, հգն. թօռնար և այլն։ Այսպես նաև այն միավանկ բառերը, որոնք հին հայերենում թեև ն-ով չեն վերջանում, բայց վերևում նշված բառերի նման բարբառումս ունեն նը վերջավորությունը և փաստորեն երկվանկ բառեր են. այսպես օրինակ՝ ուռ>հօռնը, հգն. հօռնար, սինձ>սրէղնը, հգն. սրէղնար և այլն։ Այս տիպի բառերից եղն>լղնի, լղնը բառն է, որ ընդհանուր ի՛զնար հոգնակի ձևի կողքին ունի նաև իզնանք ձևը, կազմված եզակի սեռական ի՛զնան ձևից՝ ք հոգնակերտով. վերջինս ավելի գործածական է։

Ծանոթություն 3.— Ար || -ա՛ր հոգնակերտ ստանում են նաև այն բարդ բառերը, որոնց երկրորդ բաղադրիչը միավանկ բառ է, այսպես օրինակ՝ աղբախոտ>ըխպա՛խօտ, հգն. ըխպախօտար, աղբատեղ>ըխպա՛տէղ, հգն. ըխպատէղար, աղբիւրաջուր>ըխպըրէ՛ջուր, հգն. ըխպըրէջու՛ր, գառնաբուրդ>գ'ոռնաբուրդ, հգն. գ'ոռնաբու՛ր և այլն։ Գերեզմանատուն>գիրիզմանատօն բառը ունի հոգնակի գիրիզմօտնա ձևը, կազմված գիրիզմօտ<գերեզմանոտ բառից՝ նա հոգնակերտով։

236. Բազմավանկ բառերը հոգնակիում ստանում են -նա հոգնակերտը, որը շեշտը կրում է իր վրա։ Այդ մասնիկը, պետք է կարծել, որ ծագում է հայերենի -նեար ձևից, թեև այն հարա-

զատ է թվում նաև միջին հայերենի նի հոգնակերտին։ Բարբառում նա երկրարբառը պարզվել է, իսկ բառավերջի ը ձայնորդը ընկել. այդ բանը երևում է հոգնակի թվի թեք հոլովների վերջավորություններից, որոնց մեջ նեար>նար մասնիկը հոլովիչներից առաջ պահպանել է իր ը ձայնորդը. ինչպես օրինակ՝ կաքավ<կաքաւ, հգն. ուղղ. կաքաւնա՛, սեռ. տրակ. կաքաւնօ՛ր, գործ. կաքաւնօ՛ր և այլն։ -Նա հոգնակերտը, ինչպես ասվեց, ստանում են բազմավանկ բառերը. ինչպես օրինակ՝ ագի>հա՛գին, հգն. հաագինա՛, ալեւոր>հիլէվուր, հգն. հիլէվուրնա՛, աղրիւր>ախպուր, հգն. ախպուրնա՛, աւել>ա՛վիլ, հգն. ա՛վիլնա՛, գանգատ>գէ՛նգ՚ատ, հգն. գէնգ՚ատնա՛, կարպետ>կա՛րպատ, հգն. կարպատնա՛ և այլն։

Ծանոթություն 1.— Այս հոգնակերտով հոգնակի են կազմում այն բոլոր բառերը, որոնք կազմված են երկու և ավելի վանկերից, բացառությամբ § 235-ի ծնթ. 2—3-ում նշված բառերի։ —Նա հոգնակերտը ստանում են նաև հին հայերենի մեկուկես վանկանի այն բառերը, որոնք գաղտնավանկում ունեն ը, կամ այդ ը-ն առնմանությամբ կամ հնչյունական այլ օրինաչափությամբ, փոխել են մի այլ ձայնավորի, ինչպես օրինակ՝ մեղր>մրէ՛ղր, հգն. մրէղրնա՛, ասող>ասողը, հգն. ասողրնա՛, ձուկն>ձո՛ւկուն, հգն. ձուկուննա՛, մուկն>մո՛կուն, հգն. մոկուննա՛, դգալ>դա՛գ՚ալ հգն. դա՛գ՚ալնա՛, բլիթ>բիլի՛թ, հգն. բիլիթնա՛, քաղցր>քո՛խցուր, հգն. քոխցուրնա՛ և այլն։

Միավանկ բառերից այս օրինաչափությանն է ենթարկվում երախ>ուրէխ բառը, որը եզակի թվում ունենալով մի վանկ՝ § 235-ի համապատասխան պետք է ունենար *ուրէխար ձևը, բայց ունի ըուրէխնա։ Այդ նշանակում է, որ բառը սկզբնապես ունեցել է ըուրէխ ձևը. եզակի թվում ը-ն ռ-ից առաջ ընկել է հետագայում, պահպանելով այն հոգնակի ձևում։

Ծանոթություն 2.— Բաղաձայն +նը հանգող բազմավանկ բառերը հոգնակին կազմում են նույն օրինաչափությամբ, միայն այն տարբերությամբ, որ հոգնակի ձևում կորցնում են -նը վերջավորությունը. այսպես օրինակ՝ ամառն>ամառնը, հգն. ամառնա՛, ցիւռ>ցըքրէ՛ռնը, հգն. ցըքրէ՛ռնա՛, ձմեռն>ձմէ՛ռնը, հգն. ձմէ՛ռնա՛, սիսեռն>սիսէ՛ռնը, հգն. սիսէ՛ռնա՛ և այլն։ Այնպես որ այստեղ տեսական ն-ի արտասանությունը, ինչպես այդ կա ձուկուն-ձուկուննա՛, մոկուն-մոկուննա՛, ծանդուն-ծանդուննա՛ և նման բառերում, բացակայում է։

Ծանոթություն 3.— Բաղաձայնով վերջացող մի շարք բառեր ունեն ընդհանուր օրինաչափությունից շեղվող հոգնակիի ձևեր. դրանք են՝ աղջիկ>ախչիկ՛, հգն. ըխչըկէրք, եղբայր>ախպիր, հգն. ախպէրք, ընկեր>հընգըէր, հգն. հընգըրօնիք, հընգըրօնուք, կնիկ>կընագ՛, հգն. կընանիք՛, եղբայրակին>ըխպըրակին, հգն. ըխպըրկընանիք, հօրեղբայր>հէրբաւր, հգն. հաւ՛րբաւրք (կազմված եզակի սեռ. հաւրբաւր ձևից), ոչխար>ուխչար, հգն. ուխչըրօնիք՛, ուխչըրէնիք՛, տայգր>տագ՛իր, հգն. տիգրանիք՛ (նաև կանոնավոր՝ տագ՛իրնա)։ Մարդ բառը հոգնակիում ունի մարդիք՛(<մարդիկ) ձևը, որտեղ կ>ք փոփոխությունը կատարվել է ի-ով վերջացող բառերի հոգնակի ձևերի նմանությամբ (տես հաջորդ §-ը)։

237. Բ հոգնակերտը ստանում են ի-ով վերջացող բառերը, ինչպես օրինակ՝ ածելի>ծիլի, հգն, ծիլիք՛, աղաւնի>զուանի, հգն. զուանիք՛, թթենի>թըթի, հգն. թըթիք՛, խնձորենի>խինձիրի, հգն. խինձիրիք՛, տաշտաւնեցի>տըշտանէցի, հգն. տըշտանէցիք՛ և այլն։ Սակայն հոգնակի այս ձևերի հետ միասին և սրանց զուգահեռ գործածվում են նաև նույն բառերի հոգնակիի կանոնավոր ձևերը, ինչպես օրինակ՝ ծիլինա «ածելիներ», զուանինա «աղաւնիներ», խնամինա «խնամիներ» և այլն։ Այս նշանակում է, որ -նա հոգնակերտը բոլոր բազմավանկ բառերի համար դառնում է հոգնակիի կազմության առավել կենսունակ միջոցը։ -Նա հոգնակերտը տարածվել է արդեն այլ ձայնավոր-ներով վերջացող բառերի հոգնակիում, ինչպես՝ խաղող>խաղու, հգն. խաղունա, կատու>կատու, հգն. կատունա, երեկոյ>ըրակու, հգն. ըրակունա և այլն, և սկսել է ընդգրկել նաև ի վերջավորություն ունեցող բառերը, նրանց ևս ենթարկելով ընդհանուր օրինաչափությանը։

Ծանոթություն 1.— Ձայնավորով վերջացող մի քանի բառեր ունեն անկանոն հոգնակիներ. դրանք են՝ երախայ>ըրախի, հգն. ըրախէ՛ք՛, թօղլի «երկրորդ տարվա գառ», հգն. թըղլէնիք՛, թի>թայ, հգն. թիյօնիք՛ (նաև՝ թայար), լու>լաւ, հգն. լիվա՛նք (նաև լիվաւր), ձի>ձի, հգն. ձիյանք, ձու>ձու, հգն. ձըվանք, փեսայ>փըսէսի, հգն. փըսէնիք՛։

Բ հոգնակերտ ունեն նաև ազգանունները, որոնք հանդես են գալիս որպես անեղական բառեր, ինչպես օրինակ՝ Ամիրամաք<

Ա. բրահամեայք, Մարութաք<Մարութեայք, Խաչօվաք<Խաչոեայք, Զա՛նիք>Զանեայք, Խուդոյաք<Խուդոյայք և այլն:

Ֆ հոգնակերտը ա հնչյունի հետ (աք) հանդես է գալիս որպես հավաքական գոյականների հոգնակերտ՝ ազգակցական, խնամակցական կապեր ցույց տվող գոյականների հետ. ինչպես օրինակ՝ խնամի>խընամի, հվք. խընամաք, տալդր>տա՛դ՛իր, հվք. տիդէրաք, տալ «ամուսնու քույր», հվք. տա՛լաք, հայր>հար, հվք. հէրաք, պատրոն «սկեսրայր», հվք. պըտրօնաք, հօրեղբայր>հէրբա՛ր, հվք. հա՛ի-բա՛ի՛րաք, հօրաքոյր>հա՛քուր, հվք. հաքուրաք, մօրաքոյր>մա՛քուր հվք. մաքուրաք և այլն: Այս ձևերում խընա՛մաք, մաքո՛ւրաք, հաքո՛ւրաք ձևերը ոչ թե նշանակում են «խնամիներ, մորաքույրներ, հորաքույրներ», որոնց համար կան խընամի՛ք կամ խընամինա՛, մաքուրնա՛, հաքուրնա՛ ձևերը, այլ մատնանշում են խնամու, մորաքրոջ, հորաքրոջ դերդաստանը, ընտանիքը:

Հոլովները և նրանց կազմությունը

238. Կարճևանի բարբառը ունի յոթ հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական:

Ուղղական հոլովն ունի զրո վերջավորություն, այսինքն՝ բառը ուղղական հոլովում հանդես է գալիս իր ուղիղ ձևով: Սա ենթակայի և կոչականի հոլովն է:

Սեռական և տրական հոլովների վերջավորությունների առանձնահատկությունների մասին խոսվում է յուրաքանչյուր հոլովման շարադրանքի մեջ: Այստեղ անհրաժեշտ է միայն նշել, որ սեռականը որոշյալ առման դեպքում որոշիչ հոդ չի ընդունում, մինչդեռ տրականը ընդունում է:

Հայցական հոլովը վերջավորությամբ նմանվում է տրական կամ ուղղական հոլովներին: Տրականի նման է այն բառերի հայցականը, որոնք ունեն որոշյալ առում և ցույց են տալիս անձ:

Բացառականը կազմվում է տրականից՝ հ-ի հատադրությամբ: Հ-ի հատադրության հ հնչյունը ընկնում է այն դերանունների բացառականում, որոնք տրականում ունենում են բաղաձայն վերջավորություն: Տրականի այդ ձևերի հետ հ-ի հատադրությունը արտասանական մի ամբողջություն է կազմում՝ մի միասնական շեշտով. ինչպես՝ ինձէ՛նի «ինձանից», միզէ՛նի «մեզանից», ա՛ի-դա՛ի-բէ՛նի «նրանից», ա՛ստա՛ի-բէ՛նի «սրանից», և այլն, բայց քի

ՀԵՆԻ «քեզանից»։ Մյուս բոլոր հոլովվող բառերի բացառականում պահպանվում է ՀԵՆԻ ետադրության հ հնչյունը։

Բացառական կազմող այս հէնի ետադրությունը ծագում է հին հայերենի այս, այդ, այն, սա, դա, նա ցուցական դերանուններ բացառականի -անէ վերջավորությունից։ Ցուցական այդ դերանունները հին հայերենի բացառականում ունեն «...Յայսմանէ, յայսցանէ, ի նմանէ, ի նոցանէ և այլն, որոնց -անէ վերջավորությունը շատ հեռու չէ գոյականների բացառականի է վերջավորությունից և մանավանդ եթե համեմատենք յաղջկանէ, ի մանկանէ և այլն ձևերի հետ»[1]։ Այս -անէ վերջավորությունը, որ բարբառում հնչյունափոխվել է -ԷՆԻ ձևի, դերանուններից անցել է մյուս հոլովվող բառերի բացառականին և դիտակցվել իբրև անկախ բառմասնիկ։ Այդ է պատճառը, որ սկզբից (ձայնավորից առաջ) ավելացել է հ հնչյունը։

Բացառականի այլ կազմություններին մասին խոսվում է յուրաքանչյուր հոլովման շարադրանքի մեջ։

Գործիական հոլովի վերջավորությունն է -ավ, որ հանդես է գալիս բառի հիմքից հետո։ Այդ վերջավորությունը ինչպես հին հայերենի ա հոլովման, այնպես և ո հոլովման բառերի (բարբառում ո-ն վ-ից առաջ դառնում է ա) գործիականի վերջավորությունն է։

Ներգոյական հոլովն ունի ում վերջավորությունը։ Ներգոյականի իմաստը արտահայտվում է նաև մաջ, մանջ, մաջին ետադրությամբ, որը կազմվում է սեռականից։ Ետադրությամբ ձևը հատուկ է անձ ցույց տվող դերանունների, գոյականների և ենթակայական դերբայի ներգոյականին, մնացած հոլովվող խոսքի մասերի ներգոյականի իմաստը կարող է ունենալ երկու ձևն էլ զուգահեռաբար։

Հոգնակիում հոլովական վերջավորությունները նույնն են։ Նշելի են հետևյալ առանձնահատկությունները։ Եթե բառի հոլովումը որոշվում է եզակի սեռական-տրական հոլովների վերջավորությամբ և ըստ այդմ տարբերակվում են մի շարք հոլովումներ, ապա հոգնակիում բոլոր բառերը, անկախ եզակի թվում նրանց այս կամ այն հոլովման պատկանելուց, ենթարկվում են ու հոլովման։ Հոգնակի թվում մյուս հոլովների վերջավորությունները և կազմությունը նույնն է եզակի թվի հետ։ Այնուհետև. բազմավանկ

---

[1] Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, Երևան, 1954, 2-րդ հ., էջ 58—59։

բառերի -նա հոգնակերտը սեռականում և մյուս հոլովներում վերականգնում է իր կորցրած ր ձայնորդը (-նար). հոգնակերտների ա ձայնավորը ու հոլովիչի ազդեցությամբ շրթնայնանում է (ա>օ), այնպես որ -նա[ր], -ար հոգնակերտներից հնչյունափոխված -նօր, -օր ձևույթները պահպանվում են հոգնակի թվի բոլոր թեք հոլովներում. այսպես օրինակ՝ խոտանոց>խըտանուց, հգն. ուղղ. խըտանուցնա, սեռ.տրակ. խըտանուցնօրու, բաց. խըտանուցնօրու հէնի, գործ. խըտանուցնօրավ, ներգ. խըտանուցնօրում, սար>սար, հգն. ուղղ. սարար, սեռ. տրակ. սարօրու, բաց. սարօրու հէնի, գործ. սարօրավ, ներգ. սարօրում:

Հոլովում

239. Բարբառիս հոլովումները որոշվում են եզակի թվի սեռական-տրական հոլովների վերջավորությամբ. ըստ այդմ բարբառիս համար հատկանշական են հետևյալ հոլովումները՝ ու, ան, ա, վա, ց: Սրանցից վերջինը հատուկ է անեզական հավաքական գոյականներին և ըստ իր բնույթի գրաբարակերպ հոլովման արտահայտություն է: Այստեղ ընդգրկված են որոշակի կարգի բառեր, որոնք այլ կերպ հոլովվել չեն կարող և իրենց հոլովմամբ մի կուռ օրինաչափություն են կազմում: Բնականաբար այս օրինաչափ հոլովումներից դուրս կան նաև անկանոն հոլովման ենթարկվող բառեր, որոնք, մեծ մասամբ որպես ներգրական հոլովման ձևեր, գալիս են հին հայերենից:

Ու հոլովում

240. Բարբառի ամենատարածված ու կենսունակ հոլովումն է, այնքան կենսունակ, որ ընդհանուր է դարձել հոգնակի թվում բոլոր հոլովումների համար: Չկա մի որևէ չափանիշ, որով հնարավոր լիներ որոշել, թե որ բառերն են, որ ենթարկվում են ու հոլովման: Այս հոլովման կենսունակությունը կարելի է համեմատել ժամանակակից հայերենի ի հոլովման հետ: Պրոֆ. Գ. Սևակը իր «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց»-ում, երբ անդրադառնում է արդի հայերենի ի հոլովման պատկանող բառերի որոշմանը, գրում է. «Որոշել, թե որ բառերն են ենթարկվում այս հոլովման (ի հոլովման,—Հ.Մ.), անկարելի է, քանի որ ոչ մի հատկանիշով չի կարելի առաջնորդվել այդպիսի որոշում տալու համար: Ուստի և դրական որոշումն այս դեպքում պետք է փոխարինել բա-

ցառման որոշմամբ, այն է՝ ի հոլովման ենթարկվում են այն բոլոր բառերը, որոնք չեն մտնում որևէ այլ հոլովման կատեգորիայի մեջ»[1]։ Այս նույնը վերաբերում է և Կարճեանի բարբառի ու հոլովմանը։

Այս հոլովման բառերը սեռականում ունենում են ու, ոյ, ի, ը վերջավորությունները, բոլորն էլ առաջացած անշեշտ ու-ից։ Սեռական հոլովում հոլովիչների նման տարատեսակությունը չի կարող հիմք հանդիսանալ տարբեր հոլովումների որոշման համար, քանի որ հոլովիչների այդ տարբերությունները բացակայում են տրական հոլովում, իսկ սեռականում նրանց առկայությունը պայմանավորված է վերջընթեր շեշտով և բառի ձայնավորների կամ վերջին բաղաձայնի բնույթով։ Թերևս որոշ նշանակություն է ունեցել նաև այն պաշտոնը, որ կատարում է սեռական հոլովով դրված բառը նախադասության մեջ (հատկացուցիչ)։ Վերջընթեր շեշտը թուլացնում է հոլովիչի արտասանությունը և, ինչպես այդ հատուկ է հայերենին, ու-ն հնչյունափոխվում է ը-ի։ Վերջընթեր շեշտ ունի նաև տրական հոլովը, սակայն շեշտի ազդեցությամբ հոլովիչը այստեղ փոփոխության չի ենթարկվում։

Այսպիսով՝ բարբառիս սեռական հոլովում վերջընթեր շեշտի ազդեցությամբ ու հոլովիչից հնչյունափոխված ը-ն հնչյունական որոշակի պայմաններում կամ մնում է ը, կամ փոխվում է ի, ու, ոյ հնչյունների։ Այսպես՝ սեռականում ը վիճակը պահպանվում է այն բառերում, որոնց ձայնավորները ծանր են, և եթե բառը չի վերջանում քմայնացած բաղաձայնով, հակառակ դեպքում, երբ բառի ձայնավորները թեթև են և կամ, անկախ դրանից, բառը վերջանում է քմայնացած բաղաձայնով՝ ը-ն հնչյունափոխվում է ի-ի։ Այն դեպքում, երբ բառի վերջին վանկում կա շրթնայնացած ձայնավոր, դրա ազդեցությամբ ը-ն վերականգնում է իր որակը, այսինքն՝ արտահայտվում է ու կամ ոյ հնչյուններով՝ նայած նրան նախորդող շրթնայնի բարձրացման աստիճանին։ Այս բոլորը կատարվում է ձայնավորների ներդաշնակության օրենքով։ Ստեղծվում է մի այնպիսի վիճակ, երբ սեռական հոլովն իր ու, ոյ, ի, ը վերջավորություններով համընկնում է ուղղական և հայցական հոլովների վերջավորությունների հետ, երբ վերջիններս որոշյալ առումով են և անձնանուններ չեն։ Ուղղական, սեռական և հայ-

---

[1] Գ. Սևակ. Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 265։

ցական հոլովաձևերը ձևական նմանություն ունենալով հանդերձ՝ ունեն իրենց իմաստային տարբերությունները, որ ըմբռնվում է միայն նախադասության մեջ։ Հետևյալ նախադասության մեջ՝ Շո՛ն չօրա՛ն հա՛քը կըծրէ՛ծ ա «շունը հովիվի ոտքը կծել է», շո՛ն, չօրա՛ն, հա՛քը բառերը ունեն նույն վերջավորությունը, բայց նախադասության մեջ նրանցից առաջինը ենթակա է, երկրորդը՝ հատկացուցիչ, իսկ երրորդը՝ ուղիղ խնդիր, ուստի և դրված են ուղղական, սեռական և հայցական հոլովներով։

Երկու և ավելի վանկ ունեցող բառերում սեռականը՝ ուղղական և հայցական հոլովներից տարբերվում է շեշտի իր դիրքով։ Ուղղականում և հայցականում շեշտը մնում է իր տեղում, թեև որոշյալ առման դեպքում ը, ի, ու, ա հոդերի հավելմամբ, շեշտը վերջից երրորդ վանկի վրա է, ինչպես՝ չօ՛բանը նեյս ա սա՛ը «հովիվը գնում է սարը (ամառանոց)», մինչդեռ սեռականում շեշտը տեղափոխվում է մի վանկ առաջ՝ ըստ շեշտի վերջընթերության օրենքի, ինչպես՝ չօրա՛նը շո՛նը «հովիվի շունը» և այլն։

Տրական հոլովը ունի ու կամ ում վերջավորությունը. ում ունեն այն բառերը, որոնց կամ ձայնավորներն են թեթև և կամ, անկախ դրանից, բառավերջի բաղաձայնը քմայնացած պալթական է։ Որոշյալ առման դեպքում ու, ում հոլովիչներից հետո ավելանում է ն որոշիչ հոդը։ Որպես կանոն, հոլովիչի հավելմամբ շեշտը գրավում է իր վերջընթեր դիրքը։

Բացառականը կազմվում է տրականից՝ ՀԷՆի եռադրությամբ։ Այստեղ տրականի ձևը եռադրությունից առաջ հանդես է բերում սեռականի հատկանիշներ, այն է՝ ու, ում, ի, ը վերջավորությունները։ Առաջին հայացքից թվում է, թե բացառականը կազմվում է սեռականից, բայց դերանունների բացառականի քի ՀԷՆի, միզէ՛նի, ինձէ՛նի, ձիզէ՛նի և այլ ձևերը գալիս են ապացուցելու, որ բացառականը կազմվում է տրականից, բայց, ինչպես տեսնում ենք, բարբառի արդի վիճակում, դերանուններից բացի, մյուս հոլովվող բառերի բացառականի տրական հոլովաձևը եռադրությունից առաջ ունի սեռականի նման վերջավորություններ։ Մեր կարծիքով, այդ երևույթը արդյունք է երկու հանգամանքների ազդեցության։ Նախ այն, որ բացառականի ձևը, որպես հարադրյալ ձև, հոլովական իմաստը դրսևորում է ՀԷՆի եռադրությամբ, ուստի և եռադրությունից առաջ հանդես եկող հոլովաձևը ինքնուրույնություն հանդես չի բերում և հետևությամբ վերջընթեր շեշտի հետևանքով հընչյունափոխում է հոլովիչը։ Որոշակի նշանակություն է ունեցել

նաև ներգոյական հոլովի իմաստի արտահայտման հարադրյալ ձևի անալոգիան։ Ներգոյականի իմաստ արտահայտող մաջ (<մեջ), մաջին (<միջին) եռադրությամբ կազմվող հարադրյալ ձևը սեռականից է, ինչպես այդ պարզ երևում է դերանուններից՝ իմ մաջիս, քու մաջիր, ա՛նդա՛ր մաջին և այլն։ Այս հարադրությունների սեռականի անալոգիայով էլ կազմվել է բացառականի հարադրյալ ձևը։

Ու հոլովման պատկանող բառերի բացառականում հանդիպում ենք նաև ու(ն) վերջավորության՝ առանց հենի եռադրության. այդ հատկապես վերաբերում է տեղի, տարածության հասկացություններ արտահայտող այն բառերին, որոնք նախադասության մեջ հանդես են գալիս իբրև տեղի պարագա. այսպես օրինակ՝ Կըրճէվանը սարուն ուխչարը գա՛ս ա իկած, գուլս ա Մըէղրի— «Կարճևանի սարից ոչխարը դուրս է եկել և գալիս է Մեղրի»։ Այսպես է նաև ցուցական դերանուններում. ինչպես՝ Իկած ա ասդուս հաց տանի «եկել է, որ այստեղից հաց տանի»։ Տրականի հետ միասին բացառականի իմաստ են արտահայտում տո՛ղուր «այդտեղից», տո՛ղուն «այնտեղից», շըտո՛ղուն «որտեղից» և այլ ձևերը։ Նշված ձևերը տրական հոլովաձևեր են։ Այս օրինակները իրենց հերթին ապացուցում են, որ բացառականը կազմվում էր տրականից (ինչպես և դրաբարում), հետևաբար միայն հենի եռադրության կապակցության մեջ է, որ բացառականի տրական հոլովաձևը նույնացել է սեռականի հետ, իսկ այնտեղ, որտեղ ընկել է եռադրությունը, բառը պահպանել է տրականի վերջավորությունը։

Անորոշ դերբայի բացառականը ունի -ուց վերջավորությունը։ Այս ձևը հատկապես հանդես է գալիս յեռավ «հետո» կապից առաջ. ինչպես օրինակ՝ ուտո՛ւլուց յե՛տավ «ուտելուց հետո», խըմո՛ւլուց յե՛տավ «խմելուց հետո» և այլն։

Գործիականը կազմվում է ընդհանուր սկզբունքով՝ -ավ վերջավորությամբ, որը ավելանում է բառին նրա վերջին բաղաձայնից անմիջապես հետո. այնպես որ ձայնավորով վերջացող բառերը գործիականում վերջավորությունից առաջ կորցնում են վերջահանգ ձայնավորը։

Ու հոլովման բառերը ներգոյականում ունենում են «Ում» ճյուղի բարբառներին հատուկ ում վերջավորություն, որը բարբառում ձայնավորների ներդաշնակությամբ հանդես է գալիս -ըմ, իմ, -ում, -ո՛ւմ ձևերով՝ եզակի թվում, իսկ հոգնակի թվում՝ ում

անփոփոխ ձևով։ Ներգոյականի իմաստը, ինչպես ասվել է արդեն, արտահայտվում է նաև մաջ, մաջին ետադրությամբ՝ սեռական հոլովաձևերի հետ։

1. Վերջին վանկում շրթնային ձայնավոր ունեցող բառերի հոլովման օրինակներ.

	Եզակի		Հոգնակի	
Ուղղ.	անգուզ(ը)	բաւն(աւ)	անգուզնա(ն)	բաւ՛նաբ(ի)
Սեռ.	անգուզու	բաւ՛նաւ	անգուզնօրու	բաւնօ՛բաւ
Տրակ.	անգուզու(ն)	բաւ՛նաւ(ն)	անգուզնօրու(ն)	բաւնօ՛բաւ(ն)
Հայց.	անգուզ(ը)	բաւն(աւ)	անգուզնա(ն)	բաւ՛նաբ(ի)
Բաց.	անգուզու հէնի	բաւ՛նաւ հէնի	անգուզնօրու հէնի	բաւնօ՛բաւ հէնի
Գործ.	անգուզով(ը)	բաւ՛նով(ը)	անգուզնօրով(ը)	բաւնօ՛բով(ը)
Ներգ.	անգուզում(ը)	բաւ՛նում(աւ)	անգուզնօրում(ը)	բաւնօրում(ը)
	կամ	կամ	կամ	կամ
	անգուզու	բաւ՛նաւ	անգուզնօրու	բաւնօ՛բաւ
	մաջին	մաջին	մաջին	մաջին

Ծանոթություն.— Այս կարգի բառերի հոլովման ժամանակ շեշտի տեղափոխությամբ բառի մեջ հնչյունափոխություն տեղի չի ունենում. բացառությամբ հետևյալ բառերի

	Սեռ.	Գործ.	Հգն.
անգուճ < ականջ	ընգըճու	ընգըճով	ընգըճնա՛
բաւ՛ժաւ՛ժ < բոժոժ	բաւ՛ժժաւ	բաւ՛ժժով	բաւ՛ժաւ՛ժնա
կըլօխ < գլուխ	կըլխու	կըլխով	կըլօխնա
շամբուտ	շըմբոտու	շըմբոտով	շամբուտնա
պըտօկ < պըտուկ	պըտկու	պըտկով	պըտօկնա
սուրփ < սուրբ	սըրբու	սըրբով	սուրբար
տաշուղ < տաշեղ	տաշղու	տաշղով	տաշուղնա
ցօրտ < ցուրտ	ցըրտու	ցըրտով	ցըրտաբ, ցօրտար

Այս բառերում էլ, ինչպես երևում է, հոգնակի թվում վերականգնվում են սղված կամ հնչյունափոխված ձայնավորները։

2. Ծանր ձայնավոր ունեցող բառերի հոլովման օրինակներ.

	Եզակի		Հոգնակի	
Ուղղ.	սար(ը)	հաք(ը)	սարար(ը)	հաքար(ը)
Սեռ.	սարը	հաքը	սարօրու	հաքօրու

Տրակ. սարու(ն)	հաքու(ն)	սարօրու(ն)	հաքօրու(ն)
Հայց. սար(ը)	հաք(ը)	սարար(ը)	հաքար(ը)
Բաց. սարուն, սարը հէնի	հաքը հէնի	սարօրուն, սարօրու հէնի	հաքօրու հէնի
Գործ. սարով(ը)	հաքով(ը)	սարօրով(ը)	հաքօրով(ը)
Ներգ. սարում(ը) կամ սարը մաջին	հաքում(ը) կամ հաքը մաջին	սարօրում(ը) կամ սարօրու մաջին	հաքօրում(ը) կամ հաքօրու մաջին

Ծանոթություն.— Բաղաձայն+ներ հանգող բառերը հիմնականում պատկանում են ան հոլովման (տես §241), բայց այդ տիպի բառերը շատ դեպքերում ենթարկվում են նաև ու հոլովման, որ նշանակում է, թե ու հոլովումը դառնում է գերիշխող՝ հոլովման ամբողջ համակարգում: -ներ հանգող բառերը ու հոլովման ենթարկվելիս հոլովվում են ծանր ձայնավոր ունեցող բառերի նման, այն տարբերությամբ միայն, որ սեռականում և ուղղականում ձևով համընկնում են. այսպես օրինակ՝ դրէգներ<դաղձն, սեռ. դրէգներ, տրակ. դրէգներուն, բաց. դրէգներ հէնի, գործ. դրէգներով, ներգ. դրէգներում, դրէգներ մաջին: Հոգնակին ընդհանուր հիմունքով է՝ ուղղ. դրէգներար, սեռ. դրէգներու, գործ. դրէգներով և այլն:

3. Թեթև ձայնավորներ կամ բառավերջում քմայնացած բաղաձայն ունեցող բառերի հոլովման օրինակներ.

Եզակի

Ուղղ.	չիմիչ(ի)	աղինք՛(ի)
Սեռ.	չիմիչի	աղինք՛ի
Տրակ.	չիմիչու(ն)	աղինք՛ու(ն)
Հայց.	չիմիչ(ի)	աղինք(ի)
Բաց.	չիմիչի հէնի	աղինք՛ի հէնի
Գործ.	չիմիչով(ը)	աղինք՛ով(ը)
Ներգ.	չիմիչի մաջին	աղինք՛ի մաջին

Հոգնակի

Ուղղ.	չիմիչնա(ն)	աղինք՛նա(ն)
Սեռ.	չիմիչնօրու	աղինք՛նօրու
Տրակ.	չիմիչնօրու(ն)	աղինք՛նօրու(ն)

Հայց.	չիմիչնա(ն)	աղինքնա(ն)
Բաց.	չիմիչնօրու հէնի	աղինքնօրու հէնի
Գործ.	չիմիչնօրավ(ը)	աղինքնօրավ(ը)
Ներդ.	չիմիչնօրու մաջին	աղինքնօրու մաջին

Ծանոթություն 1.— Այս տիպի մի շարք բառերի հոլովման ընթացքում հնչյունափոխվում են բառամիջի ձայնավորները: Այդ բառերն են.

ծըէտ<ծիտ	ծրտու, ծրտավ	ծրտունիք,
ասուած<աստուած	աստու, աստծու, աստուծավ	
կա՛ցին<կացին	կա՛ցնաւ, կա՛ցնավ	կա՛ցիննա
կըէռէք<կեռիք	կըռքու, կըռքավ	կըէռէքնա
կըռէվ<կռիւ	կըռվու, կըռվավ	կըռէվնա
հաշիվ<հաշիւ	հաշվու, հաշվավ	հաշիվնա
հըրսանիք՛<հարսանիք	հըրսընքու հըրսընքավ	հըրսանիքնա
մաթք՛<միտք	մըթքու, մըթքավ	մաթք՛ար
շէրաթ<շարաթ	շէրթու, շէրթավ	շէրաթնա
շէլակ<շալակ	շիլէկու, շիլէկավ	շէլակնա
ուխչար<ոչխար	ուխչօրու, ուխչօրավ	ուխչըրօնիք,
պանիր<պանիր	պանրու, պանրավ	պանիրնա
սաթրա<սիրտ	սըրտու, սըրտավ	սա՛րտար
վազ<վիզ	վըզու, վըզավ	վա՛զար (վըզար)
տակռիկ՛<տակուիք	տակռակու, տակռակավ	տակռակնա
տավար<տաւար	տավօրու, տավօրավ	տավարնա
տըրէխ<տրեխ	տըրխու, տըրխավ	տըրէխնա
քա՛թթ<քիթ	քըթու, քըթավ	քա՛թթար

Այս բառերի թեքված ձևերում միաժամանակ մի քանի հնչյունափոխական երևույթներ են կատարվել. շեշտից առաջ սղվել կամ ը-ի են փոխվել ա, է ձայնավորները և այն ձայնավորները, որոնք առաջացել են հայերենի ի-ից. շեշտի տակ ա ձայնավորը կամ փոխվել է ի-ի կամ հոլովիչի ազդեցությամբ շրթնայնացել ու դարձել՝ օ. ի ձայնավորը շեշտի տակ դարձել է ա. այդ ա-ն պահպանվել է նաև հոգնակի թվում: Աստուած<աստված բառի սեռական-տրական հոլովաձևերը առաջացել են աստծու(<աստծոյ) ձևից. բաղաձայնների կուտակումն է եղել պատճառը, որ ընկել են տ(ծ) հնչյունները, որոնք սակայն վերականգնվում են գործիական հոլովում: Այս հնչյունափոխական երևույթները թեև կարող են

բացատրվել բարբառիս հնչյունական օրենքներով, այլ, ինչպես երևում է հենց բերված օրինակներում, եղակի դեպքեր են ընդգրկում և ընդհանրացած չեն: Հոլովման համակարգում օրինաչափն այն է, որ բառերը իրենց թեք հոլովներում չեն հնչյունափոխվում. նույնիսկ վերը նշված անկանոնությունները էլ ունեն իրենց կանոնավոր, ընդհանուր օրինաչափությանը համաձայն չփոփոխվող ձևեր: Ծիտ և ոչխար բառերի հդն. ծըռо՛նիք՝, ուխչըրо՛նիք՝ ձևերը սեռական-տրականում ունենում են նաև ծըռо՛նաց, ուխչըրо՛նաց ձևերը՝ ծըռо՛ռու, ուխչարնо՛ռու ձևերի կողքին:

Ծանոթություն 2.— ութիւն>-оթին վերջավորություն ունեցող վերացական գոյականները հոլովվում են ընդհանուր հիմունքով. այսպես՝ գըղоթին<գողութիւն, սեռ. տրակ. գըղоթինու, գործ. գըղоթինավ, ներգ. գըղоթինում:

Ծանոթություն 3.— Անորոշ դերբայը, սեռական-տրականում ու հոլովիչի ազդեցությամբ, դերբայական -իլ վերջավորության ի ձայնավորը հնչյունափոխում է ու-ի, իսկ բառում առկա ա ձայնավորը շեշտից առաջ փոխում է ը-ի, այսպես օրինակ՝ արիլ<առնել, սեռ. տրակ. ըրնուլու, ասիլ<ասել, ըսնուլու, առիլ<առնուլ—ըռնուլու և այլն. բացառություն է կազմում փամիլ «նայել» բայը, որ սեռական-տրականում ունի փըմնուլու ձևը, որտեղ դերբայական իլ վերջավորության ի-ն հոլովիչի ազդեցությամբ թերի առնմանության է ենթարկվել: Բայարմատի ա-ն շեշտից առաջ փոխվում է ը-ի նաև ենթակայական դերբայի թեք հոլովներում, այսպես օրինակ՝ արուղ «անող», սեռ. ըրնուղու, ասուղ «ասող»-ըսնուղու, փամուղ «նայող»-փըմնուղու և այլն: Բայարմատի օ-ն անորոշ և ենթակայական դերբայների թեք հոլովներում հոլովիչի առնմանությամբ փոխվում է ու-ի. ինչպես՝ ուտել>ուտիլ, ուտուղ, սեռ. տրակ. ուտուլու, ուտուղու, խոշկել>խուշկիլ, խուշկուղ, սեռ. տրակ. խուշկուլու, խուշկուղու և այլն: Դերբայների հոգնակին կազմվում է նա հոգնակերտով: Նույնիսկ այն միավանկ բայերը, որոնք, ըստ օրինի, պետք է ստանային -ար հոգնակերտը, բառավերջում ավելացնում են ի ձայնավորը, որով դառնալով երկվանկ՝ ստանում են նա հոգնակերտը. այսպես օրինակ՝ ցուլ «տեսնել», հդն. ցուլինան «տեսնելները», նէլ<գնալ, նէլինան, լէլ<լալ, լէլինան և այլն: Այս երևույթը միանգամայն օրինաչափ է, քանի որ դերբայները հոլովվելիս ստանում են

որոշյալ հոդ, իսկ հոդի հավելմամբ բառը դառնում է երկվանկ։ Գրական հայերենում նույնպես այդ տիպի միավանկ դերբայների հոգնակին կազմվում է -ներ հոգնակերտով և նրանից առաջ լսվում է ը ձայնավորը։

4. Ու վերջավորություն ունեցող բառերը հոլովման այն առանձնահատկությունն ունեն, որ նրանց մեջ բառավերջի ու-ն հոլովիչից առաջ փոխվում է վ-ի, որը պահպանվում է բոլոր թեք հոլովներում։ Ահա այդ տիպի հոլովման մի օրինակ.

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	կատու(ն)	կատունա(ն)
Սեռ.	կատվու	կատունՀրու
Տրակ.	կատվուն(ն)	կատունՀրու(ն)
Հայց.	կատու(ն), կատվուն	կատունա, կատունՀրուն
Բաց.	կատվու հէնի	կատունՀրու հէնի
Գործ.	կատվավ(ը)	կատունՀրավ(ը)
Ներգ.	կատվու մաջին	կատունՀրու մաջին

Ծանոթություն.—Միավանկ ձու, լու բառերը սեռական-տրական հոլովներում ձըվու, լիվու ձևերի կողքին հոլովիչի առնըմանությամբ ունեն նաև ձուվու, լուվու՝ ձևերը, ինչպես և դրանցից կազմված ձևերում՝ գործ. լիվավ և լուվավ, ձըվավ և ձուվավ և այլն։

5. Ու հոլովման պատկանող մի քանի բառերի հոգնակիի հոլովական ձևերը շեղվում են ընդհանուր կանոնից և ունեն անկանոն հոլովում. ահա այդ բառերը.

	Հոգնակի	Սեռական-տրական
հընդըէր<ընկեր	հընգըրՀնիք, նաև՝ հընդըէրնա(ն)	հընգըրՀնաց, հընգՀրնՀրու
լու<լու	լիվանք (լիվար)	լիվանց (լիվՀրու)
ձու<ձու	ձըվանք (ձըվար)	ձըվանց (ձըվՀրու)
տըղա<տղայ	տըղանք	տըղՀց
թՀղի «գառ»	թՀղէնիք, (թՀղինա)	թՀղէնաց (թՀղինՀրու)

Այս բառերի հոգնակի գործիականը կազմվում է կանոնավոր -ՀՀրավ վերջավորությամբ, բացի տըղա բառից, որ տըղՀցավ ձևի կողքին ունի նաև տըղանքավ ձևը՝ կազմված ուղղականից։

241. Այս հոլովման ենթարկվող բառերը սեռական-տրական-նում ունեն -ան, գործիականում՝ -ավ վերջավորությունները, որ ավելանում են ուղղականի հիմքի վրա. ներգոյականում ունեն ըմ, իմ վերջավորությամբ ձևեր: Հոդնակին կազմվում է ընդհանուր սկզբունքով:

Այս հոլովման ենթարկվում են -ները վերջավորությամբ բառերը, ինչպես օրինակ՝ ամառն>ամառները, բեռն>բէռները, գառն>գ'ոռները, եզն>էզները, էգնի, եզն>էզները, թոռն>թոռները, կուռն>կոռները, ձմեռն>ձմէռները, նուռն>նոռները, որդն>ոռները, ուռ>հոռները, սինձ>սըէզները, սիսեռն>սիսէռները և այլն:

Բացի -ները հանդող բառերից այս հոլովման են ենթարկվում նաև աշուն>աշունք, արջ>առջ, գարուն>գ'ո'ռունք, հարսն>հարս, ձի>ձի, մարդ>մարդ, տէր>տար բառերը, որոնցից հարսն>հարս բառը, ելնելով վերը նշված բառերի բնույթից, ենթադրել է տալիս բարբառային նախնական հարսնը ձևը, ուստի նը վերջավորությունը ընկել է հետագայում:

Այս հոլովումը ձևավորվել է հին հայերենի երկու կարգի հոլովման բառերի հիմքի վրա: Առաջին կարգին պատկանում են այն բառերը, որոնք հին հայերենում ունեն ներգրական ա հոլովում և բարբառում պահպանել են ա հոլովիչը. այսպես օրինակ՝ գրաբ. ամառն. սեռ. ամռան, աշուն-աշնան, գարուն-գարնան, կուռն-կռան, ձմեռն-ձմռան, նուռն-նռան, որդն-որդան, սիսեռն-սիսռան:

Երկրորդ կարգի բառերը հին հայերենում ենթարկվում էին ներգրական ի հոլովման, ինչպես՝ բեռն-բեռին, գառն-գառին, եզն-եզին, եղն-եղին, թոռն-թոռին, հարսն-հարսին: Այս կարգի բառերը սեռական-տրական հոլովների ի հոլովիչը հնչյունափոխել են ա-ի, որ միանգամայն օրինաչափ է բարբառիս մեջ: Երկու կարգի բառերում էլ -ան, գիտակցվելով որպես հոլովական վերջադրական վերջավորություն, ավելացել է բառի վրա: Այս հոլովման պատկանող բառերից միայն արջ, ձի, մարդ, ուռ, սինձ բառերն են, որ հին հայերենում ենթարկվելով ո, այստեղ ենթարկվում են ան հոլովման: Դրանցից ուռ>հոռները, սինձ>սըէզները բառերը բարբառում ունենալով -ները վերջավորություն, հեշտությամբ կարող էին անցնել այս հոլովման: Մարդ բառի սեռական մարդան ձևը պետք է որ առաջացած լինի հին հայերենի նույն

բառի հոգնակի սեռական մարդկան ձևի նմանությամբ։ Անբացառելի է մնում միայն արջ և ձի բառերի հոլովափոխությունը։

Տեր բառը գրաբարում ունի սեռական տեառն. եա երկրաբրառը բարբառումս շեշտի տակ օրինաչափորեն պարզվել ու դարձել է է (տեռնը), հնչյունափոխված տեռնը ձևը գիտակցվելով որպես բաղաձայն -նը վերջավորությամբ բառ, ենթարկվել է այս հոլովման, չնայած որ ուղղականում հին տեր բառի դիմաց ունենք տար։

Ահա ան հոլովման ընդհանուր պատկերը.

Եզակի

Ուղղ.	առջ(ը)	աշունք(ը)
Սեռ.	առջան	ըշունքան
Տրակ.	առջան	ըշունքան
Հայց.	առջ(ը)	աշունք(ը)
Բաց.	առջան հէնի	ըշունքան (հէնի)
Գործ.	առջավ	ըշունքավ
Ներգ.	առջան մաջին	ըշունքան մաջին

Հոգնակի

Ուղղ.	արջար(ը)	աշունքնա, ըշունքնա
Սեռ.	առջորու	աշունքնորու, ըշունքնորու,
Տրակ.	առջորու(ն)	աշունքնորու(ն) ըշունքնորու(ն)
Հայց.	առջար(ը)	աշունքնա(ն) ըշունքնա(ն)
Բաց.	առջորու հէնի	աշունքնորու հէնի, ըշունքնորու հէնի
Գործ.	առջորավ	աշունքնորավ, ըշունքնորավ
Ներգ.	առջորու մաջին	աշունքնորու մաջին, ըշունքնորու մաջին

Ծանոթություն 1.— -նը հանդող բառերի սեռականը, նրանից կազմված ներգոյականը, ինչպես նաև բացառականի հարադրյալ ձևերը, բացի ան վերջավորությամբ ձևերից ունեն նաև ուղղականի նման ձևեր, որ պայմանավորված է հոլովական իմաստ արտահայտելու այն առանձնահատկությամբ, որ ունեն նույն ձևերը ու հոլովման մեջ։ Այնպես որ, օրինակ, բեռնը բառի սեռականը բեռնան ձևի հետ ունի նաև բեռնը, բացառականի բեռնան հեռնի ձևի կողքին՝ բեռնը հեռնի, ներգոյականի բեռնան մաջին ձևի կողքին՝ բեռնը մաջին ձևը և այլն։

Ծանոթություն 2.— Այս հոլովման ենթարկվող տարվա եղանակների անունները թեք հոլովներում հնչյունափոխում են բառամիջի ձայնավորները այսպես՝

Ուղղ.	Սեռ. տրակ.	Գործ.
ամառն>ամառնը	ըմբռնան	ըմբռնով, ըմբռնանով
աշուն>աշունք	ըշունքան	ըշունքով
գարուն>գ'ո՛ռունք	գ'իրո՛նքան	գ'իրո՛նքով
ձմեռն>ձմէռնը	ձըմբռնան	ձրմբռնով (ձմբռնանով)

Ծանոթություն 3.— Նկատելի է, որ այս հոլովման պատկանող բառերը սկսել են ենթարկվել ու հոլովման ազդեցությանը: Այդ է պատճառը, որ -ն հանդող մի շարք բառեր, ինչպես օրինակ՝ ակն>ակնը, զկեռ>ցըքրէռնը, դաղձն>գրէղնը, խեժն>խրէժնը և այլն, այժմ ենթարկվում են միայն ու հոլովման, իսկ ան հոլովման այնպիսի բառեր, ինչպես օրինակ՝ բէռնը, հարս, սիսէռնը ենթարկվում են նաև ու հոլովման:

Ծանոթություն 4.— Ան հոլովման ենթարկվող բառերի հոգնակին, որպես ընդհանուր կանոն, կանոնավոր է, միայն եղն>իղնը, իղնի, ձի>ձի, մարդ>մարդ բառերն են, որ հոգնակի ուղղականում կանոնավոր ձևերի հետ միասին ունեն նաև իղնանք, ձիյանք, մարդիք՝ ձևերը, որոնք հոգնակի սեռական-տրականում կանոնավոր իղնօրու, ձիյօրու, մարդօրու ձևերի կողքին ունեն նաև իղնանց, ձիյանց, մարդօրաց ձևերը. առաջին երկուսը կազմված են եզակի սեռական-տրականից՝ ց մասնիկի հավելմամբ, որ այստեղ արտահայտում է միայն հոգնակիություն, իսկ երրորդում հոլովական իմաստը արտահայտվում է աց վերջավորությամբ, իսկ հոգնակիությունը՝ օր մասնիկով, որ ար<եար հոգնակերտի հնչյունափոխված ձևն է:

Ա. հոլովում

242. Այս հոլովման ենթարկվում են բոլոր հատուկ անձնանունները: Սրանք սեռական-տրական հոլովներում ունենում են ա հոլովիչը. մյուս հոլովների կազմությունը ընդհանուր սկզբունքով է: Հատուկ անձնանունները, ինչպես ուղղ, այնպես և թեքված ձևերում, որոշիչ հոդ չեն ստանում: Ահա հոլովման պատկերը:

Ուղղ.	Ա՛րշակ	Վաղգէն	Կարա՛պէտ	Սա՛գինն
Սեռ.	Արշակա	Վաղգէնա	Կարապէտա	Սագինա
Տրակ.	Արշա՛կա	Վաղգէնա	Կարապէտա	Սագինա
Հայց.	Արշակա	Վաղգէնա	Կարապէտա	Սագինա
Բաց.	Արշակա հէնի	Վաղգէնա հէնի	Կարապէտա հէնի	Սագինա հէնի
Գործ.	Արշակով	Վաղգէնով	Կարապէտով	Սագինով
Ներգ.	(Արշակա մաջին)	(Վաղգէնա մաջին)	(Կարապէտա մաջին)	(Սագինա մաջին)

Այս հոլովման են պատկանում նաև աղջիկ>ախչիկ, կին, կնիկ>կընագ հասարակ անունները. սրանց հոլովման տարբերությունն այն է, որ ընդունում են որոշիչ հոդ և հոգնակի ձևերում ունեն անկանոն ձևեր: Ահա դրանց հոլովումը.

	Եզակի		Հոգնակի	
Ուղղ.	ախչիկ(ի)	կընագ(ի)	ըխչըկէրք	կընանիք
Սեռ.	ըխչըկա՛	կընգա՛	ըխչըկէրաց	կընանաց
Տրակ.	ըխչըկա(ն)	կընգա՛(ն)	ըխչըկէրաց	կընանաց
Հայց.	ըխչըկա(ն)	կընգա՛(ն)	ըխչըկէրաց	կընա՛նաց
Բաց.	ըխչըկա հէնի	կընգա՛ հէնի	ըխչըկէրաց հէնի	կընանաց հէնի
Գործ.	ըխչըկով, ըխչըկանով	կընգա՛վ կընգա՛նով	ըխչըկէրքով	կընանացով կընանցով
Ներգ.	ըխչըկա մաջին	կընգա՛ մաջին	ըխչըկէրաց մաջին	կընանաց մաջին

Աղջիկ բառը հին հայերենում սեռական-տրական հոլովում ունի աղջկան ձևը. բարբառումս ն-ն դիտակցվել է որպես որոշիչ հոդ և ընկել. այդ բառը որպես կոչական գործածվելիս կորցնում է կ հնչյունը (ա՛խչի): Կին բառը հին հայերենում ունի -ոջ հոլովումը. բարբառիս սեռական կընգա՛ ձևը առաջացել է կնկան ձևից (որ հայտնի է միջին հայերենից), նույնպես ն-ի անկմամբ: Կնիկ>կընագ բառի նման է հոլովվում նաև ըսպըրակին<եղբայրակին բառը:

Վա հոլովում

243. Այս հոլովման ենթարկվում են ժամանակ ցույց տվող մի շարք բառեր. ինչպես՝ ամիս>ամիս, օր>օր, տարի>տարի,

գիշեր>քիշէր, ցերեկ>ցիրէկ, վախտ «ժամանակ» և այլն: Ահա այս հոլովումը.

Ուղղ.	քիշէր	ցիրէկ
Սեռ.	քիշէրվա	ցիրէկվա
Տրակ.	քիշէրվա(ն)	ցիրէկվա(ն)
Հայց.	քիշէր	ցիրէկ
Բաց.	քիշէրվա հէնի քիշէրվա՛նից	ցիրէկվա հէնի ցիրէկվա՛նից
Գործ.	քիշէրով	ցիրէկով
Ներգ.	քիշէրվա մաջին	ցիրէկվա մաջին

Հոգնակին կազմվում է ընդհանուր սկզբունքով: Քիշէր<գիշեր բառի գործիական ձևը միաժամանակ ունի մակբայական իմաստ՝ «առավոտյան» նշանակությամբ:

Ֆ հոլովում

244. Այս հոլովման մեջ մտնում են -աք վերջավորությամբ ազգակցական, խնամակցական կապ ցույց տվող անեղական հավաքական գոյականները, ինչպես՝ ըխպէրաք, խընամաք, հաքուրաք, մաքուրաք, հէրաք, պըտրօնաք, սըլրանի՛րաք, տա՛լաք, տիդէրաք, քիվէրաք և այլն, ինչպես նաև ազգանունները, որոնք ունենում են -աք, -իք՝ -էք՝ վերջավորությունները, ինչպես՝ Ափրամաք, Մարութաք, Մինգիղօնաք, Խաչօվաք, Դա՛լիք՝, Մա՛նգիք՝, Ղլինիք՝, Ջա՛նիք՝, Օհանաք, Ղէք՝ և այլն:

Այսպիսով, երկու տիպի բառերն էլ հանդես են գալիս իբրև անեղական բառեր և սեռական-տրականում ունենում են ց վերջավորություն, որը արտահայտում է և՛ հոգնակիություն, և՛ հոլովական իմաստ: Ըստ էության այս հոլովումը գրաբարակերպ հոլովում է, սակայն այն մենք անկանոնությունների շարքը չդասեցինք, քանի որ հիշյալ բառերի համար այս հոլովումը ընդհանուր և օրինաչափ է և ոչ մի բացառություն չի ընդունում: Ահա այս հոլովման պատկերը.

Ուղղ.	խընամաք	հէրաք	հաքուրաք
Սեռ.	խընամաց	հէրաց	հաքուրաց
Տրակ.	խընամաց	հէրաց	հաքուրաց
Հայց.	խընամաց	հէրաց	հաքուրաց
Բաց.	խընամաց հէնի	հէրաց հէնի	հաքուրաց հէնի

Գործ.	(խընամացավ	հէրացավ	հոիրքոիրացավ)
Ներգ.	խընամաց մաջին	հէրաց մաջին	հոի՛րքոի՛րաց մաջին

Ուղղ.	Մարուեթաք	Ջո՛նիք՝	Ըղէք՝
Սեռ.	Մարուեթաց	Ջո՛նից	Ըղէց
Տրակ.	Մարուեթաց	Ջոնից	Ըղէց
Հայց.	Մարուեթաց	Ջո՛նից	Ըղէց
Բաց.	Մարուեթաց հէնի	Ջո՛նից հէնի	Ըղէց հէնի
Գործ.	(Մարուեթացավ	Ջոնիցավ	Ըղէցավ)
Ներգ.	Մարուեթաց մաջին	Ջո՛նից մաջին	Ըղէց մաջին

Անկանոն հոլովումներ

245. Մի խումբ բառեր վերը նշված հինգ հոլովումներից և ոչ մեկին չեն պատկանում և այդ տեսակետից միայն դրսևորում են անկանոն հոլովման հատկանիշներ: Դրանցից մի քանիսը հին հայերենի անկանոն կոչված հոլովումների շարունակությունն են կազմում, մյուսները նույն տիպի հոլովումների հնչյունափոխված վիճակն են ներկայացնում, իսկ երրորդները ներկայացնում են հոլովման ուրույն ձևեր: Քննենք դրանք առանձին առանձին:

246. Եղբայր>ա՛խպիր, աներ>ա՛նիր, հօրեղբայր>հէ՛րքոր, տայգր>տա՛գիր բառերը ուղղական հոլովի վերջնավանկի ի, ա ձայնավորները սեռական-տրական հոլովներում փոխում են ու, ու ձայնավորների: Ըստ էության այս բառերի հոլովումը ներգրական բնույթ ունի և ծագում է հին հայերենի եղբայր, հօրեղբայր բառերի սեռական եղբօր, հօրեղբօր ձևերից, ուր օ-ն օրինաչափորեն բարբառում դարձել է ու: Մյուս՝ աներ>ա՛նիր, տայգր>տա՛գիր բառերը, որոնցից առաջինը հին հայերենում ունի n վերջադրական հոլովում, իսկ երկրորդը՝ ե ներգրական հոլովում, իրենց հոլովումը փոխել են առաջին երկու բառի նմանությամբ, որպես ազգակցական կապ ցույց տվող բառեր, որոնք եղբայր>ախպիր բառի նման ունեն -իր վերջավորություն: Հոգնակի թվում աներ>ա՛նիր բառը ունի հոլովական կանոնավոր ձևեր, մյուս բառերը հոգնակիում ունեն գրաբարախառն հոլովում: Ահա այդ բառերի հոլովումը.

Եզակի

Ուղղ.	ախպիր	ա՛նիր	հէրքոր	տա՛գիր
Սեռ.	ախպուր	ա՛նուր	հոի՛րքոիր	տէգոիր
Տրակ.	ախպուր	ա՛նուր	հոի՛րքոիր	տէգոիր

Հայց.	ախպուր	անուր	հուր՛բաւր	տէգաւր
Բաց.	ախպուր հէնի	անուր հէնի	հաւ՛բաւր հէնի	տէգաւր հէնի
Գործ.	ախպուրով, ըխպըրով	ընուրով	հուրբաւ՛բով	տէգաւրով տիգէրով
Ներգ.	ախպուր մաջին	անուր մաջին	հուր՛բաւր մաջին	տէգաւր մաջին

Հոգնակի

Ուղղ.	ախպերք՝, ըխպըրէնիք՝	հէրբարք, հաւ՛բաւրք	տաղիրք
Սեռ.	ախպուրց, ըխպըրէնաց	հաւ՛բաւրց	տէգաւրց
Տրակ.	ախպուրց, ըխպըրէնաց	հուր՛բաւրց	տէգաւրց
Հայց.	ախպուրց, ըխպըրէնաց	հաւ՛բաւրց	տէգաւրց
Բաց.	ախպուրց հէնի, ըխպըրէնաց հէնի	հաւ՛բաւրց հէնի	տէգաւրց հէնի
Գործ.	ախպուրցով, ըխպըրէնցով	հաւրբաւ՛բցով	տիգէրցով
Ներգ.	ախպուրց մաջին ըխպըրէնաց մաջին	հուր՛բաւրց մաջին	տէգաւրց մաջին

Տալգը>տաղիր բառը հոգնակիում ունի նաև տաղիրնա, տաղիրնօրու, տաղիրնօրով և այլն կանոնավոր ձևերը։ Հօրեղբայր>հէրբաւր բառի թեք հոլովներում նախավանկի ե>ու փոփոխությունը կատարվել է հարընթաց առնմանությամբ. այդ ձևը առկա է նաև հոգնակի թվի հոլովաձևերում։ Տաղիր բառի եղակի և հոգնակի թվի թեք հոլովներում նախավանկի ա-ն հնչյունափոխվել է ե-ի, իսկ վերջինս գործիական հոլովում շեշտից առաջ դարձել է ի։

247. Շուն>շօն, տուն տօն բառերը թեք հոլովներում ունեն հին հայերենի սեռական-տրականի նման շան, տան ձևերը. ահա դրանց հոլովումը.

	Եզակի		Հոգնակի
Ուղղ.	շօն	տօն	կանոնավոր է. ուղղական
Սեռ.	շան	տան	հոլովում շընա՛ր, տընա՛ր
Տրակ.	շան	տան	հնչյունափոխված ձևերը
Հայց.	շօն, շան	տօն	պահպանվում են նաև
Բաց.	շան հէնի	տան հէնի	թեք հոլովներում (շընօ՛րու
Գործ.	շընով, շանով	տընով, տանով	տնօ՛րու և այլն)։
Ներգ.	շան մաջին	տան մաջին	

248. Երախայ>ըրա՛խի, փեսայ>փըէ՛սի, հարսնացու>հըրսնա՛ցու բառերը սեռական-տրական հոլովներում ունեն -էն հոլովական վերջավորությունը, որը շեշտը կրում է իր վրա, այդ պատճառով էլ նրանից առաջ գտնվող ձայնավորները սղվում կամ հնչյունափոխվում են ը-ի. այսպես՝

Եզակի

Ուղղ.	ըրա՛խի	փըէ՛սի	հըրսնա՛ցու
Սեռ.	ըրխէ՛ն	փըսէ՛ն	հըրսընցէ՛ն
Տրակ.	ըրխէ՛ն	փըսէ՛ն	հըրսընցէ՛ն
Հայց.	ըրխէ՛ն	փըսէ՛ն	հըրսընցէ՛ն
Բաց.	ըրխէ՛ն հէ՛նի	փըսէ՛ն հէ՛նի	հըրսընցէ՛ն հէ՛նի
Գործ.	ըրխա՛վ	փըսա՛վ	հըրսընցա՛վ
Ներգ.	ըրխէ՛ն մաջին	փըսէ՛ն մաջին	հըրսընցէ՛ն մաջին

Հոգնակի

Ուղղ.	ըրխէ՛ք	փըսէ՛նիք	հըրսընցի՛ք
Սեռ.	ըրխէ՛ց	փըսէ՛նաց	հըրսընցա՛ց
Տրակ.	ըրխէ՛ց	փըսէ՛նաց	հըրսընցա՛ց
Հայց.	ըրխէ՛ց	փըսէ՛նաց	հըրսընցա՛ց
Բաց.	ըրխէ՛ց հէ՛նի	փըսէ՛նաց հէ՛նի	հըրսընցա՛ց հէ՛նի
Գործ.	ըրխա՛ցավ	փըսէ՛նցավ	հըրսընցա՛ցավ
Ներգ.	ըրխէ՛ց մաջին	փըսէ՛նաց մաջին	հըրսընցա՛ց մաջին

Այս բառերի հոգնակի ձևերը ունեն նաև կանոնավոր ըրախինա՛, փըէսինա՛, հըրսնացունա՛, սեռ. տրակ. ըրախինո՛ւ, փըէսինո՛ւ, հըրսնացունո՛ւ և այլն ձևերը։

249. Հայր>հա՛ր, մայր>մա՛ր բառերը սեռական-տրականում ունեն հո՛ր, մո՛ր ձևերը, ահա դրանց հոլովումը.

	Եզակի		Հոգնակի
Ուղղ.	հա՛ր	մա՛ր	կանոնավոր է (հա՛րար, մա՛րար և այլն)։
Սեռ.	հո՛ր	մո՛ր	
Տրակ.	հո՛ր	մո՛ր	
Հայց.	հո՛ր	մո՛ր	
Բաց.	հո՛ր հէ՛նի	մո՛ր հէ՛նի	
Գործ.	հո՛ր	մո՛ր	
Ներգ.	հո՛ր մաջին	մո՛ր մաջին	

Որպես կոչականներ գործածվում են հա՛ր իկ, մա՛ր իկ ձևերը։

250. Քույր>քՅՈՒՐ բառը ունի ներդրական ե հոլովում։ Հին հայերենում այս բառը սեռականում ունի քեռ ձևը։ Այդ բառը բարբառում սեռական-տրականում ունի քՅԻՎԷՐ ձևը, որ առաջացած պետք է լինի *քուեր ձևից (ձայնավորից առաջ ու>վ փոփոխությամբ. իսկ գաղտնավանկի ը-ն փոխվել է ի-ի՝ հաջորդ առաջնային շարքի ձայնավորի ազդեցությամբ)։ Ահա այդ բառի հոլովումը.

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	քՅՈՒՐ	քՅԻՎԷՐՔ
Սեռ.	քՅԻՎԷՐ	քՅԻՎԷՐՑ
Տրակ.	քՅԻՎԷՐ	քՅԻՎԷՐՑ
Հայց.	քՅԻՎԷՐ	քՅԻՎԷՐՑ
Բաց.	քՅԻՎԷՐ հէնի	քՅԻՎԷՐՑ հէնի
Գործ.	քՅԻՎԷՐՅավ	քՅԻՎԷՐՑՅավ
Ներդ.	քՅԻՎԷՐ մաջին	քՅԻՎԷՐՑ մաջին

Ընդհանուր դիտողություններ

251. Հոլովման ամբողջ համակարգը պատմական զարգացման ընթացքում հասել է պարզեցման։ Տարբեր հոլովումների տարբերությունը առկա է միայն սեռական-տրական հոլովներում, մյուս թեք հոլովների կազմությունը բոլոր հոլովումների համար էլ ընդհանուր է։ Այդ վերաբերում է նաև անկանոն կոչված հոլովումներին, որոնց անկանոնությունը կայանում է միայն նրանում, որ սրանք սեռական-տրականում ունեն հինգ կանոնավոր հոլովումներից տարբեր վերջավորություններ։ Բացառական հոլովը կազմվում է բացառապես հարադրյալ ձևով՝ հենի եռադրությամբ. ներգոյականի իմաստի համար նախապատվությունը տրվում է մաջ, մաջին եռադրությամբ ձևերին, իսկ ում վերջավորությամբ ձևը սակավ գործածական է, որը, ի դեպ, Ում ճյուղի բարբառների ազդեցության արդյունք կարելի է համարել։

252. Ու հոլովումը, որպես ամենատարածված ու կենսունակ հոլովումը, սկսել է իր ազդեցությունը ենթարկել այլ հոլովման ենթարկվող բառերին։ Այդ ազդեցությունը սկսվել է վաղուց, որի պատճառով անցյալում այլ հոլովման պատկանող մի շարք բառեր այժմ բացառապես ենթարկվում են ու հոլովման։ Այսպես են աև հոլովման հատկանիշներ ունեցող ակն>ակնը, խեժն>խէժնը և

այլ բառեր, որոնք մի ժամանակ ենթարկվել են ան հոլովման՝ իսկ այժմ ունեն ու հոլովում։ Նույնիսկ ան հոլովման ենթարկվող բառերի մի մասը այժմ ունի ու հոլովման ձևեր։

Անկանոն հոլովումների մեջ գրված երախայ>երախի, փեսայ>փեսէի բառերը ունեն ուրույն հոլովում։ Կարելի է ենթադրել, որ հին հայերենի վերջավանկի այ երկբարբառը բաց վանկում ի-ի փոխած բառերը ենթարկվել են այդ հոլովման, սակայն այդ տիպի այնպիսի բառեր, ինչպիսիք են կապայ>կապի, սատանայ>սրատանի և այլն, այժմ ենթարկվում են ու հոլովման։

253. Ու հոլովման ամենաուժեղ ազդեցությունը արտահայտվում է հոգնակի թվում, ուր տարբեր հոլովման պատկանող բառերը ենթարկվում են մի ընդհանուր օրինաչափության։ Հոգնակիում պահպանված են նաև գրաբարակերպ հոլովման մնացորդներ։ Դրանք գալիս են հնից, ուստի և նորաբանություններ լինել չեն կարող։ Գրաբարակերպ հոլովման այդ ձևերը, անշուշտ, նախկինում ավելի գերակշռող են եղել, սակայն բարբառի պատմական զարգացման ընթացքում՝ ենթարկվելով հոգնակիի կազմության ընդհանուր օրինաչափությանը, աստիճանաբար դուրս են մղվել գործածությունից։ Այդ պրոցեսը նկատելի է և այժմ, երբ գրաբարակերպ հոլովման մնացորդների կողքին առկա են կանոնավոր հոգնակիի ձևեր։ Որոշակիորեն երևում է զարգացման մի ընդհանուր ձգտում. բարբառի լեզվական կենսունակ տարրերը ընդարձակվում և ընդգրկում են նորանոր ոլորտներ, մինչդեռ հին, ոչ կենսունակ տարրերը աստիճանաբար իրենց տեղը զիջում են առաջիններին։

Հ ո ղ

254. Բառերը որոշյալ առման դեպքում վերջից առանում են ն, ը, ի, ա հնչյունները որպես հոդեր։

1. Ն-ն ավելանում է ձայնավորով վերջացող բառերին, ինչպես օրինակ՝ խընամի, որշ. խընամին, ծիլի<ածելի, որշ. ծիլին, խաղու<խաղող, որշ. խաղուն, ձի, որշ. ձին, ձու, որշ. ձուն և այլն։

2. Ը, ի, ա հնչյունները որպես որոշիչ հոդեր ավելանում են բաղաձայնով վերջացող բառերին հետևյալ օրինաչափությամբ՝

ա) Ը-ն ավելանում է բաղաձայնով վերջացող այն բառերին, որոնց ձայնավորները ծանր են և եթե նրանց վերջին բաղաձայնը քմայնացած պալթական կամ ժ, շ, ճ, ջ, չ բաղաձայններից որևէ

մեկը չէ. այսպես օրինակ՝ հաք «ոտք», որշ. հաքը, կախց<կաթն, որշ. կախցը, մարդ, որշ. մարդը և այլն:

բ) Ի ստանում են բաղաձայնով վերջացող այն բառերը, որոնց կամ ձայնավորներն են թեթև և կամ, անկախ դրանից, բառավերջի բաղաձայնը քմայնացած պալթական կամ ժ, շ, ճ, ջ, չ բաղաձայններից որևէ մեկն է. այսպես օրինակ՝ վարդ<վարդ, որշ. վարդի, մանդաղ<մանդաղ, որշ. մանդաղի, բէհ<բահ, որշ. բէհի, ախչիկ<աղջիկ, որշ. ախչիկի, կընադ<կնիկ, որշ. կընադի, ճէշ<ճաշ, որշ. ճէշի, չիմիչ<չամիչ, որշ. չիմիչի և այլն:

Ի որոշիչ հոդ են ստանում նաև հար<հայր, մար>մայր, տար<տէր բառերը. ինչպես՝ հարի, մարի, տարի՝ ր ձայնորդի փափուկ արտասանության պատճառով:

գ) Ու ստանում են բաղաձայնով վերջացող այն բառերը, որոնց ձայնավորները ու են. այսպես օրինակ՝ բուլթ<բոյթ, որշ. բուլթու, բուրդ<բուրդ, որշ. բուրդու, հուրդ<հերդ, որշ. հուրդու, մուրջում<մրջիւն, որշ. մուրջումու և այլն:

255. Որոշիչ հոդ կարող են ստանալ բոլոր հոլովվող բառերը. բացառություն են կազմում միայն հատուկ անձնանունները, որոնք որոշիչ հոդ երբեք չեն ստանում, ինչպես օրինակ՝ Արշակ նի՛յած ա Տա՛շաուն «Արշակը գնացել է Տաշտուն», Բա՛փիկեն մին սոքրու տօն ա շինի՛ս «Բարկենը մի գեղեցիկ տուն է կառուցում» և այլն:

256. -նը վերջավորությամբ բառերը որոշիչ հոդ չեն ստանում, քանի որ նրանց վերջավորության ը-ն դիտակցվում է որպես այդպիսին. օրինակ՝ ա՛կնը քըռա՛նած ա «աչքը կուրացել է», գյո՛ռնը բըղղա՛յս ա «գառը մայում է» և այլն՝ հակառակ անորոշ առման, երբ ը-ն ընկնում է, ինչպես՝ Դաւվա Զամի (հանդամասի անուն է, որ պարսկական ծագում ունի և նշանակում է «վիճելի հող») մին գյո՛ռն ըմ ցըէ՛ծ «Դավա Զամիում մի գառ եմ տեսել», Միչո՛վ ճա՛րդա մին բէռն բի՛յած ըս նի «մինչև այժմ մի բեռ բերած կլինեիր» և այլն:

257. Ի, ը, ու որոշիչ հոդ ունեցող բառերին (ներառյալ -նը վերջավորություն ունեցող բառերը), երբ հաջորդում է էական բայը կամ ալ շաղկապը, երկու ձայնավորների անջատման պահանջով, հոդից հետո ավելանում է ն ձայնորդը. այսպես օրինակ՝ Ա՛կնընն ա՛լ ըմ հա՛նած, բի՛բիկին ա՛լ «աչքն էլ եմ հանել, բիբն էլ», Հա՛քընն ա՛լ ա մա՛նդած, ձեռ՛ին ա՛լ «ոտքն էլ է կոտրել, ձեռքն էլ», Գյո՛ռնընն ա բըղղա՛յս «գառն է մայում», Ու՛նդու՛ր բուրուն ա ցըվիս «նրա մատն է ցավում» և այլն:

258. Բառի անորոշությունը արտահայտվում է մին<մի բառով, որը միաժամանակ անորոշ դերանուն է: Այսպես օրինակ՝ մին մարդ նաև կընագ՛ ին նիա «մի մարդ ու կնիկ են լինում», Ընեց ժօ՛բա մին ձի յա յէ՛ռալ, նիյալ Ոէ՛րդաք «Ադայան ժօրան մի ձի վերցրեց և գնաց Օրդուբաս» և այլն:

259. Որպես ստացական հոդեր հանդես են գալիս առաջին դեմքի համար u, երկրորդ դեմքի համար՝ p(<դ): Ստացական հոդերը փոխարինում են իմ, քո դերանուններին:

U, p ստացական հոդերը ավելանում են բառին հետևյալ սկզբունքներով: Եթե բառը վերջանում է ձայնավորով, ապա հոդերը դրվում են ձայնավորներից անմիջապես հետո. այսպես՝ էգ՛ի<այգի—էգ՛իս «իմ այգին», էգ՛իր «քո այգին», ձիս «իմ ձին», ձիր «քո ձին», ակնըս «իմ աչքը», ակնըր «քո աչքը» և այլն: Եթե բառը վերջանում է քմայնացած բաղաձայնով, ժ, շ, ճ, ջ, չ, բաղաձայններից որևէ մեկով, փափուկ ձայնորդով, կամ, անկախ դրանից, բառի ձայնավորները թեթև են, ապա u, p հոդերը բառին կապվում են ի ձայնավորով, ինչպես օրինակ՝ հարիս «իմ հայրը», հարիր «քո հայրը», սա՛սիս «իմ ձայնը», սա՛սիր «քո ձայնը», մանթ՛իս «իմ միտքը», մանթ՛իր «քո միտքը» և այլն: Այն դեպքում, երբ բառը վերջանում է բաղաձայնով և ձայնավորներն էլ ծանր են, հոդերը բառին միանում են ը ձայնավորով, ինչպես՝ հաքըս «իմ ոտքը», հաքըր «քո ոտքը» և այլն: Բառի մեջ ու ձայնավորի առկայության դեպքում ստացական հոդերը բառին միանում են ու ձայնավորի միջոցով, ինչպես՝ բու՛թուս «իմ մատը», բու՛թուր «քո մատը», բու՛դուս «իմ բուրդը» և այլն:

260. Ստացական հոդերը գործածվում են նաև հոգնակի ձևերի հետ: Միավանկ բառերի հոգնակի ձևերի հետ գործածվելով՝ փոխարինում են իմ; քո դերանուններին, ինչպես՝ հաքարըս «իմ ոտքերը», հաքարըր «քո ոտքերը», բու՛թարիս «իմ մատները», բու՛թարիր «քո մատները» և այլն: Բազմավանկ բառերի հոգնակի ձևերում, -նա հոգնակերտից հետո, ստացական հոդերը փոխարինում են ոչ միայն իմ, քո ստացական դերանուններին, այլև մեր, ձեր ստացականներին. այսպես օրինակ՝ կարասնա՛ս, կարասնա՛ր, ձևերը ունեն ինչպես «իմ կարասները, քո կարասները», այնպես և «մեր կարասները, ձեր կարասները», իմաստները: Այս նույն իմաստը միավանկ բառերը արտահայտում են -նա հոգնակերտի միջոցով, որ բառի հետ միանում է ը, ի, ու ձայնավորներով, ինչպես՝ հաքընա՛ս «մեր ոտքերը», հաքընա՛ր «ձեր ոտքերը», բութունա՛ս,

«մեր մատները», բայթանա՛ք «ձեր մատները» և այլն: Այս նույն իմաստն արտահայտվում է նաև կրկնակի հոլովակերտների միջոցով, ինչպես օրինակ՝ հաքարնա՛ս «մեր ոտքերը», հաքարնա՛ք «ձեր ոտքերը», և այլն:

261. Ստացական հոդ ունեցող բառերը հոլովվելիս պահպանում են ստացական հոդը. այսպես օրինակ՝ բայթ «մատ», ուղղ. սեռ. տրակ. բայ՛թան, բաց. բայ՛թան հէնի, գործ. բայթանվը, ներգ. բայ՛թանմանս, հգն. ուղղ. բայ՛թարիս, սեռ. տրակ. բանթո՛րուս, բաց. բայթո՛րուս հէնի, գործ. բայթո՛բանվը, ներգ. բայթո՛բանմանս և այլն:

262. Ներգոյականի իմաստ արտահայտող մաջ եռադրությունը անձնական դերանվան իմ, քո սեռական ձևերի հետ ստանում է միշտ ս, թ ստացական հոդերը, որոնք ջ-ից հետո միանում են ի ձայնավորով, այսպես՝ իմ մաջիս, քու մաջիթ: Ներգոյականի հոգնակի ձևերում բոլոր դեմքերի համար էլ մաջ եռադրությունը ստանում է ն հոդը. ինչպես՝ մըէր մաջին, ձըէր մաջին, անդայ՛ց մաջին: Հոգնակիում ս, թ հոդերի փոխարեն ն-ի առկայությունը բացատրվում է նրանով, որ «չ մենք և «չ էլ դուք դերանունները կոնկրետ կերպով չեն նշում «չ խոսողին և «չ էլ խոսակցին, այլ արտահայտում են հավաքական մի խումբ, որի լոկ անդամներն են խոսողն ու խոսակիցը: Այդ հիմքի վրա էլ մաջ եռադրության մեջ հոգնակի թվում ընկնում են ս, թ ստացական հոդերը, որոնց փոխարինում է ն հոդը:

Բ. ԱԾԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

263. Որակական ածականները ունեն համեմատության երեք աստիճան՝ դրական, բաղդատական, գերադրական:

264. Ածականի դրական աստիճանը ընդհանուր է ամբողջ հայերենի հետ՝ կա՛մ իր վարդ, կա՛նիչ տիրով, օքուտ մարդ «լավ մարդ» և այլն:

265. Բաղդատականը ունի առավելական և նվազական աստիճաններ: Բաղդատականի առավելականը արտահայտվում է երկու ձևով: Առաջին ձևը նկարագրական է, որտեղ համեմատությունը կատարվում է երկու նախադասությունների միջոցով, որոնք իրար հետ կապվում են բանս բա շաղկապով, իսկ ածականը դրվում է դրական աստիճանով. այսպես օրինակ՝ Ա՝ ըրա՛խին մուծ ա, բանս բա ան մի՛նի «այս երեխան մեծ է, քան թե մյուսը (իմա՝ այս երեխան ավելի մեծ է)»:

Առավելական բաղդատականի մյուս ձևը կազմվում է բացառական խնդրով, որ ընդունում է համեմատող առարկան. ածականը դրական աստիճանի է. այսպես օրինակ՝ Ա՝ ըրա՛խին ան մի՛նու հենի մուծ ա «այս երեխան մյուսից մեծ է (իմա՝ այս երեխան ավելի մեծ է)»:

Բաղդատականի նվազական աստիճանը արտահայտվում է -ավուն || -ա՛վուն, -ալի || -ա՛լի ածանցներով, որոնք ավելանում են ածականի դրական աստիճանի վրա և ցույց են տալիս հատկանիշի նվազական աստիճանը: Այսպես օրինակ՝ այդ ածանցները ավելանալով կարմիր դրական աստիճանի ածականի վրա, արտահայտում են ոչ թե առհասարակ կարմիր լինելը, կարմիր գույն ունենալը, այլ այդ հատկանիշի նվազ արտահայտությունը՝ կարմրության նշաններ ունենալը: Այդ ածանցներից -ա՛վուն, -ա՛լի ստանում են թեթև ձայնավորներ ունեցող բառերը, իսկ -ավուն, -ալի՝ ծանր ձայնավորներ ունեցողները: Այսպես օրինակ՝ կիպտա՛վուն, կիպտա՛լի, դըղնավուն, դըղնալի, կինիչա՛վուն, կինիչա՛լի, սըվավուն, սըվալի, հրատավուն, հրատալի, բիրիկա՛վուն, բիրիկա՛լի, կըրճավուն, կըրճալի, լերկինավուն, լերկինալի, մրծավուն, մրծալի և այլն:

266. Գերադրական աստիճանը լինում է բացարձակ և հարաբերական: Բացարձակ գերադրականն արտահայտում է գերազանց հատկանիշ՝ առանց որևէ համեմատության: Գերադրականի այս իմաստը արտահայտվում է շատ, լավ, բանդ և նման օժանդակ բառերի և ածականի դրական աստիճանի հարադրությամբ. ինչպես օրինակ՝ շատ նա՛խշուտ «շատ գեղեցիկ», լավ մուծ «շատ մեծ», բանդ կա՛ռմիր «խիստ կարմիր» և այլն: Այս դեպքում նույնիսկ ինտոնացիան և ձայնարկությունը ձևաբանական դեր են խաղում (օր. համա. լավ փըստէգ՛ ա «շատ փոքր է» և լավ փըստէգ՛ա, է՛—ձևերը):

Գերադրականի հարաբերական աստիճանը արտահայտվում է ածականի դրական աստիճանի և ումմուցու՛ (բոլորի) բառի հարադրությամբ, որտեղ ումմուցո՛ւ բառը օմման «բոլորը» գերանվան սեռական հոլովաձևն է. օրինակ՝ ումմուցո՛ւ նախշուտ «ամենից գեղեցիկ, ամենագեղեցիկ», ումմուցո՛ւ բո՛խցուր «ամենից քաղցր, ամենաքաղցր» և այլն: Գերադրականի այս ձևը արտահայտում է մի այնպիսի հատկություն, որ գերազանցում է նման մյուսներին:

Գ. ԹՎԱԿԱՆՆԵՐ

267. Քանակական թվականներն են՝

1—մին	8—օթթ	60—վացուն
2—յօրկու	9—ինը	70—յըխատանասուն
3—իրիք՝	10—տասը	յօխատանասուն
4—չօք	20—քըսան	80—ութթասուն
5—հանգ՝	30—արասուն	90—իննասուն
6—վից	40—քառասուն քըռասուն	100—հո՛ռ
7—յօխտը	50—հիցուն	1000—հիզէր, հէզար

Բարդ տասնավորների կազմության մեջ տասնավորները նախադաս, իսկ միավորները հետադաս են: Այդ բարդության մեջ տասնավորները և միավորները կապվում են ը ձայնավորով, որ ու շաղկապն է՝ հնչյունափոխված: Տասնավորներից միայն տասը<տասն բառն է, որ բարդության մեջ հնչյունափոխվում է (ա>ը). այսպես՝

11—տըսնըմին	31—արասունըմին
12—տըսնըյօրկու	33—արասունըիրիք՝
13—տըսնըիրիք՝	44—քառասունըչօք, քըռասունըչօք
14—տըսնըչօք	45—քառասունըհանգ՝ քըռասունըհանգ՝
15—տըսնըհանգ՝	51—հիցունումին, հիցունըմին
16—տըսնըվից	56—հիցունըվից
17—տըսնըյօխտը	68—վացունըօթթ
18—տըսնըօթթ	77—յօխատանասունըյօխտը, յըխատանասունյօխտը
19—տըսնըինը	88—ութթասունըօթթ
21—քըսանըմին	93—իննասունըիրիք՝
22—քըսանըյօրկու	99—իննասունըինը և այլն:

Հարյուրավորները և հազարավորները կազմվում են միավորների և հո՛ռ, հիզէր (հէզար) թվականների բարդությամբ. ինչպես՝ յօրկուհօրռ՛ռ (200), իրիք՝հո՛ռռ (300), չօքհո՛ռռ (400), հինգհո՛ռռ (500), վեցհո՛ռռ (600), իրիք՝ հիզէր (3000), չօք հիզէր (4000) և այլն:

Քանակական թվականները հոլովվում են ու հոլովմամբ. ինչպես՝ մին, մինու, մինուն, մինու հէնի, մինով, մինում, իրիք՝, իրիք՝ռ, իրիք՝ռն, իրիք՝ռվ, չօք, չօքու, չօքուն, չօքով և այլն:

Յօրկու<երկու թվականի թեք հոլովաձևերում հոլովիչից առաջ հանդես է գալիս հին հայերենի հայցական հոլովի ա հոլովակազմիչը. ինչպես՝ յօրու, յօրուսու, յօրկուսով, սակայն սրանց կողքին գործածվում է նաև առանց ա-ի ձևեր. ինչպես՝ յօրունու, յօրկունուն, յօրկունով, յօրկունում, որտեղ երկու ձայնավորների միջև ավելացել է ն ձայնորդը:

268. Բաշխական թվականները կազմվում են քանակական թվականների կրկնությամբ. այսպես օրինակ՝ մին-մին «մեկական», յօրկու-յօրկու «երկուական», իրիք-իրիք «երեքական», չօք-չօք «չորսական» և այլն:

Բաշխականների -ական ածանցը գործածական չէ:

269. Զափական թվականները կազմվում են քանակականներից՝ դրանց վրա ավելացնելով -ունուց || անուց ածանցները, առաջինը թեթև, երկրորդը՝ ծանր ձայնավորներից հետո. այսպես օրինակ՝ մինա՛նուց (կամ թա՛քա՛նուց), յօրկուանուց կամ յօրկուսանուց, իրիքա՛նուց, չըքանուց, հինգա՛նուց, վիցանուց, յըխտանուց կամ յօխտանուց, ութթանուց կամ ընթթանուց, իննանուց, տըսանուց, հիցունանուց, հՅրանա՛նուց և այլն:

Զափական թվականները հոլովվում են ու հոլովմամբ. ինչպես՝ տըսանուցու, տըսանուցուն, տըսանուցով, տըսանուցում, տըսանուցնա, տըսանուցնՅրու, տըսանուցնՅրուն, տըսանուցնՅրով և այլն:

270. Դասական թվականները արտահայտվում են երկու ձևով: Առաջին ձևը կազմվում է քանակական թվականներից՝ ադբրնջանական -մընջի՛, մինջի՛ մասնիկների ածանցմամբ՝ առաջինը ծանր, երկրորդը՝ թեթև ձայնավորներից հետո. այսպես օրինակ՝ յօրկումընջի, իրիքմինջի, չըքմընջի, հանգմընջի (հինգմինջի), վիցմինջի, յօխտըմընջի, ութթըմընջի, իննըմինջի, տըսըմընջի և այլն: Դասականի այս ձևերը գործածական են հին սերնդի ներկայացուցիչների լեզվում, իսկ միջին ու նոր սերունդը օգտագործում է հայերենի դասականները՝ բարբառային արտասանությանը երանգով. այսպես՝ յՅգոութ<երկրորդ, յՅոութ<երրորդ, չՅոութ<չորրորդ, հինգյՅոութ<հինգերորդ, վիցյՅոութ<վեցերորդ, յՅխտյՅոութ<յոթերորդ, ությՅոութ<ութերորդ, իննյՅոութ<իններորդ, տասյՅոութ<տասներորդ, տըսնըմինյՅոութ<տասնմեկերորդ և այլն:

Առաջին դասականը բոլորի մոտ էլ գործածական է ըՅի՛ ձևով:

Դասական թվականները հոլովվում են ու հոլովմամբ.— մընջի, մինջի մասնիկներով դասականների թեք հոլովներում հոլովիչից առաջ ավելանում է ն ձայնորդը. այսպես՝ իրիքմինջի, իրիքմինջինի (սեռականում ու հոլովիչը ձայնավորների ներդաշնակությամբ

դարձել է ի), իրիքմինջինուն, իրիքմինջինում և այլն։ Այսպես են հոլովվում նաև դասականների մյուս ձևերը. ինչպես՝ չՕոօթ, չՕոՕթու, չՕոՕթուն, չՕոՕթում, չՕոՕթում, չՕոօթնա՛ չՕոօթնՕրու, չՕոօթնՕրում և այլն։

271. Բաղմապատկական թվականները կազմվում են քանակական թվականների և տակ բառի բարդությամբ. շեշտը ընկնում է վերջին վանկի վրա. այսպես՝ յերկրտակ, իրիքտակ, չըքտակ, հինգտակ, վիցտակ, յըխտըտակ, օթթտակ, նաև ութթտակ, իննըտակ, տասըտակ և այլն։

Բաղմապատկական թվականները չեն հոլովվում։

272. Անձնական թվականներ են՝ յըրկէն<երկոքին, իրիքէն<երեքին, չըքէն<չորեքին, հինգէն<հնգեքին, վիցէն<վեցեքին, յըխտէն<հօթանեքին, ըթթէն<ութեքին, իննէն<իններքին, տըսէն<տասներքին։ Անձնական թվականները մասամբ պահպանել են գրաբարյան հոլովաձևերը. այսպես օրինակ՝

Ուղղ.	յըրկէն	չըքէն	տըսէն
Սեռ.	յըրկունցու	չըքունցու	տըսունցու
Տրակ.	յըրկունցուն	չըքունցուն	տըսունցուն
Հայց.	յըրկունցուն	չըքունցուն	տըսունցուն
Բաց.	յըրկունցու հէնի	չըքունցու հէնի	տըսունցու հէնի
Գործ.	յըրկունցում	չըքունցում	տըսունցում
Ներգ.	յըրկունցու մաջին	չըքունցու մաջին	տըսունցու մաջին

Անձնական թվականների սեռական հոլովը հին հայերենի սեռականի հնչյունափոխված վիճակն է, ուր միայն ն ձայնորդը դրափոխությամբ վերջից տեղափոխվել է ց պայթաշփականից առաջ (երկոցուն>յըրկունցու), իսկ ու վերջավորությունը գիտակցվել որպես հոլովիչ։

Դ. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

273. Անձնական դերանուններն են՝ իս<ես, դու<դու, ան «նա», ի՛նքի<ինքն, մի՛ք<մեք, դուք<դուք, ինդո՛ւք, ունդո՛ւք, «նրանք», ու՛ռքի, «իրենք», որոնց հոլովման պատկերն է.

Ուղղ.	իս	դու	ան	ինքի
Սեռ.	իմ	քու	ունդու՛ր	ու՛ռքի, ու՛ռքն
Տրակ.	ինձ	քի	ունդու՛ր	ու՛ռքն
Հայց.	ինձ	քի	ունդու՛ր	ու՛ռքն
Բաց.	ինձէնի	քի հէնի	ունդուրէնի	ու՛ռքն հէնի

Դարձ.	ինձանվ, ինձանանավ	քինանվ	ունդանրանանավ	ուրա՛նավ
Ներդ.	իմ մաջիս	քու մաջիթ	ունդա՛ր մաջին	ու՛րան մաջին

Ուղղ.	միք՝	դուք	ինդուք, ունդուք	ու՛րանք՝
Սեռ.	մըէր	ձըէր	ունդա՛ց	ու՛րանց
Տրակ.	միզ	ձիզ	ունդա՛ց	ու՛րանց
Հայց.	միզ	ձիզ	ունդա՛ց	ու՛րանց
Բաց.	միզէնի	ձիզէնի	ունդանցէնի	ու՛րանց հէնի
Դարձ.	միզնանվ, միզանանավ	ձիզնանվ ձիզանանավ	ունդանցանվ, ունդանցանանավ,	ուրա՛նցանվ ուրա՛նցանանավ
Ներդ.	մըէր մաջին	ձըէր մաջին	ունդա՛ց մաջին	ու՛րանց մաջին

Անձնական դերանունների թեք հոլովներում հնչյունական փոփոխությունները միանգամայն օրինաչափ են։ Քի՝, միզ, ձիզ ձևերում ի հնչյունը առաջացել է ե-ից (տես § 47)։ Քի՝ ձևը նախապես եղել է քիզ (ինչպես այն ներկայացված է Մեղրու բարբառում), հետագայում ընկել է վերջին ձայնեղ շփականը։

Ան «նա» դերանունը հին հայերենի այն ցուցականն է, որ բարբառումս փոխարինում է երրորդ դեմքի անձնական դերանվան (միաժամանակ ունենալով և ցուցական դերանվան իմաստ), ուստի և նրա սեռական հոլովաձևը առաջացել է հին հայերենի այնր ձևից՝ հետևյալ փոփոխություններով. նախ՝ բարբառի հնչյունափոխական կանոններին համապատասխան այ երկբարբառը պարզվել է (անր), այնուհետև նր ձայնորդների միջև ավելացել է դ պայթականը (անդր), ապա դր բաղաձայնների մեջ ավելացել ու հոլովիչը (անդուր)։ Այսպիսի ձևափոխության ապացույց է միջին հայերենից ավանդված այն դերանվան սեռական այնոր ձևը, որի ո հընչյունին բարբառումս համապատասխանում է ու-ն։ Կարճանի բարբառում եռընթաց առնմանությամբ ստացվել է ունդա՛ր ձևը։ Այդ ձևն էլ դրված է բոլոր հոլովների հիմքում, ներառյալ հոգնակի թիվը, ուր հանդես է գալիս գրաբարախառն հոլովում։ Հակառակ բարբառումս գործող շեշտի կանոնին, ան (ինչպես և աթ «այդ», աս «այս» ցուցականների) դերանվան թեք հոլովներում շեշտը վերջին վանկի վրա է։

Ի՛նքի դերանվան ու՛րան ձևը առաջացել է հին հայերենի իւրեան ձևից (իւ>ու և եա>ա հնչյունափոխության մասին տես §§ 227, 224), որտեղ շեշտը վերջընթեր է։

274. Ցուցական դերանուններն են աս «այս», աթ «այդ», ան «այն», տես ‖ աստե՛ս «այստեղ», տեթ ‖ աթտե՛թ «այդտեղ»,

տեն ‖ անտե՛ն «այնտեղ», ասքան «այսքան», աբքան «այդքան», անքան «այնքան», է՛սոի «այսպես, այսպիսի», է՛դի «այդպես, այդպիսի», է՛նդի «այնպես, այնպիսի»: Սա, դա, նա ցուցականներից կան միայն առաջինը և վերջինը՝ զա՛ և նա՛ ձևով:

Ցուցական դերանունները որպես որոշիչ գործածվելիս չեն հոլովվում, իսկ դերանվանաբար հոլովվում են միայն աս, աբ, ան, տես ‖ ասա՛ս, տեբ ‖ աբա՛բ, տեն ‖ անտե՛ն, ասքան, անքան, աբքան, զա՛, նա՛ դերանունները:

Ահա ցուցական դերանունների հոլովումը:

ա) Ուղղ.	աս	ասանի՛ք,
Սեռ.	ասանի՛ր	ասանի՛ց
Տրակ.	ասանի՛ր	ասանի՛ց
Հայց.	աս, ասանի՛ր	ասանի՛ք, ասանի՛ց
Բաց.	ասանրէնի	ասանցէնի
Գործ.	ասանի՛րով	ասանի՛ցով, ասանցանով
	ասանրանով	
Ներգ.	ասանի՛ր մաջին	ասանի՛ց մաջին

Ուղղ.	աթ	ադի՛ք
Սեռ.	ադու՛ր	ադի՛ց
Տրակ.	ադի՛ր	ադի՛ց
Հայց.	աթ, ադի՛ր	ադի՛ք, ադի՛ց
Բաց.	ադիրէնի	ադցէնի
Գործ.	ադիրով,	ադի՛ցով, ադցանով
	ադիրանով	
Ներգ.	ադի՛ր մաջին	ադի՛ց մաջին

Աս, աբ դերանունների թեք հոլովների հիմքում ընկած ադի՛ր, ասանի՛ր ձևերը հին հայերենի այդր (միջին հայերենի այտոր), այսր ձևերի ձևափոխությունները են: Այսր>ասոր ձևում ս և ր հնչյունների միջև ավելացել է տ հնչյունը (աստոր), ապա ո>ա հնչյունափոխությամբ և հարնթաց առնմանությամբ ստացվել են ադի՛ր, ասանի՛ր բարբառային ձևերը: Հոգնակիում դրարարախառն հոլովում է:

Ան «այն» ցուցականը հոլովվում է ան «նա» անձնական դերանվան նման:

Զա՛ «սա», նա՛ «նա» ցուցականները հոլովվում են այսպես.

	Եզակի		Հոգնակի
Ուղղ.	զա	նա	զա՛րք,
Սեռ.	զա՛ր	նա՛ր	զարց
Տրակ.	զա՛ր	նա՛ր	զարց
Հայց.	զա, զա՛ր	նա, նա՛ր	զարք, զարց
Բաց.	զարէ հէնի	նա՛ր հէնի	զարցէնի
Գործ.	զարա՛նավ	նարա՛նավ	զարա՛ցավ
Ներդ.	զարա մաջին	նա՛ր մաջին	զարց մաջին

Զա և նա ցուցականների թեք հոլովաձևերը գործածությունից դուրս են գալիս, որոնց փոխարինում են ավելի հաճախ աս և ան դերանունները։ Զա, նա ցուցականների եզակի սեռական, տրական հոլովաձևերը առաջացել են հին հայերենի սեռական սոբա, նորա ձևերից՝ n>ա ետընթաց առնմանությամբ։ Հոլովական մյուս ձևերը կազմվում են այդ հիմքից. հոգնակիում գրաբարախառն հոլովում է, իսկ նա ցուցականը կորցրել է իր հոգնակի ձևերը։

բ) Տեղ ցույց տվող ցուցական դերանունները հոլովվում են այսպես.

Ուղղ.	տէս, աստէս	աստէղարքս
Սեռ.	տօղուս, աստօղուս	աստօղօրուս, աստօղօրքուս
Տրակ.	տօղուս, աստօղուս	աստօղօրուս, աստօղօրքուս
Հայց.	տէս, աստէս	աստէղարքս
Բաց.	տօղուս հէնի, աստօղուս հէնի	աստօղօրուս հէնի, աստօղօրքուս հէնի
Գործ.	իստինի, իստիսնի	աստօղօրավս, աստօղօրքավս
Ներդ.	տէս, աստէս	աստէղարքս
Ուղղ.	տէթ, աթտէթ	աթտէղարքթ
Սեռ.	տօղուէթ, աթտօղուէթ	աթտօղօրուէթ, աթտօղօրքուէթ
Տրակ.	տօղուէթ, աթտօղուէթ	աթտօղօրուէթ, աթտօղօրքուէթ
Հայց.	տէթ, աթտէթ	աթտէղարքթ
Բաց.	տօղուէթ հէնի, աթտօղուէթ հէնի	աթտօղօրուէթ հէնի, աթտօղօրքուէթ հէնի
Գործ.	իդինի, իդիսնի	աթտօղօրավթ, աթտօղօրքավթ
Ներդ.	տէթ, աթտէթ	աթտէղարքթ
Ուղղ.	տէն, անտէն	անտէղարքը

Սեռ.	տօղուն, անտօղուն	անտօղօրուն, անտօղօրքուն
Տրակ.	տօղուն, անտօղուն	անտօղօրուն, անտօղօրքուն
Հայց.	տէն, անտէն	անտէղարքը
Բաց.	տօղուն հէնի, անտօղուն հէնի	անտօղօրուն հէնի, անտօղօրքուն հէնի
Գործ.	էնդի, ինդիանի	անտօղօրովը, անտօղօրքովը
Ներդ.	տէն, անտէն	անտէղարքը

Տես || ասահ՛ս, ահր || աբահ՛ր, ահն || անահ՛ն *ցուցական դերանունների սեռական և նրանցից կազմված հոլովական ձևերում* Ի> օ *հնչյունափոխությունն արդյունք է ու հոլովիչի ազդեցությանը, որը է առաջնալեզվային ձայնավորը նմանեցրել է իրեն, դարձնելով ետնալեզվային շրթնայնացած:*

Հոլովական վերջավորություններում հոլովիչից հետո ս, ր, ն*(ը) հնչյունները ցուցական հոդեր են, որոնք առկա են նույնիսկ այն դեպքերում, երբ դերանվան առաջին եզրում կան դրանց լրիվ համարժեքները: Հայցականը և ներգոյականը ձևով նույնն են՝ իմաստի նույնության պատճառով (տեղի պարագա):*

Հոլովական բոլոր ձևերի մեջ իրենց խիստ տարբերությամբ աչքի են ընկնում եզակի թվի գործիական հոլովի ձևերը՝ իստի՛ն || իստիանի, իդինի՛ || իդիանի՛, էնդի՛ || ինդիանի՛, *որոնց մեջ, այնուամենայնիվ, կա որոշ օրինաչափություն: Այդ ձևերում բոլորի համար էլ ընդհանուր է* -ին *վերջավորությունը, բացի է՛նդի ձևից, ուր այն բացակայում է: Ամեն մի զուգահեռ ձևի երկրորդ ձևում* -ին *վերջավորությունից առաջ հանդես է գալիս* ա *սուլականը, որի դոյությունը կարող է արդարացվել միայն* իստիանի՛ *ձևում՝ որպես ցուցական հոդ, ինչպես այդ կա նույն բառի մյուս բոլոր հոլովաձևերում: Մյուս դերանունների երկրորդական ձևերում այդ* ա*-ն առաջացել է* իստիանի՛ *ձևի անալոգիայով և այլևս չի դիտակցվում որպես ցուցական հոդ: Այդ ձևերից առանձնացնելով* -ին *վերջավորությունը՝* ա *ցուցական հոդի հետ, ստանում ենք հետևյալ հիմքերը՝* իստի, իդի, ինդի: *Այս ձևերի բացատրության համար բանալի է հանդիսանում է՛նդի ձևը, որը զուրկ է* -ին *վերջավորությունից և հակառակ մյուս ձևերի, որոնց մեջ շեշտը վերջին վանկում է, այս ձևում շեշտը վերջընթեր է: Բարբառում է՛նդի ձևը հայտնի է նաև որպես ցուցական դերանուն ցայնպես, այնպիսի» իմաստով: Եթե* -ին *վերջավորության հավելմամբ շեշտը տեղափոխվելով վերջին վանկը, նախավանկ* է*-ն փոխ-*

վել է ի-ի (ինդի+u+նի=ինդիսնի), ապա նույն հնչյունափոխական երևույթը կատարվել է նաև մյուս ձևերում, ուստի կարելի է վերականգնել նրանց սկզբնական՝ ոչ հնչյունափոխված ձևերը. այսպես՝ ինդի=ենդի, իսաի=էսաի, իդի=էդի: Ենդի, էսաի, էդի բառերը հայտնի են նաև որպես ցուցական դերանուններ «այնպես, այնպեսի. այսպես, այսպիսի. այդպես, այդպիսի» իմաստներով: Այստեղից դժվար չէ ենթադրել, որ ենդի, էսաի ձևերը առաջացել են հին հայերենի անդ, ասա մակբայական ձևերից՝ -ի մակբայական կամ ածականական ածանցի հավելմամբ: Էդի ձևը առաջացել է այդ ցուցական դերանունից, նույն -ի ածանցի հավելմամբ: Ահա այդ տեղի մակբայական իմաստ ունեցող բառերի վրա է, որ ավելացել է -նի մասնիկը որպես հոլովական վերջավորություն: Այդ մասնիկը գործիականի կազմության դերով հանդես է գալիս նաև շրջե՞ղ «որտե՞ղ» հարցական դերանվան գործիականում՝ շրջեղնի՞ «որտեղով» ձևով, որի մեջ արդեն բացակայում է u ցուցականը: Այս օրինակը ևս գալիս է հաստատելու, որ -նի մասնիկը հոլովական վերջավորություն է: Այդ մասնիկը կա նաև Մեղրու բարբառում, բայց ավելի լայն կիրառությամբ (թեև ոչ դերանունների հոլովակազմության մեջ): Այդ մասնիկի մասին պրոֆ. Է. Աղայանը իր «Մեղրու բարբառը» աշխատության § 302-ում գրում է հետևյալը. «Տարածության ու տեղի գործիականի և ներգոյականի համար գործածվում է -նի հետադրությունը, որը պահանջում է որոշյալ հայցականով խնդիր, ինչպես՝ պատընի կախ տոր «պատով (=պատից) կախ տուր». բսմրնի գինեն իմ «թմբուվը գնում եմ». պունախսընի դիր «անկյունում դիր». ճըղեննի մին մարդը գինեն «ճանապարհով (ճանապարհի միջով) մի մարդ է գնում». արտարընի շոռը նուս «արտերում ման է գալիս». կուրեննի գինի մի «ակոսի միջով մի գնա» և այլն: Իրականում այս մի առանձին հոլովի դեր է կատարում, որ աշխարհաբարում չունենք. կարելի է համարել տեղական (местный, locativus) հոլովին համապատասխան, իբրև շարժում ցույց տվող բայերի պարագա՝ տարածությունը (ոչ ուղղությունը), տեղը ցույց տալու համար»: Այնուհետև. «Այս մասնիկը, մեր կարծիքով, առացվել է գրաբարյան ներքս բառից, որ սղմամբ դարձել է նի. այդ նույնն իրբև նախադրություն գտնում ենք նաև բայերի մեջ՝ նոր բառեր կազմելու և գործողության դեպի ներս ուղղված լինելը ցույց տալու համար, համապատասխան ռուսերեն в, լատիներեն in, հայերեն ներ— նախածանց-

ներին. ինչպես են մըտիլ «ներս մտնել=входить, invenire, են ածիլ «ներածել=вносить, importare և այլն»:

Մեղրու բարբառի այդ են մասնիկին Կարճևանի բարբառում համապատասխանում է նի մասնիկը: Սակայն Կարճևանի բարբառում այդ մասնիկի ներգոյական արտահայտելու իմաստը բացակայում է, իսկ գործիականի իմաստ արտահայտելու դերը պահպանվել է միայն նշված օրինակներում: Իհարկե, պատահական չէ, որ այդ վերջավորությունը շարունակում է իր գոյությունը միայն տեղի և տարածության հասկացությունների հետ առնչվող դերանունների գործիականում: -նի մասնիկը Կարճևանի բարբառում նույնպես հանդես է գալիս բայական նախադրություններում, մի հանգամանք, որ նույնպես հաստատում է այդ մասնիկի ընդհանրությունը նույն ճյուղի բարբառների մեջ: Այսպես. Մղր. բրբ. են մըտիլ=Կարճ. բրբ. նի մըտիլ «ներս մտնել», Մղր. բրբ. են արիլ=Կարճ. բրբ. նի արիլ «ներս անել, մտցնել» և այլն:

գ) Զարմի, քանակի ցուցական դերանունները հոլովվում են այսպես.

Ուղղ.	ասքանը	ասքաննան
Սեռ.	ասքանու	ասքաննորու
Տրակ.	ասքանուն	ասքաննորուն
Հայց.	ասքանը, ասքանուն	ասքաննան, ասքաննորուն
Բաց.	ասքանու հէնի, ասքանուց	ասքաննորու հէնի
Գործ.	ասքանավ	ասքաննորավ
Ներգ.	ասքանու մաջին	ասքաննորու մաջին

Նույն կերպ են հոլովվում աթքա՛ն «այդքան», ՝անքա՛ն «այնքան» ցուցականները:

275. Ստացական դերանուններն են՝ իմի, իմին, իմիս «իմը», քունը, քունըթ «քոնը», ունդուՙրու, ունդուՙրանը «նրանը», ուրանը «իրենը», մըէրը «մերը», ձըէրը «ձերը», ունդուՙցը «նրանցը», ուՙրանցը «իրենցը»: Ստացականներից հոլովվում են միայն առաջին և երկրորդ դեմքի դերանունները, մյուսները կորցրել են հոլովական ձևերը:

Ահա հոլովման պատկերը.

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	իմի, իմին, իմիս	իմուք
Սեռ.	իմի, իմուն, իմուս	իմուքու, իմուց

Տրակ.	իմուն, իմուս	իմուքուն, իմուց
Հայց.	իմուն, իմուս կամ ուղղ.	իմուքուն, իմուց կամ ուղղ.
Բաց.	իմի հէնի, իմուս հէնի	իմուքու հէնի, իմուց հէնի
Գործ.	իմավ, իմավըս	իմուքավ, իմուցավ
Ներգ.	իմուս մաջին, իմի մաջին	իմուքու մաջին, իմուց մաջին
Ուղղ.	քունը, քունըթ	քունուք
Սեռ.	քունի, քունութ	քունուքու, քունուց
Տրակ.	քունուն, քունութ	քունուքուն, քունուց
Հայց.	քունուն, քունութ կամ ուղղ.	քունուքուն, քունուց կամ ուղղ.
Բաց.	քունի հէնի, քունութ հէնի	քունուքու հէնի, քունուց հէնի
Գործ.	քունավ, քունավըթ	քունուցավ (քունուքավ)
Ներգ.	քունում, քունի մաջին քունութ մաջին	քունուց մաջին, քունուքու մաջին
Ուղղ.	մըէր	մըէրարը, մըէրուք
Սեռ.	մըէրի, մըէրու	մըէրօրու, մըէրուց
Տրակ.	մըէրուն	մըէրօրուն, մըէրուց
Հայց.	մըէրուն կամ ուղղ.	մըէրարը, մըէրօրուն, մըէրուց
Բաց.	մըէրը հէնի	մըէրօրու հէնի, մըէրուց հէնի
Գործ.	մըէրավ	մըէրօրավ, մըէրուցավ
Ներգ.	մըէրի մաջին	մըէրօրու մաջին, մըէրուց մաջին
Ուղղ.	ալէրը	ալէրարը, ալէրուք
Սեռ.	ալէրի, ալէրու	ալէրօրու, ալէրուց
Տրակ.	ալէրուն	ալէրօրուն, ալէրուց
Հայց.	ալէրը, ալէրուն	ալէրարը, ալէրօրուն, ալէրուց
Բաց.	ալէրի հէնի	ալէրօրու հէնի, ալէ՛րուց հէնի
Գործ.	ալէրավ	ալէրօրավ, ալէրուցավ
Ներգ.	ալէրի մաջին	ալէրօրու մաջին, ալէ՛րուց մաջին

Մըէրը, ալէրը ստացականների հոգնակի ձևերում մըէ՛րարը, ալէ՛րարը և դրանց թեք հոլովաձևերը գործածվում են իրի առուտով մտածվող առարկաների խմբերի համար, մինչդեռ մըէ՛րուք, ալէ՛րուք և նրանցից կազմված թեք հոլովաձևերը՝ շնչավոր առարկաների, հատկապես մարդկանց խմբերի համար։

276. Փոխադարձ դերանուններն են՝ ու՛ռուր «իրար», մինմի՛նու «մեկ-մեկուս», որոնք հոլովվում են այսպես.

Սեռ.	ու՛ռուր	մին-մինու
Տրակ.	ու՛ռուր	մին-մինուն

Հայց.	ա՛ռաջ	մին-մինուն
Բաց.	ա՛ռաջ հէնի	մին-մինու հէնի
Գործ.	ա՛ռաջավ	մին-մինավ
Ներգ.	ա՛ռաջ մաջ/մաջին	մին-մինումը, մին-մինու մաջին

277. Հարցական դերանուններն են՝ ի՞նչ «ինչ», հո՞ւ, հո՞ւվ «ո՞վ», խա՞ «ինչո՞ւ», հանչա՞ր «ինչպե՞ս, ինչպիսի՞», հինչքա՞ն, հիշքա՞ն «ինչքա՞ն», շրատ՞ղ «որտեղ», քա՞նի «քանի՞», հօ՞ր «ո՞ւր» որոնցից չեն հոլովվում խա՞, հանչա՞ր, հօ՞ր դերանունները. մյուսները հոլովվում են այսպես.

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	ի՞նչ	ինչա՞ր
Սեռ.	ի՞նչու	ինչօ՞ր
Տրակ.	ի՞նչու	ինչօ՞ր
Հայց.	ի՞նչ	ի՞նչար
Բաց.	ի՞նչու հէնի	ինչօ՞ր հէնի
Գործ.	ի՞նչավ	ինչօ՞ր
Ներգ.	ի՞նչում, ի՞նչու մաջ (մաջին)	ինչօ՞ր, ինչօ՞ր մաջ, մաջին
Ուղղ.	հու, հուվ	հուվուք
Սեռ.	հա՞ր	հա՞ռանց
Տրակ.	հու՞ր	հա՞ռանց
Հայց.	հա՞ր	հա՞ռանց
Բաց.	հարէ՞նի	հարանցէ՞նի, հա՞ռանց հէնի
Գործ.	հարա՞նավ	հարա՞նցավ
Ներգ.	հու՞ր մաջին	հու՞ռանց մաջին
Ուղղ.	քա՞նի(սը)	քանինանն
Սեռ.	քանիսու	քանինօ՞ր
Տրակ.	քանիսուն	քանինօ՞ր
Հայց.	քանիսուն կամ ուղղ.	քանինօ՞ր կամ ուղղ.
Բաց.	քանիսու հէնի	քանինօ՞ր հէնի
Գործ.	քանիսավ	քանինօ՞ր
Ներգ.	քանիսու մաջին	քանինօ՞ր, քանինօ՞ր մաջին
Ուղղ.	շրատ՞ղ	շրատ՞ղարք, շրատ՞ղնա
Սեռ.	շրատ՞ղու	շրատ՞ղօ՞ր, շրատ՞ղնօ՞ր

Տրակ.	շրտՕղուն	շրտէղՕրքուն, շրտէղնՕրուն
Հայց.	շրտէՂ	շրտէՂարք, շրտէղնաՀ
Բաց.	շրտՕղուն, շրտՕղուն հէնի	շրտէղՕրքու հէնի, շրտէղնՕրու հէնի, շրտէղՕրքուն, շրտէղնՕրուն
Գործ.	շրտէղնի՞	շրտէղՕրքավ, շրտէղնՕրավ
Ներգ.	շրտէՂ	շրտէՂարք, շրտէղնաՀ

278. Հարաբերական դերանուններն են՝ հինչ, հու, հուվ, հուվար «ով որ», հաՀնչՀաՀր, հինչքան, շրտեղ, քաՀնի, վրեր «որ», որոնց հոլովումը տես վերը՝ հարցական դերանուններում: Հարաբերական դերանուններից չի հոլովվում վրեր «որ» դերանունը, իսկ հուվար «ով որ» դերանունը հոլովվում է, թեք հոլովներում բաղադրվելով հաՀր վրեր, հաՀրե՛նի վրեր և այլն բաղադրիչների:

279. Որոշյալ դերանուններն են՝ օ՛մման «բոլորը, ամենքը», օ՛մման մի՛նի «ամեն մեկը, յուրաքանչյուրը», ան մինի «այն մեկը, մյուսը», որոնք հոլովվում են այսպես.

Ուղղ.	օմման	օմման մինի
Սեռ.	ումմուցու	օմման մինու
Տրակ.	ումմուցուն	օմման մինուն
Հայց.	ումմուցուն	օմման մինուն
Բաց.	ումմուցու հէնի	օմման մինու հէնի
Գործ.	ումմուցավ	օմման մինավ
Ներգ.	ումմուցու մաջին	օմման մինում, օմման մինու մաջին

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	ան մինի	ան միննան
Սեռ.	ան մինու	ան միննՕրու
Տրակ.	ան մինուն	ան միննՕրուն
Հայց.	ան մինուն, ան մինի	ան միննՕրուն, ան միննան
Բաց.	ան մինու հէնի	ան միննՕրու հէնի
Գործ.	ան մինավը	ան միննՕրավը
Ներգ.	ան մինումը, ան մինու մաջին	ան միննՕրումը, ան միննՕրու մաջին

Օ՛մման դերանվան սեռական և նրանից կազմված ձևերը առաջացել են հին հայերենի ամենքին դերանվան սեռական-տրա-

կան ամենեցուն հոլովաձևից՝ բարբառի հնչյունափոխական օրինաչափությունների հիման վրա:

280. Անորոշ դերանուններն են՝ ո՛ւիսման «ոմն», մի՛նի «մեկը», օ՛րիշ «ուրիշ», փլա՛նքաս «ոմն, մեկը» (պրսկ. فلان کس «այսինչ անձնավորությունը»):

Եզակի

Ուղղ.	ուիսման	օրիշ	փլա՛նքաս
Սեռ.	ուիսմանու	ուրուշու	փլանքա՛սու
Տրակ.	ուիսմանուն	ուրուշուն	փլանքա՛սուն
Հայց.	ուիսմանուն	ուրուշուն	փլանքա՛սուն
Բաց.	ուիսմանու հէնի	ուրուշու հէնի	փլանքա՛սու հէնի
Գործ.	ուիսմանավ	ուրուշավ, օրիշավ	փլանքա՛սավ՝
Ներգ.	ուիսմանու մաջին	ուրուշու մաջին	փլանքա՛սու մաջին

Հոգնակի

Ուղղ.	ուիսմաննա	օրիշնա	փլանքա՛սաք,
Սեռ.	ուիսմաննօրու	օրիշնօրու	փլանքա՛սաց
Տրակ.	ուիսմաննօրուն	օրիշնօրուն	փլանքա՛սաց
Հայց.	ուիսմաննօրուն	օրիշնօրուն	փլանքա՛սաց
Բաց.	ուիսմաննօրու հէնի	օրիշնօրու հէնի	փլանքա՛սաց հէնի
Գործ.	ուիսմաննօրավ	օրիշնօրավ	(փլանքասա՛ցավ)
Ներգ.	ուիսմաննօրու մաջին	օրիշնօրու մաջին	փլանքա՛սաց մաջին

Մի՛նի «մեկը» անորոշ դերանունը հոլովվում է ան մի՛նի որոշյալ դերանվան նման:

281. Ժխտական դերանուններն են՝ վըէչ մի «ոչ մի», վըէչ մի՛նի «ոչ մեկը», որոնցից հոլովվում է միայն վերջինը. ըստ որում թեքվում է միայն մի՛նի բաղադրիչը, իսկ վըէչ-ը բոլոր հոլովներում էլ մնում է անփոփոխ. ինչպես՝

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	վըէչ մի՛նի	վըէչ միննան, վըէչ մինուքնան
Սեռ.	վըէչ մի՛նու	վըէչ միննօրու, վըէչ մինուքնօրու
Տրակ.	վըէչ մի՛նուն	վըէչ միննօրուն, վըէչ մինուքնօրուն
Հայց.	վըէչ մի՛նուն կամ ուղղ.	վըէչ միննօրուն, վըէչ մինուքնօրուն կամ ուղղ.

Բաց.	վրէչ մինու հէնի	վրէչ միննօրու հէնի, վրէչ մինուքնօրու հէնի
Գործ.	վրէչ մինում	վրէչ միննօրում, վրէչ մինուքնօրում
Ներգ.	վրէչ մինում, վրէչ մինու մաջին	վրէչ միննօրում, վրէչ մինուքնօրում վրէչ միննօրու մաջին, վրէչ մինուքնօրու մաջին

Այսպիսով՝ դերանուններից միայն անձնական, ցուցականներից միայն աս, աթ, զա՛, նա՛, ան, հարցականներից՝ հո՞ւ, հո՞ւվ, հարաբերականներից՝ օմման դերանուններն են, որ պահպանել են հին հայերենի դերանվանական հոլովման առանձնահատկությունները և այն էլ միայն սեռական-տրական հոլովներում, իսկ մնացյալ բոլոր հոլովներում ընդհանրացել է բարբառի ամբողջ հոլովման սիստեմի օրինաչափությունը։ Դերանունների մեծ մասը սկսել է թեքվել անունների նման, դրանով իսկ միօրինակություն ստեղծելով ամբողջ հոլովման համակարգի մեջ։

Ե. ԲԱՅ

282. Կարճևանի բարբառում բայը որպես խոսքի մաս ձևավորվում է -ալ, -էլ, -իլ, -ուլ դերբայական վերջավորություններով։ Սակայն դերբայական այդ վերջավորությունները չեն, որ բնորոշում են տարբեր խոնարհումները բարբառի մեջ։

-Ուլ և -էլ վերջավորությամբ կան միայն երկուական բայ. դրանք են՝ գուլ<գալ, ցուլ<տեսանել, նէլ<գնալ, լէլ<լալ, որոնք անկանոն խոնարհում ունեն, ուստի և առանձին խոնարհում չեն կազմում։

Ալ ‖ -ա՛ալ վերջավորությամբ բայերի թիվը նույնպես սահմանափակ է։ Սրանց մեջ մտնում են բնաձայնական կամ արմատի կրկնությամբ կազմված չեզոք սեռի բայերը. ինչպես օրինակ՝ բըռնչա՛ալ<բառաչել, գըռռա՛ալ<գոռալ, գըռգըռա՛ալ<գոռգոռալ, դըղդըղա՛ալ<դողդողալ, վըռվըռա՛ալ<վառվառել, սըռսըռա՛ալ<սարսռալ, փիլփիլա՛ալ<փայլփլել և այլն։ Այս խմբին են պատկանում նաև իրվա՛ալ<երևել, մընա՛ալ<մնալ, տա՛ալ<տալ, կա՛ալ «կենալ» բայերը, որոնցից վերջին երկուսը անկանոն խոնարհում ունեն։ Այս տիպի բայերը արդեն ունեն ինքնուրույն խոնարհում։

Բայերի ճնշող մեծամասնությունը ձևավորված է -իլ դերբայական վերջավորությամբ, ինչպես օրինակ՝ ա՛ղիլ<աղալ, գիրիլ<գրել, զըրմանիլ<զարմանալ, թիթիվէնիլ<թեթևանալ, բիձրէնիլ<բարձրանալ, ծընդըրէնիլ<ծանրանալ և այլն։ Այս տիպի

բայերը տարբեր խոնարհումներ ունեն, ուստի և -իլ դերբայական վերջավորությունը երբեք էլ չի որոշում նրանց այս կամ այն խոնարհման պատկանելը:

283. Որպես բայածանցներ հանդես են գալիս.

-վ՝ բայի կրավորական սեռի կազմության մեջ.

-ան || ան, -էն՝ որպես բայական սոսկածանցներ.

-ցան || -ցան՝ բայերի պատճառական կերպի կազմության մեջ:

Այս բայածանցներով կազմված բայերը անորոշ դերբայում ունենում են միայն -իլ դերբայական վերջավորությունը:

Դերբայներ

284. Բարբառի դերբայներն են՝ անորոշ, անկատար, ապառնի, կատարյալ, հարակատար, ենթակայական, ժխտական:

285. Անորոշ դերբայն ունենում է § 282-ում նշված վերջավորությունները: Նա հանդես է գալիս որպես պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների կազմության բաղադրիչ. ինչպես օրինակ՝ բիրիլ իմ «կբերեմ», բիրիլ իմ լէ «կբերեիր», մընալ ա «կմնա», մընալ ա լէ «կմնար» և այլն: Անորոշ դերբայը գոյականաբար գործածվելիս հոլովվում է ու հոլովիչով և նախադասության մեջ կարող է կատարել նախադասության այլ և այլ անդամների պաշտոններ:

286. Անկատար դերբայը բայի բաղադրյալ ժամանակների մեջ հանդես է գալիս որպես սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների կազմության բաղադրիչ. ըստ որում, այդ դերբայը ունի երկու ձև, մեկը ա, իսկ մյուսը՝ յ վերջավորությամբ. այսպես՝ բիրի՛ա || բիրի՛յ «բերում», իփի՛ա || իփի՛յ «եփում», լիսի՛ա || լիսի՛յ «լսում», ծիփի՛ա || ծիփի՛յ «ծեփում», ք'իրի՛ա || ք'իրի՛յ «քերում», իրվ՚այս || իրվ՚ա՛յ «երևում» և այլն: Դերբայական այդ ձևերը իմաստային տարբերություններ չունեն, ունեն միայն տարբեր կիրառություններ: Ա վերջավորությամբ դերբայը սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակներում օգտագործվում է օժանդակ բայից հետո, երբ նախադասության տրամաբանական շեշտը ենթակայի վրա է. այսպես՝ իս իմ բիրի՛ա «ես եմ բերում», դո՛ւ վըս բիրի՛ա «դու ես բերում», ա՛ն ա բիրի՛ա «նա է բերում» և այլն. իսկ յ վերջավորությամբ ձևը՝ նույն ժամանակների համար՝ օժանդակ բայից առաջ, երբ չի շեշտվում ենթական. ինչպես՝ բիրի՛յ իմ «բերում եմ», բիրի՛յ իս «բերում ես», բիրի՛յ ին «բերում են» և այլն: Կիրառական այս հատ-

կությունից։ Լինելով էլ մենք այդ ձևերը անվանում ենք անկատար դերբայի նախադաս և հետադաս ձևեր։

Կարճևանի բարբառի անկատար դերբայը մինչև իր ժամանակակից վիճակին հասնելը անցել է պատմական զարգացման երկարատև ուղի[1]։ Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, այդ դերբայը սկիզբ է առնում հայերենի -ալիս, -ելիս վերջավորություն ունեցող անկատար դերբայից, որն պահպանված է նաև արդի հայերենում։

287. Կարճևանի բարբառում շեշտը, որպես կանոն, վերջընթեր է, մինչդեռ անկատար դերբայում շեշտը վերջին վանկի վրա է։ Դրա պատճառն այն է, որ անկատար դերբայը զարգանալով գիրի՛լիս, մըոընի՛լիս, բիձրինի՛լիս վերջընթեր շեշտ ունեցող ձևերից, ամփոփվելուց հետո էլ շեշտը պահել է նույն վանկի վրա։ Անկատար դերբայում շեշտից առաջ գտնվող մի շարք ձայնավորներ հնչյունափոխվում են։ Հնչյունափոխության այդ օրինաչափությունները են.

ա || ա՝>ը, ինչպես՝ ա՝ծիլ-ըծիս || ըծիլ «ածում», ա՝ղիլ-ըղիս || ըղիլ «աղում», ա՝րիլ-ըրիս || ըրիլ «անում», դա՝նձիլ-դընձիս || դընձիլ «աղանձում», ծա՝լիլ-ծըլիս || ծըլիլ «ծալում» և այլն։ Բացառություն են կազմում այն բայերը, որոնց մեջ ա հնչյունի նախորդող վանկում ի ձայնավոր է. այդ տիպի բայերում ա>ի. ինչպես՝ լիվանիլ-լիվինիս || լիվինիլ «լվանում» և այլն։

է>ի—ինչպես՝ բէռնիլ-բիռնիս || բիռնիլ «բառնում», դէխկիլ-դիխկիս || դիխկիլ «թունավորում», դէղիլ-դիղիս || դիղիլ «դիզում», գէղիլ-գիղիս || գիղիլ «թաքցնում», ճէքիլ-ճիքիս || ճիքիլ «ճաքում», շէրիլ-շիրիս || շիրիլ «շարում» և այլն։

օ || ո՝>ու || -ու, ինչպես՝ խո՝շկիլ-խուշկիս || խուշկիլ «չորանում», խո՝զիլ-խուզիս || խուզիլ «խուզում», քո՝րիլ-քուրիս || քուրիլ «քորում», հիլլո՝րիլ-հիլլուրիս || հիլլուրիլ «ոլորում» և այլն։

ըէ>ը— ինչպես՝ մըէռիլ-մըռիս || մըռիլ «մեռնում», դըէռիլ-դըռիս || դըռիլ «դառնում», մըէրթիլ-մըրթիս || մըրթիլ «մորթում» և այլն։

Անփոփոխ են մնում ի, ու, ը ձայնավորները։

288. Ապառնի դերբայը ձևավորվում է -ացուկ -ական, -ացկուն ածանցներով, որոնցից առաջինն երկուսը կան նաև Մեղրու բարբառում։ Պրոֆ. Է. Աղայանի ստուգաբանությամբ, այդ ածանց-

---

[1] Տե՛ս գրքիս էջ 8—10։

ները բարդ են և կազմված գրաբարյան սեռական-տրական -եաց > աց վերջավորությունից և -ուկ, -ական ածանցներից: Ց > ս փոփոխությունը կատարվել է կ-ից առաջ, որը օրինաչափ է նաև Կարճևանի բարբառում: Ինչ վերաբերում է -ացկուն վերջավորությանը, ապա այն նույն -ացկան ածանցն է, որտեղ ց-ն պահպանված է, իսկ -ական ածանցի ա-ն փոխվել է ու-ի: -Ական ածանցի այդպիսի փոփոխություն կա նաև Քելվանի բարբառում. ինչպես՝ կիրըլակուն «գրելու», մընըլակուն «մնալու» և այլն[1]:

Ապառնի դերբայը կազմվում է անորոշ դերբայից: Քանի որ -ացկուն, -ացուկ, ական ածանցների հավելմամբ դերբայի շեշտը ընկնում է ածանցների առաջին ձայնավորի վրա, ապա նախաշեշտ ա || ա, է, օ || ո, ըէ ձայնավորները հնչյունափոխվում են համաձայն § 287-ի. ինչպես՝ ադիլ-ըդըլացուկ, ըդըլական, ըդըլացկուն «աղալու», բէռնիլ-բիռնիլացուկ, բիռնիլական, բիռնիլացկուն, «բառնալու», խոշկիլ-խուշկուլացուկ, խուշկուլա՛կան, խուշկուլա՛ցկուն «չորանալու», մըէրթիլ-մըրթըլա՛ցուկ, մըրթըլա՛կան, մըրթըլա՛ցկուն «մորթելու» և այլն:

Անորոշ դերբայի -իլ վերջավորության ի ձայնավորը, ինչպես երևում է բերված օրինակներում, ձայնավորների ներդաշնակությամբ փոխվում է ը, ու կամ մնում է ի, նայած այն հանգամանքին, թե դերբայական ձևում նրան ինչ ձայնավորներ են նախորդում:

Ապառնի դերբայը բայի բաղադրյալ ժամանակների մեջ օգտագործվում է որպես սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների կազմության բաղադրիչ:

289. Հարակատար դերբայի վերջավորություններն են՝ -ած || -ա՜ծ, -ըէծ, -ահած || -ա՜հա՜ծ, իյած, որոնք ավելանում են բայարմատի վերջից. -ած || -ա՜ծ, -ըէծ ստանում են են -իլ վերջավորությամբ պարզ բայերը. դրանցից -ած վերջավորությունը ստանում են այն պարզ բայերը, որոնց բայարմատում առկա են ա, է, ու, ըէ ծանր ձայնավորները և որոնց մեջ շեշտը վերջընթեր է. ինչպես՝ դատիլ-դատած, դէխկիլ-դէխկած, խոշկիլ-խոշկած, կուտիլ-կուտած, դըէռիլ-դըէռած և այլն. -ա՜ծ վերջավորությունը ստանում են նույն տիպի բայերը, եթե նրանց բայարմատի ձայնավորները թեթև են. այնպես օրինակ՝ հա՜ըրիլ-հա՜ըրա՜ծ, հիլլո՜ըիլ-հիլլո՜ըա՜ծ և այլն: -Ըէծ վերջավորությունը ստանում են այն բայերը, որոնց

[1] Տե՛ս Ա. Ղարիբյան. Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 285:

մեջ շեշտը անորոշ դերբայի վերջավորության վրա է։ Այս բայերի հարակատար դերբայում նույնպես շեշտը մնում է վերջին վանկում. այսպես՝ բերհել-բերհըէծ, բեշտել-բեշտըէծ, գիձել-գիձըէծ, պըռնել-պըռնըէծ, գըղնել-գըղնըէծ և այլն։ Սրանք ըստ էության հին հայերենի այն բայերն են, որոնք իրենց անցյալը կազմում են ներկայի հիմքից։

-Ահած || -ահած վերջավորությունները ստանում են ինչպես -ալ վերջավորությամբ բայերը, այնպես էլ -ան || -ան ստորածանց ունեցող -իլ վերջավորությամբ բայերը. ինչպես՝ երվալ-երվա՛հած, մընալ-մընահած, լըղանել-լըղահած, լիվանել-լիվա՛հած, մրռանել-մրռահած և այլն։ -Ահած || ահած վերջավորությունները առաջացել են հին հայերենի անցյալի ցոյական -ացած վերջավորությունից՝ ց>հ հնչյունափոխությամբ։

-Իյած վերջավորությունը ստանում են -իլ վերջավորությամբ -էն ստորածանց ունեցող բայերը. ինչպես՝ բիձրէնել-բիձրիյած, բիբիկէնել-բիբիկիյած, թիրդէնել-թիրդիյած, թիթիվէնել-թիթիվիյած, թիրձիրէնել-թիրձիրիյած, հրռէնել-հրռիյած և այլն։ -Իյած վերջավորությունը նույնպես առաջացել է հին հայերենի անցյալի ցոյական հիմքից՝ -եցած վերջավորությունից, ց պալիթաշիականի անկմամբ, ե>ի հնչյունափոխությամբ և երկու ձայնավորների միջև յ ձայնորդի հավելմամբ։

Ինչպես -ահած || -ահած, այնպես էլ -իյած վերջավորությունները, ավելանում են բայարմատին առանց բայածանցների. այս նշանակում է, որ այդ դերբայական ձևերը կազմությամբ ունեն հին հայերենի անցյալի հիմքերը։

Հարակատար դերբայը բայի բաղադրյալ ժամանակներում հանդես է գալիս որպես սահմանական եղանակի հարակատար և վաղակատար ներկա և անցյալ ժամանակների կազմության բաղադրիչ։ Չնայած այն բանին, որ այդ դերբայը բաղադրյալ ժամանակներում արտահայտում է քերականական երկու իմաստ (հարակատարություն և վաղակատարություն), այնուամենայնիվ նպատակահարմար է այն անվանել հարակատար դերբայ, նկատի ունենալով նրա ձևի և բովանդակության միասնությունը։

290. Կատարյալ դերբայի վերջավորություններն են՝ -ալ || -ալ, -ալ, -ըէլ, -ահալ || -ահալ, -իյալ։ Այս վերջավորությունները ավելանում են բայարմատին այն համապատասխանություններով, ինչպես այդ նշվեց հարակատար դերբայի կազմության շարադրանքում, օրինակ՝ դանել-դանալ, դէխկել-դէխկալ, խոշկել-խոշկալ,

կուտիլ-կուտալ, դրէռիլ-դրէռալ, հա՛րբիլ-հա՛րբալ, գիրիլ-գիրբէլ, պրոնիլ-պրոնրէլ, լրդանիլ-լրդահալ, լիվանիլ-լիվա՛հալ, բիձրէնիլ-բիձրիլալ, հրռէնիլ-հրռիլալ և այլն։

Կատարյալ դերբայը հին հայերենի անցյալ դերբայի արտահայտությունն է։ Դերբայական -եալ վերջավորությունը բարբառում շեշտի տակ դարձել է ել, շեշտից հետո՝ ալ. պարզ բայերը այդ դերբայը կազմել են ներկայի հիմքից, իսկ ածանցավոր բայերը՝ անցյալի ցոյական հիմքից։

Կատարյալ դերբայը բայի բաղադրյալ ժամանակներում օգտագործվում է որպես սահմանական եղանակի անցյալ կատարյալի կազմությանն բաղադրիչ։

291. Ենթակայական դերբայի վերջավորություններն են՝ -օղ, -ացուղ ‖ -ա՛ցուղ, -ուղ, որոնք ավելանում են բայահիմքին։ -Օղ վերջավորությունը ստանում են -իլ վերջավորությամբ այն պարզ բայերը, որոնց մեջ շեշտը վերջին վանկի վրա է. ինչպես՝ բիրհիլ-բիրհօղ, բիշտիլ-բիշտօղ, գիրիլ-գիրօղ, դրդնիլ-դրդնօղ, թրթվիլ-թրթվօղ, հրնդրրիլ-հրնդրրօղ և այլն։

Անորոշ դերբայում -ալ ‖ -ա՛լ վերջավորություն ունեցող բայերը ենթակայական դերբայում ստանում են -ացուղ ‖ -ա՛ցուղ վերջավորությունները (որոնք ցոյական են և կազմված հին հայերենի անցյալի հիմքից). ինչպես՝ մընալ-մընա՛ցուղ, իրվա՛լ-իրվա՛ցուղ, դրդղրդալ-դրդղրդա՛ցուղ և այլն։

Մյուս բոլոր բայերը ենթակայական դերբայում ստանում են -ուղ վերջավորությունը, որը ավելանում է բայահիմքին. ինչպես՝ ա՛ղիլ-ա՛ղուղ, հա՛րբիլ-հա՛րբուղ, թինդէնիլ-թինդէնուղ, գիդա՛նիլ-գիդա՛նուղ, լիվա՛նիլ-լիվա՛նուղ, մրտրկէնիլ-մրտրկէնուղ, և այլն։ Այսպիսով, միայն -ալ լծորդության բայերն են, որ պահպանել են անցյալի հիմքից կազմվող ձևերը, մնացած բոլոր բայերը, այդ թվում նաև ան ‖ ա՛ն, էն սոսկածանց ունեցող բայերը, որոնք անցյալի հիմքի հետքերը պահպանել են հարակատար և կատարյալ դերբայներում, ենթակայական դերբայում կորցրել են այն և կամ, ավելի ճիշտ, այդ դերբայը կազմել են ներկայի հիմքից։

Ենթակայական դերբայի ձևաբանական արժեքը նույնն է, ինչ որ արդի հայերենում։

292. Ժխտական դերբայը հանդես է գալիս պայմանական, հարկադրական և հրամայական եղանակների ժխտական խոնարհումների նախադաս ձևերում և կազմվում է անորոշ դերբայից՝ նրա ։

վերջավորության անկմամբ. ինչպես՝ մընալ-մընա, ա՛դիլ-ա՛դի, մըրկի՛նիլ-մըրկի՛նի, լիվա՛նիլ-լիվա՛նի և այլն:

Խոնարհում

293. Բայի խոնարհումը մի կուռ համակարգ է կազմում: Ճիշտ է, դեռևս գոյություն ունեն տարբեր խոնարհումներ, բայց նրանց օրինաչափությունները այնքան կուռ են, որ իմանալով տվյալ բայի որ խոնարհման պատկանելը՝ առանց որևէ դժվարության այն կարելի է խոնարհել բոլոր եղանակներով ու ժամանակներով: Այստեղ ոչ մի բացառություն չկա: Իհարկե, ինչպես ամեն մի լեզու, բարբառս նույնպես ունի անկանոն խոնարհման պատկանող բայեր, բայց դրանց թիվը մեծ չէ և որպես այդպիսիք՝ չեն կարող խախտել խոնարհման ընդհանուր օրինաչափությունը:

294. Բայերն ունեն հինգ խոնարհում, դրանք են՝

Ա. խոնարհում— վերջընթեր շեշտ ունեցող -իլ վերջավորությամբ պարզ բայեր.

Բ խոնարհում— իլ վերջավորությամբ պարզ բայեր, որոնց շեշտը վերջին վանկում է.

Գ խոնարհում— ալ վերջավորությամբ բայեր.

Դ խոնարհում— անիլ ‖ ա՛նիլ վերջավորությամբ ածանցավոր բայեր.

Ե խոնարհում— էնիլ վերջավորությամբ ածանցավոր բայեր:

295. Բայի եղանակները հինգն են՝ սահմանական, ըղձական, պայմանական, հարկադրական, հրամայական:

296. Սահմանական եղանակի ժամանակներն են՝ ներկա, անցյալ անկատար, ապառնի, անցյալի ապառնի, անցյալ կատարյալ, հարակատար-վաղակատար, անցյալի հարակատար-վաղակատար:

Սահմանական եղանակի բոլոր ժամանակները էլ բաղադրյալ են և կազմվում են դերբայով և իմ (<եմ) օժանդակ բայով:

Օժանդակ բայի խոնարհման ներկայի ձևերն են՝

	Եզակի	Հոգնակի
Ա. դեմք—	իմ կամ ըմ	իք՛ կամ ըք
Բ դեմք—	իս կամ ըս	իք՛ կամ ըք
Գ դեմք—	ա	ին կամ ըն

Հոգնակի Ա. և Բ դեմքերի նույնությունն առաջացել է Ա. դեմքում մ ոնդայնի անկմամբ (եմք>իմք>իք՛):

Իմ, իս, իք՛, ին ձևերը օգտագործվում են, երբ նրանց նա-

խորդում են թեթև ձայնավորներ, իսկ ըմ, ըս, ըք, ըն ձևերը՝ երբ բացակայում են այդպիսիք։

Օժանդակ բայի անցյալի ձևերը բարբառում չեն պահպանվել։ Անցյալի իմաստը արտահայտվում է բաղադրյալ ձևերով՝ կազմված օժանդակ բայի ներկայի ձևերից և լե մասնիկից, որը նիլ «լինել» բայի կատարյալ (գրաբարյան՝ անցյալ) դերբայն է լեալ(<լեալ), որի մեջ ընկել է վերջին լ ձայնորդը։ Ըստ այդմ, որպես օժանդակ բայի անցյալի իմաստ արտահայտող ձևեր հանդես են գալիս.

	Եզակի	Հոգնակի
Ա դեմք—	իմ լե կամ ըմ լե	իք՛ լե կամ ըք լե
Բ դեմք—	իս լե կամ ըս լե	իք՛ լե կամ ըք լե
Գ դեմք—	ա լե	ին լե կամ ըն լե

Ներկա ժամանակը կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով։ Եթե նախադասության տրամաբանական շեշտը ենթակայի վրա է, ապա օժանդակ բայը դրվում է դերբայից առաջ. այդ դեպքում դերբայը օգտագործվում է իր նատադաս ձևով. այսպես օրինակ՝ ի՛ս իմ ըղի՛ս, դո՛ւ վըս ըղի՛ս, ա՛ն ա ըղի՛ս (ես եմ աղում, դու ես աղում և այլն)։ Սովորական շեշտի դեպքում, երբ օժանդակ բայը հաջորդում է դերբայական ձևին, վերջինս օգտագործվում է իր նախադաս ձևով. միայն եզակի Գ դեմքում պահպանում է նատադաս ձևը. այսպես օրինակ՝ ըղի՛յ իմ, ըղի՛յ իս, ըղի՛ս ա, ըղի՛յ իք՛, ըղի՛յ ին։

Անցյալ անկատար ժամանակը կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի անցյալի բաղադրյալ ձևերով։ Այստեղ նույնպես, ինչպես ներկա ժամանակի կազմության մեջ, նախադասության տրամաբանական շեշտով և օժանդակ բայի դիրքով է որոշվում դերբայի նախադաս կամ նատադաս ձևերի գործածությունը. այսպես՝ ի՛ս իմ լե ըղի՛ս, դո՛ւ վըս լե ըղի՛ս, ա՛ն ա լե ըղի՛ս, մի՛ք՛ իք՛ լե ըղի՛ս և այլն, կամ ըղի՛յ իմ լե, ըղի՛յ իս լե, ըղի՛ս ա լե, ըղի՛յ իք՛ լե և այլն։

Ապառնի և անցյալի ապառնի ժամանակները կազմվում են ապառնի դերբայով և օժանդակ բայի ներկայի և անցյալի բաղադրյալ ձևերով. այսպես օրինակ՝ ըղըլա՛ցուկ (ըղըլա՛սկան, ըղըլա՛ցկուն) ըմ, ըս, ա, իք՛, ին, ըղըլա՛ցուկ (ըղըլա՛սկան, ըղըլա՛ցկուն) ըմ լե, ըս լե, ա լե, իք՛ լե, ըն լե։

Հարակատար և վաղակատար ժամանակների իմաստը ար-

տահայտվում է մի ձևով. դա հարակատար դերբայով և օժանդակ բայով կազմված բաղադրյալ ձևերն են. այսպես օրինակ՝ ա՛ղած ըմ «աղացած եմ, աղացել եմ», ա՛ղած ըմ լե «աղացած էի, աղացել էի» և այլն:

Անցյալ կատարյալի պարզ ձևերը բացակայում են. բայական այդ ժամանակը կազմվում է կատարյալ դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով. օրինակ՝ ա՛ղալ ըմ «աղացի», ա՛ղալ ըս «աղացիր», ա՛ղալ ա «աղաց» և այլն:

297. Ըղձական եղանակն ունի երկու ժամանակ՝ ապառնի և անցյալի ապառնի: Ըղձականի ապառնին կազմվում է անորոշ դերբայից: Անորոշ դերբայի վերջավորության ձայնավորը հանդես է գալիս որպես խոնարհիչ, իսկ լ դերբայական վերջավորությունը փոխարինում է ներկայինն վերջավորությունը (մ, ս,—ք, ն). օրինակ՝ ա՛ղիմ, ա՛ղիս, ա՛ղի, ա՛ղիք, ա՛ղին:

Այս եղանակի անցյալի ապառնին կազմվում է նույն սկզբունքով, անցյալի համար ավելացնելով լե մասնիկը, ինչպես՝ ա՛ղիմ լե, ա՛ղիս լե և այլն:

298. Պայմանական եղանակը կազմվում է անորոշ դերբայով և օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերով. համապատասխանաբար ստացվում են պայմանական եղանակի ապառնի՝ ա՛ղիլ իմ, ա՛ղիլ իս, ա՛ղիլ ա, ա՛ղիլ իք, ա՛ղիլ ին, և անցյալի ապառնի՝ ա՛ղիլ իմ լե, ա՛ղիլ իս լե, ա՛ղիլ ա լե, ա՛ղիլ իք լե, ա՛ղիլ ին լե ձևերը:

299. Հարկադրական եղանակը կազմվում է ըղձական եղանակի ձևերով և մատիլ եղանակիչով[1]: Հարկադրականի ապառնի և անցյալի ապառնի ժամանակները կազմվում են մատիլ+ըղձականի

---

[1] Պրոֆ. Ա. Ղաբիրյանը նշում է հարկադրականի մա՛լա եղանակիչը, որը պետք է որ առաջացած լինի մատիլ ա ձևից՝ ամփոփմամբ: Այդ ձևը ներկայումս իր դերը դիջել է մատիլ եղանակիչին: պետք է ենթադրել, որ նախապես մատիլ-ը գործածվել է որպես ինքնուրույն բայ, ինչպես այդ պահպանվել է մատիլ ամ ասիմ «պիտի ասեմ», մատիլ ամ ՆԷմ «պիտի գնամ» և այլն ձևերում, որտեղ մատիլ ամ-ը բայի եղանակային ձև է (ըղձական եղանակի ապառնու առաջին դեմք): Հավանական է, որ սկզբնապես այն բոլոր դեմքերում էլ խոնարհվել է, սակայն այժմ պահպանվել է միայն Ա. դեմքում, այն էլ ոչ բոլոր բարբառախոսների մոտ. մեծամասնության մոտ օժանդակ բայը ընկել է նաև Ա. դեմքում:

ապառնի և անցյալի ապառնի ձևերը. օրինակ՝ մա՛տիլ ա՛ղիմ «պիտի աղամ», մա՛տիլ ա՛ղիս «պիտի աղաս» և այլն. մա՛տիլ ա՛ղիմ լէ «պիտի աղայի», մա՛տիլ ա՛ղիս լէ «պիտի աղայիր» և այլն:

300. Հրամայական եղանակը ունի երկու ժամանակ՝ ներկա և անցյալ: Ներկան իր իմաստով համընկնում է արդի հայերենի բուն հրամայականին: Հրամայականի անցյալ ժամանակը ցույց է տալիս գործողության կատարման ցանկություն անցյալում, որ ինչ-ինչ պատճառներով չի կատարվել, չկատարված գործողության ափսոսանք: Հրամայական եղանակի ժամանակների կազմության մասին խոսվում է առանձին խոնարհումներին հատկացված բաժիններում:

Առաջին խոնարհում

301. Առաջին խոնարհման են պատկանում -իլ վերջավորությամբ այն բայերը, որոնց մեջ շեշտը վերջընթեր է. սրանք պարզ բայեր են: Ահա այս խոնարհման պատկանող մի քանի բայեր. ապրիլ, ասիլ, ատիլ, բէռնիլ, բերա՛կիլ, գէղիլ, գո՛ղիլ, գատիլ, գէզիլ, գէխկիլ, գըէռիլ, ըրածիլ, թա՛խկիլ, թա՛ղիլ, թա՛կիլ, խփիլ, խօզիլ, խօշկիլ, կուկիլ, կուտիլ, կուփիլ, հա՛րիլ և այլն:

Այս խոնարհման առանձնահատկություններն են:

Հարակատար դերբայում այս խոնարհման բայերը ունենում են -ած կամ ա՛ծ վերջավորությունները: Կատարյալ դերբայի վերջավորություններն են՝ ալ || ա՛լ:

Հրամայական եղանակի ներկա ժամանակի եղակի ձևը կազմվում է բայահիմքից, որի վրա ավելանում է ա ձայնավորը, որի բնույթը (ա, թե՞ ա՛) կախված է նրան նախորդող ձայնավորների բնույթից: Այսպես օրինակ՝ ա՛սա, ա՛տա «ատիր», հա՛րրա «հարիր», գէ՛խկա «թունավորիր» և այլն: Հրամայականի այդ վերջավորությունը առաջացել է հին հայերենի հրամայականի եա վերջավորությունից, որը բարբառումս շեշտից հետո դարձել է ա:

Հրամայական եղանակի հոգնակին կազմվում է բայահիմքի վրա ավելացնելով -է՛ցիք՛ (<եցէք) վերջավորությունը, որտեղ շեշտը նույնպես վերջընթեր է: Բայահիմքի ձայնավորները շեշտից առաջ հնչյունափոխվում են համաձայն § 287-ի, օրինակ՝ ըսէ՛ցիք՛ «ասացեք», ըտէ՛ցիք՛ «ատեցեք», հիրբէ՛ցիք՛ «հարրեցեք», գիխկէ՛ցիք՛ «թունավորեցեք» և այլն:

Հրամայական եղանակի անցյալ ժամանակը, որ բոլոր խոնարհումներում նույն կազմությունն ունի, կազմվում է հրամայական ներկայի ձևերից՝ նրա վրա ավելացնելով լէ մասնիկը, ինչպես

օրինակ՝ ասա է «երանի թե առնիրդ, ա՛սա է, հա՛րբ է, դէխ-կա է, ըսէցիք, է, ըսէցիք, է, հիրբէցիք, է և այլն։

Մյուս բոլոր դեպքերում այս խոնարհման բայերը համընթաց են մյուս խոնարհումների հետ։

Ահա այս խոնարհման լրիվ պատկերը.

Դերբայներ

Անորոշ—	փամիլ «նալել»	Ինիլ «եփել»
Անկատ.—	փըմիս ‖ փըմիյ	Իսիս ‖ Իսիյ
Ապառնի—	փըմըլա՛ցուկ	Իսիլա՛ցուկ
	փըմըլա՛սկան	Իսիլա՛սկան
	փըմըլա՛ցկուն	Իսիլա՛ցկուն
Հարակ.—	փա՛մած	Ինիած
Կատար.—	փա՛մալ	Ինիալ
Ենթակ.—	փա՛մուղ	Ինիուղ
Ժխտական—	փա՛մի	Ինի

Սահմանական եղանակ

Ներկա

փըմիյ իմ	փըմիյ իք՝	Իսիյ իմ	Իսիյ իք՝
փըմիյ իս	փըմիյ իք՝	Իսիյ իս	Իսիյ իք՝
փըմիս ա	փըմիյ ին	Իսիս ա	Իսիյ ին

կամ

ես իմ փըմիս	մենք՝ իք՝ փըմիս	ես իմ Իսիս	մենք՝ իք Իսիս
դու վըս փըմիս	դուք ըք փըմիս	դու վըս Իսիս	դուք ըք Իսիս
ա՛ն ա փըմիս	ինդուք ըն փըմիս	ա՛ն ա Իսիս	ինդուք ըն Իսիս

Անցյալ անկատար

փըմիյ իմ է	փըմիյ իք՝ է	Իսիյ իմ է	Իսիյ իք՝ է
փըմիյ իս է	փըմիյ իք՝ է	Իսիյ իս է	Իսիյ իք՝ է
փըմիս ա է	փըմիյ ին է	Իսիս ա է	Իսիյ ին է

կամ

ես իմ է փըմիս	մենք՝ իք՝ է փըմիս	ես իմ է Իսիս
դու վըս է փըմիս	դուք ըք է փըմիս	դու վըս է Իսիս
ան ա է փըմիս	ինդուք ըն է փըմիս	ան ա է Իսիս
	մենք՝ իք՝ է Իսիս	
	դուք ըք է Իսիս	
	ինդուք ըն է Իսիս	

Ապառնի

փըմըլացուկ	ըմ ըք	խփիլացուկ	ըմ ըք
փըմըլասկան	ըս ըք	խփիլասկան	ըս ըք
փըմըլացկուն	ա ըն	խփիլացկուն	ա ըն

Անցյալի ապառնի

փըմըլացուկ	ըմ լէ ըք լէ	խփիլացուկ	ըմ լէ ըք լէ
փըմըլասկան	ըս լէ ըք լէ	խփիլասկան	ըս լէ ըք լէ
փըմըլացկուն	ա լէ ըն լէ	խփիլա՛ցկուն	ա լէ ըն լէ

Հարակատար-վաղակատար

փա՛մած ըմ	փա՛մած ըք	խփած ըմ	խփած ըք
փա՛մած ըս	փա՛մած ըք	խփած ըս	խփած ըք
փա՛մած ա	փա՛մած ըն	խփած ա	խփած ըն

Անցյալի հարակատար-վաղակատար

փա՛մած ըմ լէ	փա՛մած ըք լէ	խփած ըմ լէ	խփած ըք լէ
փա՛մած ըս լէ	փա՛մած ըք լէ	խփած ըս լէ	խփած ըք լէ
փա՛մած ա լէ	փա՛մած ըն լէ	խփած ա լէ	խփած ըն լէ

Անցյալ կատարյալ

փա՛մալ ըմ	փա՛մալ ըք	խփալ ըմ	խփալ ըք
փա՛մալ ըս	փա՛մալ ըք	խփալ ըս	խփալ ըք
փա՛մալ ա	փա՛մալ ըն	խփալ ա	խփալ ըն

Ըղձական եղանակ

Ապառնի

փա՛միմ	փա՛միք՝	խփիմ	խփիք՝
փա՛միս	փա՛միք՝	խփիս	խփիք՝
փա՛մի	փա՛մին	խփի	խփին

Անցյալի ապառնի

փա՛միմ լէ	փա՛միք՝ լէ	խփիմ լէ	խփիք՝ լէ
փա՛միս լէ	փա՛միք՝ լէ	խփիս լէ	խփիք՝ լէ
փա՛մի լէ	փա՛մին լէ	խփի լէ	խփին լէ

Պայմանական եղանակ

Ապառնի

փա՛միլ իմ	փա՛միլ իք՝	խփիլ իմ	խփիլ իք՝

փա՛միլ իս	փա՛միլ իք՝	ԷՓԻԼ ԻՍ	ԷՓԻԼ ԻՔ՝
փա՛միլ ա	փա՛միլ ին	ԷՓԻԼ Ա	ԷՓԻԼ ԻՆ

Անցյալի ապառնի

փա՛միլ իմ լէ	փա՛միլ իք՝ լէ	ԷՓԻԼ ԻՄ ԼԷ	ԷՓԻԼ ԻՔ՝ ԼԷ
փա՛միլ իս լէ	փա՛միլ իք՝ լէ	ԷՓԻԼ ԻՍ ԼԷ	ԷՓԻԼ ԻՔ՝ ԼԷ
փա՛միլ ա լէ	փա՛միլ ին լէ	ԷՓԻԼ Ա ԼԷ	ԷՓԻԼ ԻՆ ԼԷ

Հարկադրական եղանակ

Ապառնի

մա՛տիլ փա՛միմ	մա՛տիլ փա՛միք՝	մա՛տիլ ԷՓԻՄ	մա՛տիլ ԷՓԻՔ՝
մա՛տիլ փա՛միս	մա՛տիլ փա՛միք՝	մա՛տիլ ԷՓԻՍ	մա՛տիլ ԷՓԻՔ՝
մա՛տիլ փա՛մի	մա՛տիլ փ՛ամին	մա՛տիլ ԷՓԻ	մա՛տիլ ԷՓԻՆ

Անցյալի ապառնի

մ՛ատիլ փ՛ամիմ լէ	մ՛ատիլ փ՛ամիք՝ լէ
մ՛ատիլ փ՛ամիս լէ	մ՛ատիլ փ՛ամիք՝ լէ
մ՛ատիլ փ՛ամի լէ	մ՛ատիլ փ՛ամին լէ

մ՛ատիլ ԷՓԻՄ ԼԷ	մա՛տիլ ԷՓԻՔ՝ ԼԷ
մ՛ատիլ ԷՓԻՍ ԼԷ	մ՛ատիլ ԷՓԻՔ՝ ԼԷ
մ՛ատիլ ԷՓԻ ԼԷ	մ՛ատիլ ԷՓԻՆ ԼԷ

Հրամայական եղանակ

Ներկա

փ՛ամա, փըմէցիք՝ ԷՓԻ՛Ա, ԷՓԷՑԻՔ՝

Անցյալ

փ՛ամա լէ, փըմէցիք՝ լէ ԷՓԻ՛Ա ԼԷ, ԷՓԷՑԻՔ՝ ԼԷ

Երկրորդ խոնարհում

302. Այս խոնարհման պատկանում են -իլ վերջավորությամբ այն պարզ բայերը, որոնց շեշտը վերջավանկում է։ Այս խոնարհման բայերը հարակատար դերբայում ունեն -ըեծ, կատարյալ դերբայում -ըել, ենթակայական դերբայում -օղ վերջավորությունները։ Հրամայականի կազմությունը հետևյալն է։ Հրամայական ներկան կազմվում է բայահիմքից, որի վրա եզակի թվի համար ավելանում է Է (<եա-ից՝ շեշտի տակ), իսկ հոգնակի թվի համար՝ Է՛ցիք՝ (<եցէք) վերջավորությունները։ Եզակի թվում շեշտը վերջին վանկի վրա է, հոգնակի թվում՝ վերջընթեր։ Հրամայականի անցյալը կազմվում է նույն սկզբունքով, ինչպես և առաջին խոնարհման

բայերում։ Այս խոնարհման պատկանող բայերից են՝ բիշտել, բիբհել, գիձել, գիրել, գըղնել, գիմբիրել, գըզվել, ըսկըսել, թըթվել, թըղբել, թըռել, թըքել, լինջել, լիցցել, լիսել, լըծել, խընդել, խըլընչել, խըրտընել, ծընել, ծըռել, ծիլել, կըարել և այլն և այլն։

Ահա երկրորդ խոնարհման պատկերը.

Դերբայներ

Անորոշ—	գիրել «գրել»	լիսել «լսել»
Անկատ.—	գիրիս ‖ գիրել	լիսիս ‖ լիսել
Ապառնի—	գիրելացուկ	լիսելացուկ
	գիրելական	լիսելական
	գիրելա՛ցկուն	լիսելացկուն
Հարակ.—	գիրըէծ	լիսըէծ
Կատար.—	գիրըէլ	լիսըէլ
Ենթակ.—	գիրող	լիսող
Ժխտմ.—	գիրի	լիսի

Սահմանական եղանակ

Ներկա

գիրել իմ	գիրել իք,	լիսել իմ	լիսել իք,
գիրել իս	գիրել իք՝	լիսել իս	լիսել իք՝
գիրիս ա	գիրել ին	լիսիս ա	լիսել ին

կամ

ես իմ գիրիս	մենք՝ իք՝ գիրիս	ես իմ լիսիս	մենք՝ իք, լիսիս
դու վըս գիրիս	դուք ըք գիրիս	դու վըս լիսիս	դուք ըք լիսիս
ան ա գիրիս	ինդուք ըն գիրիս	ան ա լիսիս	ինդուք ըն լիսիս

Անցյալ անկատար

գիրել իմ է	գիրել իք՝ է	լիսել իմ է	լիսել իք, է
գիրել իս է	գիրել իք, է	լիսել իս է	լիսել իք՝ է
գիրիս ա է	գիրել ին է	լիսիս ա է	լիսել ին է

կամ

ես իմ է գիրիս	մենք՝ իք, է գիրիս
դու վըս է գիրիս	դուք ըք է գիրիս
ա՛ն ա է գիրիս	ինդուք ըն է գիրիս

ինք իմ լէ լիսինք	մինք, ինք, լէ լիսինք
դուն վրա լէ լիսինք	դուք ըք լէ լիսինք
ա՛ն ա լէ լիսինք	ինդուք ըն լէ լիսինք

Ապառնի

գիրիլա՛ցուկ	ըմ ըք	լիսիլա՛ցուկ	ըմ ըք
գիրիլա՛սկան	ըս ըք	լիսիլա՛սկան	ըս ըք
գիրիլա՛ցկուն	ա ըն	լիսիլա՛ցկուն	ա ըն

Անցյալի ապառնի

գիրիլա՛ցուկ	ըմ լէ ըք լէ	լիսիլա՛ցուկ	ըմ լէ ըք լէ
գիրիլա՛սկան	ըս լէ ըք լէ	լիսիլա՛սկան	ըս լէ ըք լէ
գիրիլա՛ցկուն	ա լէ ըն լէ	լիսիլա՛ցկուն	ա լէ ըն լէ

Հարակատարվաղակատար

գիրըէծ ըմ	գիրըէծ ըք	լիսըէծ ըմ	լիսըէծ ըք
գիրըէծ ըս	գիրըէծ ըք	լիսըէծ ըս	լիսըէծ ըք
գիրըէծ ա	գիրըէծ ըն	լիսըէծ ա	լիսըէծ ըն

Անցյալի հարակատարվաղակատար

գիրըէծ ըմ լէ	գիրըէծ ըք լէ	լիսըէծ ըմ լէ	լիսըէծ ըք լէ
գիրըէծ ըս լէ	գիրըէծ ըք լէ	լիսըէծ ըս լէ	լիսըէծ ըք լէ
գիրըէծ ա լէ	գիրըէծ ըն լէ	լիսըէծ ա լէ	լիսըէծ ըն լէ

Անցյալ կատարյալ

գիրըէլ ըմ	գիրըէլ ըք	լիսըէլ ըմ	լիսըէլ ըք
գիրըէլ ըս	գիրըէլ ըք	լիսըէլ ըս	լիսըէլ ըք
գիրըէլ ա	գիրըէլ ըն	լիսըէլ ա	լիսըէլ ըն

Ըղձական եղանակ

Ապառնի

գիրիմ	գիրիք՛	լիսիմ	լիսիք,
գիրիս	գիրիք՛	լիսիս	լիսիք,
գիրի	գիրին	լիսի	լիսին

Անցյալի ապառնի

գերեմ լէ	գերեք՝ լէ	լեսեմ լէ	լեսեք՝ լէ
գերես լէ	գերեք՝ լէ	լեսես լէ	լեսեք՝ լէ
գերի լէ	գերեն լէ	լեսի լէ	լեսեն լէ

Պայմանական եղանակ

Ապառնի

գերել իմ	գերել իք՝	լեսել իմ	լեսել իք՝
գերել իս	գերել իք՝	լեսել իս	լեսել իք՝
գերել ա	գերել ին	լեսել ա	լեսել ին

Անցյալի ապառնի

գերել իմ լէ	գերել իք՝ լէ	լեսել իմ լէ	լեսել իք՝ լէ
գերել իս լէ	գերել իք՝ լէ	լեսել իս լէ	լեսել իք՝ լէ
գերել ա լէ	գերել ին լէ	լեսել ա լէ	լեսել ին լէ

Հարկադրական եղանակ

Ապառնի

մա՛տել գերեմ	մա՛տել գերեք՝	մա՛տել լեսեմ	մա՛տել լեսեք՝
մա՛տել գերես	մա՛տել գերեք՝	մա՛տել լեսես	մա՛տել լեսեք՝
մա՛տել գերի	մա՛տել գերեն	մա՛տել լեսի	մա՛տել լեսեն

Անցյալի ապառնի

մ՛ատել գերեմ լէ	մ՛ատել գերեք՝ լէ	մ՛ատել լեսեմ լէ
մ՛ատել գերես լէ	մ՛ատել գերեք՝ լէ	մ՛ատել լեսես լէ
մ՛ատել գերի լէ	մա՛տել գերեն լէ	մա՛տել լեսի լէ
	մ՛ատել լեսեք՝ լէ	
	մ՛ատել լեսեք՝ լէ	
	մա՛տել լեսեն լէ	

Հրամայական եղանակ

Ներկա

գերէ՛, գերէ՛ցեք՝	լեսէ՛, լեսէ՛ցեք՝

Անցյալ

գերէ լէ՛, գերէ՛ցեք՝ լէ	լեսէ՛ լէ՛, լեսէ՛ցեք՝ լէ

303. Այս խոնարհման ենթարկվում են ալ || -ալ վերջավորությամբ բայերը։ Սրանք բոլորն էլ չեզոք սեռի բայեր են, բացառությամբ ալ բայի, որն անկանոն խոնարհում ունի և կքննվի անկանոն բայերի բաժնում։

Ինչպես նշվել է վերը, այս բայերը իրենց բնույթով, չնչին բացառություններով, բնաձայնական կամ արմատի կրկնությամբ կազմված բայեր են։ Շեշտը դրանց մեջ, որպես կանոն, վերջին վանկում է։ Ահա այս խոնարհման ենթարկվող մի քանի բայեր. բրդընչա՛լ, գլոռա՛լ, գլոգլոռա՛լ, գլդգլդա՛լ, զլոռա՛լ, թրնչա՛լ, թրթրա՛լ, իրվա՛լ, մրնալ, մրմրռալ, զլոռալ, ուռուռալ, սրռսրռա՛լ, վրռվրռա՛լ, տրզզալ, փիլիփիլա՛լ, փրնչալ և այլն։

Այս բայերի խոնարհման առանձնահատկություններն են. սրանք անկատար դերբայի եռադաս ձևում ա ձայնավորից հետո ունեն յ ձայնորդը, ինչպես՝ բրդընչա՛յս, գլոռա՛յս, ուռուռա՛յս, սրռսրռա՛յս, փիլիփիլա՛յս և այլն։ Անկատար դերբայի նախադաս ձևը սովորական է՝ գլոռայ, բրդընչայ, ուռուռայ և այլն։ Հարակատար դերբայում ունեն -ահած || -ահած, կատարյալում՝ -ահալ || -ահալ, ենթակայականում՝ -ացուղ || ացուղ վերջավորությունները։ Հրամայական եղանակի ներկա ժամանակի եզակին կազմվում է -ա || -ա վերջավորություններով, որոնք ավելանում են բայարմատի վրա. իսկ հոգնակին կազմվում է եզակիի ձևից, նրա վրա ավելացնելով -իք՝ հոգնակերտը։ Հրամայականի անցյալը կազմվում է ընդհանուր սկզբունքով։ Մյուս բոլոր դեպքերում այս բայերի խոնարհումը համընկնում է մյուս խոնարհումների հետ։

Ահա այս բայերի խոնարհման պատկերը.

Դերբայներ

Անորոշ— իրվա՛լ «երևալ»	մրնալ
Անկատ.— իրվա՛յս || իրվա՛յ	մրնա՛յս || մրնա՛յ
Ապառնի— իրվիլա՛ցուկ, իրվիլա՛սկան, իրվիլա՛ցկուն	մրնըլա՛ցուկ, մրնըլա՛սկան, մրնըլա՛ցկուն
Հարակ.— իրվա՛հած	մրնա՛հած
Կատար.— իրվա՛հալ	մրնա՛հալ
Ենթակ.— իրվա՛ցուղ	մրնա՛ցուղ
Ժխտման— իրվա	մրնա

Սահմանական եղանակ

Ներկա

իրվա՛յ իմ	իրվա՛յ իք՝	մընա՛յ իմ	մընա՛յ իք՝
իրվա՛յ իս	իրվա՛յ իք՝	մընա՛յ իս	մընա՛յ իք՝
իրվա՛յս ա	իրվա՛յ ին	մընա՛յս ա	մընա՛յ ին

կամ

ես իմ իրվա՛յս	մենք՝ իք՝ իրվա՛յս	ես իմ մընա՛յս	
դու վրս իրվա՛յս	դուք ըք իրվա՛յս	դու վրս մընա՛յս	
ա՛ն ա իրվա՛յս	ինդուք ըն իրվա՛յս	ա՛ն ա մընա՛յս	

մենք՝ իք՝ մընա՛յս
դուք ըք մընա՛յս
ինդուք ըն մընա՛յս

Անցյալ անկատար

իրվա՛յ իմ լէ	իրվա՛յ իք՝ լէ	մընա՛յ իմ լէ	մընա՛յ իք՝ լէ
իրվա՛յ իս լէ	իրվա՛յ իք՝ լէ	մընա՛յ իս լէ	մընա՛յ իք՝ լէ
իրվա՛յս ա լէ	իրվա՛յ ին լէ	մընա՛յս ա լէ	մընա՛յ ին լէ

կամ

ես իմ լէ իրվա՛յս	մենք՝ իք՝ լէ իրվա՛յս
դու վրս լէ իրվա՛յս	դուք ըք լէ իրվա՛յս
ա՛ն ա լէ իրվա՛յս	ինդուք ըն լէ իրվա՛յս
ես իմ լէ մընա՛յս	մենք՝ իք՝ լէ մընա՛յս
դու վրս լէ մընա՛յս	դուք ըք լէ մընա՛յս
ա՛ն ա լէ մընա՛յս	ինդուք ըն լէ մընա՛յս

Ապառնի

իրվիլա՛ցուկ	ըմ ըք	մընըլա՛ցուկ	ըմ	ըք
իրվիլա՛սկան	ըս ըք	մընըլա՛սկան	ըս	ըք
իրվիլա՛ցկուն	ա ըն	մընըլա՛ցկուն	ա	ըն

Անցյալի ապառնի

իրվիլա՛ցուկ	ըմ լէ ըք լէ	մընըլա՛ցուկ	ըմ լէ	ըք լէ
իրվիլա՛սկան	ըս լէ ըք լէ	մընըլա՛սկան	ըս լէ	ըք լէ
իրվիլա՛ցկուն	ա լէ ըն լէ	մընըլա՛ցկուն	ա լէ	ըն լէ

Հարակատարյալ

իրվա՛հած եմ	իրվա՛հած եք	մընա՛հած եմ	մընա՛հած եք
իրվա՛հած ես	իրվա՛հած եք	մընա՛հած ես	մընա՛հած եք
իրվա՛հած է	իրվա՛հած են	մընա՛հած է	մընա՛հած են

Անցյալի հարակատարյալ

իրվա՛հած էի	իրվա՛հած էք	մընա՛հած էի	մընա՛հած էք
իրվա՛հած էիր	իրվա՛հած էք	մընա՛հած էիր	մընա՛հած էք
իրվա՛հած էր	իրվա՛հած էին	մընա՛հած էր	մընա՛հած էին

Անցյալ կատարյալ

իրվա՛հալ եմ	իրվա՛հալ եք	մընա՛հալ եմ	մընա՛հալ եք
իրվա՛հալ ես	իրվա՛հալ եք	մընա՛հալ ես	մընա՛հալ եք
իրվա՛հալ է	իրվա՛հալ են	մընա՛հալ է	մընա՛հալ են

Ըղձական եղանակ

Ապառնի

իրվամ	իրվաք	մընա՛մ	մընա՛ք
իրվաս	իրվաք	մընա՛ս	մընա՛ք
իրվա	իրվան	մընա՛	մընա՛ն

Անցյալի ապառնի

իրվամ էի	իրվաք էի	մընա՛մ էի	մընա՛ք էի
իրվաս էի	իրվաք էի	մընա՛ս էի	մընա՛ք էի
իրվա էի	իրվան էի	մընա՛ էի	մընա՛ն էի

Պայմանական եղանակ

Ապառնի

իրվա՛լ եմ	իրվալ եք	մընա՛լ եմ	մընա՛լ եք
իրվալ ես	իրվալ եք	մընա՛լ ես	մընա՛լ եք
իրվալ է	իրվալ են	մընա՛լ է	մընա՛լ են

Անցյալի ապառնի

իրվա՛լ էի	իրվալ էք	մընա՛լ էի	մընա՛լ էք
իրվալ էիր	իրվալ էք	մընա՛լ էիր	մընա՛լ էք
իրվալ էր	իրվալ էին	մընա՛լ էր	մընա՛լ էին

Հարկադրական եղանակ

Ապառնի

մա՛տիլ իրվամ	մա՛տիլ իրվաք	մա՛տիլ մընա՛մ	մա՛տիլ մընա՛ք
մա՛տիլ իրվաս	մա՛տիլ իրվաք	մա՛տիլ մընա՛ս	մա՛տիլ մընա՛ք
մա՛տիլ իրվա	մա՛տիլ իրվան	մա՛տիլ մընա՛	մա՛տիլ մընա՛ն

Անցյալի ապառնի

մա՛տիլ ԷրվԱմ լէ	մա՛տիլ ԷրվԱք՝ լէ
մա՛տիլ ԷրվԱս լէ	մա՛տիլ ԷրվԱք՝ լէ
մա՛տիլ ԷրվԱ լէ	մա՛տիլ ԷրվԱն լէ
մա՛տիլ մընա՛մ լէ	մա՛տիլ մընա՛ք լէ
մա՛տիլ մընա՛ս լէ	մա՛տիլ մընա՛ք լէ
մա՛տիլ մընա՛ լէ	մա՛տիլ մընա՛ն լէ

Հրամայական եղանակ

Ներկա

Իրվա՛ց, Իրվա՛ցիք՝	մընա՛ց, մընա՛ցիք՝

Անցյալ

Իրվա՛ց լէ, Իրվա՛ցիք՝ լէ	մընա՛ց լէ, մընա՛ցիք՝ լէ

Հորորդ խոնարհում

304. Այս խոնարհման են ենթարկվում -ան || -ան *սոսկածանց ունեցող բայերը, ինչպես օրինակ՝ գիղա՛նիլ, գըրմա՛նիլ, լըղա՛նիլ, լըրա՛նիլ, ըրխա՛նիլ, լիսա՛նիլ, լիվա՛նիլ, հըսա՛նիլ, հըվա՛նիլ «հովանալ», մըսա՛նիլ, սըվա՛նիլ, փըտա՛նիլ և այլն։*

Այս խոնարհման բայերի հարակատար դերբայը ունենում է -ահած || -ահած, *կատարյալը՝* -ահալ || -ահալ *վերջավորությունները (երրորդ խոնարհման բայերի նման), բայց անկատար դերբայը կազմվում է* -իլ *վերջավորություն ունեցող պարզ բայերի նման։ Ենթակայական դերբայի վերջավորությունն է* -ուղ, *որ ավելանում է բայահիմքի վրա, ինչպես՝* ըրխա՛նուղ *«ուրախացող»,* սըտա՛նուղ *«ստացող»,* գըրմա՛նուղ *«գարմացող» և այլն։ Հրամայական եղանակի ներկայի եզակին կազմվում է երրորդ խոնարհման բայերի նման, այսինքն՝* -աց || -ան *վերջավորությամբ, որը ավելանում է ոչ թե բայահիմքին, այլ՝ բայարմատին, իսկ հոգնակին կազմվում է բայահիմքից՝* -ի՛ցիք՝ *վերջավորությամբ, որտեղ շեշտը վերջընթեր է, այդ պատճառով էլ* -ան || -ան *սոսկածանցների ձայնավորները հնչյունափոխվում են* ը || ի *հնչյունների։ Մյուս բոլոր ձևերում տարբերություններ չունի այլ խոնարհումներից։ Ահա այս խոնարհման պատկերը.*

Դերբայներ

Անորոշ—	զբրմա՛նիլ	լիվա՛նիլ
Անկատ.—	զբրմընիս ‖ զբրմընիլ	լիվինիս ‖ լիվինիլ
Ապառնի—	զբրմընլա՛ցուկ, զբրմընլա՛սկան, զբրմընլա՛ցկուն	լիվինլա՛ցուկ, լիվինլա՛սկան, լիվինլա՛ցկուն
Հարակ.—	զբրմա՛հած	լիվա՛հած
Կատար.—	զբրմա՛հալ	լիվա՛հալ
Ենթակ.—	զբրմա՛նուղ	լիվա՛նուղ
Ժխտական—	զբրմա՛նի	լիվա՛նի

Սահմանական եղանակ

Ներկա

զբրմընիլ իմ	զբրմընիլ իք՝	լիվինիլ իմ	լիվինիլ իք՝
զբրմընիլ իս	զբրմընիլ իք՝	լիվինիլ իս	լիվինիլ իք՝
զբրմընիս ա	զբրմընիլ ին	լիվինիս ա	լիվինիլ ին

Կամ

ես իմ զբրմընիս	մենք՝ իք՝ զբրմընիս
դու վրս զբրմընիս	դուք ըք զբրմընիս
ա՛ն ա զբրմընիս	ինդուք ըն զբրմընիս
ես իմ լիվինիս	մենք՝ իք՝ լիվինիս
դու վրս լիվինիս	դուք ըք լիվինիս
ա՛ն ա լիվինիս	ինդուք ըն լիվինիս

Անցյալ անկատար

զբրմընիլ իմ լէ	զբրմընիլ իք՝ լէ	լիվինիլ իմ լէ	լիվինիլ իք՝ լէ
զբրմընիլ իս լէ	զբրմընիլ իք՝ լէ	լիվինիլ իս լէ	լիվինիլ իք՝ լէ
զբրմընիս ա լէ	զբրմընիլ ին լէ	լիվինիս ա լէ	լիվինիլ ին լէ

Կամ

ես իմ լէ զբրմընիս	մենք՝ իք՝ լէ զբրմընիս
դու վրս լէ զբրմընիս	դուք ըք լէ զբրմընիս
ա՛ն ա լէ զբրմընիս	ինդուք ըն լէ զբրմընիս
ես իմ լէ լիվինիս	մենք՝ իք՝ լէ լիվինիս
դու վրս լէ լիվինիս	դուք ըք լէ լիվինիս
ան ա լէ լիվինիս	ինդուք ըն լէ լիվինիս

Ապառնի

զբրմընլա՛ցուկ	ըմ ըք	լիվինլա՛ցուկ	ըմ ըք
զբրմընլա՛սկան	ըս ըք	լիվինլա՛սկան	ըս ըք
զբրմընլա՛ցկուն	ա ըն	լիվինլա՛ցկուն	ա ըն

Անցյալի ապառնի

զբրմընլա՛ցուկ	ըմ լէ ըք լէ	լիվինլա՛ցուկ	ըմ լէ ըք լէ
զբրմընլա՛սկան	ըս լէ ըք լէ	լիվինլա՛սկան	ըս լէ ըք լէ
զբրմընլա՛ցկուն	ա լէ ըն լէ	լիվինլա՛ցկուն	ա լէ ըն լէ

Հարակատարվաղակատար

զբրմա՛հած ըմ	զբրմա՛հած ըք	լիվա՛հած ըմ	լիվա՛հած ըք
զբրմա՛հած ըս	զբրմա՛հած ըք	լիվա՛հած ըս	լիվա՛հած ըք
զբրմա՛հած ա	զբրմա՛հած ըն	լիվա՛հած ա	լիվա՛հած ըն

Անցյալի հարակատարվաղակատար

զբրմա՛հած ըմ լէ	զբրմա՛հած ըք լէ	լիվա՛հած ըմ լէ	լիվա՛հած ըք լէ
զբրմահած ըս լէ	զբրմահած ըք լէ	լիվա՛հած ըս լէ	լիվա՛հած ըք լէ
զբրմահած ա լէ	զբրմահած ըն լէ	լիվա՛հած ա լէ	լիվա՛հած ըն լէ

Անցյալ կատարյալ

զբրմահալ ըմ	զբրմահալ ըք	լիվա՛հալ ըմ	լիվա՛հալ ըք
զբրմահալ ըս	զբրմահալ ըք	լիվա՛հալ ըս	լիվա՛հալ ըք
զբրմահալ ա	զբրմահալ ըն	լիվահալ ա	լիվա՛հալ ըն

Ըղձական եղանակ

Ապառնի

զբրմա՛նիմ	զբրմա՛նիք,	լիվա՛նիմ	լիվա՛նիք,
զբրմա՛նիս	զբրմա՛նիք,	լիվա՛նիս	լիվա՛նիք,
զբրմա՛նի	զբրմա՛նին	լիվա՛նի	լիվանին

Անցյալի ապառնի

զբրմա՛նիմ լէ	զբրմա՛նիք, լէ	լիվա՛նիմ լէ	լիվա՛նիք, լէ
զբրմա՛նիս լէ	զբրմա՛նիք, լէ	լիվա՛նիս լէ	լիվա՛նիք, լէ
զբրմա՛նի լէ	զբրմա՛նին լէ	լիվա՛նի լէ	լիվա՛նին լէ

Պայմանական եղանակ

Ապառնի

զբրմանիլ իմ	զբրմա՛նիլ իք,	լիվա՛նիլ իմ	լիվա՛նիլ իք,
զբրմա՛նիլ իս	զբրմա՛նիլ իք,	լիվա՛նիլ իս	լիվա՛նիլ իք,
զբրմա՛նիլ ա	զբրմա՛նիլ ին	լիվա՛նիլ ա	լիվա՛նիլ ին

Անցյալի ապառնի

զբրմանիլ իմ լէ	զբրմանիլ իք, լէ	լիվա՛նիլ իմ լէ	լիվա՛նիլ իք, լէ
զբրմանիլ իս լէ	զբրմանիլ իք, լէ	լիվանիլ իս լէ	լիվա՛նիլ իք, լէ
զբրմանիլ ա լէ	զբրմանիլ ին լէ	լիվանիլ ա լէ	լիվա՛նիլ ին լէ

Հարկադրական եղանակ

Ապառնի

մա՛տիլ զբրմա՛նիմ	մա՛տիլ զբրմա՛նիք,
մա՛տիլ զբրմա՛նիս	մա՛տիլ զբրմա՛նիք,
մա՛տիլ զբրմա՛նի	մա՛տիլ զբրմա՛նին
մա՛տիլ լիվա՛նիմ	մա՛տիլ լիվա՛նիք,
մա՛տիլ լիվա՛նիս	մա՛տիլ լիվա՛նիք,
մա՛տիլ լիվա՛նի	մա՛տիլ լիվա՛նին

Անցյալի ապառնի

մա՛տիլ զբրմա՛նիմ լէ	մա՛տիլ զբրմա՛նիք, լէ
մա՛տիլ զբրմա՛նիս լէ	մա՛տիլ զբրմա՛նիք, լէ
մա՛տիլ զբրմանի լէ	մա՛տիլ զբրմա՛նին լէ
մա՛տիլ լիվա՛նիմ լէ	մա՛տիլ լիվա՛նիք, լէ
մա՛տիլ լիվա՛նիս լէ	մա՛տիլ լիվա՛նիք, լէ
մա՛տիլ լիվա՛նի լէ	մա՛տիլ լիվա՛նին լէ

Հրամայական եղանակ

Ներկա

զբրմա՛ց, զբրմընէցիք,	լիվա՛ց, լիվինէցիք,

Անցյալ

զբրմա՛ց լէ, զբրմընէցիք, լէ	լիվա՛ց լէ, լիվինէցիք, լէ

305. Այս խոնարհման են ենթարկվում -ԷՆ *սոսկածանց ունեցող բայերը։ Այստեղ խմբված են հին հայերենի* -ան- *բայածանցը ունեցող չեզոք սեռի բայերը. այսպես օրինակ՝ բըզմէնիլ, բիձրէնիլ, բիբիքէնիլ, դըռնէնիլ, թիթիվէնիլ, ծընդրըէնիլ, հըռէնիլ, հըսէնիլ, հիվինդէնիլ, մըտրկէնիլ, նիղէնիլ, սըվէնիլ և այլն։ Բացառություն է կազմում միայն* սիգէ՛նիլ *«հագնել» բայը, որ առաջացած լինելով հին հայերենի* զգենուլ *ներգործական սեռի բայից, բարբառային ձևում* -ԷՆ *բայածանցը ունենալով, անալոգիայով մտել է այս խոնարհման մեջ։*

Այս խոնարհման պատկանող բայերը իրենց հարակատար դերբայը կազմում են -իյած, *կատարյալը՝* -իյալ *վերջավորություններով, որոնք ավելանում են բայարմատին։ Ենթակայական դերբայը կազմվում է չորրորդ խոնարհման բայերի նման։ Հրամայական եզանակի ներկա ժամանակի եզակի ձևը կազմվում է* -էց *վերջավորությամբ, որը ավելանում է բայարմատին. ինչպես օրինակ՝* բիբիքէ՛ց *«բորբիկացիր»,* թիթիվէ՛ց *«թևթևացիր»,* սիգէ՛ց *«հագիր»,* հըռէ՛ց *«հեռացիր» և այլն։ Հրամայականի հոգնակին կազմվում է երկու ձևով. մեկ դեպքում եզակիի ձևին ավելանում է* -իք՛ *հոգնակերտը՝ ինչպես՝* թիթիվէ՛ցիք *«թևթևացեք»* հըռէ՛ցիք՛ *«հեռացեք» և այլն, իսկ մյուս դեպքում՝ բայահիմքին ավելանում է* -է՛ցիք՛ *վերջավորությունը, ինչպես՝* թիթիվինէ՛ցիք, հըռընէ՛ցիք՛ *և այլն, այսինքն վերցվում է ներկայի հիմքը։*

Ահա այս բայերի խոնարհման պատկերը։

Դերբայներ

Անորոշ—	*բիձրէնիլ*	*հըռէնիլ*
Անկատ.—	*բիձրինէս ‖ բիձրինիլ*	*հըռընէս ‖ հըռընիլ*
Ապառնի—	*բիձրինլա՛ցուկ, բիձրինլա՛սկան, բիձրինլա՛ցկուն*	*հըռընլա՛ցուկ, հըռընլա՛սկան, հըռընլա՛ցկուն*
Հարակ.—	*բիձրի՛յած*	*հըռի՛յած*
Կատար.—	*բիձրի՛յալ*	*հըռի՛յալ*
Ենթակ.—	*բիձրէ՛նուղ*	*հըռէ՛նուղ*
Ժխտական—	*բիձրէ՛նի*	*հըռէ՛նի*

Սահմանական եղանակ

Ներկա

բիձրինկ՛ իմ	բիձրինկ՛ իք՛	հրաընկ՛ իմ	հրաընկ՛ իք՛
բիձրինկ՛ իս	բիձրինկ՛ իք՛	հրաընկ՛ իս	հրաընկ՛ իք՛
բիձրինկ՛ ա	բիձրինկ՛ ին	հրաընկ՛ ա	հրաընկ՛ ին

կամ

կ՛ իս իմ բիձրինկ՛ ես	մ՛ իք՛ իք՛ բիձրինկ՛ ես
դու՛ վրա բիձրինկ՛ ես	դու՛ ք ըք բիձրինկ՛ ես
ա՛ն ա բիձրինկ՛ ես	ի՛նդուք ըն բիձրինկ՛ ես
կ՛ իս իմ հրաընկ՛ ես	մ՛ իք՛ իք՛ հրաընկ՛ ես
դու՛ վրա հրաընկ՛ ես	դու՛ ք ըք հրաընկ՛ ես
ա՛ն ա հրաընկ՛ ես	ի՛նդուք ըն հրաընկ՛ ես

Անցյալ անկատար

բիձրինկ՛ իմ լէ	բիձրինկ՛ իք՛ լէ	հրաընկ՛ իմ լէ	հրաընկ՛ իք՛ լէ
բիձրինկ՛ իս լէ	բիձրինկ՛ իք՛ լէ	հրաընկ՛ իս լէ	հրաընկ՛ իք՛ լէ
բիձրինկ՛ ա լէ	բիձրինկ՛ ին լէ	հրաընկ՛ ա լէ	հրաընկ՛ ին լէ

կամ

կ՛ իս իմ լէ բիձրինկ՛ ես	մ՛ իք՛ իք՛ լէ բիձրինկ՛ ես
դու՛ վրա լէ բիձրինկ՛ ես	դու՛ ք ըք լէ բիձրինկ՛ ես
ա՛ն ա լէ բիձրինկ՛ ես	ի՛նդուք ըն լէ բիձրինկ՛ ես
կ՛ իս իմ լէ հրաընկ՛ ես	մ՛ իք՛ իք՛ լէ հրաընկ՛ ես
դու՛ վրա լէ հրաընկ՛ ես	դու՛ ք ըք լէ հրաընկ՛ ես
ա՛ն ա լէ հրաընկ՛ ես	ի՛նդուք ըն լէ հրաընկ՛ ես

Ապառնի

բիձրինկ՛ ա՛ցուկ	իմ ըք	հրաընկ՛ ա՛ցուկ	իմ ըք
բիձրինկ՛ ա՛սկան	իս ըք	հրաընկ՛ ա՛սկան	իս ըք
բիձրինկ՛ ա՛ցկուն	ա ըն	հրաընկ՛ ա՛ցկուն	ա ըն

Անցյալի ապառնի

բիձրինկ՛ ա՛ցուկ	իմ լէ ըք լէ	հրաընկ՛ ա՛ցուկ	իմ լէ ըք լէ
բիձրինկ՛ ա՛սկան	իս լէ ըք լէ	հրաընկ՛ ա՛սկան	իս լէ ըք լէ
բիձրինկ՛ ա՛ցկուն	ա լէ ըն լէ	հրաընկ՛ ա՛ցկուն	ա լէ ըն լէ

440—10

Հարակատարյալ

բիձրկյած եմ	բիձրկյած ենք	հրոկյած եմ	հրոկյած ենք
բիձրկյած ես	բիձրկյած եք	հրոկյած ես	հրոկյած եք
բիձրկյած է	բիձրկյած են	հրոկյած է	հրոկյած են

Անցյալի հարակատարյալ

բիձրկյած էի	բիձրկյած էինք	հրոկյած էի	հրոկյած էինք
բիձրկյած էիր	բիձրկյած էիք	հրոկյած էիր	հրոկյած էիք
բիձրկյած էր	բիձրկյած էին	հրոկյած էր	հրոկյած էին

Անցյալ կատարյալ

բիձրկյալ եմ	բիձրկյալ ենք	հրոկյալ եմ	հրոկյալ ենք
բիձրկյալ ես	բիձրկյալ եք	հրոկյալ ես	հրոկյալ եք
բիձրկյալ է	բիձրկյալ են	հրոկյալ է	հրոկյալ են

Ըղձական եղանակ

Ապառնի

բիձրէնիմ	բիձրէնիք՛	հրոէնիմ	հրոէնիք՛
բիձրէնիս	բիձրէնիք՛	հրոէնիս	հրոէնիք,
բիձրէնի	բիձրէնին	հրոէնի	հրոէնին

Անցյալի ապառնի

բիձրէնիմ լէ	բիձրէնիք՛ լէ	հրոէնիմ լէ	հրոէնիք, լէ
բիձրէնիս լէ	բիձրէնիք՛ լէ	հրոէնիս լէ	հրոէնիք, լէ
բիձրէնի լէ	բիձրէնին լէ	հրոէնի լէ	հրոէնին լէ

Պայմանական եղանակ

Ապառնի

բիձրէնիլ իմ	բիձրէնիլ իք՛	հրոէնիլ իմ	հրոէնիլ իք,
բիձրէնիլ իս	բիձրէնիլ իք՛	հրոէնիլ իս	հրոէնիլ իք՛
բիձրէնիլ ա	բիձրէնիլ ին	հրոէնիլ ա	հրոէնիլ ին

Անցյալի ապառնի

բիձրէնիլ իմ լէ	բիձրէնիլ իք՛ լէ	հրոէնիլ իմ լէ	հրոէնիլ իք, լէ
բիձրէնիլ իս լէ	բիձրէնիլ իք՛ լէ	հրոէնիլ իս լէ	հրոէնիլ իք, լէ
բիձրէնիլ ա լէ	բիձրէնիլ ին լէ	հրոէնիլ ա լէ	հրոէնիլ ին լէ

Հարկադրական եղանակ

Ապառնի

մա՛տիլ բիձրէ՛նիմ	մա՛տիլ բիձրէ՛նիք,
մա՛տիլ բիձրէ՛նիս	մա՛տիլ բիձրէ՛նիք՝
մա՛տիլ բիձրէ՛նի	մա՛տիլ բիձրէ՛նին
մա՛տիլ հրոէ՛նիմ	մա՛տիլ հրոէ՛նիք,
մա՛տիլ հրոէ՛նիս	մա՛տիլ հրոէ՛նիք՝
մա՛տիլ հրոէ՛նի	մա՛տիլ հրոէ՛նին

Անցյալի ապառնի

մա՛տիլ բիձրէ՛նիմ լէ	մա՛տիլ բիձրէ՛նիք, լէ
մա՛տիլ բիձրէ՛նիս լէ	մա՛տիլ բիձրէ՛նիք, լէ
մա՛տիլ բիձրէ՛նի լէ	մա՛տիլ բիձրէ՛նին լէ
մա՛տիլ հրոէ՛նիմ լէ	մա՛տիլ հրոէ՛նիք, լէ
մա՛տիլ հրոէ՛նիս լէ	մա՛տիլ հրոէ՛նիք, լէ
մա՛տիլ հրոէ՛նի լէ	մա՛տիլ հրոէ՛նին լէ

Հրամայական եղանակ

Ներկա

բիձրէ՛ց—բիձրէ՛ցիք՝, բիձրինէ՛ցիք՝ հրոէ՛ց—հրոէ՛ցիք՝, հրոընէ՛ցիք,

Անցյալ

բիձրէ՛ց լէ	հրոէ՛ց լէ
բիձրէ՛ցիք, լէ, բիձրինէ՛ցիք՝ լէ	հրոէ՛ցիք՝ լէ, հրոընէ՛ցիք՝ լէ

Պատճառական բայեր

306. Բայերի պատճառական կերպը կազմվում է -ցանիլ ‖ -ցա՛նիլ վերջավորություններով, որոնք ավելանում են բայարմատի վրա։ Վերջավորություններից -ցանիլ ստանում են բայարմատում թեթև, իսկ -ցանիլ՝ ծանր ձայնավորներ ունեցող բայերը։ Քանի որ շեշտը վերջավորություններում վերջընթեր է, ուստի բայարմատի ձայնավորները հնչյունափոխվում են համաձայն § 287-ի, ինչպես օրինակ՝ ըպրըցա՛նիլ, բէրիկցա՛նիլ, կըկըղցա՛նիլ, պըրընցա՛նիլ, հիլիցա՛նիլ, վըխըցա՛նիլ և այլն։

Դերբայների կազմությունը նույնն է չորրորդ և հինգերորդ խոնարհման բայերի հետ, բացառությամբ հարակատար և կատար-

լալ դերբայների, որոնցից առաջինն ունի -ցուած, իսկ երկրորդը՝ -ցուալ վերջավորությունը։ Դերբայական այդ վերջավորությունները բաղադրյալ են. ցու-ն պատճառական կերպ արտահայտող մասնիկ է, իսկ ալ-ը և ած-ը դերբայական վերջավորություններ են, որ հատուկ են նաև մյուս խոնարհման բայերի հարակատար և կատարյալ դերբայներին։ Կատարյալ դերբայի -ցուալ վերջավորությունը գալիս է հին հայերենի—ցուցեալ վերջավորությունից, ուր ընկել է երկրորդ ց-ն և եա երկբարբառը փոխվել է ա-ի։ Հարակատար դերբայի -ցուած վերջավորությունը առաջացել է հին հայերենի -ցուցած վերջավորությունից՝ նույնպես ց-ի անկմամբ։

Հրամայական եղանակի ներկա ժամանակի եզակիի վերջավորությունն է -ցուր, իսկ հոգնակիինը՝ -ցընե՛ցիք՛ ‖ ցինե՛ցիք՛, առաջինը ծանր, իսկ երկրորդը՝ թեթև ձայնավորներ ունեցող բայահիմքերի համար։ Մյուս եղանակների կազմության մեջ տարբերություններ չկան։ Ահա պատճառական բայի խոնարհման մի օրինակ.

Դերբայներ

Անորոշ.— հրմընչցա՛նել «համաչեցնել»
Անկատ.— հրմընչցընիս ‖ հրմընչցընել
Ապառնի— հրմընչցընլա՛ցուկ, հրմընչցընլա՛սկան, հրմընչցընլա՛ցկուն
Հարակ.— հրմընչցուած
Կատար.— հրմընչցուալ
Ենթակ.— հրմընչցա՛նուղ
Ժխտման— հրմընչցա՛նի

Սահմանական եղանակ

Ներկա

հրմընչցընել իմ	կամ	ես իմ հրմընչցընիս
հրմընչցընել ես	»	դու վրս հրմընչցընիս
հրմընչցընիս ա	»	ա՛ն ա հրմընչցընիս
հրմընչցընել իք՛	»	մե՛ք՛ իք՛ հրմընչցընիս
հրմընչցընել իք՛	»	դո՛ւք ըք հրմընչցընիս
հրմընչցընել ին	»	ի՛նդուք ըն հրմընչցընիս

Անցյալ անկատար

հրմընչցընել իմ լէ	կամ	ես իմ լէ հրմընչցընիս
հրմընչցընել ես լէ	»	դու վրս լէ հրմընչցընիս

հրմընչցընկիս ա լէ կամ ա՛ն ա լէ հրմընչցընկիս

հրմընչցընկիլ իք՛ լէ » մ՛ք՛ իք՛ լէ հրմընչցընկիս
հրմընչցընկիլ իք՛ լէ » դուք ըք լէ հրմընչցընկիս
հրմընչցընկիլ ին լէ » ինդուք՝ ըն լէ հրմընչցընկիս

Ապառնի

հրմընչցընկա՛ցուկ	ըմ	հրմընչցընկա՛ցուկ	ըք
հրմընչցընկա՛սկան	ըս	հրմընչցընկա՛սկան	ըք
հրմընչցընկա՛ցկուն	ա	հրմընչցընկա՛ցկուն	ըն

Անցյալի ապառնի

հրմընչցընկա՛ցուկ	ըմ լէ	հրմընչցընկա՛ցուկ	ըք լէ
հրմընչցընկա՛սկան	ըս լէ	հրմընչցընկա՛սկան	ըք լէ
հրմընչցընկա՛ցկուն	ա լէ	հրմընչցընկա՛ցկուն	ըն լէ

Հարակատար-վաղակատար

հրմընչցուած ըմ	հրմընչցուած ըք
հրմընչցուած ըս	հրմընչցուած ըք
հրմընչցուած ա	հրմընչցուած ըն

Անցյալի հարակատար-վաղակատար

հրմընչցուած ըմ լէ	հրմընչցուած ըք լէ
հրմընչցուած ըս լէ	հրմընչցուած ըք լէ
հրմընչցուած ա լէ	հրմընչցուած ըն լէ

Անցյալ կատարյալ

հրմընչցուալ ըմ	հրմընչցուալ ըք
հրմընչցուալ ըս	հրմընչցուալ ըք
հրմընչցուալ ա	հրմընչցուալ ըն

Ըղձական եղանակ

Ապառնի		Անցյալի ապառնի	
հրմընչցանիմ	հրմընչցանիք՛	հրմընչցանիմ լէ	հրմընչցանիք՛ լէ
հրմընչցանիս	հրմընչցանիք՛	հրմընչցանիս լէ	հրմընչցանիք՛ լէ
հրմընչցանի	հրմընչցանին	հրմընչցանի լէ	հրմընչցանին լէ

Պայմանական եղանակ

Ապառնի

հրմընչցա՛նիլ իմ	հրմընչցա՛նիլ իք՛
հրմընչցա՛նիլ իս	հրմընչցա՛նիլ իք՛
հրմընչցա՛նիլ ա	հրմընչցա՛նիլ ին

Անցյալի ապառնի

հրմընչցա՛նիլ իմ լէ	հրմընչցա՛նիլ իք՛ լէ
հրմընչցա՛նիլ իս լէ	հրմընչցա՛նիլ իք՛ լէ
հրմընչցա՛նիլ ա լէ	հրմընչցա՛նիլ ին լէ

Հարկադրական եղանակ

Ապառնի

մա՛տիլ հրմընչցա՛նիմ	մա՛տիլ հրմընչցա՛նիք,
մա՛տիլ հրմընչցա՛նիս	մա՛տիլ հրմընչցա՛նիք՛
մա՛տիլ հրմընչցա՛նի	մա՛տիլ հրմընչցա՛նին

Անցյալի ապառնի

մա՛տիլ հրմընչցա՛նիմ լէ	մա՛տիլ հրմընչցա՛նիք, լէ
մա՛տիլ հրմընչցա՛նիս լէ	մա՛տիլ հրմընչցա՛նիք՛ լէ
մա՛տիլ հրմընչցա՛նի լէ	մա՛տիլ հրմընչցա՛նին լէ

Հրամայական եղանակ

Ներկա

հրմընչցո՛ւր	հրմընչցընէ՛ցիք,

Անցյալ

հրմընչցո՛ւր լէ	հրմընչցընէ՛ցիք՛ լէ

Ծանոթություն.— Ներգործական սեռի բայերի պատճառականը կազմվում է տալ բայի հարադրությամբ, ինչպես օրինակ՝ ա՛րիլ տալ «անել տալ», բիրիլ տալ, բիրեի՛լ տալ «փորել տալ» և այլն: Այս հարադրություններում խոնարհվում է միայն տալ բայը, որը հարադրության մեջ վերջադաս է և օժանդակ բայից հետո. օրինակ՝ ա՛րիլ իմ տայս «անել եմ տալիս», ա՛րիլ ա տայս «անել է տալիս», ա՛րիլ իմ տըվծ «արել եմ տվել» և այլն:

Կրավորական բայեր

307. Կրավորական սեռ են ընդունում միայն ներգործական բայերը։ Այդ բայերի կրավորականը կազմվում է վ ածանցով, որը դրվում է անորոշ դերբայի -ի վերջավորությունից առաջ. ինչպես՝ մա՛նդի-մա՛նդվի «*կոտրվել, ջարդվել*», հա՛խտի-հա՛խտվի, շի՛-բի-շի՛բվի, գիրի՛-գիրվի՛, լիցցի՛-լիցցվի՛ *և այլն։*

Կրավորական սեռի բայերի խոնարհումը նույնն է համապատասխան խոնարհումների հետ, միայն դերբայական և եղանակային ձևերի վերջավորություններից առաջ դրվում է վ կրավորական ածանցը. օրինակ՝ անորոշ դրբ. մա՛նդվի, *անկ.* մընդվի՛ս ‖ մընդվի՛յ, *հարակ.* մա՛նդված, *կատար.* մա՛նդվալ, *ապառնի,* մընդվը-լա՛ցուկ, մընդվըլա՛սկան, մընդվըլա՛ցկուն, *ենթ.* մա՛նդվուղ, *ժխտ.* մա՛նդվի, *հրամ. եզ.* մա՛նդվա(լ՝), մընդվէ՛ցիք՛(լ՝)։

Ավելորդ ենք համարում տալու խոնարհման աղյուսակը։

Ժխտական խոնարհում

308. Բայի ժխտական խոնարհումը սահմանական եղանակի ժամանակներում կատարվում է դերբայների և չիմ, չիս, չի, չիք՛ չին. չիմ լ՝, չիս լ՝, չի լ՝, չիք՛ լ՝, չին լ՝ *օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ։*

*Ներկա և անցյալ անկատար ժամանակներում օգտագործվում է անկատար դերբայի ետադաս ձևը (*ըղի՛ս չիմ, ըղի՛ս չիս *և այլն)։ Օժանդակ բայի նախադաս գործածությունը չի փոխում անկատար դերբայի ձևը (*իս չիմ ըղի՛ս, դու չիս ըղիս, ան չի ըղիս՛, միք՛ չիք՛ ըղիս *և այլն)։*

Անցյալ կատարյալում, երբ կատարյալ դերբայը օժանդակ բայից նախադաս է, նրա վերջավորության լ հնչյունը ընկնում է. ինչպես՝ ա՛ղա չիմ, ա՛ղա չիս, ա՛ղա չի «*չաղացի, չաղացիր, չաղաց*» *և այլն. մինչդեռ ետադաս գործածության դեպքում լ-ն պահպանվում է, ինչպես՝* իս չիմ ա՛ղալ, դու չիս ա՛ղալ, ան չի ա՛ղալ, միք՛ չիք՛ ա՛ղալ *և այլն։*

309. Ըղձական եղանակը ժխտական խոնարհման ձևեր չունի։ Այս եղանակի ժխտականի քերականական իմաստը արտահայտվում է պայմանական եղանակի ժխտական խոնարհման ձևերով։

310. Պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակները կազմվում են ժխտման դերբայով և օժանդակ բայի ժխտման ձևերով. այսպես՝ ա՛ղի չիմ, ա՛ղի չիս, ա՛ղի չի «*չեմ*

աղա, չես աղա, չի աղա, կամ՝ չաղամ, չաղաս, չաղա» և այլն։ Օժանդակ բայի նախադաս դրծածութեան դեպքում ժխտման դերբայը ստանում է լ ձայնորդը, որն ապացուցում է, թե այն առաջացել է անորոշ դերբայից։

311. Հարկադրական եղանակի ժամանակներում հնարավոր է ժխտական խոնարհման երկու ձև։ Առաջինը, որ կազմվում է ժխտման դերբայով, ունի հետևյալ կազմութիւնը. եղանակիչից հետո անմիջապես գալիս է դերբայական ձևը, որին հաջորդում է օժանդակ բայը. այսպես՝ մա՛տիլ ա՛ղի չիմ, մա՛տիլ ա՛ղի չիս, մա՛տիլ ա՛ղի չի և այլն։ Երկրորդ ձևում խոնարհվող բայը նառադաս է. օժանդակ բայի ժխտական ձևը դադարում է խոնարհվելուց և դառնում է ժխտական մասնիկ (չի). խոնարհվել է սկսում իմաստակիր բայը՝ ըղձական եղանակի հաստատական խոնարհմամբ. այսպես օրինակ՝ իս չի մա՛տիլ ա՛ղիմ, դու չի մա՛տիլ ա՛ղիս, ա՛ն չի մա՛տիլ ա՛ղի և այլն։

312. Արգելական հրամայականը, որ ունի երկու ժամանակ՝ ներկա և անցյալ, կազմվում է ժխտման դերբայից և ման, մաք՛ ժխտական բառերից, որոնցից առաջինը եզակի թվի, երկրորդը՝ հոգնակի թվի համար։ Արգելականի անցյալը կազմվում է ընդհանուր սկզբունքով. այսպես՝ ա՛ղի ման լե, ա՛ղի մաք՛ լե.

Ահա ժխտական խոնարհման մի օրինակ.

Դերբայներ

Անորոշ— մանդիլ «կոտրել, ջարդել»
Անկատ. — մընդիս || մընդիլ
Ապառնի— մընդըլացուկ, մընդըլական, մընդըլա՛ցկուն
Հարակ.— մա՛նդած
Կատար.— մա՛նդալ
Ենթակ.— մա՛նդուղ
Ժխտման— մա՛նդի

Սահմանական եղանակ

Ներկա		Անցյալ անկատար	
մընդիս չիմ	մընդիս չիք՛	մընդիս չիմ լե	մընդիս չիք՛ լե
մընդիս չիս	մընդիս չիք՛	մընդիս չիս լե	մընդիս չիք՛ լե
մընդիս չի	մընդիս չին	մընդիս չի լե	մընդիս չին լե

Ապառնի			Անցյալի ապառնի		
մընդըլա՛ցուկ	չիմ չիք՛	մընդըլա՛ցուկ	չիմ լէ չիք՛ լէ		
մընդըլա՛սկան	չիս չիք՛	մընդըլա՛սկան	չիս լէ չիք՛ լէ		
մընդըլա՛ցկուն	չի չին	մընդըլա՛ցկուն	չի լէ չին լէ		

Հարակատար-վաղակատար

մա՛նդած չիմ	մա՛նդած չիք՛
մա՛նդած չիս	մա՛նդած չիք՛
մա՛նդած չի	մա՛նդած չին

Անցյալի հարակատար-վաղակատար

մա՛նդած չիմ լէ	մա՛նդած չիք՛ լէ
մա՛նդած չիս լէ	մա՛նդած չիք լէ
մա՛նդած չի լէ	մա՛նդած չին լէ

Անցյալ կատարյալ

մա՛նդա չիմ	մա՛նդա չիք՛
մա՛նդա չիս	մա՛նդա չիք
մա՛նդա չի	մա՛նդա չին

կամ

ես չիմ մա՛նդալ	միք՝ չիք՛ մա՛նդալ
դու չիս մա՛նդալ	դուք չիք՝ մա՛նդալ
ան չի մա՛նդալ	ինդուք չին մա՛նդալ

Պայմանական (ըղձական) եղանակ

Ապառնի

մա՛նդի չիմ	մա՛նդի չիք՛	ես չիմ մա՛նդիլ
մա՛նդի չիս	մա՛դի չիք՛ կամ	դու չիս մա՛նդիլ
մա՛նդի չի	մա՛նդի չին	ան չի մա՛նդիլ
	միք՛ չիք՛ մա՛նդիլ	
	դուք չիք՛ մա՛նդիլ	
	ինդուք չին մանդիլ	

Անցյալի ապառնի

մա՛նդի չիմ լէ	մանդի չիք՛ յէ
մա՛դի չիս լէ	մա՛նդի չիք՛ լէ
մա՛նդի չի լէ	մա՛նդի չին լէ

կամ

իս չիմ լէ մանդիլ	միք չիք լէ մա՛նդիլ
դու չիս լէ մա՛նդիլ	դուք չիք լէ մա՛նդիլ
ան չի լէ մա՛նդիլ	ինդուք չին լէ մա՛նդիլ

Հարկադրական եղանակ

Ապառնի

մա՛տիլ մա՛նդի չիմ	մա՛տիլ մա՛նդի չիք
մա՛տիլ մա՛նդի չիս	մա՛տիլ մա՛նդի չիք
մա՛տիլ մա՛նդի չի	մա՛տիլ մա՛նդի չին

կամ

իս չի մա՛տիլ մա՛նդիմ	միք չի մատիլ մա՛նդիք
դու չի մա՛տիլ մա՛նդիս	դուք չի մատիլ մա՛նդիք
ան չի մա՛տիլ մա՛նդի	ինդուք չի մատիլ մանդին

Անցյալի ապառնի

մա՛տիլ մա՛նդի չիմ լէ	մա՛տիլ մա՛նդի չիք լէ
մա՛տիլ մա՛նդի չիս լէ	մա՛տիլ մա՛նդի չիք լէ
մա՛տիլ մա՛նդի չի լէ	մա՛տիլ մա՛նդի չին լէ

կամ

իս չի լէ մա՛տիլ մա՛նդիմ	միք չի լէ մա՛տիլ մա՛նդիք
դու չի լէ մա՛տիլ մա՛նդիս	դուք չի լէ մա՛տիլ մա՛նդիք
ան չի լէ մա՛տիլ մա՛նդի	ինդուք չի լէ մա՛տիլ մա՛նդին

Արգելական հրամայական

Ներկա

մա՛նդի ման	մա՛նդի մաք

կամ

դու մա՛ն մա՛նդիլ	դուք մա՛ք մա՛նդիլ

Անցյալ

մա՛նդի ման լէ	մա՛նդի մաք լէ

կամ

դու մա՛ն լէ մանդիլ	դուք մա՛ք լէ մա՛նդիլ

Ուսկանող բայեր

313. Առիլ «առնել, գնել»։

Անկտ. ըռիս ‖ ըռիչ՝ ապառ. ըռըլա՛ցուկ, ըռըլա՛սկան, ըռըլա՛ցկուն, հարակ. ա՛ռած. կատար. ա՛ռալ, ենթ. ա՛ռուզ, ժխտ. ա՛ռի. հրամ. եզ. առ, ա՛ռիք՛. ա՛ռ լէ, ա՛ռիք՛ լէ։

Այս բայը, որ իր բոլոր ձևերով պատկանում է առաջին խոնարհման, շեղվում է միայն հրամայականի ձևերում, որը պահպանել է հին հայերենի հրամայականի ձևը։

314. Բի՛բիլ «բերել»։

Անկտ. բիբիս ‖ բիբիչ, ապառ. բիբիլա՛ցուկ, բիբիլա՛սկան, բիբիլա՛ցկուն, հարակ. բի՛ված, կատար. բի՛ալ, ենթ. բի՛բուզ, ժխտ. բի՛բի։ Ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների և արգելական հրամայականի ձևերը կանոնավոր են։ Բուն հրամայականն է՝ բիբ, բիբէ՛ցիք, բի՛բ լէ, բիբէ՛ցիք՛ լէ։

Այս բայը նույնպես պատկանում է առաջին խոնարհման. անկանոնությունը ստեղծվել է հարակատար և կատարյալ դերբայներում բ>յ հնչյունափոխության շնորհիվ, որը բարբառիս համար խորթ չէ (տես § 216)։ Անկանոն է նաև հրամայականը, որը հին հայերենի հրամայականի ձևն է (ձայնավորների հնչյունափոխությամբ)։

315. Գիդիլ «գիտենալ»։

Անկտ. գիդիս ‖ գիդիչ, ապառ. գիդիլա՛ցուկ, գիդիլա՛սկան, գիդիլա՛ցկուն, հարակ. գի՛դիված, կատար. գիդի՛ալ, ենթ. գի՛դուզ, ժխտ. գիդի։ Ըղձական, պայմանական, հարկադրական եղանակներն ու արգելական. հրամայականը անկանոնություններ չունեն։ Բուն հրամայականն է՝ գիդէ՛ց(լէ)։ գիդէ՛ցիք՛(լէ)։

Այս բայի անկանոնությունները հարակատար, կատարյալ դերբայների և հրամայական եղանակի ձևերում են, որոնք նման են հինգերորդ խոնարհման բայերին։ Պետք է ենթադրել, որ բայը սկզբնապես ունեցել է գիդենիլ ձևը և խոնարհվել է հինգերորդ խոնարհման բայերի նման։ Հետագայում անորոշ դերբայում -ենս սոսկածանցի կորստով՝ սկսել է խոնարհվել առաջին խոնարհման բայերի օրինակով, սակայն հարակատար, կատարյալ դերբայները և հրամայականը պահել են հինգերորդ խոնարհման հատկանիշները։

316. Գուլ «գալ»։

Անկտ. գուլս ‖ գուչ, ապառ. գուլա՛ցուկ, գուլա՛սկան, գուլա՛ցկուն, հարակ. եկ՛ած, կատար. եկ՛ալ, ենթ. գո՛ւցուզ, ժխտ. գու. հրամ. եզ. լէք՛(լէ), լէ՛կիք՛(լէ)։

Այս բայի անկանոնությունները գալիս են հին հայերենից։

317. Լել «լալ, լաց լինել»։

Անկտ. լէյս ‖ լէյ, ապառ. լիլա՛ցուկ, լիլա՛սկան, լիլա՛ցկուն, հարակ. լէցած, կատար. լէցալ, ենթ. լէցուղ, ժխտ. լէ. հրամ. եղ. լէց(լէ), լէցիք՝(լէ)։

Այս բայի անկանոնությունները նույնպես գալիս են հին հայերենից։

318. Խո՛սիլ «խոսել»։

Անկտ. խուսիս ‖ խուսիյ, ապառ. խուսուլա՛ցուկ, խուսուլա՛սկան, խուսուլա՛ցկուն, հարակ. խուսիյած, կատար. խուսիյալ, ենթ. խո՛սուղ, ժխտ. խո՛սի. հրամ. եղ. խուսէց (լէ), խուսէցիք՝ (լէ)։

Ինչպես երևում է, այս բայի հարակատար, կատարյալ դերբայները և հրամայական եղանակի ձևերը ունեն հինգերորդ խոնարհման առանձնահատկությունները։

319. Կալ «կենալ»։

Անկտ. կայս, ապառ. կըլա՛ցուկ, կըլա՛սկան, կըլա՛ցկուն, հարակ. կա՛ցած, կատար. կա՛ցալ, ենթ. կա՛ցուղ, ժխտ, կա(լ). հրամ. եղ. կա՛ց (լէ), կըցէցիք, (լէ)։

Անկանոնությունները գալիս են հին հայերենից։ Այս բայը առանձին չի գործածվում, այլ կազմում է հարադրությունների բայական մասը, ինչպես օրինակ՝ վիր կալ «վեր կենալ», անց կալ «անց կենալ, անցնել» և այլն։ Խոնարհման բաղադրյալ ձևերում օժանդակ բայը միշտ դերբայական ձևից նախադաս է. ինչպես՝ անց ըմ կայս «անցնում եմ», անց ըմ կացալ «անցա» և այլն։

320. Կ՛ա՛լիլ «բռնել» <կալուլ< կալնուլ։

Անկտ. կիլի՛ս, ապառ. կիլա՛ցուկ, կիլա՛սկան, կիլա՛ցկուն, հարակ, կ՛ա՛լած, կատար. կ՛ա՛լալ, ենթ. կ՛ա՛լուղ, ժխտ. կ՛ա՛լի, հրամ. եղ. կ՛ալ (լէ), կիլէ՛ցիք, (լէ)։

Այս բայի անկանոնությունը միայն հրամայականի եզակի ձևում է։ Կ՛ալիլ բայը առանձին չի գործածվում, այլ միայն վեր կ՛ալիլ «իջեցնել, վեր բերել» հարադրության մեջ։

321. Կա՛բիլ «կարողանալ»։

Անկտ. կըրիս ‖ կըրիյ, ապառ. կըրըլա՛ցուկ, կըրըլա՛սկան, կըրըլա՛ցկուն, հարակ. կըրիյած. կատար. կըրիյալ, ենթ. կա՛ըուղ, ժխտ. կա՛ըի, հրամ. եղ. կըրէց (լէ), կըրէցիք, (լէ)։

Այս բայի անկանոնությունները նույնպես հանդես են գալիս հարակատար, կատարյալ դերբայներում և հրամայական եղանակի ձևերում. մյուս բոլոր ձևերում նա ենթարկվում է առաջին խոնարհման օրինաչափությանը. իսկ անկանոնությունը հինգերորդ

խոնարհման օրինաչափություններն են, ուստի կարելի է ենթադրել, որ կա՛րիլ բայը սկզբնապես ունեցել է կարէ՛նիլ ձևը և խոնարհվել է հինգերորդ խոնարհման բայերի նման։

322. Յէ՛ռիլ «վերցնել»։

Անկտ. յիռիս ‖ յիռիլ, ապառ. յիռիլա՛ցուկ, յիռիլա՛սկան, յիռիլա՛ցկուն, հարակ. յէռած, կատար. յէռալ, ենթ. յէռուղ, ժխտ. յէռի, հրամ. եղ. յէռ (լէ), յիռէ՛ցիք՛ (լէ)։

Այս բայը առնուլ>առիլ բայի տարբերակն է, որ հավանական է ա>է ձայնդարձով մտել է բարբառի մեջ և ապա իմաստային նրբերանգ ստացել։ Այստեղ նույնպես, ինչպես և ա՛ռիլ բայի խոնարհման մեջ, անկանոն է միայն եզակի հրամայականը։

323. Նանիլ «ընկնել»։

Անկտ. նընիս ‖ նընիլ, ապառ. նընիլա՛ցուկ, նընիլա՛սկան, նընիլա՛ցկուն, հարակ. նած, կատար. նալ, ենթ. նա՛նուղ, ժխտ. նանի. հրամ. եղ. նա՛ց (լէ), նընէ՛ցիք՛ (լէ)։

Անկանոնություն այս բայում հարակատար, կատարյալ դերբայներում և հրամայականի ձևերում է։ Մյուս բոլոր ձևերում առկա են առաջին խոնարհման հատկանիշները. ուստի հարակատար և կատարյալ դերբայները պետք է որ լինեին *նանած, *նանալ։ Այդ ձևերը ամփոփմամբ դարձել են նած, նալ։ Եզակի հրամայականը չորրորդ խոնարհման բայերի անալոգիայով վերջում ստացել է ց։

324. Նէլ «գնալ»։

Անկտ. նէյս ‖ նէյ, ապառ. նիլա՛ցուկ, նիլա՛սկան, նիլա՛ցկուն, հարակ. նիյած, կատար. նիյալ, ենթ. նէ՛ցուղ, ժխտ. նէ. հրամ. եղ. նի (լէ), նէ՛ցիք՛ (լէ)։

Այս բայի անկանոնությունները գալիս են հին հայերենից. ինչպես՝ նիյալ<գնացեալ, նիյած<գնացած, ինչպես այդ արտահայտված է հինգերորդ խոնարհման բայերում. անցյալի հիմքի ց-ն պահպանվել է նէցուղ<գնացող ենթակայական դերբայում։ Եզակի հրամայական նի ձևը ստեղծվել է ըղձական եղանակի եզակի երրորդ դեմքի նէ ձևի հետ չշփոթելու համար։

325. Տալ «տալ»։

Անկտ. տայս ‖ տայ, ապառ. տըլա՛ցուկ, տըլա՛սկան, տըլա՛ցկուն, հարակ. տըվծ, կատար. տըվծլ, ենթ. տըվծղ, ժխտ. տա. հրամ. եղ. տո՛ (լէ), տո՛ր (լէ), տըվէ՛ցիք՛ (լէ)։

Անկանոնությունները գալիս են հին հայերենից, ա>օ հնչյունափոխությունը կատարվել է շեշտի տակ։

326. Տանիլ «տանել»։

Անկտ. տընիս || տընիլ, ապառ. տընըլա՛ցուկ, տընըլա՛սկան, տընըլա՛ցկուն, հարակ. տա՛բած, կատար. տա՛բալ, ենթ. տա՛նուղ, ժխտ. տա՛նի. հրամ. եղ. տա՛ր (լէ), տընէցիք (լէ)։

Անկանոնությունները հայերենի հետ ընդհանուր են։

327. Ցուլ «տեսնել»։

Անկտ. ցուլս || ցո՛ւլ, ապառ. ցուլա՛ցուկ, ցուլա՛սկան, ցուլա՛ցկուն, հարակ. ցըէծ, կատար. ցըէլ, ենթ. ցուլ՚ցուղ, ժխտ. ցու. հրամ. եղ. տի՛ (լէ), տիս (լէ), տըսէցիք (լէ)։

Այս բայը, ինչպես ասվել է, առաջացել է հայերենի տեսանել բայից, սակայն դերբայական և եղանակային ձևերում չի պահպանել այդ ձևից և ոչ մի հատկանիշ. միայն հրամայականի ձևերում է, որ տեսնում ենք երբեմնի տեսանել-ի հետքերը։ Ամբողջությամբ բայը խոնարհվում է երկրորդ խոնարհման բայերի նման, թեև ունի և իր առանձնահատկությունները։

328. Օտիլ «ուտել»։

Անկտ. ուտիս || ուտի՛լ, ապառ. ուտուլա՛ցուկ, ուտուլա՛սկան, ուտուլա՛ցկուն, հարակ. կի՛լած, կատար. կի՛լալ, ենթ. օտուղ, ժխտ. օտի. հրամ. եղ. կէ՛ր (լէ), կիրէ՛ցիք, (լէ)։

Անկանոնությունները դարձյալ գալիս են հին հայերենից, միայն հարակատար և կատարյալ դերբայներում կատարվել է բ>յ հնչյունափոխությունը, ինչպես այդ տեղի է ունեցել նաև բի՛բիլ «բերել» բայի նույն ձևերում։

Պակասավոր բայեր

329. Եմ>իմ. էական բայի ժամանակային ձևերից բարբառս պահպանել է միայն ներկայի ձևերը, իսկ անցյալի իմաստը արտահայտելու համար օգտագործում է ներկայի ձևերի և լէ մասնիկի հարադրությամբ կազմված ձևեր (տես § 296)։

330. Կամ. ներկայի ձևերն էն՝ կամ, կաս, կա, կաք, կան։ Անցյալի ձևերը անհետացել են, դրանց իմաստը արտահայտվում է ներկայի ձևերի և լէ մասնիկի հարադրությամբ՝ կամ լէ, կաս լէ, կա լէ, կաք լէ, կան լէ։

331. Նիլ «լինել». անկտ. նիս || նիլ, ապառ. նիլա՛ցուկ, նիլա՛սկան, նիլա՛ցկուն, հարակ. լէծ, կատար. լէ(լ)։ Բացակայում են ենթակայական դերբայը և հրամայական եղանակի ձևերը։ Ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ժամանակային ձևերը կազմվում են ընդհանուր սկզբունքով։

332. Օ՛նիմ «ունեմ». Ներկա—*օնիմ, օնիս, օնի, օնիք, օնին.*
անց. անկտ. օնիմ էէ, օնիս էէ, օնի էէ, օնիք էէ, օնին էէ։

Երկրորդական բաղադրյալ ժամանակներ

333. Երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմվում են անկատար, հարակատար, ապառնի դերբայների և նիլ բայի հաբադրությամբ։ Այստեղ դնում ենք ամեն մի ձևից մեկական օրինակ։

ըսի՛ս իմ նիս— *ասելիս եմ լինում.*
ըսի՛ս իմ լէ նիս— *ասելիս էի լինում.*
ըսի՛ս իմ լեծ— *ասելիս եմ եղել.*
ըսի՛ս իմ լէ լեծ—*ասելիս էի եղել,*
ըսի՛ս նիմ— *ասելիս լինեմ.*
ըսի՛ս նիմ լէ – *ասելիս լինեի.*
ըսի՛ս իմ նիլ— *ասելիս կլինեմ.*
ըսի՛ս իմ լէ նիլ— *ասելիս կլինեի.*
մա՛տիլ ըսի՛ս նիմ— *պիտի ասելիս լինեմ.*
մա՛տիլ ըսի՛ս նիմ լէ— *պիտի ասելիս լինեի.*
ա՛սած ըմ նիս— *ասած եմ լինում,*
ա՛սած ըմ լէ նիս— *ասած էի լինում.*
ա՛սած ըմ լեծ— *ասած եմ եղել.*
ա՛սած ըմ լէ լեծ— *ասած էի եղել.*
ա՛սած նիմ— *ասած լինեմ,*
ա՛սած նիմ լէ— *ասած լինեի.*
ա՛սած ըմ նիլ— *ասած կլինեմ.*
ա՛սած ըմ լէ նիլ— *ասած կլինեի.*
մա՛տիլ ա՛սած նիմ— *պիտի ասած լինեմ.*
մա՛տիլ ա՛սած նիմ լէ— *պիտի ասած լինեի։*

ըսըլա՛ցուկ
ըսըլա՛սկան
ըսըլա՛ցկուն } *ըմ նիս— ասելու եմ լինում.*

ըսըլա՛ցուկ
ըսըլա՛սկան
ըսըլա՛ցկուն } *ըմ լէ նիս— ասելու էի լինում.*

	ասելու եմ եղել.	ասելու եմ լէծ՝
	ասելու էի եղել.	ասելու լէ լէծ՝
	ասելու լինեմ.	նիմ՝
	ասելու լինեի.	նիմ լէ՝
	ասելու կլինեմ.	նիլ՝
	ասելու կլինեի.	նիլ լէ՝
մա՛տիլ	պիտի ասելու լինեմ.	նիմ՝
մա՛տիլ	պիտի ասելու լինեի։	նիմ լէ՝

Զ. ՄԱԿԲԱՅՆԵՐ

334. Բացի բուն մակբայներից Կարճեանի բարբառում օգտագործվում են նաև թեքվող խոսքի մասերից ձևավորված մակբայներ, ինչպես օրինակ՝ քիշե՛բավ *«վաղ առավոտյան»,* վա՛խտավ *«ժամանակին»,* ըրիօ՛նաց *«երեկոյան» և այլն, կրկնավոր մակբայներ, ինչպես օրինակ՝* նիլտի-միլտի *«դատարկաբար»,* սաՙփիլ-սաՙփիլ *«խելագարի պես»,* օ՛րախ-օ՛րախ *«ուրախությամբ» և այլն, դերանուններից այն ցուցականները, որոնք կարող են գործածվել իբ-*

դև տեղի և չափի մակբայներ։ Բարբառում կան նաև փոխառյալ մակբայներ։ Այստեղ դնում ենք այդ բոլորի ոչ լրիվ ցուցակը։

ալ— այլևս
ալբանհալ — իսկույն, նույն միջոցին
ալը— էլի, դարձյալ, կրկին
ա՛լմա— էլի, նորից
ադուրդ— ճշմարիտ, ճիշտ
ա՛նջախ— հաղիվ
բիրդա՛ն—հանկարծ, հանկարծակի
բիրադի— մեկտեղ, միասին
գէժդանդէ՛ժ— հաղիվհաղ
գիսլիա— կարծես
գիրո՛նքան— գարնանը
դէս-դէն— այս ու այն կողմ
դիրէ՛ա— դեպի հա
դինջ— հանգիստ
դանդ— շիտակ, ուղիղ, ճիշտ
էդի— այդպես, այդտեղով
էնդի— այնպես
էքսոբրը— հաջորդ օրը
ըմբոնա՛ն— ամռանը
ըշանքան— աշնանը
ըրկանաց — երեկոյան
թանդա՛ն— նորից, կրկին
թա՛ղդի— շտապ, հապճեպ
իդինի, իդիանի — այդտեղով
իդուր— զուր, իզուր, պարապ տեղը
ինդիանի— այնտեղով
իատինի, իատիանի— այստեղով
իակի— ընավ
իվիլի— ավելի, առավել
իրէկի, իրէկաց— երեկ
խէթ —խեթ, խոժոռ
խրատ՛վ —խռոված
խոր— քիչ
կա՛մմաց—կամաց, դանդաղ
հաղրի— պատրաստ
հանլա— դեռ
հարդա՛— հիմա, այժմ
հարդամ— շարունակ, հաճախ
հա՛րչան— ինչքան
հա՛մալ — միաժամանակ
հէն— ահավանիկ
հէս— ահավասիկ
հրդաքնի— ճանապարհին
հիրա՛նի—երբվանից
հիրա՛ց— ինչ ժամանակ
ձըմբոնա՛ն — ձմռանը
ճիլտի-միլտի— դատարկաբար
մա— հենց
մա՛լըմ— միթե
մըխոր— մի քիչ, չնչին
մինակ—միայն
մինանչո՛ւին— թեթևակի
միչով— մինչև
միչոնքա— մինչև որ
միչիգ— այնքան, այն աստիճան
յա՛ղար— արդյոք
յէտավ— այնուհետև, հետո
յորկէտ— երկու անգամ
նիմանց— ներսում, դեպի ներս
շուդ— շուտ, շտապ
շուդա՛վ — շուտով
շուշու՛դ— շուտ-շուտ
չարխ—պիրկ, ձիգ, ամուր
պարկի, պայկի—ամուր, պինդ
պիճի— մի քիչ
սրկոն— զգոն, արթուն
սորու՛ն— լավ
վա՛խտավ— ժամանակին
վէր—վայր, ցած
վիր— վար, վերև
տէթ— այդտեղ, այդտեղում

440—11

տէն— այնտեղ, այնտեղում
տէս— այստեղ, այստեղում
ուգուց— վաղը, էգուց
քա՛սմա— կարճ
քիշէրով— առավոտյան
քննաքո՛ն— քնատ, քնաթաթախ
օրախ-օրախ— ուրախությամբ, ուրախ-ուրախ:

Լ. ԿԱՊԵՐ ԵՒ ԿԱՊԱԿԱՆ ԲԱՌԵՐ

335. Հոլովները, որոնք կոչված են լեզվի մեջ արտահայտելու իրական աշխարհի առարկաների և երևույթների փոխհարաբերությունները և կապերը, ի վիճակի չեն լրիվ արտահայտելու այն ամբողջ բազմազանությունը, որ կա մարդու շրջապատում: Այդ բացը լրացվում է օժանդակ բառերի միջոցով, որոնք այս կամ այն հոլովական ձևի հետ միասին արտահայտում են բառահարաբերական, տարածական և այլ հարաբերություններ: Այդ օժանդակ միջոցները, կապերը և կապական բառերն են: Կարճևանի բարբառում դրանք օգտագործվում են սեռական, տրական, հայցական և բացառական հոլովաձևերի հետ:

1. Սեռական հոլովով

Առի «մոտը, ձեռքին»: Երբ այս կապը ստացական դերանունների հետ առանձին է գործածվում, առանում է ա, ը (<ղ), ն հոդերը. ինչպես՝ իմ առիս «ինձ մոտ», քու առիթ «քեզ մոտ», ունդա՛ր առին «նրա մոտ»: Բայց երբ այս կապակցությունները ունենում են նաև հատկացյալ, այն ժամանակ դիմորոշ հոդերը ընկնում են, ինչպես՝ իմ ա՛ռի թիվա՛նդի «իմ մոտի հրացանը», քու ա՛ռի թիվա՛նդի, ունդա՛ր ա՛ռի թիվա՛նդի: Առի կապը, ինչպես ճիշտ նկատել է պրոֆ. Է. Բ. Աղայանը, առաջացել է հին հայերենի առ իս «ինձ մոտ» կապակցությունից. բարբառում մթագնվել է բաղադրիչների անկախությունը և ըմբռնվել որպես մի բառ՝ առիս: Այնուհետև ա-ն դիտակցվելով որպես Ա դեմքի դիմորոշ հոդ, առանձնացել է. ստացվել է ա՛ռի ձևը:

Կօշտը «մոտ»— ըրխէն դա՛րկալ ըմ Տա՛շտուն, դա՛յու կօշտը: Երևխային ուդարկեցի Տաշտուն, քեռու մոտ:

Հա՛ջա «համար, մասին»— Մա ունդա՛ր հա՛ջա յալ Ռա՛փիկ նիյալ ա Իրէվան: Հենց դրա համար էլ Ռաֆիկը գնաց Երևան:— Վա՛զդէն Բարկենա հա՛ջա համաշա նաղլ ա լէ ա՛րիլ— Վազգենը Բարկենի մասին շարունակ պատմություն կաներ: Ունդա՛ր հա՛ջա մին բէն պա՛տմա— Նրա մասին մի բան պատմիր:

Մաջ (մանջ), մաջին (մանջին)—կապով կազմվում է ներգոյականի իմաստը.

1 Կարա՛սը մաջին գինի կան— Կարասի մեջ գինի կա։
Կուճու՛ճու մաջին յէղ կան— Կճուճի մեջ յուղ կա։

2 Գինին ա՛ծա կարասը մաջ— Գինին լցրու կարասի մեջ։
Յէղը լիցցէ կուճու՛ճու մաջ— Յուղը լցրու կճուճի մեջ։

Ինչպես երևում է բերված օրինակներից՝ մաջ կամ մաջին ձևերի գործածությունը կախված է բայի սեռից։

Տեղ «փոխարեն»— Ա՛սօր իմ տէղ դու վրա նիլա՛ցուկ գ՝օրծու։—Իմ փոխարեն այսօր դու ես գնալու աշխատանքի։

Քըմա՛կին «հետևից»— Մըկի՛ճա դա՛րկալ ըմ ունդու՛ր քըմա՛կին։— Միկիչին ուղարկեցի նրա հետևից։

Քիշաէ՛ն «մոտը, կողքին»— Մա՛րդու՛րուս նըստըէ՛ծ ա լէ մատա՛կը քիշաէ՛ն։— Մարտիրոսը նստել էր՝ առվի կողքին (մոտ)։

Տրական հոլովով

Հէ՛նի— Կապով կազմվում են բացառական հոլովաձևերը։ Դերանունների հետ գործածվելիս այդ կապը բաղաձայնից հետո կորցնում է ն հնչյունը, ինչպես՝ միզէ՛նի, ինձէ՛նի, բայց՝ քի ն էՀ՛նի։ Մյուս թեքվող բառերի հետ գործածվելիս, անկախ այն բանից՝ հաջորդում է բաղաձայնի, թե ձայնավորի, գործածվում է ն էՀ՛նի ձևով. ինչպես՝ մա՛րդան էՀ՛նի «մարդուց», բու՛րդու էՀ՛նի «բրդից», էգ՝ի էՀ՛նի «այգուց, այգու կողմից» և այլն։

Հէ՛տի «համար, մասին, պատճառով»։—Սուսա՛նա էՀ՛տի մին կիլո շա՛քար յէ։—Սուսանի համար մի կիլոգրամ շաքար վերցրու (գնիր)։ —Ունդու՛ր էՀ՛տի պըտմիլ ին, թա գ՝ա՛ն մարդ ա։— Նրա մասին պատմում են, որ հպարտ մարդ է։— Ունդու՛ր էՀ՛տի իմ իրինուն խոսկ ա ինկալ։— Նրա պատճառով ինձ վրա խոսացին։

Նըհէ՛տ «հետ, միասին, միջոցով, նկատմամբ»։— Մինա՛սա նըհէ՛տ նիլալ ըք Ունդա՛թ։ —Մինասի հետ (միասին) գնացինք Օրդուբատ։— Սա՛գինա նըհէ՛տ մին ջ՝ոխտ տըրէ՛ն ըմ դա՛րկալ։— Սարգսի միջոցով մի զույգ տրեխ ուղարկեցի։— Հարապէ՛տա մ՝ոտիկ մա՛րդիքի ինձ նըհէ՛տ քին ըն քիշին։— Հայրապետի կողմնակիցները իմ նկատմամբ քեն են պահում։

Նըհէ՛տ կապով կազմվում է նաև բացառական. ինչպես՝ Մին դա՛ռնալ նէյս տէղ բիրդա՛ն քարՀրու մաջին նըհէ՛տ մին սա՛ն իմ

լիսքէլ։— Մի ձորով անցնելիս քարերի միջից հանկարծ մի ձայն լսեցի։

Վերան «վրա»—Սրտոլու վերան— սեղանի վրա։

3. Հայցական հոլովով

Ընընց «առանց»— Ընը՛նց ճըրաք— առանց ճրագի։ Ընը՛նց քի՛ յոլա չիմ նել։ Առանց քեզ յոլա չեմ գնա։

Միչօվ «մինչև»— Միչօվ շէնի— մինչև գյուղը։

Դիբի «դեպի»— Ան ըսիս մարդըթ նիյալ ա դիբի Կըրճէվան։ Քո այն ասած մարդը գնաց դեպի Կարճևան։

4. Բացառական հոլովով

Ա՛ռաշկ՝ «առաջ»— Յօրկու տարի ուստուրէնի առաշկ՝։ Երկու տարի սրանից առաջ։

Յէ՛տավ «հետո»— Ալ ուստուրէնի յէտավ— Էլ սրանից հետո։ Քու նէլուց յէտավ կընագիթ մին ախչիկ՝ ա բիյալ։ Քո գնալուց հետո կինդ մի աղջիկ բերեց (ծնեց)։

Դէն «այն կողմը»— Միզէնի յօրկհօ՛ռիր մէտր դէն։ Մեզանից երկուհարյուր մետր այն կողմը։

Դէս «այս կողմը»— Ջիզէնի հօ՛ռիր մէտր դէս։ Ջեզանից հարյուր մետր այս կողմ։

Սըվայ «բացի»— Ռաֆիկկա հէնի սըվայ ալ մարդ չի գու։ Ռաֆիկից բացի էլ մարդ չգա։

Ը. ՇԱՂԿԱՊՆԵՐ

336. Հայերենի շաղկապներից բարբառում գործածվում են.

Ալ... ալ «և... և»—Ճընընչիլ իմ քի՛ յալ, ունդու՛ր ալ— Ճանաչում եմ և՛ քեզ, և՛ նրան։

Հակադրության դեպքում տալիս է նաև «իսկ» շաղկապի իմաստը. ինչպես՝ Կարապետ նիյալ ա Մըէղրի, Մարդու՛ռիս ալ Տաշտուն։ Կարապետը գնաց Մեղրի, իսկ Մարտիրոսը Տաշտուն։

Վըեր «որ, որպեսզի»— Իս քի՛ ասալ ըմ, վըեր էդի չարիս— Ես քեզ ասացի, որ այդպես չանես։

Շատ անգամ դեղչվում է և հասկացվում է միայն զորությամբ, ինչպես նույն նախադասության մեջ՝ Իս քի՛ ասալ ըմ էդի չարիս

Թա «թե, եթե»— Աթ էշ ա, թա ջո՛րի,— Ալդ էշ է, թե ջորի։

Թա թօռ չի գու, նէլ իք՝ վըէրաու— Եթե անձրև չգա, կգընանք որսի։

Հայերեն բառերից կազմված բարդ շաղկապ է՝ ունդա՛ր հէտի վըէր, որ բառացիորեն նշանակում է «նրա համար որ», սակայն գործածվում է իբրև շաղկապ «որովհետև» իմաստով, ինչպես՝ Արշակա ասա մեզ դարկի Կալբէկու թա՛ռաթի, ունդա՛ր հէտի վըէր իմ նան քու քաւլվա՛թիթ հէն ին ցօրա Ախպուր։ —Արշակին ասա մեզ ուղարկի Կալբեկի կողմերը, որովհետև իմ ու քո ընտանիքները գտնվում են Յուրտ Աղբյուրում։

Ը, ի, ու «և, ու»— Օգտագործվում են նախադասության համազոր անդամների միջև, երբ նրանք անորոշ առումով են. ինչպես՝ մարդը կընագ «մարդ ու կին», «քուր ու ախպիր», «քույր և եղբայր», հարի տրղա «հայր ու տղա», հարսը փըէսի «հարս ու փեսա»։ Այս շաղկապը առաջացել է ու շաղկապից և շեշտից զուրկ լինելով դարձել է ը, որը ձայնավորների ներդաշնակությամբ հանդես է գալիս ը, ի, ու ձևերով։

Փոխառյալ շաղկապներ են.

Համ... համ «և...և»— Համ լէյս ա, համ ծըծըղէս,— Եվ լալիս է, և ծիծաղում։

Համա՛ «բայց, իսկ»— Շունը հա՛ջիլ ա, համա քա՛ղվանը նէլ ա, անց կալ։ Շունը կըհաջի, բայց (իսկ) կարավանը կգնա, կանցնի։

Յա «կամ»— Իս յա գու, հիՙնչ թաւիմվուտ— Ես կամ դու, ի՞նչ տարբերություն։

Յա... յա «կամ... կամ»— Յա դիբի դէն նի, յա դիբի դէս— Կամ դեպի այն կողմ գնա, կամ դեպի այս կողմ։

Նան «և»— Օգտագործվում է նախադասության համազոր անդամների միջև, երբ նրանք որոշյալ առումով են. ինչպես՝ Իս նան գու «ես և դու», առջըն նան գո՛ղի «արջն ու գայլը», յէղըն նան բիրինձի «յուղն ու բրինձը» և այլն։

Զո՛ւնքի «որովհետև, քանի որ»— Զունքի հա՛րբաձ ա լէ, կըրի՛յա չի գու— Զկարողացավ գալ, որովհետև հարբած էր։

Թ. ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

337. Որպես ձայնարկություններ օգտագործվում են.

Պա՛հ— անսպասելի լուրից հանկարծակի եկած՝ զարմանք և շփոթություն արտահայտելիս. ինչպես՝

—Գյա՛լից Մէ՛լքում մըէռած ա։ —Գալլան Մելքումը մեռել է։
— Պահ, հիբաց։ —Վահ, ԷՐԸ։

Պա՛— ափսոսանք արտահայտելիս. ինչպես՝

— Յօխտյնօօթ դասարանը նիլացկուն ա Իրէվան շօռ գուլու։

— Ա՛ռա, պա իս ալ չիմ նի՞ յօխտըմը սըվըրիս...

(— Յոթերորդ դասարան(ցիներ)ը գնալու են Երևան ման գալու։

— Բա ես էլ չլինեի յոթում սովորելիս...)։

Պա հօ՞— նույնպես ափսոսանք արտահայտելիս. ինչպես՝

— Յունուկ նիլալ ա Մըէղրի։ — Ենոքը գնաց Մեղրի։

— Պա հօ, խա գիդիլա չիմ, բէն ըմ լէ փըսպըրլանկան։ — Ափսոս, ինչու չիմացա, բան էի ապսպրելու։

Թու— հիասթափություն մեկի վարմունքի նկատմամբ. ինչպես՝

—Ա՛կուփ քիշէրավ շուդ նիլալ ա Հիգէրակ։ — Հակոբը առավոտյան շուտ գնաց Ագարակ։

— Թու, խա գուլուղ չի ա՛բալ, մըէր ըրխէն խալաթը մատիլ դարկիմ լե։ —Թո՛ւ, ինչու չհայտնեց. մեր երեխայի խալաթը պիտի ուղարկեի։

Ա՛շի— Անտարբերություն արտահայտելիս. ինչպես՝

—Ա՛շի, նէցողչիմ, է։ — Էհ, ես գնացող չեմ։

Ալի՛ «էլի»— ձանձրույթ, անտարբերություն արտահայտելիս. ինչպես՝

— Մըէր ըրխէն ալ նըհէտըթ տար Դաւվա Զամի։ — Մեր երեխային էլ հետդ տար Դավա Զամի։

— Գու ալի՛, շիլիկլանցուկ չիմ խա։ — Թող գա էլի, հո շալակելու չեմ։

Դէ՛— պատրաստակամություն, վճռականություն արտահայտելիս. ինչպես՝

— Դէ, նէյ իք, նէքյ։ — Դե՛, գնում ենք գնանք։

— Դէ, հրդու նանց։ — Դե՛, ճանապարհ ընկեր։

Այ...հէ՛յ— որևէ մեկին կանչելիս. ինչպես՝

— Ա՛յ Ռափ, հէ՛յ...

— Ա՛յ Բաբիկէն, հէ՛յ...

Այստեղ գնում ենք նաև մի քանի բառեր որոնցով մարդիկ դիմում են կենդանիներին.

բիչի-բիչի— այծին կանչելիս
բիլի-բիլի— ուլին կանչելիս
փիշի-փիշի— կատվին կանչելիս
քիշէ— հավերին քշելիս

հо-հо— տավարին քշելիս

բիժի-բիժի— կովին կանչելիս

հաւաք, հաւաք— հավերին, ճտերին բուն մտնելու հորդորանք

ճու-ուի, կիտ, կիտ, կիտ— հավերին կերակրելու կանչելիս

չու, չու— էշին քշելիս

դա, դա— ջորուն, ձիուն քշելիս

Շեշտը

338. Շեշտը բարբառիս մեջ, որպես կանոն, վերջընթեր է. այսպես օրինակ՝ հա՛դին<ադի, հիլէվուր<ալեւոր, ա՛լուր<ալիւր, ախուռ<ախոռ, ծիլի<ածելի, ըկնամում<ականամոմ, անգուճ<ականջ, ակուս<ակօս և այլն:

Այդ ընդհանուր օրինաչափությունից դուրս շեշտը վերջին վանկում է լինում հետևյալ դեպքերում.

ա) բոլոր ծառանուններում, ինչպես օրինակ՝ թիզի՛ «թզենի», թըթի՛ «թթենի», խինձիրի՛ «խնձորենի», տընձի՛ «տանձենի» և այլն.

բ) անձնական թվականներում, ինչպես օրինակ՝ իրիքէն, յըրկէն, չըքէն, յըխատէն, ինանէն, հինգէն և այլն: Այսպես նաև -էն վերջավորություն ունեցող դըրքէն «դուրսը», քիշտէն «կշտին, մոտը» բառերում.

գ) անքան, աթքան, ասքան դերանուններում.

դ) բոլոր բայերի անկատար դերբայում, ինչպես օրինակ՝ փըմիլ || փըմիս «նայում», գիրիլ || գիրիս «գրում», իրվա՛լ || իրվա՛լս «երևում», մըընիլ || մըընիս «մոռանում», բիձրինիլ || բիձրինիս «բարձրանում» և այլն.

ե) բոլոր այն բառերում, որոնց համապատասխանները հին հայերենում առաջին վանկում ունեն գաղտնավանկ. իսկ բարբառում այդ գաղտնավանկը կա՛մ պահպանված է, կամ ձայնավորների առնմանությամբ փոխված մի այլ ձայնավորի, այսպես օրինակ՝ գ̈գալ>գ̈ա̈գա̈՛լ, գ̈ժուար>գիժէր, գ̈մակ>գիմա՛կ, գրել>գիրի՛լ, գ̈գել>գիձի՛լ, գրոյց>գ̈ա̈ր̈ա̈՛ց, մ̈թին>միթա՛ն, մ̈րջուն>մ̈ա̈ր̈ջա̈՛մ, ն̈ն̈ջել>լինջի՛լ, շրեշ>շիրի՛շ, պ̈ր̈կել>պըրկի՛լ, ջ̈ն̈ջել>ճինջի՛լ և այլն:

Այս օրինաչափության տակ մտնող շեշտված -իլ վերջավորություն ունեցող բոլոր բայերը իրենց բոլոր եղանակային և դերբայական ձևերում (բացի ապառնի դերբայից) շեշտը կրում են վերջին վանկում. օրինակ՝ գրել>գիրի՛լ, անկ. գիրի՛լ || գիրի՛ս, կատար. գիրըէ՛լ, հարակ. գիրըէ՛ծ, ենթ. գիրո՛ղ, ժխտ. գիրի՛, ըղձ. եղ. գիրի՛մ, գիրի՛ս և այլն, հարկդ. եղ. մ̈ատիլ գիրի՛մ, մ̈ատիլ գիրի՛ս և այլն. հրամ. եղ. գիրէ՛ և այլն:

զ) -ալ վերջավորությամբ չեզոք սեռի բայերում, որոնք դիտակցվում են որպես բնաձայն կամ արմատի կրկնությամբ կազմված բայեր. ինչպես՝ բըռընչալ<բառաչել, գըռռալ<գոռալ, դըղդղալ<դողդողալ, թընչալ<թանչել, թըռթըռալ<թրթռել, սըռսըռալ<սարսռալ և այլն:

է) մի շարք բառերում, որոնց վերջին վանկում շեշտ ունենալը չի պայմանավորվում վերը նշված օրինաչափություններից և ոչ մեկով. ինչպես՝

ակահի<ագահ	քիշէր<գիշեր
ընգըճմըալի<ականջմուտ	գուրթուն<գորտ(նուկ)
հըդաք<ադագ	դիբի<դէպի
ըռ՚նց<առանց	դիբէտ<դէպ ի ետ
ըռջի<առաջին	դիմբիբիլ<դամարել
ըռջընակ<առաջնակ	դըղնիլ դեղնել
ըռնատ<առնէտ	դըղնոց<դեղնուց
իվիլի<աւելի	հիբի<երբ(ի)
բիրհիլ<բաճել	իզուր<ի զուր
փըռվար<բուրուառ	կըկըղիլ<կակղել
կիպիտիլ<կապտել	
կըղազ<կորիզ	
միչուվ<մինչև	
հիլլո՚ր<ոլոր	
հըղոգ, ըղոգ<ուղեղ	
հըղի<ուղի	
պիհա՚ղ<պահէզ	
պըրտըղիլ<պղտորել	
տըմկիլ<տամկել	
քըղհան<քաղահան	

339. Արտասանական շեշտի դերի և աղդեցության մասին խոսված է հոլովման և խոնարհման համակարգի նկարագրության մեջ, քանի որ շեշտից առաջացող հնչյունական փոփոխությունները առնչվում էին այդ բաժիններում շարադրվող նյութի հետ: Սակայն այդ բոլորից դուրս շեշտը բարբառում սկսում է կատարել նաև քերականական դեր: Ու հոլովման ենթարկվող երկու և ավելի վանկ ունեցող բառերում շեշտի այդ դերը դրսևորվում է միանգամայն ակներևորեն: Ինչպես արդեն ասված է ու հոլովման նկարագրության մեջ, սեռական հոլովի ը, ի, ու վերջավորությունները համընկնում են ուղղական և հայցական հոլովների վերջավո-

բութիւնների հետ, եթե բառը որոշեալ առումով է։ Սեռականի իմաստային տարբերակումը մյուս երկու հոլովներից իրականացվում է շեշտի միջոցով։ Այն դեպքում, երբ բառը որոշեալ առումով է, ուղղական և հայցական հոլովներում շեշտը վերջից երրորդ վանկում է, մինչդեռ սեռական հոլովում շեշտը տեղափոխվում է դեպի վերջընթեր վանկը, որով և բառին տալիս է սեռական հոլովի իմաստ. այսպես օրինակ՝ համեմատել Մարուքթաց հալՀՀՀրաՀ շուդՀՀց ա մըէռած «Մարուքթաց ծերուկը վաղուց է մահացել» և Մըէր հալՀՀՀրաՀ ակնարը ցըվիս ա «Մեր ծերուկի աչքերը ցավում են». կամ՝ Ըլխարակը միշտ ճըռայս ա «Ճախարակը շարունակ ճռռում է» և Ըլխարակը լիսէռնը մանդված ա «Ճախարակի լիսեռն կոտրվել է» նախադասությունները։

Մյուս հոլովներում շեշտի քերականական դերը բացակայում է. այդ նշանակում է, որ այն առաջացել է միայն ու հոլովման առանձնահատկությունների հիման վրա և մասնակի բնույթ ունի։

ԵՐԵՐՈՐԴ ՄԱՍ

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՇԵՐՏԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՐԺԵՔԸ

340. Ինչպես որ ամեն մի լեզվի գրավոր բառարանը լրիվ կերպով չի արտացոլում նրա բառային կազմը, այնպես էլ հնարավոր չէ մի բարբառի բառարանի մեջ ներկայացնել նրա բառապաշարի ամբողջությունը: Նման դժվարությունը ոչ թե սուբյեկտիվ, այլ օբյեկտիվ պայմանների հետևանք է: Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ ոչ մի բարբառագիր, ինչքան էլ նա աշխատում է այդ ուղղությամբ, չի կարողանում լրիվ ընդգրկել տրվյալ բարբառի բառապաշարը, պետք է նկատի ունենալ նաև այն, որ բարբառները լինելով բանավոր լեզուներ և փոխանցվելով սերունդից սերունդ, բավարարվում են ընդհանուր լեզվի բառապաշարի այն մինիմումով, որ անհրաժեշտ է հաղորդակցման համար: Հասկանալի է, որ այս տեսակետից բանավոր լեզուն չի ունենում հոմանիշների այնպիսի առատություն, բարդ հասկացողություններ արտահայտող բառերի այնպիսի մի ճոխություն, որպիսին հատուկ է գրական և գրավոր լեզուներին: Բնական է, որ բարբառների մեջ, նրանց զարգացման դարեր տևած պատմության ընթացքում, ստեղծվել ու գործածվել են հազարավոր բառեր՝ կապված պատմական տարբեր շրջանների հասարակական, քաղաքական, կուլտուրական, արտադրական, կենցաղային և այլ պայմանների հետ, բայց քանի որ այդ բոլորը ոչ մի տեղ չի գրանցվել, ուստի և դրանք անդառնալիորեն անհետացել են հին հասարակական, քաղաքական, կուլտուրական և այլ պայմանների անհետացման հետ միասին: Դեռ այսօր էլ, բարբառախոս տարբեր սերունդների ներկայացուցիչների բառապաշարի մեջ, կարելի է նկատել որոշակի տարբերություններ, այդ արտահայտվում է նրանով, որ երիտասարդ սերնդի ներկայացուցիչների բառապաշարում բացակայում են այնպիսի բառեր, որոնք առկա են ավագ սերնդի ներկայացուցիչների մոտ: Դրանք հիմնականում հին կյանքի, հասարակական

հին հարաբերությունների ու հին կենցաղի հետ կապված բառերն են, որոնք այլևս նոր պայմաններում չեն օգտագործվում և, բնականաբար, չեն փոխանցվի երիտասարդ սերնդին և ավագ սերնդի ներկայացուցիչների հետ միասին էլ կանհետանան:

Բանավոր լեզվի այս առանձնահատկությունն է պատճառը, որ մեր բարբառներից յուրաքանչյուրի բառապաշարը իր քանակով հիմնականում մի քանի հազար բառից այն կողմ չի անցնում:

Չնայած բանավոր լեզվի վերը նշած առանձնահատկությանը, այնուամենայնիվ բարբառը, որպես ընդհանուր լեզվի ճյուղավորումներից մեկը, բոլոր ժամանակներում էլ հիմնականում պահպանում է ընդհանուր լեզվի բառային հիմնական ֆոնդի բառերը և դրանց հիման վրա է, որ բառաստեղծական իր ներքին միջոցներով ստեղծում է նորանոր բառեր, համալրում իր բառային կազմը և այդ հիմքի վրա ապահովում հաղորդակցման իր դերը:

341. Բարբառի բառապաշարի ուսումնասիրության տեսակետից ուշադրության արժանի են այն կազմող բառաշերտերը: Տրվյալ դեպքում մեզ հետաքրքրող Կարճևանի բարբառի հիմնական բառաշերտերն են.

1) բառեր, որոնք ընդհանուր են հին հայերենի (գրաբարի) բառարանի հետ:

2) բարբառային բառեր, որոնք իրենց հերթին բաժանվում են երկու ենթախմբի.

ա) Հին հայերենից ավանդված արմատներից կամ բառերից կազմված բարբառային ձևեր, որոնք, սակայն, այն ձևով, ինչպես նրանք ներկայանում են բարբառում, ավանդված չեն մեզ հին հայերենից.

բ) Զուտ բարբառային բառեր, որոնց ծագումը դեռևս անհայտ է:

3) փոխառություններ, որոնք կատարված են բարբառի կողմից ինքնուրույն ճանապարհով:

Փնտրենք այս բառաշերտերի արժեքը առանձին-առանձին:

342. Հին հայերենի հետ ընդհանուր բառերի քանակը հասնում է շուրջ 1500-ի: Այս բառաշերտը բարբառի բառային հիմնական ֆոնդի անբաժանելի մասն է կազմում: Այս շերտի մեջ են մտնում ամբողջ հայերենի համար ընդհանուր այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ հա՛դին<ագի, հիլէվուր<ալեւոր, ծի՛լի<ածելի, դա՛նձիլ<աղանձել, ախչիկ<աղջիկ, ի՛դի<այդի, ա՛ծ<այծ, նա՛լի<անալի, հա՛նիծ<անիծ, ըռնատ<առնէտ, հա՛րբիլ<արբենալ, հա՛րդա<ար-

դի, ա՛րիվ<արև, ա՛րճաւճ<արճիճ, ա՛վիլ<աւել, քա՛ցի<աքացի, բէհ<բահ, բէ՛մբակ<բամբակ, բէ՛նջար<բանջար, բէ՛ռնիլ<բառնալ, բէց<բաց, բո՛ւն<բոյն և այլն:

Այստեղ ուշագրավ է այն, որ հայերենի համար ընդհանուր մի շարք արմատներ կամ բառեր բարբառում հանդես են գալիս իրենց արմատական ձևով կամ իմաստային նրբերանգներով: Այսպես, օրինակ՝ ոտք հասկացության համար հայերենում ունեցել ենք ոտն բառը, որը պահպանվել է հայերենի շատ բարբառներում, ինչպես և մեր գրական լեզվում, սակայն բարբառում այն փոխարինված է հաք բառով, որը ներկայացնում է աք արմատը իր անաղարտ ձևով, որ ավանդված է մեզ աքացի, առաքել և նման բառերում: Ատամ հասկացության համար գործածվում է կրե՛ռիք բառը, որը հին հայերենում (կեռիք ձևով) ուներ «կենդանիների ատամ, ժանիք, ճանկ» իմաստը: Մատն (ձեռքերի և ոտների վերջավորություններ) հասկացության համար գործածվում է բո՛ւթ(< բոյթ) բառը, որ գրաբարում ունեցել է «մեծ մատ» իմաստը և այլն, և այլն: Այս երևույթը ուշագրավ է այն տեսակետից, որ այն կարող է որոշակի հիմք տալ ինչպես պատմական բարբառագիտության, այնպես էլ հայերենի համեմատական բառագիտության հարցերը մշակելիս:

343. Բարբառի բառապաշարի երկրորդ հիմնական բառաշերտի, այն է՝ բարբառային բառերի առաջին ենթախմբի բառերը նրանք են, որոնք կազմված են հին հայերենում ավանդված արմատներից ու բառերից, սակայն այնպիսի ձևերով, որոնք անհայտ են հին գրականությանը: Նշենք դրանցից մի քանիսը. կըլխատակ «գլխատակ, բարձ» (գլուխ+տակ), մըշահաւ «թփերի մեջ ապրող մի թռչուն» (մոշ+հաւ), ջիրա՛ծրէտ «ջրային ծիտ» (ջուր+ծիտ), գոգ՛գկապ «միզկապություն» (գոգ+կապ), թըռնակաթ «կաթսայի տակ դրվող երկաթյա ձող» (թոնիր+երկաթ), թուրանխառնի «թոնրի կրակը խառնելու ձող, թոնիրխառնիչ» (թոնիր+խառնիչ), ալրա՛տուն «ջրաղացաքարի առջևի արկղը, ուր թափվում է ալյուրը» (ալիւր+տուն), մըշէ՛ջուր «կարմիր լորուց պատրաստվող ջրիկ կերակուրի անունը» (մաշ+ջուր), հետամաղ «մաղի մի տեսակ» (հետ+մաղ), խըչափա՛ռ «կողովաձև փեթակի ներսում դրվող խաչաձև փայտ՝ մոմաթերթի փոխարեն» (խաչ+փայտ), պընդա՛ն «խըցան» (պինդ+ան), մըղա՛ն «մղիչ գործիք» (մուղ+ան), ծըխկա՛վիլ «ավելի մի տեսակ» (ծաղիկ+աւել) և այլն, և այլն:

344. Բարբառային բառերի երկրորդ ենթախումբը այն բա-

ներն են, որոնք իրենց ծագմամբ դեռևս անհայտ են։ Կասկածից դուրս է, որ այդ բառերի մեծագույն մասը հայերեն բառեր են, որոնք, սակայն, մեր հին մատենագրության մեջ չեն ավանդված։ Այդ բառերի մի մասը գործածն է նաև հայերենի այլ բարբառներում, որը նույնպես վկայում է նրանց հայկական բնույթի մասին։ Բերենք դրանցից մի քանի օրինակներ՝ թիմթիմօկ «թարթիչ», փէշտ «առվի թումբ», ճինջիփիշի «մանր հատիկներով ձյունախառն անձրև», խըլտըրօկ «ադամախնձոր», կէտ «ճանճի մի տեսակ, որ կըպչում է անասունների պոչի տակից և նրանց անհանգստացնում», կէտիլ «փախչել», ճուկուրուկ «փորսող կենդանին», ճուլտիկ «կարճ ակոս» և այլն։

Բառապաշարի այս շերտերը, այն է՝ հին հայերենի հետ ընդհանուր բառերը, հայերենի արմատներից կազմված և անհայտ ծագում ունեցող բարբառային բառերը կազմում են Կարճևանի բարբառի բառապաշարի հիմնական մասը։ Փոխառյալ բառերը ինչպես քանակով, այնպես էլ որակով նույն արժեքը չունեն, ինչ նշված բառաշերտերի բառերը։

345. Փոխառությունների մեջ փոխառու հիմնական լեզուներն են՝ պարսկերենը, ադրբեջաներենը և ռուսերենը։

Բացի այն, որ բարբառս ունի իրանական հին փոխառություններ, որոնք ընդհանուր են հին հայերենի հետ (և մենք այդ պայմանականորեն փոխառությունները չենք համարում) և դալիս են հնագույն ժամանակներից, ինչպես օրինակ՝ ագատ, ագգ, ախոռ, ակիշ, ամբար, աշխարհ, աշկարայ, ապապարել, աստառ, արձակ, արճիճ, բամբակ, բարակ, բժիշկ, բրինձ, գաղար և այլն, նոր ժամանակներում ինքնուրույն ճանապարհով պարսկերենից վերցրել է մի շարք բառեր։ Պարսկական փոխառությունների մեծագույն մասը ընդհանուր է ադրբեջանական ձևերի հետ։ Այս տեսակետից շատ անգամ դժվար է պարզել, թե պարսկական ծագում ունեցող բառերը անմիջական փոխառություններ են պարսկերենից, թե կատարված են ադրբեջաներենի միջնորդությամբ։ Այնուամենայնիվ, որպես պարսկական ծագում ունեցող բառեր, մենք այդ փոխառությունները դնում ենք պարսկական փոխառությունների մեջ։

Հայերենը պարսկերենից փոխառած ունի աշկարայ բառը։ Բարբառումս բացի դրան համապատասխան աշկարա ձևից, գոյություն ունի նաև ափաշկարա բառը, որը կազմված է ափ(<ապ?) նախածանցով։ Թեև այդ բառաձևը ժամանակակից պարսկերենում ավանդված չէ, բայց բառաձևը ինքնին նշում է նրա պարսկական ծագումը։

Այստեղ դնում ենք պարսկական փոխառությունների մի փոքրիկ բառացանկ.

ալավ «բոց»— պրսկ.	علو (alav)
բիյաբուռ «խայտառակ»—պրսկ.	بی آبرو (bi abru)
դա՛րզի «դերձակ»— պրսկ.	درزی (darzi)
դարվազա՛ «դարբաս»— պրսկ.	دروازه (darvāze) «դարբաս քաղաքի, ամրոցի»
դո՛շման «թշնամի»— պրսկ.	دشمن (došman)
խելլա «շատ»— պրսկ.	خیلی (xeili)
դա՛ստա «փունջ»— պրսկ.	دسته (daste)
բաղ «խաղողի այգի»— պրսկ.	باغ (baγ) «այգի»
բուխարի «պատի մեջ օջախ»— պրսկ.	بخاری (boxari)
թա՛մբալ «ծուլլ»— պրսկ.	تنبل (tambal)

և այլն, և այլն:

Մի շարք բառեր, որոնք իրենց ծագմամբ արաբական են, գործուն են նաև պարսկերենում և թերևս պարսկերենի միջնորդությամբ են մտել բարբառի մեջ, այսպես օրինակ՝ ջըղաբ (տալ) — պատասխան (տալ), դա՛ղաք— վարսավիր, հեքիմ, դասսաբ— մսագործ, ղը՛փըլ— կողպեք, դուքան— խանութ և այլն:

346. Բառային փոխառությունների մեջ մեծ քանակ են կազմում ադրբեջաներենից կատարված փոխառությունները: Դրանց քանակի գերակշռությունը այլ լեզուներից կատարված փոխառություններից՝ բացատրվում է նրանով, որ բարբառիս կրողները դարեր շարունակ գտնվել են ադրբեջանական լեզվական միջավայրում, տնտեսական ու քաղաքական սերտ հարաբերություններ են ունեցել այդ լեզվի կրողների հետ: Դրա արդյունքը եղել է այն, որ մի շարք հասկացությունների հայերեն անուններին զուգահեռ սկսել են գործածության մեջ մտնել ադրբեջաներեն անունները և ժամանակի ընթացքում կորցնելով հայերեն ձևերը, գործածության մեջ մնացել են միայն փոխառյալ ձևերը: Այսպես են մտել բարբառի մեջ այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ բիրդան «հանկարծ, հանկարծակի», բիրա՛դի «միասին, մեկտեղ», բոզաղ «կոկորդ», բոյ «հասակ», դարան «կրունկ», դինջ «հանգիստ», թա՛ռուզ «մաքուր», դա՛ղ «ճիշտ, հարթ, հարթություն, ուղիղ» և այլ շատ բառեր, որոնց հայերեն ձևերը անհետացել են, ուստի և այդ

փոխառյալ ձևերը միակ ձևերն են այդ հասկացությունների համար։

Ադրբեջաններենից կատարված փոխառությունների առանձնահատկությունն այն է, որ այդ լեզվից փոխառված բառերն այն աստիճան հարազատ են դարձել բարբառին, որ դրանց սկզբնաձևերից հայերենի ածանցներով կազմվել են նոր բառեր՝ բայական և գոյական առումներով, մի բան, որ նկատելի չէ ոչ պարսկերենից և ոչ էլ ռուսերենից կատարված փոխառություններում։ Այսպես, օրինակ՝ դինջ «հանգիստ» ածականից ածանցմամբ առեղծվել է դինջէնել «հանգստանալ» բայը, դինջութին «հանգստություն» գոյականը, թա՛մուղ «մաքուր» ածականից թիմիղել «մաքրել», թիմիղութին «մաքրություն» և այլն։

Այս երևույթը թեև խիստ տարածված չէ, սակայն եղած օրինակներն էլ հաստատում են այն միտքը, թե ադրբեջանական փոխառությունները բարբառիս բառաֆոնդում ավելի կայուն տեղ են գրավել, քան այլ տիպի նոր փոխառությունները։

Ահա ադրբեջաններենից կատարված փոխառյալ բառերի մի քանի օրինակներ՝

ա՛դգըմ — քայլ	գա՛վա — ուղտ
ա՛ղջադ — ձեռնոց	գավաչի — ուղտապան
բոզ — գոլորշի	գա՛բա — ձոր
գ՛ալդիզ՛էչան — մաղի մի տեսակ	գՕշ — կուրծք
գա՛միրչի — դարբին	և այլն։

347. Վերջին հարյուրամյակի ընթացքում բարբառս փոխառություններ է կատարել նաև ռուսերենից։ Այդ փոխառությունները կրում են անմիջական բնույթ և ընդգրկում են կոնկրետ առարկաների անուններ։

Կարճևանցիների շփումը ռուս ժողովրդի հետ կատարվել է երկու ուղղությամբ։ Նախ՝ իրենց հայրենիքից դուրս, ռուսական միջավայրում։ Ցարական կարգերի օրոք գյուղացու անապահով վիճակը նրան ստիպում էր դիմել պանդխտության՝ փող վաստակելու և բախտ որոնելու հույսերով։ Այդ նպատակով կարճևանցիները դիմում էին գեպի անդրկովկասյան և միջինասիական քաղաքները՝ Բաքու, Թիֆլիս, Տաշքենտ, Սամարղանդ և այլուր։ Գտնվելով բազմազգ այդ քաղաքներում, ուր միջազգային լեզուն ռուսերենն էր, հաղորդակից լինելով հասարակական նոր հարաբերություններին և նոր կենցաղին, սովորելով այդտեղ իրենց հա-

մար նորություն հանդիսացող երևույթների կամ առարկաների անունները, ուն վերադառնալիս իրենց հետ բերում էին և դրանց անունները։

Կարճևանցիների շփումը ռուս ժողովրդի ներկայացուցիչների հետ կատարվել է նաև իրենց հայրենիքում։ Որպես Իրանին սահմանամերձ գյուղի բնակիչներ, կարճևանցիները շարունակ շփման մեջ են եղել ռուսական սահմանապահ ջոկատների զինվորների և սպաների հետ։

Այս երկու ճանապարհներով կատարված փոխառությունները ունեն զուտ կուլտուրական բառերի փոխառության բնույթ։

Ահա ռուսերենից կատարված փոխառյալ բառերի մի քանի օրինակներ՝

ակնուշկա «լուսամուտ, պատուհան»— ռուս. окóшко
ատաժ «հարկ»— ռուս. этаж
բոչկա «տակառ»— ռուս. бочка
լամբ «ապակյա լամպ (նավթի)»— ռուս. ла́мпа
կազէթ «լրագիր»— ռուս. газета
կրանդ «ծորակ»— ռուս. кран
շրկաֆ «պահարան»— ռուս. шкаф
շրկոլ «դպրոց»— ռուս. школа
շրպիչկա «լուցկի»— ռուս. спичка
սրտաքան «բաժակ»— ռուս. стакан և այլն, և այլն։

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

348. Կարճևանի բարբառը օգտագործում է հայերենի բառակազմական բոլոր միջոցները։ Սակայն այդ բոլորի մեջ ամենից կենսունակը բարդությունները (հարադիր բարդություններով հանդերձ) և ածանցումներն են։

Բարդություններ

349. Բառերը բարդվում են ինչպես ա հոդակապով, այնպես և առանց ա հոդակապի։

ա) Ա հոդակապով բարդ բառերի օրինակներ.

ալիրա՛տոն «ջրաղացի քարի առջև դրված արկղը, ուր թափվում է ալյուրը»,

ածա՛հազ «բեկ-բեկ հազ, այծահազ»,

դէտ՝քար «գետի ամուր քար»,
դըրքամաջ «դռան երկու փեղկերի միջև եղած տարածությունը»,
ծիրնա՛չիր «ծիրանի չիր»,
ակնակապի «աչքակապուկ խաղը»,
դըրքատակ «դռան տակը՝ առջևը» և այլն,

բ) Առանց ա հոդակապի բարդության օրինակներ.
գոյ՛զկապ «միզկապություն»,
գոյգոյլա՛ման «գդալների ման (որ նախկինում գործվում էր ճյուղերից՝ ձվաձև դամբյուղի ձևով)»,
ընբրտրպա «անկերոջ տղա, անկերձաղ»,
ընջա՛վել «երկար ավել՝ առաստաղի և պատերի ունջը մաքրելու համար»,
թուրանխառնի «երկար ձող՝ թոնրի կրակը խառնելու համար. թոնրախառնիչ»,
խաչփայտ «կողովաձև փեթակի ներսում դրվող խաչփայտ՝ մոմաթերթի փոխարեն»,
կըլուրինք՝ «անդինա հիվանդությունը, կոկորդի ուռուցք» և այլն,

գ) Բարդ բառեր կազմվում են նաև սեռական հոլովով դրված բառի նախադրությամբ, որը որպես որոշիչ բացատրում է հաջորդ բառը: Բարդության այս ձևը այնքան էլ տարածված չէ. ընորոշ են հետևյալ օրինակները.
ասուդո՛խտիկ «անձրևաորդ»,
դըրքըկըլօխ «դռան վերևի փայտը»,
թընըքըսակ «մածնի քսակ»,
ծրծրպրտօկ «ստինքի պտուկ» և այլն:

դ) Բառակազմական մի այլ միջոց է բարդ բառերի կազմումը արմատի կամ բառի կրկնությամբ: Բարբառս այդպիսի բարդ բառերով շատ հարուստ է: Բերենք դրանցից մի քանի ընորոշ օրինակներ.
բիլբիլա՛ յ «թեժ այրվել, վառվել»,
բիլբիլէ՛ք «թեժ այրվելը, վառվելը»,
գինձգինձօկ «գինձի նման վայրի բանջար»,
թիմթիմօկ «թարթիչ»,
լէլէլէ «պահմտոցի խաղի տեսակ»,
ծըլծըլա՛ լ «ծործորալ» և այլն:

ե) Ավելի առատ են հարադրությունները.
ակնը ծակ «ագահ, անկուշտ»,

զրկրոհատ գուլ «զկրատալ»,
թաՀլ արիլ «գլորել, թավալել»,
թաՀլ գուլ «գլորվել, թավալվել»,
լօք տալ «ցատկել»,
կլաՀնիչ-կլաՀ՛ըմիր «ծիածան»,
կըլօխ նանիլ «գլխի ընկնել, հասկանալ»,
ծըլուլ նանիլ «կախվել (խլինքի, սառույցի կտոր մասին)»:

Հարադրություններ կազմվում են նաև փոխառյալ բառերից. ինչպես՝
ջըղաբ տալ «պատասխանել»,
յՀրմիշ գուլ «հոգնել»,
բիյարուռ արիլ «խայտառակել»,
բիյարուռ դըէռիլ «խայտառակվել» և այլն:

Ածանցներ

350. Օգտագործվում է միայն մի նախածանց. դա հայերենի ան ժխտական նախածանցն է. օրինակ՝ անճանդ «անծայր, անվերջ, անսկիզբ ու անվերջ», անտար «անտեր, տեր չունեցող», անհամ «համ չունեցող կամ տհաճ համ ունեցող», անխելք «հիմար, անխելք» և այլն:

Առատ են վերջածանցները. ահա դրանք.

1. -Օթին (<ութիւն)— որով կազմվում են վերացական գոյականներ, ինչպես օրինակ՝ հիլիվըրօթին «ալևորություն, ծերություն», գըղօթին «գողություն», ըխպըրօթին «եղբայրություն», ըրխօթին «ուրախություն, երեխայություն», թիմիզօթին «մաքրություն» (փոխառյալ թաՀ՛մաՀզ «մաքուր» բառից) և այլն:

2. -Եցի, -ցի (<-եցի, -ցի)— որով կազմվում են որտեղացի ցույց տվող գոյականներ, օրինակ՝ աՀրդաՀ՛թցի «օրդուբատցի», մըղրէցի «մեղրեցի», կըրճընվէցի «կարճևանցի», տըշտրնէցի «տաշտունեցի», հիդիրիկէցի «ագարակեցի» և այլն:

3. -ացու (<ացու)— որով կազմված գոյականը ցույց է տալիս ինչ նպատակի, ինչ բանի հատկացված լինելը. ինչպես՝ տըրխացու «տրեխացու», միսաՀ՛ցու «մսացու», կուճացու «կոճացու, գերան», ճինջիկացու «շղարշացու», տիհՀլացու «ղաուրմալացու» և այլն:

4. -ան (<ան)— որանով կազմվում են գոյականներ, ինչպես՝ մըղան «մղիչ գործիք» (մուղ արմատից), պըզգաՀ՛ն «մանկա-

կան սրինգ» (պըզգ բնաձայնական արմատից), պըլկան «մանկական մի խաղալիք» (պըլկ բնաձայնական արմատից), պընդան «խցան» (պինդ արմատից), շըռուան «ջրի թափվելու տեղը, ջրվեժիկ» (շըռ || շիռ բնաձայնական արմատից) և այլն:

5. -Oտ (<ուտ)— որով կազմվում են ծառատեսակների անուններ. ինչպես՝ խինձիրօտ «խնձորենուտ», ծիրինօտ «ծիրանուտ», սընձօտ «տանձենուտ», հրանօտ «ուռենուտ» և այլն:

6. -ի— այս ածանցով կազմվում են ծառանունները. ինչպես՝ անգուդ-ընդըզի «ընկուզենի», թութ-թըթի «թթենի», ծա՛-բան-ծիրանի «ծիրանի», գիլա՛ս-գիլիսի «կեռասենի», շըտա՛գուկ-շըտըզկի «դեղձենի» և այլն:

7. -ակ— որով կազմվում են գոյականներ. ինչպես՝ հինգէ-նակ «լվացքի կավե տաշտ» (անկան բառից), ըռջընակ «անդրանկածին» (ըռջի<առաջին բառից), դրանակ «հնձանի քարե լուսամուտ» (դուռն բառից), կըլօլակ «քուֆթա» (կլոր բառից), պըրկօճակ «դամբուլի պարկուճ» (պարկուճ բառից) և այլն:

8. -անք— կազմվում են գոյականներ. ինչպես՝ չըրչարանք «չարչարանք», բիմբէսանք «բամբասանք», զըրթէրանք «զարդարանք», դա՛չանք «աղաչանք, աղերսանք» և այլն:

9. -իկ՛— որով կազմվում են գոյականներ՝ հայերենի միավանկ գոյականներից. ինչպես՝ բիրիկ՛ «բիր», ելիկ՛ «էլ», խըշտիկ՛ «խիշտ, սվին», ճըռիկ՛ «ճիռ, խաղողի մի քանի պտուղից կազմված ողկույզ», պըրիկ՛ «պարող մարդ» և այլն:

10. -ա՛ք՛, -է՛ք՛, իք՛—սրանցով կազմվում են.

ա) բայարմատով գոյականներ. ինչպես՝ ծըլլա՛ք՛ «ծորալը, ծորումն», ծըվվա՛ք՛ «ծղրտոց, ճչոց», կըծպըծա՛ք՛ «կծպծանք», կըլկըլա՛ք՛ «1. դալլալ, 2. կլկլոց, 3. անհոգ ծիծաղ», զըլգի՛ք՛ «խուտուտ» և այլն.

բ) ազգակցական, արյունակցական կապ ցույց տվող գոյականներ, ինչպես նաև ազգանուններ. ինչպես՝ հէրա՛ք «հոր ընտանիքը», քի՛վէրա՛ք «քրոջ ընտանիքը», տա՛լա՛ք «ամուսնու քրոջ ընտանիքը», Ապրա՛մա՛ք «Աբրահամյանները», Ղէ՛ք՛ «Աղայանները», Ջա՛նիք՛ «Ջանյանները» և այլն:

11. -ավուն, -ալի— կազմվում են ածականներ, որոնք ցույց են տալիս որևէ հատկանիշ ունենալը. ինչպես՝ կաղաղա՛վուն «կեղևավոր (ընկույզ)», կիրմիրա՛վուն «կարմրություն ունեցող», սըրմա՛ալի «սերմ ունեցող» և այլն:

12. -վարի— կազմվում են մակբայներ. ինչպես՝ կընդավա՛րի

«կնոջ պես, կանացիորեն», մարդավարի «մարդու պես, կորեկտ, քաղաքավարի», քաղաքավարի «քաղաքացու պես» և այլն:

13. -ալ (գործիական վերջավորություն է)— կազմվում են ինչպես ածականներ, այնպես էլ մակբայներ. ինչպես՝ հացալ «հյուրասեր», հանքալ «արագաշարժ, արագընթաց», նա՛շտալ «անօթի», քիշէրալ «առավոտյան», վախտալ «ժամանակին» և այլն:

14. -իշտ— կազմվում են գոյականներ. ինչպես՝ հա՛րդիշտ «փոքր քթոց» (հարդ «քթոց» բառից), յէ՛րկիշտ «երկաթյրանի եղան՝ ցաք կտրելու համար» և այլն:

15. -կուտ, -ուտ (<-կոտ, -ոտ)— որոնցով կազմվում են ածականներ, ինչպես՝ հրմանչկուտ «ամաչկոտ», վախկուտ «վախկոտ», թիւիկուտ «թեփոտ», քուսուտ «քոսոտ», վրակրանուտ «ոսկրոտ» և այլն:

16. -աց (դրարարյան հոգնակի սեռական վերջավորություն է)— որով կազմվում են մակբայներ. ինչպես՝ շուդվա՛ց «վաղուց», հիրա՛ց «երբ, երբվանից», իրէկաց «երեկ» և այլն:

17. -օկ (<ուկ)— կազմվում են գոյականներ. ինչպես՝ դիհօկ «ոչխարների ձմեռանոց» (դիհ բառից), դինձդինձօկ «դինձի նման վայրի բանջար» (դինձ բառից), թիմթիմօկ «թարթիչ» (թիմ արմատից) և այլն:

ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

351. Կարճևանի բարբառը որպես հայերենի ճյուղավորումներից մեկը, հիմնականում պահպանել է հայերեն բառերի նշանակությունները: Նույնիսկ հանդիպում են այնպիսի բառեր, որոնք պահպանել են հին հայերեն բառի իմաստը այն ժամանակ, երբ նոր հայերենում դրանք հանդես են գալիս իմաստային նոր երանգներով: Այսպես օրինակ՝ գրաբար մանրել («մանրացնել, ջարդել, փշրել, ջարդուբուրդ անել») բառի մեջ ժամանակակից հայերենում երկրորդական պլանի վրա են մղված ջարդելու, փշրելու գաղափարները, և բառը հիմնականում կրում է «մանրացնել, մանր կտորների բաժանել, մանր մասերի բաժանել» նշանակությունները: Բարբառային մա՛նդիլ (<մանդրիլ<մանրել) բառը պահպանել է հին հայերեն բառի հիմնական նշանակությունը, այն է՝ ջարդել, կոտրել, փշրել: Կամ մի այլ օրինակ՝ ընտրել բայը հին հայերենում ունի «դատելով ընտիրը վերցնել». ժամանակակից հա-

յերևնում այդ բառը իմաստային նոր զարգացում է ապրել, ստանալով «քվեարկությամբ որևէ պետական կամ դեկավար օրգան ստեղծել կամ քվեարկությամբ մեկին որևէ դեկավար պաշտոնի մեջ առաջադրել» (օրինակ՝ Դերագույն Սովետ ընտրել, դեպուտատ ընտրել, պարտիական կոմիտե ընտրել, կոլտնտեսության նախագահ ընտրել և այլն),—որը ավելի է սկսում գերիշխել սկզբնական իմաստի վրա: Նույն ընտրել բառի բարբառային հընդրի՛լ համարժեքը ունի «զատելով ընտիրը վերցնել, ընտիրը զատել անպետքից, ջոկել անպետքը լավից» (օրինակ՝ բիբինձ հընդրի՛լ «բրնձի միջից ավելորդությունները առանձնացնել, ջոկել») իմաստը, այսինքն՝ հիմնականում պահպանել է իր հին նշանակությունը:

Սակայն այս երևույթը համապարփակ չէ: Նկատելի է, որ մի շարք բառեր ժամանակի ընթացքում իմաստային նուրբ երանգներ են ստացել. այդ երանգները առաջացել են հիմնականում բառի իմաստներից միայն մեկի պահպանմամբ ու զարգացմամբ, երբեմն էլ մի այլ երևույթի նմանությամբ:

Այդ երևույթները պարզելու համար քննենք մի շարք բառերի իմաստափոխությունները:

Հին հայերենում գործի բառը նշանակում է «1. գործիք. 2. բնական գործիք, գործարանք. 3. բարոյական գործիք, միջնորդ, միջոց, առիթ»[1]: Դրանցից ժամանակակից հայերենում ունենք գործիք, ընդհանուր բառ հասկացությունը: Բարբառում այդ բառը հանդես է գալիս գ՛ո՛ր̀ծին ձևով և նշանակում է «արոր», այսինքն՝ գործիքներից միայն մի տեսակի անունը: Այստեղ կատարվել է իմաստի նեղացում, այսինքն՝ անցում է կատարվել ընդհանուրից դեպի կոնկրետը, մասնավորը:

Նույնպիսի երևույթ կատարվել է նաև թան>թան բառի մեջ: Այն հին հայերենում նշանակում է «թաց ուտելիք, ապուր», մինչդեռ բարբառում՝ «մածուն»: Հին հայերեն պարկուն բառը ունի «դրսի կեղև՝ պարկի պես», այդ ընդհանուր նշանակությունից բարբառում պրրկո՛ճակ բառը ստացել է «դամբուլենու փուչ, պարկաձև պտուղը» նեղ նշանակությունը: Կամ՝ գուր «փոս», բառը բարբառում գիփ ձևով նշանակում է հնձանի մեջ այն փոսը, ուր թափվում է ճզմված խաղողի հյութը:

---

[1] Այս և մյուս օրինակներում հին հայերեն բառերի իմաստները վերցված են «Առձեռն բառարան հայերէն լեզուի»-ից:

Իմաստի նեղացման երևույթ նկատվում է նաև փոխառյալ բառերի մեջ։ Օրինակ՝ պարսկերենից փոխառյալ բաղ բառը, որ պարսկերենում նշանակում է «այգի, պարտեզ», այստեղ ստացել է «խաղողի այգի» նեղ իմաստը. ընդհանուր «այգի» հասկացությունն համար գործածվում է հայերեն ԷՊԻ<այգի բառը։

Բառիմաստի նեղացման արտահայտություններից մեկն էլ այն է, որ բառը պահպանում է իր հին նշանակություններից միայն մեկը։ Հաճախ պատահում է, որ բառի մեջ պահպանված են հին հայերեն բառի ոչ թե հիմնական, այլ երկրորդական իմաստները, որոնք բարբառի մեջ զարգանալով դարձել են հիմնական։ Այսպես օրինակ՝ վասակել բառը հին հայերենում ունի «1. աշխատել, տառապել, ջանալ. 2. հոգնել» նշանակությունները, որին բարբառումս համազոր վըսաա՛կիլ բառը ունի միայն «հոգնել» իմաստը։ Հին հայերեն խնդրել նշանակում է «1. փնտրել, ուզել, գտնել. 2. հարցնել, քննել. 3. պահանջել. 4. ուզել, աղաչելով ուզել»։ Բարբառային խընդի՛լ համազորը դրանցից պահպանել է միայն «ուզել, ցանկանալ» նշանակությունը։ Կամ թե՝ վերցնենք կոփել բառը։ Այն հին հայերենում նշանակում է «զարնել, տաշել, կոկել», որ կապվում է հիմնականում խփելով՝ տաշել, կոկել, հղկել գաղափարների հետ։ Բարբառային կո՛ւփիլ բառը պահպանել է հենց այդ հիմնական նշանակությունը՝ «խփել, զարկել, հարվածել» (ձեռքով, գործիքով, քարով, հրազենով և ամեն ինչով, որով հնարավոր է հարված հասցնել)։ Իմաստային նույնպիսի անցում է կատարվել նաև պրկել>պըրկի՛լ բառում։ Այն ունեցել է «1. պիրկ կապել, կապկպել, քաշկռտել. 2. քաշքըշելով երկարացնել» նշանակությունները։ Քանի որ այս բառը առաջացել է պիրկ արմատական ձևից, ուստի և բառի հիմքում ընկած է ամուր դարձնելու, ամրացնելու գաղափարը, որից էլ անցում է կատարվել դեպի փակելու, ծածկելու իմաստները։ Այժմ բարբառային պըրկի՛լ բառը նշանակում է «փակել, ծածկել». օրինակ՝ դուրքը պըրկէ՛— դուռը ծածկիր։

Բառերի իմաստափոխություն կատարվել է նաև երևույթների նմանությամբ։ Այսպես օրինակ՝ ցայտ, որից և ցայտել բառերը բարբառային ցեր և ցէ՛բիլ ձևերով նշանակում են «մեզ, միզել»։ Իմաստային այս անցումը կատարվել է երևույթի արտաքին նմանությամբ։ Նույնպիսի երևույթ տեղի է ունեցել նաև ծանրանալ> ծընդրի՛նիլ «հղիանալ, հղի լինել» բառում (գործածելի է միայն կենդանիների համար)։

Այս բոլորին հակառակ բարբառիս բոլոր բառը, որ նշանակում է «մատ» (ձեռքերի և ոտքերի), իմաստի տեսակետից անցում է կատարել մասնավորից դեպի ընդհանուրը, քանի որ բոյթ բառը հին հայերենում ունի «մեծ մատ» մասնավոր նշանակությունը:

Բառիմաստի շրջման հետաքրքիր օրինակ է տալիս կապել > կա՛պիլ բառը: Նա ընդհանուր «կապ դնել, հանգուցել» նշանակության հետ միասին ունի և հակառակ իմաստը՝ «բաց թողնել, արձակել» (ջրի մասին): Իմաստի նման շրջումը կատարվել է այդ բառի յուրօրինակ գործածությամբ: Ոռոգման սիստեմում ջուրը նպատակին հասցնելու համար անհրաժեշտ է կապել, փակել ջրաբաժան բոլոր անցքերը. դրա հետևանքը լինում է այն, որ առվով կամ ջրանցքով ջուր է բաց թողնվում: Այդպես էլ դարգացել է կապել բառի ավելի ընդհանրական իմաստը, այն է՝ «ջուր բաց թողնել, արձակել ջրի կապանքը»: Կարճանցիների մոտ, երբ անհրաժեշտ է լինում ասել «ջուրը բաց թող (միևնույն է, դա վերաբերի առվին, թե ծորակին)», օգտագործվում է ջի՛ր կա՛պա արտահայտությունը, որը, իհարկե, չի նշանակում այլևս «կապ դնել, փակել»:

Առնել, վերցնել հասկացությունների համար օգտագործվում են ա՛ռիլ, յե՛ռիլ, յեմ ա՛ռիլ բառերը: Ըստ էության սրանք առնուլ բայից առաջացած տարբերակներ են, բայց ունեն կիրառական նուրբ երանգներ: Առաջինը նշանակում է ընդհանուր «առնել, դնել», երկրորդը՝ «մի տեղից մի որևէ բան վերցնել» իսկ երրորդը՝ «որևէ մեկի մոտից մի բան վերցնել»:

Նկատելի է, որ բառերը իրենց բազմիմաստությունից աստիճանաբար ազատվել և դարձել են մենիմաստ: Սակայն չնայած այդ ընդհանուր ձգտմանը, այնուամենայնիվ, հանդիպում են նաև բազմիմաստ բառեր, որոնց բազմիմաստությունը թերևս պայմանավորված է ընդհանուր հայերենի ազդեցությամբ: Այսպես օրինակ՝ ա՛ծիլ — 1. լցնել, թափել (հեղուկ). 2. նվագել (երաժշտական գործիք). 3. ձու դնել: Բիլի՛թ — 1. բլիթ, խմորեղեն, թխվածք. 2. պանրի մեծ կտոր բլիթի նման. 3. մեղրի հաց: Թօռ — 1. թաց, խոնավ. 2. անձրև: ԼաՓ — 1. խիստ, շատ, հուժ. 2. բոլորովին. 3. հենց: Կրանա՛տակ — 1. թեի տակը. 2. թեի տակ տեղավորելու չափ: Շօռ գուլ — 1. շրջագայել, ման գալ, զբոսնել, շրջել. 2. ճանապարհորդել. 3. փընտրել և այլն:

Բազմիմաստություն ունեն նաև մի շարք փոխառյալ բառեր, ինչպես օրինակ՝ ադրբեջաներենից փոխառյալ դա՛ղ — 1. ճիշտ, ճշմարիտ. 2. ուղիղ (գծային մեծությունների մասին). 3. հարթ.

4. հարթություն: Բոլ— 1. հերիք, բավական. 2. շատ, առատ: Այս իմաստները հենց ապրբեջաներենից էլ անցել են բարբառին:

Ընդհանրացնելով Կարճևանի բարբառի վերաբերյալ վերը շարադրված բառագիտական համառոտ տեղեկությունները, կարելի է նկատել, որ այս բարբառը իր բառապաշարի շերտերով, բառակազմական միջոցներով ու բառիմաստային առանձնահատկություններով հայերենի հետ ունեցած իր ընդհանրություններով հանդերձ՝ ունի նաև յուրահատուկ կողմեր, որոնք այդ բարբառի, որպես ընդհանուր հայերենի ճյուղավորումներից մեկի, ինքնուրույն ու անկախ զարգացման հետևանք են:

Հաջորդ էջերում բերվող «Բառացանկ գրաբարից Կարճևանի բարբառ» և «Բարբառային բառարան»-ը որոշակի պատկերացում կարող են տալ ուսումնասիրվող բարբառի բառապաշարի մասին: Առաջինը զուտ հնչյունաբանական արժեք ունի և նպատակ ունի ակներև դարձնել հնչյունական այն փոփոխությունները, որ կատարվել են բարբառի մեջ՝ հին հայերենի համեմատությամբ: «Բարբառային բառարանը» իր մեջ ընդգրկում է գավառական բառերը, փոխառությունները և մասամբ առաջին բառարանի նյութը: Վերջինի մասնակի ընդգրկումը որոշ կրկնություն տեղիք է տալիս, բայց դա անհրաժեշտ կրկնություն է, քանի որ այստեղ է, որ բառերը ստանում են իրենց բացատրությունը:

Բ Ա Ռ Ա Ց Ա Ն Կ

Գրաբարից Կարճառների բարբառ

Ագահ — ակահի
ագարակ — Հիդիէրակ (տեղանուն)
ագի — հա՛գին
ազատ — ազատ
ազատել — ըզատիլ
ազբն — ազբ
ազգ — ազգ
ազգական — ըզգական
ազնիւ — ազնիվ
աթոռ — աթոռ
ալեւոր — հիլէվուր, հալ՛ալ՛ուր
ալեւորել — հիլիվէրիլ
ալեւորութիւն — հիլիվըրութին
ալէլու — ալա՛լու
ալիւր — ա՛լուր
ախոռ — ախուռ
ածել — ածիլ
ածելի — ծիլի
ականատես — ըկնատես
ականջ — անգուճ
ականջատուտ — ընգըճատըլի
ակիշ — ակիշ
ակն — ակնը
ակօս — ակուս
աղ — աղ
աղագ — հրդա՛ք
աղալ — ադիլ
աղամանդ — ըղամանդ
աղանձել — դա՛նձիլ
աղանձոտ — դա՛նձուտ
աղաչանք — դաչանք
աղաջուր — ըղէջուր
աղաւնի — դաւնի
աղբ — ախպ
աղբախառն — ըխպախառ
աղբախոտ — ըխպախոտ
աղբանոց — ըխպանուց
աղբատեղ — ըխպատէղ
աղբիւր — ա՛խպուր
աղբիւրաջուր — ըխպըրէջուր
աղի — ա՛դի
աղիք — ադինք
աղուէս — ադվէսա
աղուն — ադուն
աղջիկ — ախչիկ
աղտ — լէխտ
աղքատ — ախկատ
աղքատութիւն — ըխկըտութին
աղօթել — ըղաթիլ
աղօթք — ա՛ղութք
ամանդ — ա՛մանդ
ամաչ — հա՛մանչ

ամաչել—հրմա՛նչիլ
ամաչեցուցանել—հրմընցա՛նիլ
ամաչկոտ—հրմա՛նչկուտ
ամառն—ա՛մառնը
ամառնամուտ—ըմբունամուտ
ամբար—ա՛մբար
ամէն—ա՛մմէն
ամէն—օմման «բոլորը»
ամիս—ա՛միս
ամսական—ըմսէկան
ամօթ—ա՛մութ
այգի—էգի
այգուց—ուզուց
այդ—աթ
այդպէս—էդի
այդպիսի—էդի
այդքան—ալթքա՛ն
այլ—ալ
այլ այսօր—իլա՛սր
այծ—ատ
այն—ան
այն մի—ան մին
այնպէս—էնդի
այնպիսի—էնդի
այնքան—անքա՛ն
այս—աս
այսպէս—էստի
այսպիսի—էստի
այսքան—ասքա՛ն
այսօր—ա՛սր
այրել—էրիլ
անալի—նա՛լի
անամօթ—անա՛մութ
անդամ—ա՛նթամ
աներ—ա՛նիր
անէծք—ա՛նիսկ
անժամ—ա՛նժէմ
անիծ—հա՛նիծ
անիրաւ—անի՛րավ
անլեզու—անլա՛զու
անխելք—ա՛նխիլք
անկան(ակ)—հինդէնակ
անկանել—նա՛նիլ
անկարգ—ա՛նկարք
անհամ—ա՛նհամ
անհոտ—ա՛նվրէտ
անմայր—ա՛նմար
անմեղ—ա՛նմէղ
անուն—ա՛նըմ
անպէտ(ք)—ա՛նպատք
անպսակ—անիրսա՛կ
անսիրտ—ա՛նսաարտ
անտէր—ա՛նտար
անփորձ—ա՛նփօրց
անքուն—ա՛նքաան
աշխատանք—ըշխա՛տանք
աշխատաւոր—ըշխըտա՛վոր
աշխատել—ըշխա՛տիլ
աշխարհ—ա՛շխարք
աշուն—ա՛շունք
ապսպարել—փըսպա՛րիլ
ապրանք—ա՛պրանք
ապրել—ա՛պրիլ
ապրիլ (ամսանունը)—ա՛պրէլ
ապրիշիմի—աբրիշիմի
ապրիշում—աբրիշում
ապրուստ—ա՛պրուստ
աջ—աջ
աջողութիւն—հաջողութին
առակ—ա՛ռակ
առանց—ըռը՛նց, ուռունց
առաջին—ըռջի՛
առաջնակ—ըռջընա՛կ
առաջք—ա՛ռաշկ
առնել—ա՛ռիլ
առնէտ—ընա՛տ

առնուլ—ա՛ռիլ
ասել—ա՛սիլ
ասեղն—ա՛սուղ
աստառ—ա՛ստառ
աստղ—ա՛ստըղ
աստուած—ա՛ստված
աստուածածին—աստվածա՛ծին
առել—ա՛տիլ
արածել—ըրա՛ծիլ
արբենալ—հա՛րբիլ
արդար—ա՛րթար «անարատ»
արդի—հա՛րգա՛
արնգակն—իրի՛նակ
արև—ա՛րիվ
արժան—ա՛րժան
արիւն—ա՛րան
արիւնթաթախ—ա՛ռանթա՛թախ
արիւնել—ըռնի՛լ
արծաթ—ա՛րծաթ, լէ՛րծաթ
արհամարհել—առհամա՛րիլ
արձակ—հա՛րձակ
արձակել—ըրձա՛կիլ
արձան—ա՛րցան
արճիճ—ա՛րճուճ
արմուկն—ա՛րմունգ
արջ—առջ
արտ—արտ
արտասուք—ըրտա՛սունք
արքայութիւն—արքայո՛թին
աւազակ—ավա՛զակ
աւել—ա՛վիլ
աւելանալ—իվիլէ՛նիլ
աւելի—իվիլի՛
աւելորդ—իվի՛լնորթ
աւելուկ—ավա՛լուկ
աք—հաք
աքացի—քյա՛ցի

Բազմանալ—բըզմէ՛նիլ
բազմութիւն—բըզմո՛թին
բաժանել—բիժէ՛նիլ
բաժին—բէ՛ժին, պա՛ժին
բաժինք—բէ՛ժինք, պա՛ժինք
բակ—բէկ (Կալբէկ)
բակլայ—բէ՛կլի
բահ—բէհ
բահել—բիրհի՛լ (հին *բարհել-ից)
բաղարջ—պա՛ղաճ
բամբակ—բէ՛մբակ
բամբասանք—բիմբէ՛սանք
բամբասել—բիմբէ՛սիլ
բան—բէն
բանալի—բիլա՛նի
բանկն—պը՛նգըլ
բանջար—բէ՛նջա՛ր
բաշխել—բա՛խշիլ
բառաչել—բըռընչա՛լ
բառնալ—բէ՛ռնիլ
բարակ—բէ՛րակ
բարեաւ—պա՛ռավ
բարեկամ—պարի՛կամ
բարեկենդան—պարի՛կէ՛նթան
բարի—բա՛րի
բարձ—բէ՛րծ
բարձր—բո՛ձա՛ր
բարձրանալ—բիձրէ՛նիլ
բաց—բէ՛ց
բացատ—բէ՛ցուտ
բեմ—բէ՛մ
բեռն—բէ՛ռնը
բերան—բէ՛րան
բերանբաց—բէրանբէ՛ց
բերել—բի՛րիլ
բերք—բէ՛րք
բժիշկ—բիժի՛շկ
բիբ(իկ)—բի՛բիկ

բիր—բիր
բլիթ—բիլլիթ
բշտել—բիշտիլ
բոլոր—բոլ՛ոլ
բոկ(իկ)—բէ՛բուկ
բոկ(իկ)անալ—բիբիկէնիլ
բոդ, բոդիկ—բէդ
բոդկ—բէխկ
բոյթ—բոյթ
բոյն—բոյն
բորբոս—փոյ՛փոյանը
բուշտ—բիշտ
բուլդ—բոյրդ
բուրատու—փրովա՛ր
բռնաւոր—բրոնա՛վուր
բռնել—պրոնիլ
բրինձ—բիրինձ

Գար—գէփ
գաղար—գ՛ա՛զար
գալ—գուլ
գաղթական—գաղթա՛կան
գայլ—գ՛ոյլ
գանգատ—գէնգ՛ատ
գանգատիլ—գինգէ՛տիլ
գանձ—գանձ
գառն—գ՛ո՛ռնը
գարի—գ՛ո՛րի
գարուն—գ՛ո՛րունք
գաւազան—գավա՛զան
գգակ—ք՛ո՛գակ
գեա—գէա
գերան—գէ՛րան
գերեզման—գիրիզման
գերեզմանատուն—գիրիզմանատուն
գերմակ—գէ՛րմակ
գզել—գիձիլ
գիհ(ակ)—գիհակ

գին—գին
գինդ—գինդ
գինի—գինի
գինձ—գինձ
գիշեր—քիշէր
գիտել—գիդիլ
գիտուն—գի՛դուն
գիր—գիր
գիրկ—գ՛ոյրգ
գլխացաւ—կըլխա՛ցավ
գլխաւոր—կըլխա՛վուր
գլխիրաց—կըլխըրէ՛ց
գլուխ—կըլօխ
գնալ—նէլ
գոգ—գ՛ոյզ
գոզ—գ՛ոզ
գողանալ—գ՛իղա՛նիլ
գողութիւն—գըղոթին
գոմէշ—գ՛ա՛մուշ
գոռալ—գըռռալ
գործ—գործ
գործել—գ՛ո՛րծիլ
գործի—գ՛ո՛րծին
գորտ—գ՛ոյրթոյ՛նգ
գուր—գ՛իփ
գուլթայ—գուլթան
գունդ—գ՛ոյնդ
գուշ—գ՛ոյշ
գռուզ—կըռըզնօտ
գրաւ—գիրա՛վ
գրաւել—գիրա՛վիլ
գրել—գիրիլ
գոտի—գ՛ո՛խտիկ

Դադար—դէթար
դադարել—դիթէրիլ
դաղձն—դըէ՛ղնը
դանակ—դէ՛նակ

դառն—դըէռնը
դառնալ—դըէռիլ
դառնահամ—դըռնա՛համ
դառնանալ—դըռնէնիլ
դառնացուցանել—դըռնըցա՛նիլ
դատ—դատ
դատաստան—դատա՛ստան
դատարկ—դէռտակ
դատել—դա՛տիլ
դարման—դէրման
դգալ—դգալ՝ա՛լ
դեկտեմբեր—դէկտէմբէր
դեղին—դէղին
դեղնացաւ—դրղնա՛ցավ
դեղնել—դըղնիլ
դեղնութիւն—դըղնօթիւն
դեղնուց—դըղնօց
դեղք—դէխկ
դեղ(ք)ել—դէխկիլ
դեւ—դէվ
դէզ—դէզ
դէպ ի—դիբի՛
դէպ ի ետ—դիբէտ
դժոխք—դժօխկ
դժուար—դիժէր
դիզել—դէզիլ
դմակ—դիմա՛կ
դող—դօղ
դողդողալ—դըղդըղա՛լ
դորակ—դօրակ
դու—դու
(ան) դունդ—դունդ
դուռն—դուրք
դուր—դուր
դուրս—դուս
դոնակ—դըռնա՛կ

Եղն—իղնի, իղնը

եթէ—յէթէ
ելանել—իլիլ
եկ—յէք
եկեղեցի—դիղէցի
եղբայր—ա՛խպիր
եղբայրութիւն—ըխպըրօթին
եղիճ—հա՛ղինջ
եղն—յէղնը
եղունգն—յէղինդ
եմ—իմ, ըմ
ես—իս
երազ—ա՛րազ
երախ—ըրէխ
երախայ—ըրա՛խի
երախայութիւն—ըրխօթին
երանեակ—հըրէնակ
երաշտ—ա՛րաշտ
երբ—հիբ, հիբի՛
երբ որ—հիբ վըէր
երգ—յէրք
երգել—յէրքիլ
երդ—հուրդ
երդումն—ու՛րդում
երեկ—իրէկի
երեկոյ—ըրա՛կու
երես—իրիս
երեսուն—արա՛սուն
երեւել—իրվալ, իրիվալ
երիք—իրիք՝
երիքին—իրիք՝էն
երիքշաբաթ—իրիքշէբաթ
երինջ—հէրինջ
երիցակին—հըրցա՛կին, ըրցա՛կին
երկաթ—ա՛րկաթ
երկայն—յէրկին
երկայնութիւն—յէրկընօթին
երկան—ա՛րկան
երկինք—յէրգինք

Երկիր—յէրգիր
Երկու—յօրկու
Երկուշաբաթ—յէրկըշէբաթ
Երկոքին—յըրկէն
Եփ—իփ
Եփել—ԻՓԻԼ
Եօթանասուն—յօխթատանա՛սուն
Եօթանեքին—յըխտէն
Եօթն—յօխտ

Զանգակ—զա՛նգակ
զատիկ—զէտիկ՝
զարդարանք—զըրթէրանք
զարդարել—զըրթա՛րիլ
զարմանալ—զըրմա՛նիլ
զարմաց(ք)—զա՛րմասկ
զափրան—զա՛փռան
զգենուլ—սիդէնիլ
զգօն—սըկօն
զզուիլ—զըզվիլ
զկնռ—ցըքըէռնը
զմուռա—զըմբըէռ
զուր—իզո՛ր
զոքանչ—զէնքուչ
զրոյց—զուրու՛ց, զիրու՛ց
զօրք—զօրք

Էգ—էգ՝
Էշ—էշ

Ընդ իրեար գալ—դուր գուլ
ընկեր—հընդըէր
ընկոյզ—ա՛նգուզ
ընկուզի—ընգըզի՛
ընտրել—հընդրի՛լ

Թագ—թագ
թագաւոր—թաքա՛վոր
թաթ—թաթ

թաթախել—թըթա՛խիլ
թաթախումն—թըթա՛խում
թաթուլ—թա՛նթուլ
թակ—թակ
թաղել—թա՛ղիլ
թաղկել—թա՛խկիլ
թամբ—թամք
թամբել—թա՛մքիլ
թան—թան «մածուն»
թանաք—թա՛նակ
թանգ—թանգ՝
թանձր—թա՛նձիր
թանձրանալ—թինձիրէնիլ
թանչել—թընչա՛լ
թառ—թառ
թաս—թաս
թաւ—թավ
թաւալ տալ—թա՛վիլ տալ
թափ—թափ
թափան—թա՛փան
թափել—թա՛փիլ
թափոր—թա՛փուր
թաքուն—թա՛քուն
թեթեւ—թիթավ
թեթեւանալ—թիթիվէնիլ
թել—թիլ
թեղի—թէղի
թեւ—թիվ
թեւի—թիվի
թեւոտ—թիվուտ
թզենի—թիզի՛
թէ—թա՛, թա
թթենի—թըթի՛
թթու—թըթո՛վ
թի—թայ
թիթեռն—թիթէռ
թմրել—դիմբիրի՛լ
թոզ—թօզ

